



ԵՐԵՎԱՆԻ Մ. ՔԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ

ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԻՄԻԱ

ԵՐԵՎԱՆ -2008

ԵՐԵՎԱՆԻ Մ. ՔԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՐԱՆ

Ընդիանուր և կենսաօրգանական քիմիայի ամբիոն

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ

### ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԻՄԻԱ

Երաշխավորված է  
Երևանի Մ. Քերացու անվան պետական  
բժշկական համալսարանի կենտրոնական  
մեթոդական խորհրդի կողմից որպես  
ձեռնարկ բժշկական մասնագիտությանը  
ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ Մ. ՔԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՐԱՆ  
2008

ՀՏԴ 54 (07)  
ԳՄԴ 24 ց 73  
Ը 391

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻՄԻԱ  
ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԻՄԻԱ

Խմբագիր՝ Ավագյան Է. Ա.

Դեղինակներ՝ Մելքոնյան Մ.Մ., Ավագյան Է.Ա.,  
Կարապետյան Ս.Ա., Մաշինյան Յ.Կ.:

Ը 391 Ընդհանուր քիմիա: Կենսաֆիզիկական քիմիա:  
Ուսումնական ձեռնարկ բարձրագույն ուսումնական  
իաստատությունների բժշկական ճասնագիտությանը  
ուսանողների համար: 1-ին հրատարակություն, Երևան,  
1994, 240 էջ, 2-րդ հրատարակություն, Երևան, ԵՊԲՀ,  
2005, 234 էջ:

Դամակարգչային ծևավորող  
և տեխնիկական խմբագիր՝

Ա.Զ. Մկրտչյան

Ը 1701000000 2008  
0066

ԳՄԴ 24 ց 73

ISBN 99941-40-11-6

© Մ.Մ. Մելքոնյան

ОБЩАЯ ХИМИЯ  
БИОФИЗИЧЕСКАЯ ХИМИЯ  
Учебник для мед. вузов  
(на армянском языке)  
Ереван, 2008

## **Ներածություն (1-ն հրատարակության)**

Ժամանակակից մոլեկուլային կենսաբանության և բժշկագիտության առանձնահատկություններից մեկը քիմիայի նվաճումների լայն ներդրումն է կենդանի օրգանիզմի ֆունկցիաների ուսումնասիրման գործընթացում: Կենսաֆիզիկական քիմիայի հիմունքների և կենսագեն տարրերի հատկությունների հմացությունը հիմք են համովանում կենսաօրգանական քիմիայի, կենսաքիմիայի, ֆարմակոլոգիայի, ֆիզիոլոգիայի, հիգիենայի, անեսթեզիոլոգիայի ուսումնասիրման համար: Այդ պատճառով վերջին տասնամյակում քիմիայի դասավանդումը բժշկական բուհերում եապես փոխվել է. մշակվել են նոր ծրագրեր և ուժեղացվել են պատակառուղղվածությունը:

Նշված հանգամանքները, ինչպես նաև նայենի լեզվով գրականության բացակայությունը անհրաժեշտություն առաջացրեց ուսենալ բժշկակենսաբանական ուղղվածության ձեռնարկ, որն էլ ստեղծվեց Երևանի պետական բժշկական համալսարանի «Շնորհանուր և կենսաօրգանական քիմիայի» ամբիոնի կողեւութիւնից, ամբիոնի վարիչ, պրոֆ. Մ.Մ.Մելքոնյանի նախաձեռնությամբ:

Զեռնարկը բաղկացած է 12 բաժնից, որոնցից յուրաքանչյուրը սկսվում է տեսական նյութով՝ համապատասխան տիպական խնդիրների լուծումով: Այնուհետև տրված է լաբորատոր աշխատանքը փորձի ընթացքի մանրամասն շարադրանքով և հաշվարկներով: Գիտելիքների ամրապնդման նպատակով բաժինն ավարտվում է ինքնուրույն լուծման համար առաջարկված հարցերով և խնդիրներով: Զեռնարկում հատուկ նշանակություն է տրված քննարկված օրինաչափությունների քանական կողմին, որպեսզի ուսանողները պատկերացում ստանան մեծությունների կարգի և կախված պայմաններից նրանց փոփոխության բնույթի մասին: Օրինակներն ու տեղեկությունները որքան հնարավոր է ունեն բժշկակենսաբանական ուղղվածություն: Դավելվածում այսուսակների ձևով տրված են անհրաժեշտ մեծություններ ու հաստատուններ: Զեռնարկը հասցեագրված է բժշկական ինստիտուտների ուսանողների (բժշկագիտություն ուսումնասիրողների) և համովանում է այս տեսակի առաջին հայերեն աշխատությունը:

## **Ներածություն (2-րդ հրատարակություն, վերամշակված և լրացված)**

Երկրորդ հրատարակության անհրաժեշտությունը բելադրվեց առարկայի դասավանդման մեջ տեղ գտած ծրագրային փոփոխություններով: Այս հրատարակության մեջ պահպանվել է քննարկվող բաժինների ցանկը, սակայն զգալիորեն կրճատվել է տեսական նյութի ծավալը, միաժամանակ շեշտադրվել է քննարկվող նյութի կարևորությունը կենսաբանական համակարգում, մասնավորապես մարդու օրգանիզմում ընթացող ֆիզիկա-քիմիական պրոցեսների պարզաբանման հարցում: Դարստացվել են խնդիրների լուծման օրինակները, հարցերի, վարժությունների և խնդիրների ցանկը, ինչը նպատակառուղղված է ուսանողների ինքնուրույն աշխատանքները խթանելուն: Վարժությունների և խնդիրների մեծամասնությունը ևս հնարավորություն են տալիս ծանոթանալու օրգանիզմի հիմնական ֆիզիկա-քիմիական պարամետրերի հետ:

## Աշխատանքի ընդհանուր կանոնները քիմիական լաբորատորիայում

Քիմիական լաբորատորիայում աշխատելիս անհրաժեշտ է իմանալ և բարեխղճորեն կիրառել հետևյալ կանոնները:

1. Նախապես ուսումնասիրել թեմային վերաբերվող տեսական նյութը, օգտագործելով մեթոդական ձեռնարկներ, դասագրքեր և դասախոսությունների համառոտագրեր:
2. Լաբորատորիայում աշխատել ուշադիր, հանգիստ, առանց ավելորդ շտապողականության:
3. Աշխատանքային տեղում պահպանել պատշաճ մաքրություն, կարգ ու կանոն: Այնտեղ չընել գիրք, տետր, պայուսակ, արտահագուստ և այլ առարկաներ:
4. Փորձեր կատարելիս օգտագործել միայն մաքրությունը ամանեղեն և սարքեր:
5. Երբեք չօգտագործել այնպիսի նյութեր, որոնք գտնվում են պիտակներ չկրող անոթներում:
6. Փորձերի համար վերցնել նշված քանակությամբ նյութեր: Կտրականապես արգելվում է չօգտագործված կամ ավելցուկով վերցրած ռեակտիվը ետ լցնել սրվակի մեջ:
7. Սրվակները փակելիս չչփորել խցանները:
8. Խստիվ արգելվում է տվյալ աշխատանքի հետ առնչություն չունեցող փորձեր կատարել առանց լաբորատոր աշխատանքների ղեկավարի գիտության:
9. Օգտագործելուց անմիջապես հետո բոլոր ռեակտիվները, ամանեղենը և սարքերը դնել իրենց տեղերո:
10. Աշխատանքն ավարտելուց հետո խնամքով լվանալ օգտագործված ամանեղենը, հավաքել և կարգի բերել աշխատանքային սեղանը, փակել ջրի ծորակները:
11. Փորձի կատարման ընթացքը, ինչպես նաև փորձին վերաբերվող դիտողությունները, արդյունքներն ու հետևողությունները մանրամասն և հստակ գրի առնել գործնական աշխատանքների տետրում:
12. Աշխատանքի ձևակերպումը լաբորատոր տետրում կատարել հետևյալ հաջորդականությամբ
  1. Անսաթիվը
  2. Աշխատանքի հերթական համարը:
  3. Թեմայի և փորձի անվանումը:
  4. Փորձի հակիրճ, բայց հստակ նկարագրությունը, գուգակցված սարքերի նկարագրությամբ, դրանց նկարներով, համապատասխան ռեակցիաների հավասարումներով:
  5. Գրի առնել փորձի արդյունքները, փորձին վերաբերվող հաշվարկները, աշյուսակներն ու գրաֆիկները:
  6. Եզրակացություն փորձի վերաբերյալ:

## **Անվտանգության տեխնիկայի կանոնները քիմիական լաբորատորիայում**

Քիմիական լաբորատորիայում աշխատելիս, վթարներից և դժբախս դեպքերից խուսափելու համար, անհրաժեշտ է իմանալ և խստորեն պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները.

1. Տհաճ հոտ ունեցող և թունավոր նյութերով փորձերը, ինչպես նաև թռուների լուծույթների գոլորշիացումը կատարել քարշիչ պահարանում:
2. Տաք առարկաները և ամանեղենը (ունելի, տիգել, թաս և այլն) դնել միայն ասբեստի թերթի կամ ասբեստապատ ցանցի վրա:
3. Չեղուկները տաքացնելիս փորձանոթը պահել այնպես, որ նրա բերանը ուղղված չլինի փորձ կատարողի կամ այնտեղ գտնվող մարդկանց կողմնը:
4. Գազերի կամ գոլորշիների հոտը որոշելու համար ձեռքի թերևակի շարժումով դրանք զգուշորեն ուղղել դեպի քիթը և հոտ քաշել հեռվից:
5. Ինքնաբոցավառվող նյութերով աշխատել կրակից հեռու:
6. Խիստ թքուները, հատկապես ծծմբական թքուն նոսրացնելիս, թքուն զգուշորեն լցնել ջրի մեջ և ոչ թե հակառակը:
7. Մաշկի վրա թքու թափվելու դեպքում այն արագորեն լվանալ առատ ջրով, հետո խմելու սողայի լուծույթով և ապա՝ կրկին ջրով:
8. Մաշկի վրա հիմք թափվելու դեպքում հարկավոր է այն լվանալ նախ ջրով, հետո քացախաթթվի կամ բորաթթվի նոսր (2% -անոց) լուծույթով և ապա նորից ջրով:

# 1. Քիմիական թերմոդինամիկա

Քիմիական թերմոդինամիկան ուսումնասիրում է էներգիայի փոխարկումը մի ձևում մյուսին, քիմիական ռեակցիաներն ուղեկցող էներգետիկ էֆեկտները և քիմիական համակարգերի օգտակար աշխատանքը կատարելու ընդունակությունը: Այն հնարավոր է դարձնում կանխորոշել ֆիզիկական պրոցեսների իրականացման հնարավորությունը, ուղղությունը, ինչպես նաև ընթանալու սահմանը: Օրգանիզմում նյութափոխանակությունն ուղեկցվում է էներգիայի փոխարկումներով, որոնք ել ընկած են նրա կենսագործներության հիմքում: Կենդանի օրգանիզմը յուրացնում է սննդանյութերի մեջ պարփակված քիմիական էներգիան, այն փոխարկելով էներգիայի այնպիսի ձևի (**ԱԵՖ**), որն առավել պիտանի է օրգանիզմում կատարվող տարատեսակ աշխատանքների համար, իսկ էներգիայի հավելյալ քանակը անջատվում է ջերմության ձևով:

## 1.1. Թերմոդինամիկայի հիմնական հասկացություններ

1. Թերմոդինամիկական համակարգը դա ցանկացած մակրոսկոպիկ նյութական օբյեկտ է, որն արտաքին միջավայրից անջատված է իրական կամ երևակայական սահմաններով: Դամակարգը կազմող մարմինները կարող են փոխանակվել միջյանց և արտաքին միջավայրի հետ նյութով և էներգիայով (բաց համակարգ): *Բաց համակարգի կարևոր օրինակ է կենդանի բջիջը: Եթե համակարգը չի կարող փոխանակվել միջավայրի հետ նյութով և էներգիայով, այն մեկուսացված է, եթե փոխանակվում է միայն էներգիայով՝ փակ է: Իրական համակարգերը կարող են մոտենալ մեկուսացված և փակ համակարգերին, սակայն երբեք չեն նույնանում դրանց հետ:*

2. Դամակարգի վիճակը որոշվում է տվյալ պահին նրա ֆիզիկաքիմիական հատկությունների հանրագումարով (քիմիական կազմ, նյութերի բնույթ, ագրեգատային վիճակ, թերմոդինամիկական պարամետրեր՝ T, P, V, m, ρ, U, H, S, G): *Դամակարգի վիճակը կարող է լինել հավասարակշռային, ստացիոնար և անցումային:*

Թերմոդինամիկական հավասարակշռությունը համակարգի այն վիճակն է, որն անփոփոխ է ժամանակի մեջ և չի ուղեկցվում համակարգում նյութի կամ էներգիայի անցումներով: Թերմոդինամիկական հավասարակշռությունը ենթադրում է ջերմային, մեխանիկական և քիմիական հավասարակշռությունների միաժամանակյա գոյություն, ինչպես նաև համակարգի ֆազերում կոնցենտրացիաների տարրերությունների բացակայություն: Մեկուսացված համակարգերում ժամանակի ընթացքում ստեղծվում է հավասարակշռություն և համակարգերը չեն կարող ինքնարերարար դրւու գալ այդ վիճակից:

Եթե համակարգի պարամետրերը չեն փոխվում ժամանակի մեջ, բայց կա նյութի կամ էներգիայի հոսք վիճակը կոչվում է **ստացիոնար:** Վիճակն անցումային է, եթե համակարգի հատկությունները փոխվում են ժամանակի մեջ:

**3. Թերմոդինամիկական պրոցեսը** համակարգի անցումն է մի հավասարակշռված վիճակից նյութին: Պրոցեսները թերմոդինամիկական տեսակետից բաժանվում են երկու խմբի՝ **դարձելի և անդարձելի:** Պրոցեսը թերմոդինամիկորեն դարձելի է, եթե համակարգի վերադարձը վերջնական վիճակից ելայինի չի պահանջում էներգիայի ծախս դրսից, և համակարգը անցնում է նույն միջանկյալ հավասարակշռային վիճակ-ներով ինչ և ուղիղ պրոցեսի ժամանակ: Անդարձելի պրոցեսներում միջանկյալ փուլերից թեկուզ մեկը հավասարակշռային չէ: Բոլոր իրական պրոցեսները թերմոդինամիկորեն անդարձելի են:

**4. Թերմոդինամիկական ֆունկցիա** (վիճակի ֆունկցիա): Դա ֆիզիկական ներություն է, որի արժեքը ժամանակի տվյալ պահին որոշվում է համակարգի թերմոդինամիկական հատկություններով, անկախ այն բանից, թե ինչպես է այդ վիճակն իրականացվել:

**5. Զերմությունը և աշխատանքը** հանդիսանում են համակարգի և միջավայրի միջև էներգիայի փոխանակման երկու հիմնական ձևեր:

Զերմությունը զերմաստիճանների ( $T_1, T_2$ ) տարրերությամբ պայմանավորված էներգիայի փոխանցումն է, որը մասնիկների քառսային զերմային շարժման փոփոխության արդյունք է և նշանակվում է  $Q$  տառով:  $Q$  զերմության քանակը համեմատական է համակարգի գանգվածին և զերմաստիճանին ( $m, T$ ):

$$Q = c \cdot m \cdot \Delta T \quad (1.1.)$$

որտեղ  $c$ -ն տեսակարար զերմունակությունն է:

Աշխատանքը, դա էներգիայի փոխանակման այն ձևն է, որը տեղի է ունենում համակարգի մակրոսկոպիկ մասերի միմյանց նկատմամբ ուղղորդված տեղաշարժի արդյունքում: Դամակարգում աշխատանք կարող է կատարվել ի հաշիվ նրա ունեցած էներգիայի պաշարի, այսպես կոչված, ներքին էներգիայի ( $U$ ):

**6. Ներքին էներգիան**, դա համակարգը կազմող միկրոնամիկների բոլոր տեսակի շարժումների (տատանողական, համընթաց, պտտողական և այլն) կինետիկական և դրանց փոխազդեցությունների պոտենցիալ էներգիաների հաճագուման է, բացի համակարգի, իրու անբողջության, կինետիկական և պոտենցիալ էներգիաները: Դա նշանակում է, որ ներքին էներգիան կախված չէ նրանից, թե համակարգը դադարի կամ շարժման մեջ է:  $U$ -ի բացարձակ արժեքը որոշել հնարավոր չէ: Որոշվում է նրա փոփոխությունը ( $\Delta U$ ):

## 1.2. Թերմոդինամիկայի առաջին օրենքը:

Թերմոդինամիկայի առաջին օրենքը էներգիայի պահպանման օրենքն է ջերմային երևույթներով ուղեկցվող պրոցեսների համար: Այն ունի մի շարք համարժեք ձևակերպումներ:

Դանաձայն առաջին օրենքի, ներքին էներգիան (U) վիճակի ֆունկցիա է, քանի որ նրա փոփոխությունը ( $\Delta U$ ) կախված է միայն այն բանից, թե ինչպիսին է համակարգի վիճակը պրոցեսի սկզբում և վերջում, կախված չէ նրա ընթանալու եղանակներից, փուլերի թվից, ժամապարհից (նախապատճերյունից): Ներքին էներգիան փոխվում է, եթե համակարգը շրջապատող միջավայրից կլանում կամ շրջապատ է առաքում էներգիա ջերմության (Q) և աշխատանքի (A) ձևով կամ նյութի որոշ քանակի տեղափոխման հետևանքով: Առաջին օրենքի մաթեմատիկական արտահայտությունն է.

$$\Delta U = Q + A \quad (1.2.)$$

Դա նշանակում է, որ  $\Delta U - Q$  հավասար է այն բոլոր էներգիաների համրահաշվական գումարին, որոնցով համակարգը փոխանակվում է արտաքին միջավայրի հետ:

Դանակարգի ներքին էներգիան կարող է աճել կամ նվազել, հետևաբար  $\Delta U - Q$  կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական նշաններ: Նույնը վերաբերվում է  $Q - A$  -ին: Ընդունված է դրական համարել համակարգի  $U$  -ի աճը, նրան հաղորդած  $Q - A$  և արտաքին ուժերի դեմ համակարգի կատարած  $A - Q$ : Դանապատճախանաբար  $U - Q$  նվազումը, համակարգի շրջապատին տված  $Q - A$  և շրջապատի կատարած  $A - Q$  համակարգի նկատմամբ համարվում են բացասական:

Ընդունելով նշանների վերը նշած համակարգը, առաջին օրենքը ձևակերպվում է նաև այսպես.

**համակարգին հաղորդված ջերմությունը ծախսվում է ներքին էներգիայի աճի և արտաքին ուժերի դեմ աշխատանք կատարելու վրա:**

$$Q = \Delta U + A \quad (1.3)$$

**Մեկուսացված համակարգի ընդհանուր էներգիան հաստատում մեծությունն է:**

Առաջին կարգի հավերժական շարժիչ լինել չի կարող:

### 1.3. Համակարգի կատարած աշխատանքը իզոխոր, իզոթերմ, իզոբար պրոցեսներում

Քննարկենք իդեալական գազի իզոթերմ դարձելի ընդարձակումը ջերմություն կլանելիս: Յայտնի է, որ արտաքին ճնշման ( $P$ ) դեմ  $S$  մակերեսով միացի տեղաշարժի ( $\Delta h$ ) աշխատանքը (անտեսելով շփման ուժերը) որոշվում է  $A = P \cdot S \cdot \Delta h$  բանաձևով: Քանի որ  $S \cdot \Delta h = \Delta V$ , հետևաբար  $A = P \cdot \Delta V$ : Անսահման փոքր տեղաշարժի դեպքում կատարվում է անսահման փոքր աշխատանք՝  $dA = P \cdot dV$ :

Գումարային աշխատանքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \int_{V_1}^{V_2} P_{\text{արտ}} dV \quad (1.4.)$$

Գնահատենք տարրեր պրոցեսներում կատարված աշխատանքը.

ա) **իզոխոր պրոցես** ( $V = \text{const}$ )  $\Delta V = 0$ ,  $A_V = 0$ ,  $Q_V = \Delta U$ : Ողջ ջերմությունը ծախսվում է ներքին էներգիայի մեծացման վրա:

բ) **իզոթերմ պրոցես** ( $T = \text{const}$ ),  $\Delta U = 0$ ,  $Q_T = A_T$ : Յամակարգին հաղորդված ջերմությունը ծախսվում է միայն աշխատանք կատարելու վրա:

Փոկիոխականներից մեկն արտահայտելով մյուսով՝  $P = \frac{nRT}{V}$ ,

(1.4)-ից կստացվի.

$$A_T = \int_{V_1}^{V_2} \frac{nRT dV}{V} = nRT \int_{V_1}^{V_2} \frac{dV}{V} = nRT \ln \frac{V_2}{V_1} = nRT \ln \frac{P_1}{P_2} \quad (1.5)$$

գ) **ադիբատ պրոցես**՝  $Q = 0$ ,  $A = U_2 - U_1$ : Աշխատանք կատարվում է ներքին էներգիային նվազման հաշվին:

դ) **իզոբար պրոցես** ( $P = \text{const}$ ): (1.4)-ից կստանանք.

$$A_P = P_{\text{արտ}} \int_{V_1}^{V_2} dV = P \Delta V = P(V_2 - V_1) \quad (1.6.)$$

Յամաձայն I օրենքի՝

$$Q_P = \Delta U + P \Delta V = (U_2 - U_1) + P(V_2 - V_1) = (U_2 + PV_2) - (U_1 + PV_1)$$

Թերմոդինամիկայում ( $U + PV$ ) ֆունկցիան նշանակվում է  $H$ -ով և կոչվում է էնթալպիա .

$$H = U + PV$$

$$Q_P = H_2 - H_1 = \Delta H \quad (1.7.)$$

Էնթալպիան համակարգի ներքին ջերմապարունակությունն է և տարրերվում է ներքին էներգիայից այն աշխատանքով, որն անհրաժեշտ է կատարել արտաքին հաստատում ճնշումը հաղթահարելու համար: Քանի որ  $PV = nRT$ , ապա  $H = U + nRT$ : Էնթալպիան ևս վիճակի ֆունկցիա է, որի բացարձակ արժեքը որոշել հնարավոր չէ, հաշվում են նրա փոփոխությունը ( $\Delta H$ ) համակարգը մեկ վիճակից մյուսին անցնելիս.

$$\Delta H = \Delta U + P_{\text{atm}} \cdot \Delta V = \Delta U + nRT:$$

Եթե ռեակցիան ընթանում է գազերի մոլերի թվի փոփոխմամբ, ապա  
 $\Delta H = \Delta U + \Delta nRT:$

Եթե  $n=1$  մոլ. գազ,  $\Delta H = \Delta U + 2,5 \text{ kJ/mol}$  ( $R=8,31 \text{ J/mol} \cdot \text{K}$ ,  $T=298 \text{ K}$ ):

Պինդ և հեղուկ նյութերի համար  $\Delta H - \Delta U$ -ի տարերությունը փոքր է, քանի որ ծավալի փոփոխություն գրեթե չի լինում (1 մոլ հեղուկի համար՝  $\Delta V \approx 0.1 \text{ L}$ ): Այդ պատճառով պինդ և հեղուկ նյութերի էնթալպիա և ներքին էներգիա մեծությունները նույնանում են: Նույնը վերաբերվում է կենսաբանական պրոցեսներին, քանի որ դրանք ընթանում են հեղուկ միջավայրում:

**Օրինակ 1.** 300K ջերմաստիճանում 15 մթն. ճնշման տակ գտնվող 0.85 մոլ գազը իզոբերմ ընդարձակվել է մինչև 1 մթն. ճնշում:  
 Դաշվել կատարված աշխատանքը.

ա. դարձելի իզոբերմ պայմաններում,

բ. դարձելի իզոբար պայմաններում ( $P_{\text{atm}}=1 \text{ mbar}$ ):

### Լուծում.

ա.  $\Delta U=0$ , հետևաբար,

$$A_{\text{պարձ.}} = Q_T = nRT \ln \frac{P_1}{P_2} = 0,85 \text{ mol} \cdot 8,31 \text{ J/K} \cdot \text{mol} \cdot 300 \text{ K} \cdot \ln \frac{15}{1} = 5749,6 \text{ J}$$

$$\text{բ. } A = P_{\text{արտ}}(V_2 - V_1) = -P_2(V_2 - V_1) = nRTP_2 \left( \frac{1}{P_2} - \frac{1}{P_1} \right) = \\ = 0,85 \text{ mol} \cdot 8,31 \text{ J/mol} \cdot \text{K} \cdot 101325 \text{ Pa/m}^2 \left( \frac{1}{101325 \text{ Pa/m}^2} - \frac{1}{15 \cdot 101325 \text{ Pa/m}^2} \right) = 1978,9 \text{ J}$$

Այսպիսով, դարձելի իզոբերմ պրոցեսի աշխատանքը ( $A_T$ ) մեծ է իզոբար պրոցեսի աշխատանքից ( $A_P$ ):

$$A_T > A_P$$

## 1.4. Քիմիական պրոցեսների ջերմային էֆեկտներ

Քիմիական պրոցեսներն ուղեկցվում են հանակարգի կողմից էներգիայի կլանումով կամ անջատումով, ինչպես ջերմության ձևով, այնպես էլ էներգիայի այլ ձևերով (լուսային, ճառագայթային, ձայնային, մեխանիկական աշխատանքով):

**Թերմոքիմիան** քիմիական թերմոդինամիկայի այն բաժինն է, որն ուսումնասիրում է քիմիական պրոցեսներն ուղեկցող էներգետիկ էֆեկտները և նրանց կախվածությունը տարբեր ֆիզիմիական գործուներից: **Տվյալ քիմիական ռեակցիայի ընթացքում անջատված (կամ կլանված) ջերմությունը անվանում են ռեակցիայի ջերմէֆեկտ:** Նրա մեծությունը կախված է 1) ռեակցիային մասնակցող նյութերի քննութից, 2) քանակից, 3) ագրեգատային վիճակից, 4) ռեակցիայի

ընթանալու պայմաններից (T, P, V): Եթե ջերմէֆեկտը չափվել է  $P=101\text{Pa}$  և  $T=298 \text{ K}$  և վերահաշվվել է 1մոլ նյութի համար (սովորաբար ռեակցիայի արգասիքի համար), այն կոչվում է ռեակցիայի ստանդարտ ջերմէֆեկտ: Եթե քիմիական ռեակցիայի հավասարման մեջ նշվում են ջերմությունը կամ որևէ այլ վիճակի ֆունկցիա և նյութերի ազրեգատային վիճակները, հավասարումը կոչվում է ջերմաքիմիական:

Իզոբար պրոցեսում ջերմէֆեկտը նույնանում է էնթալպիայի փոփոխության հետ.  $Q_P = -\Delta H$ :

Կենդանի օրգանիզմում ընթացող պրոցեսները գործնականորեն տեղի են ունենում իզոբար պայմաններում:

$$\text{Այսպիսով՝ ըստ սխեմայի } Q_P = -\Delta H \text{ և } Q_V = -\Delta U$$

$$Q_P = \Delta H = \Delta U + P\Delta V$$

Քիմիական պրոցեսի ջերմէֆեկտը որոշվում է կալորիմետրիկ եղանակով համապատասխան սարքերում:


**Յեսի օրենքը - Քիմիական ռեակցիայի ջերմէֆեկտը կախված է միայն ելանյութերի և վերջնանյութերի վիճակից ու տեսակից (քիմիական կազմ, ագրեգատային վիճակ, բյուրեղային ձևափոխություն) և կախված չէ ռեակցիայի ընթանալու ժամապարհից: Ռեակցիայի ընդհանուր ջերմէֆեկտը հավասար է առանձին փուլերի ջերմէֆեկտների համբահաշվական գումարին: Յեսի օրենքը ճշնարիտ է նիստ, եթե P և T կամ V և T հաստատում են և հանդիսանում է թերմոդինամիկայի առաջին օրենքի մասնավոր դեպքը: Յամածայն առաջին օրենքի իզոբար պայմաններում համակարգին հաղորդված ջերմությունը բացարձակ արժեքով հավասար է  $\Delta H$ -ին նշանով հակառակ.**

$$Q_P = -\Delta H$$



Սա նշանակում է, որ նշված պայմաններում  $Q$ -ն ձեռք է բերում վիճակի ֆունկցիայի հատկություն: Այս պնդումը Յեսի օրենքի եռությունն է:

Յեսի օրենքը կարելի է ձևակերպել նաև այսպես. **Իզոբար-իզոթերմ կամ իզոխոր-իզոթերմ հաստատուն պայմաններում քիմիական ռեակցիայի էնթալպիայի փոփոխությունը հաստատուն է և կախված չէ այն փուլերից, որոնց օգնությամբ իրականացվում է այդ փոփոխությունը:**


**Օրինակ 2. Երկարը թթվածնի հետ փոխազդելիս առաջացել է բարձրագույն օքսիդ.**



Այդ ռեակցիան կարելի է իրականացնել նաև երկու փուլով.



Գումարելով (2) և (3) հավասարումները կստանանք (1) ջերմացիմիական հավասարումը:



Բերված օրինակից, ինչպես նաև սխեմայից երևում է, որ

$$\Delta H = \Delta H_1 + \Delta H_2 = -531.4 + (-289.5) = -820.9 \text{ kJ}$$

Յեսի օրենքը լայնորեն կիրառվում է բժկության մեջ, այն ընկած է սմնդամբերքների կալորիականության որոշման հիմքում: Կալորիմետրում որոշակի զանգվածով սննդանյութերի այրման ջերմությունը հավասար է այն գումարային էներգիային, որն անջատվում է օրգանիզմում կենսաքիմիական պրոցեսների ժամանակ, նույն զանգվածով սննդանյութերի օքսիդացումից: Յեսի օրենքից բխում են մի շարք կարևոր հետևողություններ:

**Հետևողություն** 1. Նյութը առաջանալիս անջատվում (հազվաբեակ կլանվում) է նույնքան ջերմություն, որքան կլանվում (հազվաբեակ անջատվում) է նրա քայլայման ժամանակ: Քիմիական միացության քայլայման և առաջացման ջերմություններն իրենց բացարձակ արժեքներով հավասար են, իսկ նշանով հակառակ՝

$$\Delta H_{\text{քայլ}} = -\Delta H_{\text{առաջ}}, \quad \Delta H_{\text{քայլ}} + \Delta H_{\text{առաջ}} = 0$$

Քիմիական միացության առաջացման ջերմություն ( $\Delta H_f$ , f-formation) է կոչվում ջերմության այն քանակը, որն անջատվում է (հազվաբեակ կլանվում) պարզ, ստանդարտ պայմաններում կայուն նյութերից 1 մոլ բարդ նյութի առաջացման ժամանակ:

Քիմիական միացության քայլայման ջերմություն է կոչվում ջերմության այն քանակը, որը կլանվում է (հազվաբեակ անջատվում) ստանդարտ պայմաններում 1 մոլ բարդ նյութի քայլայման ժամանակ մինչև պարզ նյութեր:

**Օրինակ 3.** Ծծմբի այրման ժամանակ անջատվել է 73.48 կՋ ջերմություն և ստացվել է 16 գ  $\text{SO}_2$ : Որոշել  $\text{SO}_2$ -ի առաջացման ջերմությունը՝  $\Delta H_f^0$ :

**Լուծում.**  $\text{S}_{(\text{s})} + \text{O}_{2(\text{q})} = \text{SO}_{2(\text{q})}, \quad \Delta H^0_f$

$$16 \text{ SO}_2 \text{ ----- } (-73.48) \text{ կՋ}$$

$$64 \text{ SO}_2 \text{ ----- } \Delta H_f^0$$


$$\Delta H_f^0 = \frac{64 \cdot (-73.48)}{16} = -293.9 \text{ կՋ/մոլ}$$

$$\Delta H_{\text{քայլ}}^0 = 293.9 \text{ կՋ/մոլ}$$


**Հետևություն 2.** Ուեակցիայի ջերմէֆեկտը հավասար է վերջնանյութերի առաջացման ջերմությունների գումարից հանած ելանյութերի առաջացման ջերմությունների գումարը՝ հաշվի առնելով ստեխիոմետրիկ գործակիցները:

$$\Delta H = \sum \Delta H_{f(\text{պեր})} - \sum \Delta H_{f(\text{ել})} \quad (1.8.)$$

**Օրինակ 4.** Որդել *Thiobacillus thioparus* բակտերիայում ընթացող ռեակցիայի ստանդարտ ջերմային էֆեկտը.



Օգտվելով միացությունների առաջացման ստանդարտ ջերմէֆեկտներից (կԶ/մոլ)՝  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3(\text{պ})$ ՝ 1117;  $\text{H}_2\text{O}_{(\text{հ})}$ ՝ 286;



$$\begin{aligned} \text{Լուծում. } \Delta H &= 5(-1438) + (-814) - 5(-1117) - (-286) = \\ &= -7190 - 814 + 5585 + 286 = -2133 \text{ կԶ} \end{aligned}$$

Ստանդարտ պայմաններում կայուն վիճակում գտնվող պարզ նյութերի առաջացման ջերմություններն ընդունվում են հավասար գորոյի: Եթե պարզ նյութերը ստանդարտ պայմաններում անկայուն են, ապա  $\Delta H^0_f \neq 0$ : Օրինակ, կարմիր ֆուսֆորի առաջացման ջերմությունը հավասար է՝  $\Delta H^0_f(\text{կարմիր}) = -17.38 \text{ կԶ/մոլ}$

Չափ նյութերի, հատկապես օրգանական միացությունների առաջացումը հնարավոր չէ իրականացնել պարզ նյութերից, հետևաբար հնարավոր չէ որդել  $\Delta H^0_f$ -ը: Սակայն հնարավոր է իրականացնել նրանց լրիվ այրման ռեակցիաները:

**Այրման ջերմություն** է կոչվում ջերմության այն քանակը, որն անջատվում է մեկ մոլ նյութը այրելիս (մինչև բարձրագույն օքսիդներ): Եթե հայտնի են ռեակցիային մասնակցող նյութերի այրման ջերմությունները, կարելի է հաշվել ռեակցիայի ջերմէֆեկտը:

**Հետևություն 3.** Ուեակցիայի ջերմէֆեկտը հավասար է ելանյութերի այրման ջերմությունների գումարից հանած վերջնանյութերի այրման ջերմությունների գումարը, հաշվի առնելով ստեխիոմետրիկ գործակիցները:

$$\Delta H = \sum \Delta H_{\omega_j(\text{ել})} - \sum \Delta H_{\omega_j(\text{պեր})} \quad (1.9.)$$

**Օրինակ 5.** Քաշվել  $\text{CH}_3\text{OH}$ -ի առաջացման ջերմությունը, եթե հայտնի է, որ

$$\Delta H_{\omega_j(\text{C})} = -393,5 \text{ կԶ/մոլ}, \quad \Delta H_{\omega_j(\text{H}_2)} = -286 \text{ կԶ/մոլ}$$


$$\Delta H_{\omega_j(\text{CH}_3\text{OH})} = -715,52 \text{ կԶ/մոլ}$$

$$\text{Լուծում: } \text{C}(\text{պ}) + 2\text{H}_2(\text{զ}) + \frac{1}{2}\text{O}_2(\text{զ}) = \text{CH}_3\text{OH}(\text{զ})$$


$$\begin{aligned} \Delta H_f(\text{CH}_3\text{OH}) &= \Delta H_{\omega_j(\text{C})} + 2\Delta H_{\omega_j(\text{H}_2)} - \Delta H_{\omega_j(\text{CH}_3\text{OH})} = \\ &= -393,5 + 2 \cdot (-286) - (-715,52) = -249,98 \text{ կԶ/մոլ} \end{aligned}$$

**Օրինակ 6.** Որոշել մեկ մոլ ջրի գոլորշագոյացման ջերմությունը, եթե հայտնի է, որ  $25^{\circ} \text{C}$ -ում հեղուկ ջրի  $\Delta H_f = -285 \text{ kJ}$ , իսկ ջրային գոլորշու՝  $\Delta H_f = -241,8 \text{ kJ}$ :


**Լուծում:** Գոլորշագոյացման ջերմությունը ( $\Delta H_{\text{գոլ.}}$ ) մեկ մոլ նյութը հեղուկ վիճակից գազայինի փոխարկման պրոցեսի էնթալփիայի փոփոխությունն է (այդ նյութի եռանան կետում), այն դրական մեծություն է: Ջրային գոլորշու ստացումը իրականացվում է մեկ փուլով.



կամ երկու փուլով.




Ինչպես երևում է սխեմայից («Հետի եռանկյուն»).





$$\Delta H_x = -241,8 - (-285,8) = 44 \text{ kJ/մոլ}$$

**Օրինակ 7.** Յաշշել  $\text{Si}_{\text{ամոր}}$   $\rightarrow$   $\text{Si}_{\text{բյուրեղ}}$ . Փոխարկման ջերմությունը ( $\Delta H_{\text{փոխ.}}$ ), եթե այդ ձևափոխությունների այրման ջերմությունները համապատասխանաբար կազմում են  $-867,3$  և  $-850,6 \text{ kJ}$ :

**Լուծում:** Ամորֆ  $\text{Si}$  միանգամայն կարելի է օքսիդացնել մինչև  $\text{SiO}_2$ :



Օքսիդացումը կարելի է կատարել նաև երկու փուլով.



$$\Delta H_x = -867,3 - (-850,6) = -16,7 \text{ kJ/մոլ}$$

Ջերմության այն քանակը, որն անջատվում կամ կլանվում է մեկ մոլ նյութը լրիվ սոլվատացման համար բավարար քանակով լուծիչում լուծելիս, կոչվում է լուծման ջերմություն (լուծիչի հետագա ավելացումը նկատելի լրացնեցիչ ջերմէֆեկտներ չի առաջացնում):

$$\Delta H_{\text{լուծ.}} = \Delta H_{\Phi,\psi} + \Delta H_{\text{սոլ.}}$$

$\Delta H_{\Phi,\psi}$ . (Փազային փոխարկում) պինդ նյութի բյուրեղավանդակի քայլայման և լուծված նյութի մասնիկների լուծիչի ծավալում բաշխման պրոցեսների ջերմէֆեկտն է, այն դրական է ( $\Delta H_{\Phi,\psi} > 0$ ), քանի որ բյուրեղավանդակի քայլայումը, և լուծված նյութի դիֆուզիան լուծիչի ծավալում ուղեկցվում են էներգիայի ծախսով:  $\Delta H_{\text{սոլ.}}$  պայմանավորված է լուծված նյութի և լուծիչի քիմիական փոխազդեցությամբ և սոլվատների (Եթե լուծիչը ջուրն է՝ հիդրատների) առաջացմամբ, այն միշտ բացասական է ( $\Delta H_{\text{սոլ.}} < 0$ ):


Ընդհանրապես  $\Delta H_{\text{լուծ.}}$  իր բացարձակ մեծությամբ և նշանով կախված է նրանից, թե այդ երկու գումարելիներից ո՞րն է մեծ: Եթե լուծվում են գազեր, հեղուկներ և հեշտ սոլվատացող (հիդրատացող) պինդ նյութեր,  $\Delta H_{\text{լուծ.}} < 0$  (էկզոռերմ): Պինդ, վատ սոլվատացող նյութերի կամ այնպիսի նյութերի, որոնք մինչև լուծվելը սոլվատներ են (հիդրատներ)՝  $\Delta H_{\text{լուծ.}} > 0$  (էնդոռերմ):

**Օրինակ 8.** Քաշվել  $\text{CuSO}_4 \rightarrow \text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$  անցման ջերմությունը ( $\Delta H_{\text{հիդր.}}$ ), եթե  $\text{CuSO}_4$  և  $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$  լուծման  $\Delta H$ -երը համապատասխանաբար հավասար են՝

$$\Delta H_1 = -66,7 \text{ և } \Delta H_2 = 11,7 \text{ kJ/mol:}$$

$$\Delta H_{\text{հիդր.}} = -66,7 - 11,7 = -78,4 \text{ kJ/mol:}$$

**Լուծում:** Ինչպես երևում է «Հեսի եռանկյունուց».



**Չեզոքացման ջերմությունը ( $\Delta H_{\text{չեզ.}}$ )** ջերմության այն քանակն է, որն անջատվում է թթվի համարժեք (էկվիվալենտ) 1 մոլը հիմքի համարժեք 1 մոլով չեզոքացնելիս: Եթե փոխազդում են միահիմն ուժեղ թթուն և միաթթու ուժեղ հիմքը,  $\Delta H_{\text{չեզ.}}$  հաստատուն է:

$$\text{H}^+_{\text{հիդր.}} + \text{OH}^-_{\text{հիդր.}} = \text{H}_2\text{O}, \quad \Delta H_{\text{չեզ.}} = -57,1 \text{ kJ/mol}$$

Եթե չեզոքացման ռեակցիային մասնակցող էլեկտրոլիտներից թթուն կամ հիմքը թույլ են, ապա  $\Delta H_{\text{չեզ.}}$  փոքր է նշված սահմանային արժեքից, քանի որ ջերմության մի մասը ծախսվում է թույլ էլեկտրոլիտի դիսուցման համար:

#### 1.4.1. Լաբորատոր աշխատանք

**Փորձ 1. Չեղոքացման ռեակցիայի ջերմեֆեկտի (էնթալփիայի) որոշումը ( $\Delta H_{\text{եք}}$ ):** Կալորիմետրի ներքին չոր անորի մեջ լցնել 25 մլ 1Մ նատրիումի կամ կալիումի հիդրօքսիդի լուծույթ, լուծույթի մեջ ընկողմել  $0,1^{\circ}$  ծշտուրյուն ունեցող ջերմաչափ (առանց անորի հատակին հպելու) և չափել լուծույթի ջերմաստիճանը՝  $t_1$ : Ոչ մեծ բաժակի մեջ լցնել 25 մլ 1Մ կոնցենտրացիայի աղաթքու և չափել նրա ջերմաստիճանը: Ապակյա ծագարի միջոցով թթվի լուծույթը զգուշորեն, արագ ավելացնել հիմքի լուծույթին և խառնիչով խառնելով հետևել ջերմաստիճանի փոփոխությանը: Գրանցել ջերմաչափի առավելագույն ցուցմունքը ( $t_2$ ):

**Փորձի տվյալները և հաշվումները:**

Լուծույթի սկզբնական ջերմաստիճանը՝  $t_1 = \dots^{\circ}\text{C}$ ,

Լուծույթի ամենաբարձր ջերմաստիճանը՝  $t_2 = \dots^{\circ}\text{C}$ ,

Լուծույթի ընդիհանուր զանգվածը  $m$

Փորձի տվյալների հիման վրա կատարել հաշվումները:

1. Որոշել անջատված ջերմության քանակը  $Q = cm\Delta t$  բանաձևով (1.1.), որտեղ  $c$ -ն լուծույթի տեսակարար ջերմունակությունն է, որն ընդունվում է հավասար ջրի տեսակարար ջերմունակությանը (4,2 կջ/կգ.աստ.),  $m = 0,05$  կգ (քանի որ լուծույթները նույն են, խտություններն ընդունվում են հավասար ջրի խտությանը՝  $1\text{գ}/\text{մլ}$ ),  $\Delta t = t_2 - t_1$ :

$$Q = 4,2 \cdot 0,05 \cdot (t_2 - t_1) \text{ կՋ}$$


2. Յաշվել  $\text{H}^{+}_{(\text{l-p})} + \text{OH}^{-}_{(\text{l-p})} = \text{H}_2\text{O}_{(\text{l-p})}$  չեղոքացման ռեակցիայի արդյունքում գոյացած ջրի մոլերի թիվը և  $Q$ -ն վերահաշվել մեկ մոլ ջրի համար:

25 մլ 1Մ  $\text{HCl}$  պարունակում է  $0,025$  մոլ  $\text{H}^{+}$  և գոյանում է  $0,025$  մոլ  $\text{H}_2\text{O}$ : Քանի որ  $\Delta H = -Q$ , ապա  $\Delta H = \frac{Q}{n}$ ,  $\Delta H = \frac{-Q}{0,025}$  կՋ/մոլ,

3. Որոշել փորձի հարաբերական սխալը (%):

$$\text{Շ.Ս. \%} = \frac{\Delta H_{\text{տես}} - \Delta H_{\text{Փորձ}}}{\Delta H_{\text{տես}}} \cdot 100\%$$

որտեղ՝  $\Delta H_{\text{տես}}$ . ռեակցիայի էնթալփիայի փոփոխության տեսական արժեքն է և հավասար է  $56,8$  կՋ/մոլ, իսկ  $\Delta H_{\text{փորձ}}$ ՝ փորձով որոշվածը:



### Ակ.1.1. Պարզեցված կալորիմետր

- 1- ներքին անոթ
- 2.- արտաքին անոթ
- 3.- ջերմաչափ
4. - խառնիչ
5. – ձագար

### Փորձ 2. Ջիդրատացման էնթալպիայի (ջերմէֆեկտի) որոշումը

Ջիդրատացման էնթալպիան ( $\Delta H_{\text{հիդր.}}$ ) անմիջական փորձով որոշել հնարավոր չէ: Անհրաժեշտ է կատարել երկու փորձ՝ որոշել անջուր աղի լուծնան էնթալպիան ( $\Delta H$ ) և բյուրեղահիդրատի լուծնան էնթալպիան ( $\Delta H_1$ ):

**1. փորձ:** Անջուր աղի էնթալպիայի ( $\Delta H$ ) որոշումը: Փորձի համար օգտագործել ջրում լուծվող այնպիսի աղեր, որոնց լուծնան ջերմությունները բացարձակ արժեքով մեծ են 20 կՋ/մոլ-հց: Օրինակ՝  $\text{NaNO}_3$ ,  $\text{NH}_4\text{NO}_3$ ,  $\text{KNO}_3$ ,  $\text{Na}_2\text{CO}_3$ ,  $\text{CuSO}_4$  և այլն: Ավելի փոքր լուծնան ջերմություն ունեցող աղերի օգտագործումը ցանկալի չէ, քանի որ պարզեցված կալորիմետրով աշխատելիս փորձի սխալը կլինի մեծ: Տեխնարհիմիական կշեռքով մոնարդի վրա կշռել 3գ աղ (նշվածներից որևէ մեկը): Պիտետով չափել 25 մլ թորած ջուր, լցնել կալորիմետրի ներքին անորի մեջ: Զրի մեջ ընկղմել ջերմաչափը (առանց անորի հատակին հպելու) և չափել կալորիմետրում եղած ջրի ջերմաստիճանը  $0.1^{\circ}$  ճշտությամբ: Մոնարդից պատրաստել ձագար, տեղադրել այն խցանի դատարկ անցքում. Կշռված աղը նրա միջով գցուշորեն լցնել անորի մեջ և ապա անցը փակել խցանով: Լուծույթը խառնելով, հետևել ջերմաստիճանի փոփոխությանը:

**2 փորձ:** Բյուրեղահիդրատի լուծնան էնթալպիայի ( $\Delta H_1$ ) որոշումը: Վերը նշված հաջորդականությամբ փորձը կրկնել բյուրեղահիդրատի համար: Փորձի համար կշռել 5գ բյուրեղահիդրատ (ընտրված աղի բյուրեղահիդրատը):

Առաջին և երկրորդ փորձում համապատասխանաբար գրանցել ամենաբարձր կամ ամենացածր ջերմաստիճանը:

**Փորձի տվյալները և հաշվարկները:**

Զրի սկզբնական ջերմաստիճանը կալորիմետրում  $t_1 = \dots ^{\circ}\text{C}$

Լուծույթի էքստրեմալ ջերմաստիճանը կալորիմետրում  $t_2 = \dots ^{\circ}\text{C}$

Կալորիմետրում եղած ջրի զանգվածը (այն հավասար է վերցրած ջրի ծավալին):

$$m_{ջուր} = \dots \text{ գ}$$

Լուծված աղի զանգվածը:

$$m_{աղ} = \dots \text{ գ}$$


Այս տվյալների հիման վրա կատարել հետևյալ հաշվումները.

1. Գիտենալով, որ լուծույթի զանգվածը հավասար է ջրի և աղի զանգվածների գումարին ( $m_{ջուր} + m_{աղ}$ ) և լուծույթի ջերմունակությանը՝ 4,19 կ.ջ/գ.աստ., իսկ խոռոչունը՝ ջրի խոռոչյանը (1գ/մոլ), հաշվել աղի լուծնան ջերմությունը 1 մոլի համար հետևյալ բանաձևով.

$$\Delta H = \frac{c \cdot (m_{ջուր} + m_{աղ}) \cdot \Delta t \cdot M}{m_{աղ} \cdot 1000} \text{ կ.ջ/մոլ}$$

որտեղ՝  $M$ -ը տվյալ աղի մոլային զանգվածն է,  $\Delta t = t_2 - t_1$ :

Անջուր աղի լուծնան ժամանակ տեղի է ունենում հիդրատացում և ստացված բյուրեղահիդրատի լուծում ջրի մեջ: Օրինակ  $Na_2CO_3$ -ի համար այդ պրոցեսներն արտահայտվում են հետևյալ հավասարումներով.



Այդ իսկ պատճառով անջուր աղի լուծնան էնթալփիան ( $\Delta H$ ) հավասար է անջուր աղի հիդրատացման էնթալփիայի ( $\Delta H_{հիդ}$ ) և գոյացած բյուրեղահիդրատի լուծնան էնթալփիայի ( $\Delta H_1$ ) հանրահաշվական գումարին.

$$\Delta H = \Delta H_1 + \Delta H_{հիդ}.$$

$$\Delta H_{հիդ} = \Delta H - \Delta H_1$$

2.  $\Delta H_{հիդ}$ -ի փորձնական և տեսական արժեքների հիման վրա հաշվել հարաբերական սխալը (անհրաժեշտ տվյալները վերցնել աղյուսակից):

## 1.5. Թերմոդինամիկայի երկրորդ օրենքը: Էնտրոպիա:

Բնության մեջ մեծ թվով պրոցեսներ առանց արտաքին ազդեցության ինքնաբերաբար են ընթանում միայն որոշակի ուղղությամբ: Զուրը հիսուսն է վերևից ներքև, ջերմությունը տաք մարմնից փոխանցվում է սարին: Ինքնաբերաբար ընթացող պրոցեսները տարբերվում են մյուսներից իրենց ոչ դարձելի բնույթով: Ցուրաբանյուրը այդպիսի պրոցես կարելի է օգտագործել օգտակար աշխատանք կատարելու համար: Բոլոր ռեալ պրոցեսները անդարձելի են: Անդարձելի են կոչվում այն թերմոդինամիկական պրոցեսները, որոնց դեպքում համակարգի վերադարձը ելային վիճակի հնարավոր է միայն արտաքինից էներգիա ծախ-

սելու դեպքում: Անդարձելի պրոցեսները բնութագրվում են էներգիայի մի մասի փոխարկումով ջերմության, ընդ որում որքան մեծ է այդ մասը, այնքան ավելի անդարձելի է տվյալ պրոցեսը: Քանի որ պրոցեսը ընթանալու ժամանակ տեղի է ունենում էներգիայի կորուստ ջերմության ձևով, այն աշխատանքը, որը կատարվում է համակարգի կողմից ինքնաբերաբար պրոցեսի ժամանակ ավելի փոքր է, քան այն աշխատանքը, որը պետք է ծախսել համակարգը ելային վիճակի բերելու համար: Թերմոդինամիկան դիտարկում է և դարձելի պրոցեսները, այսինքն այն պրոցեսները, որոնք ընթանում են երկու ուղղություններով՝ համակարգի վրա ազդող ուժերի անսահման փոքր փոփոխությունների դեպքում, երբ կարելի է ընդունել, որ երկու ուղղությամբ էլ չի փոխվում համակարգի աշխատունակությունը: Թերմոդինամիկորեն դարձելի է այն պրոցեսը, որն իրականացվում է անվերջ դանդաղ: Իզոթերմ դարձելի պրոցեսի ժամանակ համակարգի կորցրած էներգիան հավասար է նրա շրջապատող միջավայրից ծեռք բերած էներգիային: Դարձելի պրոցեսի իրականացման ժամանակ էներգիայի ցրում ջերմության ձևով տեղի չի ունենում: Բնության մեջ տեղի ունեցող պրոցեսներից ոչ մեկը, ներառյալ մարդու արտադրական գործունեության հետ կապված պրոցեսները, թերմոդինամիկական իմաստով դարձելի չեն: Իրական պրոցեսները միայն կարելի է մոտեցնել դարձելի պրոցեսի ընթանալու պայմաններին՝ նվազագույնի հասցնելով կորուստները, պրոցեսն իրականացնելով հավասարակշռային վիճակի մոտ: Թերմոդինամիկորեն դարձելի պրոցեսն իդեալական է և գործնականում անիրագործելի: Դարձելի (հավասարակշռային) պրոցեսի ժամանակ համակարգը կատարում է առավելագույն օգտակար աշխատանք: Որոշելով աշխատանքի մեծությունը իրական պրոցեսի ժամանակ և համեմատելով այն դարձելի պրոցեսի աշխատանքի հետ՝ կարելի է դատել պրոցեսի արդյունավետության մասին:

Թերմոդինամիկայի առաջին օրենքը պատկերացում է տալիս համակարգում էներգետիկ փոփոխությունների մասին՝ ջերմության և աշխատանքի ձևով, թույլ է տալիս քանակապես հաշվել համակարգի էներգետիկ փոփոխությունները, սակայն ինարավորություն չի տալիս որոշել պրոցեսի ինքնաբերաբար ընթացքի սկզբունքային հնարավորությունը և ուղղությունը, պարզել, որո՞նք են պրոցեսի ընթանալու իրական սահմանները, ո՞րն է համակարգի ռեակցիոնունակության և պրոցեսի ընթանալու ինարավորության քանակական չափանիշը: Այդ հարցերին պատասխանելու համար մտցվում է ևս մեկ թերմոդինամիկական ֆունկցիա՝ էնտրոպիա:

Թունսնը (1853թ.), հետո Բերտլոն (1867թ.) արտահայտեցին այն միտքը, որ ինքնաբերաբար ընթանում են միայն էկզորթերմ ռեակցիաները: Ըստ Բերտլոյի՝ նյութերի քիմիական խնամակցության չափը ռեակցիայի ջերմէֆեկտն ( $\Delta H$ ) է: Իրոք, ինքնաբերաբար ընթացող ռեակցիաների մեծ մասն էկզորթերմ են, ընդ որում, որքան մեծ է անշատված ջերմության քանակը, այնքան ավելի բուռն են ընթանում այդ

ռեակցիաները: Բնության մեջ բոլոր նյութական համակարգերը հակված են նվազագույնի հասցենել իրենց ներքին էներգիան: Սակայն հայտնի են նաև շերմության կլանումով ինքնարերաբար ընթացող պրոցեսներ, օրինակ՝ որոշ աղերի ( $\text{NH}_4\text{CNS}$ ,  $\text{NH}_4\text{NO}_3$ ,  $\text{KMnO}_4$ ,  $\text{KNO}_3$ ,  $\text{AgNO}_3$  և այլն) լուծումը ջրում կամ սովորական ջերմաստիճանում  $\text{H}_2\text{CO}_3$ -ի քայլացումը, ջրի գոլորշիացումը: Յետևաբար, ներքին էներգիայի պաշարը նվազագույնի հասցեելու ձգտումը պրոցեսի ընթանալու միակ շարժիչ ուժը չէ: Մյուս շարժիչ ուժը համակարգի ձգտումն է հասնելու առավելագույն անկարգավորվածության, որը ցանկացած համակարգի համար ամենահավանական վիճակն է: Բնության մեջ բոլոր համակարգերը ձգտում են ամենամեծ մոլեկուլային անկարգավորվածության, ջերմաստիճանների, ճնշումների, կոնցենտրացիաների հավասարեցման:

Ցանկացած համակարգի վիճակը կարելի է բնութագրել երկակի.

1. Նշել անմիջականորեն չափելի հատկություններ ( $T, P, V$ )՝ մակրովիճակի բնութագրերը,

2. Նշել յուրաքանչյուր մասնիկի ակնթարթային բնութագրերը (տեղաշարժման արագությունը, ուղղությունը, կոռորդինատները և այլն)՝ միկրովիճակների բնութագրերը:

Միկրովիճակների թիվը, որոնցով իրականացվում է տվյալ մակրովիճակը, կոչվում է թերմոդինամիկական հավանականություն ( $W$ ):  $W$ -ն վիթխարի թիվ է, քանի որ ցանկացած մակրոհամակարգ պարունակում է հսկայական թվով մասնիկներ, որոնց կոռորդինատները շարժման ընթացքում անընդհատ փոփոխվում են:  $W$ -ի այդպիսի հսկայական մեծությունից օգտվելը հարմար չէ: Այդ պատճառով մտցվել է մի նոր ֆունկցիա՝ էնտրոպիա ( $S$ ) (հուն. էն-ներս, տրոպ-փոփոխություն), որն ուղիղ համեմատական է համակարգի տվյալ վիճակում գտնվելու թերմոդինամիկական հավանականության բնական լոգարիթմին: Բոլցմանի հավասարումը կապ է հաստատում էնտրոպիայի և համակարգի վիճակի հավանականության՝  $W$ -ի միջև՝

$$S = k \ln W = \frac{R}{N_A} \ln W \quad (1.10.)$$

(1.10.) էնտրոպիայի վիճակագրական որոշման հավասարումն է:  
 $S - \text{ի } \chi_{\text{ափողականությունն } \text{ է } \mathcal{Q}/\Delta \text{ոլ.} \text{K}$ :

Էնտրոպիայի փոփոխությունը հավասար է.

$$\Delta S = k \ln \frac{W_2}{W_1}$$

որտեղ  $W_1$  և  $W_2$  համակարգի թերմոդինամիկական հավանականություններն են համապատասխան վիճակներում:

Անկարգավորվածությունը մեծացնող բոլոր փոփոխությունների (տաքացում, հալում, գոլորշիացում) արդյունքում էնտրոպիան մեծանում է  $\Delta S > 0$ : II-րդ օրենքի համաձայն էնտրոպիան վիճակի ֆունկցիա է, որի փոփոխությունը հավասար է համակարգի կողմից դարձելիորեն

կլանված կամ անջատված ջերմության քանակին բաժանած այն բացարձակ ջերմաստիճանի վրա, որում տեղի է ունենում այդ պրոցեսը (1.2.):

Դարձելի իզոթերմ պրոցեսի  $\Delta S = \frac{Q_T}{T}$  ( $\Delta S$  –ի թերմոդինամիկական որոշման հավասարումն է):

Անդարձելի պրոցեսի  $\Delta S > \frac{Q_T}{T}$ : Մեկուսացված համակարգում  $Q=0$

և  $\Delta S > 0$  (անդարձելի պրոսես) կամ  $\Delta S = 0$  (դարձելի պրոցես):  $\Delta S$  –ը այն ջերմային էներգիան է, որն օգտակար աշխատանքի չի փոխարկվում:

Թերմոդինամիկայի երկրորդ օրենքը ունի ևս մի քանի սահմանումներ, որոնք համարժեք են և բխում են մինյանցից.

- մեկուսացած համակարգում ընթանում են միայն այն պրոցեսները, որոնք ուղեկցվում են էնտրոպիայի աճով,
- հնարավոր չէ ջերմությունը սառը մարմնից փոխանցել ավելի տաքին առանց աշխատանք կատարելու (Կլաուզիուս),
- յուրաքանչյուր համակարգ ինքնարերաբար փոխվում է այն ուղղությամբ, որն ավելի հավանական է (Լյուիս),
- հնարավոր չէ պատրաստել այնախսի մեքենա, որն ամբողջ ջերմությունը վերածի աշխատանքի առանց շրջապատող միջավայրում փոփոխություններ առաջացնելու (Պլանկ):

**Էնտրոպիայի թերմոդինամիկական որոշումը տարբեր պրոցեսներում:**

1. քիմիական ռեակցիայի  $\Delta S$  –ը հաշվում են համաձայն Հեսի օրենքի, քանի որ  $S$  –ը վիճակի ֆունկցիա է:

$$\Delta S = \Sigma S_f^0 q_{\text{երջ}} - \Sigma S_i^0 \epsilon_{\text{լամ-}} \quad (1.11)$$

որտեղ  $S_f^0$  նյութերի ստանդարտ առաջացման էնտրոպիաների բացարձակ արժեքներն են:

2. Իդեալական գազի դարձելի իզոթերմ ընդարձակման աշխատանքը հավասար է՝

$$A_T = Q_T = nRT \ln \frac{V_2}{V_1}, \quad \Delta S = \frac{Q_T}{T} = nR \ln \frac{V_2}{V_1}$$

3. Աղերի լուծնան պրոցեսի  $\Delta S$  –ը որոշում են հետևյալ հավասարումով.

$$\Delta S = k \ln \frac{W_2}{W_1}$$

որտեղ  $W_2$  –ը լուծույթի,  $W_1$  –ը լուծիչի թերմոդինամիկական հավանականություններն են:

Երկրորդ օրենքի մաթեմատիկական արտահայտությունից հետևում է.

$$\Delta S = \frac{Q_T}{T} = nR \ln \frac{V_2}{V_1} = nR \ln \frac{P_1}{P_2}$$

Ամերամեջտ է նշել, որ դարձելի պրոցեսներում համակարգը ծախսելով նվազագույն ջերմություն կատարում է առավելագույն աշխատանք՝  $A_{max}$ , իսկ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը հավասար է՝

$$\eta_{max} = \frac{A_{max}}{\Delta U} = 1 - \frac{Q_{min}}{\Delta U} \quad (1.12)$$

Անդարձելի պրոցեսներում կատարված աշխատանքը փոքր է  $A_{max}$ ,

$$\Delta S_{անդարձ} > \frac{Q_{անդարձ}}{T}$$

Բնության մեջ տեղի ունեցող բոլոր ռեալ պրոցեսներն անդարձելի են: Ի՞նչպես կարելի է ըստ  $\Delta S$  արժեքի կանխորոշել ինչ-որ պրոցեսի ինքնաբերաբար ընթանալու հնարավորությունը: Դիտարկենք երկու հավասար ծավալներով անորներից բաղկացած հանակարգ, որոնք իրար հետ միացված են խողովակով: Ենթադրենք այդ անորներում նույն մոլային զանգվածներով միմյանց հետ չքեակցող գազեր են՝  $N_2, CO$ : Ծորակը բացելուն պես տեղի է ունենում այդ գազերի ինքնաբերաբար խառնում դիֆուզիայի հետևանքով: Գործում է անկարգավորվածության մեծացման ձգուման մեխանիզմը: Այս օրինակում գազերի ինքնաբերաբար խառնման պրոցեսը տեղի կունենա առանց էներգետիկ փոփոխությունների: Գումարային ենթալպիան խառնումից առաջ և հետո նույնն է: Բայց խառնումը բերում է էներգիայի ավելի քանսային բաշխման: Խառնված գազերի իրարից անջատման (հակառակ) պրոցեսը ինքնաբերաբար տեղի չի ունենա, այն կիրականացվի միայն դրսից աշխատանք կատարելու դեպքում:

Այսպիսով, եթե ինչ-որ պրոցեսի ընթացքը բերում է մեկուսացված համակարգի անկարգավորվածության մեծացման, հետևաբար էնտրոպիայի մեծացման, դա նշանակում է, որ տեղի է ունենում համակարգում պարփակված էներգիայի պաշարի արժեզրկում, ընդ-որում որքան մեծ է էնտրոպիան, այնքան ավելի արժեզրկված է այդ էներգիան:

Էնտրոպիան բնութագրում է համակարգի ունեցած էներգիայի հարաբերական արժեքավորությունը: Եթե մեծանում է մեկուսացված համակարգի էնտրոպիան, դա նշանակում է, որ չնայած էներգիայի ընդհանուր պաշարը չի փոխվել, փոքրացել են նրա գործնական օգտագործման հնարավորությունները, նրա հիման վրա աշխատանք կատարելու հնարավորությունը:

Էնտրոպիան ֆիզիկաքիմիական փոխարկումների թերմոդինամիկական անդարձելիության չափն է: Որքան մեծ է  $\Delta S$  –ը, այնքան անդարձելի է տվյալ պրոցեսը:

Էնտրոպիան բնութագրում է համակարգի անկարգավորվածության և վիճակի հավանականության չափը:

## 1.6. Էնտրոպիայի կախվածությունը տարրեր գործոններից

1. Համակարգի էնտրոպիան միշտ աճում է ջերմաստիճանի աճի հետ, քանի որ մեծանում է նրա անկարգավորվածությունը: Եթե  $T_2 > T_1$ , ապա  $S_2 > S_1$ :

Բացարձակ զրո ջերմաստիճանում (- 273 K) իդեալական բյուրեղում բոլոր մասնիկների շարժումները դադարում են (իդեալական բյուրեղ) և տվյալ մակրովիճակը իրականացվում է մեկ միկրովիճակով ( $W = 1$ ):

$$S = \frac{R}{N_A} \ln 1 = 0 \quad (1.13)$$

Իդեալական բյուրեղի վիճակում գտնվող մաքուր նյութերի էնտրոպիան բացարձակ զրո աստիճանում հավասար է զրոյի (թերմոդինամիկայի 3-րդ օրենք):

2. Նյութը բյուրեղային վիճակից ամորֆ վիճակի անցնելիս, էնտրոպիան մեծանում է՝  $S_{\text{բյուրեղ}} < S_{\text{անօրֆ}}$ :



Էնտրոպիայի մեծացումը ավելի նշանակալից է, եթե նյութը պինդ (բյուրեղային կամ ամորֆ) վիճակից անցնում է հեղուկ կամ գազային վիճակի՝  $S_{\text{բյուրեղ}} < S_{\text{հեղուկ}} < S_{\text{գազ}}$ :

3. Եթե նյութի պինդ վիճակը իրականացվում է տարբեր բյուրեղային ձևափոխություններով, ապա ավելի կարծր կառուցվածքին համապատասխանում է էնտրոպիայի ավելի փոքր արժեքը: Այսպես, ալմաստի էնտրոպիան 2.4 անգամ փոքր է գրաֆիտի էնտրոպիայից:


$$S_{\text{պ.}} < S_{\text{գրաֆ.}}$$

4. ճնշման մեծացումը (ծավալի կրճատում) համակարգի էնտրոպիան փոքրացնում է:

5. Մոլեկուլի բարդացումը ատոմների թվի շատացման հաշվին (կառուցվածքի բարդացում) բերում է էնտրոպիայի աճի.





6. Պինդ նյութերի լուծման պրոցեսը միշտ ուղեկցվում է համակարգի էնտրոպիայի աճով: Բյուրեղավանդակի քայլքայման հետևանքով լուծվող նյութի մասնիկները բաշխվում են լուծիչի անհամեմատ ավելի մեծ ծավալում և մեծանում է համակարգի անկարգավորվածությունը՝ թերմոդինամիկական հավանականությունը: Գազային նյութերը հեղուկում լուծելիս էնտրոպիան նշանակալից փոքրանում է, քանի որ գազը լուծվում է հեղուկ ֆազի անհամեմատ փոքր ծավալում: Դեղուկը հեղուկում լուծելիս էնտրոպիայի փոփոխությունն աննշան է:



## Էնտրոպիայի փոփոխության հաշվարկի օրինակներ:

**Օրինակ 9.** Նոնոգեն և հետերոգեն համակարգերում էնտրոպիայի փոփոխությունն էական է, եթե ռեակցիային մասնակցում են գազային նյութեր: Գազի մոլերի թվի մեծանալիս՝  $\Delta S > 0$ , փոքրանալիս՝  $\Delta S < 0$ :




**Օրինակ 10.** Յաշվել 2 մոլ ջրածնի (գազ) լրիվ այրման ռեակցիայի  $\Delta S^0 - ը 25^\circ C$ -ում ըստ հետևյալ տվյալների՝

$$S_{H_2}^0(g) = 131 \text{ J/K}\cdot\text{моль}, \quad S_{O_2}^0(g) = 205 \text{ J/K}\cdot\text{моль},$$

$$S_{H_2O}^0(g) = 189 \text{ J/K}\cdot\text{моль}:$$

Լուծում.



$$\Delta S^0 = 2S^0_{H_2O(g)} - 2S^0_{H_2(g)} - 2S^0_{O_2(g)} = 2 \cdot 189 - 2 \cdot 131 - 205 = -89 \text{ J/K}\cdot\text{моль}$$

**Օրինակ 11.** Վերադառնանք օրինակ 1-ին և յուրաքանչյուր դեպքի համար հաշվենք  $\Delta S$ :

Լուծում.

$$ա) \quad \Delta S = nR \ln \frac{V_2}{V_1} = nR \ln \frac{P_1}{P_2} = 2,3 \cdot 0,85 \cdot 8,31 \lg \frac{15}{1} = 19,16 \text{ J/K}$$

$$\text{կամ } \Delta S = \frac{Q_{T_{\eta\omega\eta\delta}}}{T} = \frac{5749,6}{300} = 19,16 \text{ J/K}$$

$$բ) \quad \Delta S = nR \ln \frac{P_1}{P_2} = 2,3 \cdot 0,85 \cdot 8,31 \lg \frac{15}{1} = 19,16 \text{ J/K}$$

$$\text{կամ } \Delta S = \frac{Q_{T_{\eta\omega\eta\delta}}}{T} = \frac{5749,6}{300} = 19,16 \text{ J/K}$$

## 1.7. Պրոցեսի էնթալպիական և էնտրոպիական գործոնները

Ուսակցիայի որոշակի ուղղությամբ ինքնաբերաբար ընթացքի հնարավորությունը որոշվում է երկու գործոնով.

1. **Էնթալպիական գործոն:** Հայտնի է, որ ցանկացած քիմիական ռեակցիա ընթանում է ինքնաբերաբար, եթե համակարգում ներքին էներգիան ձգտում է նվազագույնի ( $\Delta U$  կամ  $\Delta H < 0$ ):

2. **Էնտրոպիական գործոն:** **Գիրսի ազատ էներգիա:** Համաձայն թերմոդինամիկայի 2-րդ օրենքի ինքնաբերաբար ընթանում են այն ռեակցիաները, որոնք ուղեկցվում են տիեզերքի էնտրոպիայի աճով, այսինքն պրոցեսի ինքնաբերաբար ընթացքի համար պահանջվում է,

որ համակարգի և շրջապատի էնտրոպիաների գումարային փոփոխությունը լինի դրական:

$$\Delta S_{\text{տիեզ}} = \Delta S_{2\text{րդ}} + \Delta S_{\text{համ}} > 0:$$

Պրոցեսի  $\Delta S_{\text{տիեզ}}$  նշանը որոշելու համար անհրաժեշտ է որոշել  $\Delta S_{\text{համ}}$  և  $\Delta S_{2\text{րդ}}$ : Յաշվի առնելով այն հանգամանքը, որ  $\Delta S_{2\text{րդ}}$  հաշվարկելը շատ ավելի դժվար է, քան  $\Delta S_{\text{համ}}$ , պետք է ունենալ մեկ այլ թերմոդինամիկական ֆունկցիա, որը կօգնի որոշել ռեակցիայի ինքնաբերաբար ընթանալու հնարավորությունը, ելնելով միայն համակարգի պարամետրերից: Քանի որ.

$$\Delta S_{2\text{րդ}} = - \frac{\Delta H_{\text{համ.}}}{T}$$

Տեղադրենք (1.11) հավասարման մեջ:

$$\Delta S_{\text{տիեզ}} = \Delta S_{\text{համ.}} - \frac{\Delta H_{\text{համ.}}}{T} > 0$$

Բազմապատկենք հավասարման երկու կողմերը ( $-T - \text{ով}$ ):

$$-\Delta S_{\text{տիեզ}} = \Delta H_{\text{համ.}} - T \cdot \Delta S_{\text{համ.}} < 0$$

Ստացված հավասարումից հետևում է, որ պրոցեսի ինքնաբերաբար ընթանալու չափանիշը արտահայտված է միայն համակարգի հատկությունները նկարագրող պարամետրերով և կարիք չկա ուսումնասիրել շրջապատը:

Նոր ֆունկցիան ( $-\Delta S$ ) ստացավ Գիրսի էներգիա ( $G$ ) անվանումը, որը գրականության մեջ հայտնի է ազատ էներգիա անունով ( $-\Delta S = \Delta G$ ):

Այն որոշվում է հետևյալ կերպ՝

$$G = H - T \cdot S$$

$$\Delta G = \Delta H - T \cdot \Delta S \quad (1.14)$$

(1.14) հավասարումից հետևում է, որ ինքնաբերաբար ընթացող ռեակցիայի համար  $\Delta G$  -ն ունի բացասական արժեք: Պրոցեսի շարժիք ուժը փաստորեն, էնթալպիական և էնտրոպիական գործոնների տարրերության արժեքն է:

$\Delta G$ -ն վիճակի ֆունկցիա է, կոչվում է համակարգի իզոբար-իզոթերմ պոտենցիալ և ունի կՁ/մոլ չափողականություն:

Յանակարգի հավասարակշռային վիճակում էնթալպիական և էնտրոպիական գործոնները հավասարվում են՝  $\Delta H = T \cdot \Delta S$ :

$$\Delta G = \Delta H - T \cdot \Delta S = 0:$$

Եթե համակարգում հավասարակշռությունը հաստատված չէ, ապա  $\Delta H \neq T \cdot \Delta S$ :

Ստանդարտ պայմաններում պարզ նյութերից մեկ մոլ բարդ նյութի առաջացման ռեակցիայի Գիրսի էներգիայի փոփոխությունը կոչվում է առաջացման ստանդարտ մոլային ազատ էներգիա: Չափողականությունն է՝ կՁ/մոլ:

Ստանդարտ պայմաններում (1.14) հավասարումն ընդունում է հետևյալ տեսքը.

$$\Delta G^0 = \Delta H^0 - T \cdot \Delta S^0 \quad (1.15)$$

Գիրսի էներգիան պրոցեսի ինքնարերաբար ընթացքի և ուղղության չափանիշ է: Գիրսի էներգիան նաև համակարգի աշխատումակության չափանիշն է և բնութագրում է այն օգտակար աշխատանքը, որը կարող է կատարել համակարգը այս կամ այն պրոցեսի ընթացքում:

Ցնարավորին չափ աշխատանք ստանալու համար պրոցեսը պետք է իրականացնել թերմոդինամիկորեն դարձելիության մոտ պայմաններում:

Գիրսի էներգիայի փոփոխության մեջությունը համակարգի քիմիական ռեակցիոնակության չափն է:

### Աղյուսակ

#### $\Delta H$ և $\Delta S$ մեջությունների ազդեցությունը պրոցեսների ուղղության վրա

	$\Delta H$	$\Delta S$	$\Delta G$	Ուսակցիաների օրինակներ	Պրոցեսի ընթացքի ուղղությունը
1	-	+	-	$2H_2O_{(h)} \rightarrow 2H_2O_{(h)} + O_{(g)}$ ; Այլնան ռեակցիաները	Պրոցեսն ինքնարերաբար կընթանա ցանկացած ջերմաստիճանում:
2	-	-	-	$N_{(g)} + 3H_{(g)} = 2NH_{(g)}$	Պրոցեսը ինքնարերաբար կընթանա ցածր ջերմաստիճանում:
3	+	+	-	$N_{(g)} + O_{(g)} = 2NO_{(g)}$ $CaCO_3_{(s)} = CaO_{(s)} + CO_{(g)}$	Պրոցեսը ինքնարերաբար կընթանա բարձր ջերմաստիճանում: Ցածր ջերմաստիճանում ռեակցիան կընթանա հակառակ ուղղությամբ:
4	+	-	+	$6CO_2 + 6O_2 \xrightarrow{h\nu \text{ Բլուրֆիլ}} C_6H_{12}O_6 + 6O_2$	Ցանկացած ջերմաստիճանում ռեակցիան անիրականանալի է: Այն ընթանում է ինքնարերաբար ցանկացած ջերմաստիճանի պայմանում հակառակ ուղղությամբ:

Եթե քիմիական ռեակցիան ընթանում է  $P$  և  $T$  հաստատում լինելու պայմաններում, ապա  $\Delta G$  կախված չէ պրոցեսի իրականացման ճանապարհից, այլ որոշվում է միայն ելանյութերի և վերջնանյութերի կազմությամբ և վիճակով և նրա համար ճշնարիտ է Քեսի օրենքը իր բոլոր հետևյուններով:

$$\Delta G^0_{n-w} = \Delta H^0 - T \cdot \Delta S^0$$

$$\Delta G^0_{n-w} = [c\Delta G^0_f(C) + d\Delta G^0_f(D)] - [a\Delta G^0_f(A) + b\Delta G^0_f(B)]$$

Կամ ընդհանուր ձևով.

$$\Delta G^0_{n-w} = \sum n \Delta G^0_f(\text{վերջնանյութեր}) - \sum m \Delta G^0_f(\text{ելանյութեր}) \quad (1.16.)$$

Պարզ նյութերի (էլեմենտների) առաջացման Գիրսի էներգիաները ( $\Delta G_f^0$ ) նրանց ստանդարտ վիճակում հավասար են 0-ի: Աղյուսակում բերված են ստանդարտ պայմանի չափանիշները:

Համակարգի վիճակ	Ստանդարտ վիճակ
Գազ	1 մթն ճնշում, 25°C
Ջեղուկ	Մաքուր հեղուկ, 25°C
Պինդ նյութ	Մաքուր պինդ նյութ, 25°C
Էլեմենտներ*	$\Delta G_f^0$ ( $t_1$ էներգ) = 0
Լուծույթ	Կոնցենտրացիան՝ 1 մոլ/լգ (1 մոլ/լ)

\* Առավել կայուն ալոտրոպ ձևը 25°C և 1 մթն ճնշման պայմանում:


Թերմոդիմամիկայի առաջին և երկրորդ օրենքների համակցությունը բույլ տվեց սահմանել պրոցեսի ինքնաբերաբար ընթացքի և հավասարակշռության վիճակի նոր չափանիշ:

## 2. Քիոքիմիական ռեակցիաների կինետիկայի ֆիզիմիական հիմունքները

### 2.1. Նիմնական հասկացություններ

Քիմիական ռեակցիայի սկզբունքային հնարավորության մասին կարելի է դատել ըստ Գիբսի էներգիայի փոփոխության: Սակայն այդ մեծությունը ոչ մի պատկերացում չի տալիս ռեակցիայի արագության և մեխանիզմի մասին:

**Օրինակ.** Գյուղական օքսիդացման ռեակցիան՝





գյուղական օքսիդացման ռեակցիան՝


Այս ռեակցիան թերմոդինամիկորեն շահավետ է և բարձրագույն օրգանիզմների կենսագործներության համար էներգիայի հիմնական աղբյուրն է: Սակայն հայտնի է, որ գյուղական աղնու կամ լուծված վիճակում օդի թթվածնի ներկայությամբ կարող է պահպանվել առանց փոփոխության երկար ժամանակ:

Քիմիական կինետիկան ուսումնասիրում է քիմիական ռեակցիայի ընթանալու արագությունը և մեխանիզմը: Ուեակցիաների կինետիկական ուսումնասիրումը հնարավորություն է տալիս բացահայտել նրանց մեխանիզմը, կանխագուշակել ռեակտների կոնցենտրացիայի, ջերմաստիճանի, կատալիզատորի ազդեցությունը ռեակցիայի արագության վրա:

Քիմիական կինետիկայում տարբերում են **հոմոգեն** և **հետերոգեն** ռեակցիաներ: Դա որոշվում է ռեակցվող նյութերի ագրեգատային վիճակով և կախված չէ վերջնանյութերի ագրեգատային վիճակից: **Հոմոգեն ռեակցիաներում ռեակցվող ելանյութերը գտնվում են միևնույն ֆազում, հետերոգեն ռեակցիաներում՝ տարբեր ֆազերում:**




Հոմոգեն ռեակցիայի օրինակ է նաև օքսիհեմոգլոբինի առաջացման ռեակցիան, քանի որ  $\text{HHb}$  և  $\text{O}_2$  լուծված են էլիպտոցիտների բջջային հեղուկում.



Կենսաքիմիական պրոցեսների մեջ մասն ընթանում է կենսաբանական քաղանքների ներսում կամ քաղանքների վրա:

Ըստ մեխանիզմի ռեակցիաները բաժանվում են պարզ և բարդ ռեակցիաների: Ուեակցիան կոչվում է պարզ, եթե վերջնանյութը գոյանում է ռեակցող մոլեկուլների (մասնիկների) անմիջական փոխագործությունից: Պարզ ռեակցիաները ընթանում են մեկ փուլով, որը հաճախ անվանում են տարրական ակտ: Օրինակ՝



Ուեակցիան կոչվում է բարդ, եթե վերջնանյութը գոյանում է երկու կամ ավելի պարզ ռեակցիաների՝ տարրական ակտների արդյունքում,

առաջացնելով միջանկյալ նյութեր (ինտերմեդիատներ): Բոլոր կենսաքիմիական ռեակցիաները բարդ են: Օրինակ, գյուղակողի օքսիդացումը թթվածնով, մինչև  $\text{CO}_2$  և  $\text{H}_2\text{O}$ , օրգանիզմում է 20-ից ավելի պարզ ռեակցիաների արդյունքում՝ առաջացնելով նույնքան միջանկյալ նյութեր:

**Քիմիական ռեակցիայի միջին արագություն** է կոչվում ռեակցիայի տարրական ակտերի (մասնիկների էֆեկտիվ բախումների) թիվը, որը միավոր ժամանակում տեղի է ունենալու միավոր ծավալում (հոմոգեն ռեակցիաներ), կամ ֆազերի բաժանման միավոր մակերեսի վրա (հետբերոգեն ռեակցիաներ): Սովորաբար հոմոգեն ռեակցիայի արագությունը որոշվում է ելանյութերից կամ վերջնանյութերից որևէ մեկի կոնցենտրացիայի փոփոխությամբ միավոր ժամանակում: Հոմոգեն և հետերոգեն ռեակցիաների **միջին արագությունները** որոշվում են՝

$$\bar{V}_{\text{հոմոգ}} = \pm \frac{\Delta C}{\Delta t} = \frac{\Delta n}{V \cdot \Delta t}, \quad \bar{V}_{\text{հետերոգ}} = \pm \frac{\Delta n}{S \cdot \Delta t} \quad (2.1)$$

Վերջնանյութերի կոնցենտրացիայի փոփոխությունը ցույց է տրվում «պյուտ» նշանով, սկզբնանյութերինը՝ «մինու» նշանով:

Օր. ըստ ելանյութերի  $V_{\text{միջ.}} = -\frac{C_2 - C_1}{t_2 - t_1} = -\frac{\Delta C}{\Delta t}$

Միավորների Միջազգային Յանակարգում (SI) ռեակցիայի արագության չափողականությունն է մոլ/լ·վրկ: Կենսաքիմիական հետազոտություններում բացի մոլ/լ կոնցենտրացիայից օգտվում են նաև մգ/100մլ կոնցենտրացիայից, իսկ արագությունն արտահայտում են  $[V] = \text{մգ}/100\text{մլ}\cdot\text{վրկ}$ :

**Խնդիր 1.**  $2\text{A} + \text{B} \rightarrow \text{C}$  համակարգում  $\text{A}$  նյութի սկզբնական կոնցենտրացիան 4 մոլ/լ է: 20 րոպեից հետո մնացել է 1,8 մոլ/լ նյութ:

Որոշել ռեակցիայի միջին արագությունը:

**Լուծում:** Ըստ տվյալների՝  $c_1 = 4 \text{ մոլ/l}$ ;  $c_2 = 1,8 \text{ մոլ/l}$ :

$$V_{\text{միջ.}} = -\frac{1.8 - 4}{20} = \frac{2.2}{20} = 0.11 \text{ մոլ/l} \cdot \text{րոպե}$$


Ուսակցիայի արագությունը փոփոխական մեջություն է: Փոխազդեցության ընթացքում նյութերի կոնցենտրացիաներն անընդհատ փոփոխվում են, փոխվում է նաև ռեակցիայի արագությունը: Այսինքն արագությունը ժամանակի ֆունկցիա է  $V = f(t)$ : Այս պատճառով միջին արագության փոխարեն օգտվում են ակնթարթային (իրական) արագությունից:

Ժամանակի տվյալ պահին ռեակցիայի իրական արագությունն արտահայտվում է նյութի կոնցենտրացիայի և կարգի ածանցյալով ըստ ժամանակի՝

$$V_{\text{իրական}} = \pm \lim_{\Delta t \rightarrow 0} \frac{\Delta C}{\Delta t} = \pm \frac{dC}{dt} = \pm \frac{dn}{dt} \cdot \frac{1}{V} \quad (2.2.)$$

որտեղ  $dc$ -ն կոնցենտրացիայի անսահման փոքր փոփոխությունն (dt) է անսահման փոքր ժամանակահատվածում՝ V - համակարգի ծավալը:

Փորձնականում ռեակցիայի արագությունը որոշում են կիմիստիկական կորի միջոցով (նկ. 2.1.):



Նկ. 2.1.  $C = f(t)$  կախվածության կորը ըստ ելանյութի


Վաևբ.- ը որոշվում է տվյալ կետում կորին տարած շոշափողի արագիւների առանցքի հետ կազմած անկյան տաճանանով՝

$$V_{\text{աևբառ.}} = \operatorname{tg} \alpha, \text{ իսկ } V_{\text{ահք.}} = -\frac{C_2 - C_1}{t_2 - t_1} = -\frac{\Delta C}{\Delta t}$$

## 2.2. Ռեակցիայի արագության վրա ազդող գործոնները: Ռեակցիայի մոլեկուլարությունը և կարգը:

Քիմիական ռեակցիայի արագությունը կախված է մի շարք գործոններից՝ ռեակցող նյութերի բնույթ, կոնցենտրացիա, ճնշում, ջերմաստիճան, կատալիզատոր, միջավայրի բH և այլն:

Կոնցենտրացիայի ազդեցությունը քիմիական ռեակցիայի արագության վրա, արտահայտվում է ներգործող զանգվածների օրենքով՝ հաստատուն ջերմաստիճանում տարրական քիմիական ռեակցիայի արագությունը ուղիղ համեմատական է ռեակցող նյութերի կոնցենտրացիաների արտադրյալն հանապատասխան աստիճանացուցիչներով:



Պարզ հոմոգեն ռեակցիայի արագությունը հավասար է՝

$$V_{\text{իրական}} = kC_A^a \cdot C_B^b \quad (2.3.)$$

որտեղ  $k$  համեմատականության գործակիցը կոչվում է ռեակցիայի արագության հաստատուն և թվապես հավասար է ռեակցիայի արագությանը, ռեակցող նյութերի միավոր կոնցենտրացիաների դեպքում:


$$\text{Եթե } C_A = C_B = 1 \text{ մոլ/l, ապա}$$

$$V = k \quad (2.4.)$$


կ-ն կախված է ռեակցող նյութերի բնույթից, ջերմաստիճանից, կատալիզատորի ներկայությունից, բայց կախված չէ նյութերի կոնցենտրացիայից: Այսպիսով, հաստատուն ջերմաստիճանում կ-ն հաստատուն

մեծություն է և բնութագրում է նյութերի ռեակցիոնունակությունը: Որքան մեծ է կ-ն, այնքան նյութերը մեծ հակում ունեն արագ փոխազդեցության և հակառակը: Հավասարումից (2.3.) հետևում է, որ A և B նյութերի կոնցենտրացիաները մեծացնելիս արագությունը մեծանում է: Նույն ազդեցությունն ունի ճնշման մեծացումը, եթե A և (կամ) B գազեր են: Համակարգի ճնշումը մեծացնելիս ծավալը փոքրանում է, հետևաբար միավոր ծավալում նյութի կոնցենտրացիան մեծանում է: ա և Ե ցուցիչները համապատասխանում են ռեակցիայի ստեխիոմետրիկ գործակիցներին միայն պարզ ռեակցիաների համար: Ցուցիչները որոշ վում են փորձնական ճանապարհով:

Գազային նյութերի կոնցենտրացիաները կարելի է փոխարինել պարցիալ ճնշումներով.







Դետերոգեն համակարգերում պինդ նյութի կոնցենտրացիան հաշվի չեն առնում.



Քիմիական կիմետիկայում ռեակցիաները դասակարգվում են ըստ մոլեկուլարության և կարգի:


Ռեակցիան մոլեկուլարությունը որոշվում է տարրական քիմիական ակտին մասնակցող մոլեկուլների քավով: Տարբերում են մոնո-, բի- և տրիմոլեկուլային ռեակցիաներ: Քանի որ մի քանի մասնիկի միաժամանակյա բախումը քիչ հավանական է, ապա տրիմոլեկուլային ռեակցիաները հազվադեպ են, իսկ տետրամոլեկուլային ռեակցիաներ չեն հանդիպում: Քիմիական ռեակցիաները հիմնականում բիմոլեկուլային են: Կարելի է բերել հետևյալ օրինակները.




Ռեակցիայի կարգը որոշվում է ներգործող զանգվածների օրենքի հավասարման մեջ նյութերի մոլային կոնցենտրացիաների ցուցիչների գումարով և ցույց է տալիս արագության կախման բնույթը կոնցենտրացիայից: Ըստ կարգի ռեակցիաները լինում են զրոյական, առաջին, երկրորդ, ինչպես նաև կոտորակային կարգի և արտահայտվում են կիմետիկական հավասարումներով.



Ուեակցիայի մոլեկուլարությունը և կարգը միշտ չէ որ համընկնում են: Բարդ ռեակցիաների դեպքում կարգը որոշում են ըստ ամենադանդաղ փուլի: Օրինակ,  $2\text{N}_2\text{O}_5 \rightarrow 4\text{NO}_2 + \text{O}_2$  ռեակցիան բիմոլեկուլային է, սակայն առաջին կարգի է, քանի որ ընթանում է երկու փուլով.



Ուեակցիայի մոլեկուլարությունը և կարգը չեն համընկնում, եթե համակարգը հետերոգեն է, ինչպես նաև հոմոգեն ռեակցիաներում, եթե ռեագենտների կոնցենտրացիաները խիստ տարբեր են: Օրինակ.



Ուեակցիան բիմոլեկուլային է, սակայն համորխանում է առաջին կարգի, քանի որ պինդ նյութի կոնցենտրացիան գործնականում չի փոխվում՝  $V = k[\text{H}_2]$ :



սախարող գյոււկող ֆրուկտոզ

Ուեակցիան ընթանում է ջրի մեջ ավելցուկի պայմաններում, այդ պատճառով էլ արագությունը կախված չէ ջրի կոնցենտրացիայի փոփոխությունից.

$$V = k \cdot C_{\text{սախարող}}$$

Նման ռեակցիաները կոչվում են կեղծ մոնոմոլեկուլային:  
Խնդիր 2. Քանի անգամ կավելանա A + B  $\rightarrow$  C բիմոլեկուլային ռեակցիայի արագությունը ռեագենտների կոնցենտրացիան 2 անգամ մեծացնելիս:

$$\text{Լուծում. } V_1 = k C_A C_B, \quad V_2 = k 2C_A 2C_B, \quad \frac{V_2}{V_1} = \frac{4kC_A C_B}{kC_A C_B} = 4$$

**Պատճ.**՝ ռեակցիայի արագությունը մեծանում է 4 անգամ:  
Խնդիր 3. Քանի<sup>o</sup> անգամ կավելանա  $2\text{NO}_{(g)} + \text{Cl}_{2(g)} = 2\text{NOCl}_{(g)}$  տրիմոլեկուլային ռեակցիայի արագությունը համակարգի ճնշումը 3 անգամ մեծացնելիս:

**Լուծում.** համակարգի ճնշումը 3 անգամ մեծացնելիս նյութերի կոնցենտրացիան ևս մեծանում է 3 անգամ՝

$$V = kC_A^a \cdot C_B^b, \quad V_1 = kC_{\text{NO}}^2 \cdot C_{\text{Cl}_2}, \quad V_2 = k3C_{\text{NO}}^2 \cdot 3C_{\text{Cl}_2} = 27kC_{\text{NO}}^2 \cdot C_{\text{Cl}_2}$$

$$\frac{V_2}{V_1} = \frac{27kC_{\text{NO}}^2 C_{\text{Cl}_2}}{kC_{\text{NO}}^2 C_{\text{Cl}_2}} = 27$$

**Պատճ.**՝ ռեակցիայի արագությունը մեծանում է 27 անգամ:

### 2.3. Ռեակցիաների կինետիկական հավասարումները

Ռեակցիայի կինետիկական հավասարում է կոչվում նյութերի կոնցենտրացիայի ( $C$ ) կախումը ժամանակից ( $t$ ) արտահայտող հավասարումը:

$$V = -\frac{dC}{dt},$$

Զրոյական կարգի են հանդիսանում այն ռեակցիաները, որոնց արագությունը կախված չէ ելանյութերի կոնցենտրացիայից՝  $C = f(t)$  գրաֆիկը գծային է ( $C$ -ի փոքրացումը կախված ժամանակից գծային է):

$A \rightarrow \text{վերջնանյութեր}$

$$V = k, \quad V = -\frac{dC}{dt}, \quad k = -\frac{dC}{dt}, \quad kdt = -dC;$$


Դիֆերենցիալ հավասարումը ինտեգրելով  $t = 0$  մինչև  $t = t$  և  $C_0$ -ից  $C$  սահմաններում.

$$k \int_0^t dt = \int_{C_0}^C dC, \quad kt = C_0 - C, \quad k = \frac{1}{t}(C_0 - C) \quad (2.5)$$

Զևսփոխելով (2.5) հավասարումը ստացվում է.

$$C = C_0 - kt$$

Հետևաբար զրոյական կարգի ռեակցիաներում կոնցենտրացիայի փոքրացումը կախված ժամանակից գծային է:



Նկ. 2.2. Զրոյական կարգի ռեակցիայի  $C = f(t)$  կորը

Ռեակցիայի կարևոր բնութագիր է հանդիսանում կիսաքայլայման պարբերությունը՝  $t^{1/2}$  կամ  $\tau$ : Դա այն ժամանակն է, որի ընթացքում ելանյութի սկզբնական քանակի կեսը վերածվում է վերջնանյութի՝  $C = \frac{C_0}{2}$

$$\tau = \frac{1}{k} \left( C_0 - \frac{C_0}{2} \right) = \frac{C_0}{2k}$$

Զրոյական կարգի ռեակցիայի  $\tau$  -ն ուղիղ համեմատական է  $C_0$ -ին:

Զրոյական կարգի ռեակցիաներ են մետաղների մակերեսին ընթացող որոշ հետերոգեն ռեակցիաներ և ֆերմենտացին ռեակցիաները, երբ ելանյութի՝ սուրստրատի կոնցենտրացիան շատ մեծ է ֆերմենտի կոնցենտրացիայի համեմատ և ռեակցիայի արագությունը հասնելով առավելագույն արժեքի՝ մնում է հաստատում:

I կարգի ռեակցիաների կինետիկական հավասարումը դուրս բերենք

$A \rightarrow \text{վերջնանյութեր}$

ռեակցիայի համար.

$$V = kC \quad (2.6.)$$

$$V = -\frac{dC}{dt}, \quad -\frac{dC}{dt} = kC, \quad \text{կամ } -\frac{dC}{C} = kdt$$


ինտեգրված տեսքով.

$$k \int_0^t \frac{dt}{C} = - \int \frac{dC}{C}, \quad \ln \frac{C_0}{C} = kt, \quad k = \frac{2,3}{t} \lg \frac{C_0}{C} \quad (2.7)$$

Զևսի հիմքով (2.7) հավասարումը ստացվում է.

$$\ln C = \ln C_0 - kt,$$

հետևաբար առաջին կարգի ռեակցիաներում  $\ln C - kt$  փոքրացումը կախված ժամանակից գծային է:



**Նկ. 2.3.** Առաջին կարգի ռեակցիայի  $\ln C = f(t)$  կորը

Առաջին կարգի ռեակցիաներում կիսափոխարկման պարբերությունը կախված չէ ելանյութի սկզբնական կոնցենտրացիայից:

$$\begin{aligned} \tau &= \frac{2,3}{k} \lg \frac{C_0}{C_0/2} = \frac{2,3}{k} \lg 2 = \frac{0,69}{k} \\ \tau &= \frac{0,69}{k} \end{aligned} \quad (2.8.)$$

**Խնդիր 4.**  $A \rightarrow B$  ռեակցիան առաջին կարգի է: Ո՞քան ժամանակից հետո  $A$  նյութի կոնցենտրացիան կվազմի սկզբնականի 40% -ը, եթե կիսափոխանակման ժամանակը կազմում է 40 րոպե:


$$\text{Լուծում} \quad k = \frac{0.69}{\tau} = \frac{0.69}{40} = 0.01725 \text{ րոպե}^{-1}$$

$$t = \frac{2,3}{k} \lg \frac{C_0}{C} = \frac{2,3}{0.01725} \lg \frac{100}{40} = 133.3 \lg 2.5 = 133.3 \cdot 0.4 = 53.33 \text{ րոպե}$$

**Պատճեն.** 53,33 րոպե

Երկրորդ կարգի ռեակցիաները լինում են երկու տեսակի:

1. միմյանց հետ փոխազդում են միևնույն նյութի երկու մոլեկուլները:



Այդպիսի ռեակցիայի կինետիկական հավասարումն է՝

$$V = -\frac{dC}{dt} = kC^2, \quad -\frac{dC}{C^2} = kdt, \quad -\int_0^C \frac{dC}{C^2} = k \int_0^t dt$$


ինտեգրելով կստանանք.

$$-\left(\frac{1}{C_0} - \frac{1}{C}\right) = kt \quad , \quad \frac{1}{C} - \frac{1}{C_0} = kt \quad \text{կամ} \quad k = \frac{1}{t} \cdot \frac{C_0 - C}{C_0 C} \quad (2.9)$$

Զևսափոխելով (2.9)՝ կստանաբ.

$$\frac{1}{C} = \frac{1}{C_0} + kt$$

հետևաբար II կարգի ռեակցիաներում  $\frac{1}{C}$ -ի մեծացումը կախված ժամանակից գծային է:



**Նկ. 2.4.** Երկրորդ կարգի ռեակցիայի ( $C_1 = C_2$ )  $\frac{1}{C} = f(t)$  կորը

Կիսափոխարկման ժամանակը կազմում է՝

$$kt_{1/2} = \frac{1}{C_0/2} - \frac{1}{C_0}; \quad t_{1/2} = \frac{1}{C_0 k} \quad (2.10)$$

Երկրորդ կարգի ռեակցիաների կիսափոխարկման ժամանակի և ռեագենտի սկզբնական կոնցենտրացիայի միջև գործում է հակադարձ համեմատական կախվածություն:

2. Երկրորդ կարգի ռեակցիայի մյուս տիպը կարելի է ներկայացնել

$$A + B = \text{վերջնանյութեր}, \quad [A] \neq [B]$$

հավասարումով: Այս ռեաքտում ռեակցիայի կիմետրիկական հավասարումն է՝

$$k = \frac{2,3}{t(a-b)} \lg \frac{b(a-x)}{a(b-x)} \quad (2.11.)$$

որտեղ՝  $a$  –  $A$ -նյութի սկզբնական քանակն է,  $b$  –  $B$  նյութի սկզբնական քանակը,  $x$  –  $\rho$   $t$  ժամանակահատվածում  $A$  և  $B$  նյութերի ծախսված քանակը:

**Խնդիր 5.**  $A + B \rightarrow C$  Երկրորդ կարգի ռեակցիա է: Դահանակարգում  $A$  և  $B$  նյութերի սկզբնական կոնցենտրացիաները համապատասխանաբար կազմում են 5 մմոլ/լ և 4 մմոլ/լ: Մեկ րոպեից հետո  $A$  նյութի կոնցենտրացիան դարձել է 4 մմոլ/լ, իսկ  $B$  նյութինը՝ 3 մմոլ/լ: Որպիսին կլինի նյութերի կոնցենտրացիաների հարաբերությունը ռեակցիայի սկզբնուց 3 րոպե հետո:

$$\text{Լուծում. } k = \frac{2,3}{t(a-b)} \lg \frac{b(a-x)}{a(b-x)} = \\ = \frac{2,3}{1(5-4)} \lg \frac{4 \cdot 4}{5 \cdot 3} = 2,3 \lg 1,07 = 2,3 \cdot 0,03 = 0,069.$$

Տեղադրենք  $k$ -ի արժեքը (2.11.) բանաձևի մեջ՝

$$0,069 = \frac{2,3}{3(5-4)} \lg \frac{4(5-x)}{5(4-x)}; \quad \lg \frac{0,8(5-x)}{(4-x)} = 0,09$$

$$\frac{0,8(5-x)}{(4-x)} = 1,25; \quad \frac{(5-x)}{(4-x)} = 1,5625$$

Նյութերի կոնցենտրացիաների հարաբերությունը 3 բոլե  
հետո հավասար է 1,5625: Պատ.՝ 1,5625

## 2.4. Ռեակցիայի արագության կախումը ջերմաստիճանից

Ռեակցիայի արագության հաստատումը կախված է ջերմաստիճանից: Ջերմաստիճանը բարձրացնելիս ռեակցիայի արագությունը սովորաբար մեծանում է: Ջերմաստիճանային այդպիսի կախվածությունը կոչվում է նորմալ: Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ֆերմենտային ռեակցիաները:

273-320 Կ սահմաններում ֆերմենտային ռեակցիաների արագության ջերմաստիճանային կախվածությունը ունի նորմալ բնույթ: 320 Կ-ից բարձր ջերմաստիճանում նկատվում է արագության անոնմալ իջեցում, որի պատճառը սահիտակուցների բնափոխումն է: Ռեակցիայի արագության կախումը ջերմաստիճանից արտահայտվում է Վանթ-Շոփի մոտավոր, էմպիրիկ կանոնով՝ համակարգի ջերմաստիճանը յուրաքանչյուր 10 աստիճանով բարձրացնելիս ռեակցիայի արագությունը մեծանում է 2-4 անգամ:

$$\gamma = \frac{k_{t+10}}{k_t}; \quad \frac{k_{t_2}}{k_{t_1}} = \gamma^{\frac{t_2-t_1}{10}} \quad (2.12.)$$

γ - ն կոչվում է ռեակցիայի ջերմաստիճանային գործակից և ունի արժեքներ 2 - 4 սահմաններում:

**Խնդիր 6.** Քանի՞ անգամ կմեծանա ռեակցիայի արագությունը համակարգի ջերմաստիճանը  $40^{\circ}\text{C}$ -ով բարձրացնելիս, եթե ռեակցիայի ջերմաստիճանային գործակիցը  $\gamma = 2,8$ :

$$\text{Լուծում. } \frac{V_{t_2}}{V_{t_1}} = \gamma^{\frac{40}{10}} = 2,8^4 = 61,4.$$

Տարբեր ռեակցիաների արագության կախումը ջերմաստիճանից ավելի ծշգրիտ արտահայտվում է Արենիուսի հավասարումով՝

$$k = Ae^{\frac{-E_a}{RT}} \quad (2.13.)$$

$$\ln k = \ln A - \frac{E_a}{RT} \quad (2.14.)$$

$$\lg k = \lg A - \frac{E_a}{2,3RT} \quad (2.15)$$

որտեղ՝  $R$  - գազային ունիվերսալ հաստատուն,

$E_a$ - ռեակցիայի ակտիվացման էներգիա:  $E_a$ -ն այն հավանականությունն է (նյուկուլների միջին էներգիայի համեմատ), որով պետք է օժուված լինեն բախվող նյուկուլները, որպեսզի բախումը բերի քիմիական փոխագործության ակտի:  $E_a$ -ն ունի կՋ/նոլ չափողականություն և տարբեր ռակցիաների համար տատանվում է մեծ մասամբ 10-100 կՋ/նոլ սահմաններում:

$e^{\frac{-E_a}{RT}}$  - թվապես հավասար է ակտիվ բախումների բաժնին՝ ընդհանուր բախումների մեջ:

$A$  - հաճախության գործոն, որը տվյալ ռեակցիայի համար հաստատում թիվ է և թվապես հավասար է  $k$ -ին, եթե բոլոր բախումներն ակտիվ են:  $A$ -ն ունի նույն չափողականությունը, ինչ-որ տվյալ ռեակցիայի  $k$ -ն:


*Արենիուսի հավասարումից հետևում է՝ որքան համակարգի  $A$ -ն մեծ է և բարձր ջերմաստիճանը, այնքան մեծ է  $k$ -ն և ռեակցիայի արագությունը:*

**Խնդիր 7.** 350K -ում բոլոր տրված ռեակցիաները ունեն միևնույն արագությունը:  $E_a$ -ի ո՞ր արժեքն է համապատասխանում այն ռեակցիային, որը 370K -ում ընթանում է ամենաարագը՝  $E_a = 28$ ,  $E_a = 43$ ,  $E_a = 57$  կՋ/նոլ:

**Լուծում.** (2.15.) բանաձևից երևում է, որ  $E_a$ -ի և  $\lg k$ -ի միջև կա հակադարձ համեմատական կապ. որքան փոքր է  $E_a$ -ն, այնքան մեծ է  $\lg k$ -ն: Նետեաբար, ամենաարագ կընթանա այն ռեակցիան, որի  $E_a = 28$  կՋ/նոլ:

## 2.5. Քիմիական ռեակցիաների մեխանիզմը

Միջուկուլային ռեակցիաները մեծ մասամբ ընթանում են միջանկալ ակտիվ կոմպլեքսի առաջացմամբ:  $A_2 + B_2 \rightarrow 2 AB$  տիպի ռեակցիան կարելի է բնութագրել երեք հաջորդական վիճակներով՝ սկզբնական  $\rightarrow$  միջանկալ  $\rightarrow$  վերջնական:




Միջանկյալ վիճակը համապատասխանում է  $A_2B_2$  ակտիվ կոնպլեքսի առաջացմանը: Ակտիվ կոնպլեքսում  $A-B$  կապերը լրիվ չեն ձևավորվել, իսկ  $A-A$  և  $B-B$  կապերը լրիվ չեն խզվել: Ակտիվ կոնպլեքսը օժտված է էներգիայի ավելցուկով, որը թվապես հավասար է ռեակցիայի  $E_a$ -ին, այդ պատճառով այն անկայուն է (գոյություն ունի  $10^{-13}$  Վրկ) և քայլայվում է անջատելով էներգիա: Ակտիվ կոնպլեքս կարող են առաջացնել այն մոլեկուլները, որոնք օժտված են բավականաչափ էներգիայով: Այդպիսի մոլեկուլները կոչվում են ակտիվ, էներգիան, որն անհրաժեշտ է նյութը ակտիվ կոնպլեքսի վիճակի անցնելու համար, կոչվում է ակտիվացնան էներգիա՝  $E_a$ : Ակտիվացման էներգիան սովորաբար բարձր է համակարգի սկզբնական և վերջնական էներգիայից: Որքան բարձր լինի  $E_a$ -ն այնքան քիմիական ռեակցիան կը նթանա դանդաղ: Դա է պատճառը, որ մեծ թվով սկզբունքորեն հնարավոր ռեակցիաներ ( $\Delta G < 0$ ) գործնականում չեն ընթանում (օրինակ փայտը, նավը օդում չեն այրվում): Այսպիսով, ակտիվացման էներգիան այն էներգետիկ արգելակն է, որը պետք է հաղթահարեն մոլեկուլները՝ քիմիական ռեակցիա կատարելու համար:

Ռեակցիայի արագությունը կախված է ակտիվ մոլեկուլների թվից: Որքան շատ է ակտիվ մոլեկուլների թիվը, այնքան ռեակցիան արագ է ընթանում և նրա արագությունը թիվ է կախված ջերմաստիճանի փոփոխությունից: Եվ իրոք, ակտիվ մոլեկուլների թիվը կարելի է մեծացնել, բարձրացնելով համակարգի ջերմաստիճանը՝ կամ իջեցնելով ակտիվացման էներգիան:

Ակտիվացման էներգիան որոշում են երկու եղանակով՝

ա) **Գրաֆիկական եղանակ:** Տարբեր ջերմաստիճանների պայման-ներում չափում են  $k$ -ն՝ ռեակցիայի արագության հաստատումը: Ըստ (2.14.) կամ (2.15.) հավասարումների կառուցում են կոր, որը արտահայտում է  $Igk = Igk_1 - \frac{E_a}{RT}$  կախումը  $1/T$  դիրքությունում է ուղիղ գիծ: Այդ գիծի թեքության տանգենսը՝

$$\operatorname{tg} \varphi = \frac{E_a}{2,3R}$$



բ) **Կինետիկական եղանակ:** Եթե հայտնի են արագության հաստատումները՝  $k_1$  և  $k_2$  համապատասխանաբար  $T_1$  և  $T_2$  ջերմաստիճաններում, ապա ըստ Արենհուսի հավասարման  $T_1/k_1 = T_2/k_2$  ( $T_2 > T_1$ ) ջերմաստիճաններին համապատասխանող  $k_1$  և  $k_2$  կլինեն.

$$I. \ln k_1 = \ln A - \frac{E_a}{RT_1}$$

$$II. \ln k_2 = \ln A - \frac{E_a}{RT_2}$$

Երկրորդ հավասարումից հանելով առաջինը կստացվի.

$$\ln \frac{k_2}{k_1} = \ln \square^n = \frac{E_a}{R} \cdot \left( \frac{T_2 - T_1}{T_1 \cdot T_2} \right) = \frac{E_a}{R} \cdot \frac{\square T}{T_1 \cdot T_2} \quad (2.16.)$$

$$\ln \square^n = \frac{\square T}{T_1 \cdot T_2} \cdot \frac{E_a}{R}, \quad \text{եթք } \Delta T = 10, \quad \lg \frac{k_2}{k_1} = \lg \gamma = \frac{E_a}{2,3R} \left( \frac{10}{T_1 \cdot T_2} \right)$$

այստեղից երևում է, որքան մեծ է  $E_a$ , այնքան մեծ է  $\gamma$ -ն, այսինքն  $N$ -ն մեծ չափով է կախված ջերմաստիճանից:

Օրինակ ֆերմենտային ռեակցիան, որի  $E_a=10$  կՋ/մոլ, ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$ -ից  $42^{\circ}\text{C}$  բարձրացնելիս արագանում է 6 %, եթք  $E_a=100$  կՋ/մոլ ֆերմենտային ռեակցիան ջերմաստիճանի նույնքան բարձրացման դեպքում արագանում է 82 %: Մեծ  $E_a$  -ով ֆերմենտային ռեակցիաների ջերմաստիճանային արագացումը եական ազդեցություն է ունենում օրգանիզմի վիճակի վրա՝ բերելով ռեակցիային մասնակցող նյութերի քանակների փոփոխության: Դնարավոր է, որ հիվանդության ժամանակ ջերմաստիճանի բարձրացումը նպատակառուղղված է օրգանիզմի ախտաբանական վիճակի վերացմանը, այսինքն ունի կարգավորիչ դեր: **Օրինակ 8.** Ինչոր վիրուսի բնափոխման կիսաքայլայման պարբերությունը հավասար է.  $30^{\circ}\text{C}$ -ում՝ 5 ժամ,  $37^{\circ}\text{C}$ -ում՝  $1,76 \cdot 10^{-2}$  ժամ: Որոշեք պրոցեսի ակտիվացման էներգիան:

**Լուծում.** Ստանանք և տեղադրենք (2.16.) բանաձևի մեջ ռեակցիաների արագության հաստատունները.

$$\lg \frac{k_2}{k_1} = \frac{E_a}{2,3R} \left( \frac{1}{T_1} - \frac{1}{T_2} \right); \quad k_1 = \frac{0,69}{5}; \quad k_2 = \frac{0,69}{1,76 \cdot 10^{-2}}$$

$$\lg \frac{5}{1,76 \cdot 10^{-2}} = \frac{E_a}{2,3 \cdot 8,31} \left( \frac{1}{303} - \frac{1}{310} \right); \quad E_a = 628,3 \text{ կՋ/մոլ}$$

**Պատ.**  $E_a = 628,3 \text{ կՋ/մոլ}$


**Օրինակ 9.** Դաշվեք լուծույթում գյուկոզի խմորման ակտիվացման էներգիան է.  $30^{\circ}\text{C}$ - $70^{\circ}\text{C}$  միջակայքում, եթե պրոցեսի ջերմաստիճանային գործակիցը հավասար է 2:

$$\text{Լուծում.} \quad \lg \gamma^n = \frac{E_a}{2,3R} \cdot \frac{T_2 - T_1}{T_1 \cdot T_2}; \quad \lg 2 = \frac{E_a}{2,3 \cdot 8,31} \cdot \frac{40}{303 \cdot 343}$$

$$E_a = 14,9 \text{ կՋ/մոլ} \quad \text{Պատ. } E_a = 14,9 \text{ կՋ/մոլ}$$



## 2.6. Բարդ ռեակցիաների կինետիկան

Ըստ կինետիկական մեխանիզմի բարդ ռեակցիաները բաժանվում են երկու հիմնական դասի՝ **հաջորդական** և **զուգահեռ** (մրցակցային) ռեակցիաներ: Դաշորդական են կոչվում այն բարդ ռեակցիաները, որոնցում նախորդ փուլի վերջնամյութը հանդիսանում է սկզբնանյութ հաջորդ փուլի համար՝



Գործնականում նյութափոխանակության բոլոր ռեակցիաները հաջորդական են: Օրինակ գյուկոզի մետաբոլիզմը ընթանում է 20 հաջորդական փուլերով: Ելանյութը բիոքիմիայում անվանում են **սուբստրատ S**, իսկ միջանկյալ նյութերը  $X_1, X_2, X_3$ ՝ **ինտերմեդիատներ**: Ինտերմեդիատները միաժամանակ սուբստրատ են հանդիսանում հաջորդ փուլերի համար:


Դաշտորդական ռեակցիաների մասնավոր դեպք են հանդիսանում շղթայական ռադիկալային ռեակցիաները: Այս ռեակցիաներում սկզբնական սուբստրատի փոխարկումը վերջնանյութի իրականանում է միևնույն փուլերի բազմակի կրկնությամբ: Օրինակ, լիավիդների գերօքսիդային օքսիդացումը օրգանիզմում կատարվում է հետևյալ սխեմայով՝



որտեղ  $R^\bullet$  - օրգանական ռադիկալ,  $RO_2^\bullet$  - պերօքսիդային ռադիկալ,  $ROOH$  - օրգանական պերօքսիդ:

Դարձելի ռեակցիաները ևս հաջորդական են:

**Մրցակցային (կոնկուրենտ, զուգահեռ)** են կոչվում այն բարդ ռեակցիաները, որոնցում միևնույն սուբստրատը (A) միաժամանակ փոխազդում է մի քանի ռեագենտների ( $B_1, B_2$  և այլն) հետ, առաջացնելով տարբեր վերջնանյութեր՝



Մետաբոլիզմի շատ սուբստրատներ և ինտերմեդիատներ մասնակցում են մրցակցային ռեակցիաներում: Օրինակ, գյուկոզ-6-ֆոսֆատը հանդիսանում է սուբստրատ գլիկոլիզի, գլիկոգենի սինթեզի և այլ փոխանակությունների համար կամ կրեբսի ցիկլում առաջացող նյութերը ( $\alpha$ -կետոգլուտարաթթու) մասնակցում են ամինաթթուների և այլ միացությունների առաջացմանը:

Այս ձևով օրգանիզմը կանոնավորում է կենսագործունեության պրոցեսները: Մրցակցային ռեակցիաների իրականացման պայմանները և օրինակները մանրանան կրննարկվեն կենսաքիմիայի և կենսաօրգանական քիմիայի դասընթացներում:

Բացի այդ հանդիպում են նաև խառը դասի բարդ ռեակցիաներ: Խառը դասի բարդ ռեակցիաների օրինակ են **զուգորդված ռեակցիաները**:

Զուգորդված են կոչվում այնպիսի երկու ռեակցիաները, որոնցից մեկը ինդուցում է (հարուցում է) մյուսի ընթացքը, ընդ որում՝ մեկի բացակայությամբ մյուսը չի ընթանում:



Առաջինը դարձելի է,  $\Delta G^{\circ}$ -ն դրական է, նրա թվային արժեքը փոքր է: Ռեակցիայում գոյացած քիչ քանակությամբ ինտերմեդիատը մասնակցում է թերմոդինամիկորեն շահավետ երկրորդ ռեակցիային, որի  $\Delta G^{\circ} < 0$ : Առաջինը կընթանա միայն այն դեպքում, եթե  $\Delta G_1^{\circ} + \Delta G_2^{\circ} < 0$ :

Կենսաքիմիական շատ փոխարկումներ գուգորդված են գյուկոզի օքսիդացման պրոցեսի հետ: Դայտնի է, որ գյուկոզի օքսիդացման պրոցեսը օրգանիզմում գուգորդված է ԱԵՖ-ի սինթեզի հետ՝


$$\text{ԱԿֆ} + \text{Ֆ} = \text{ԱԵՖ} + \text{H}_2\text{O}, \quad \Delta G^{\circ} = +36 \text{ kJ}$$

Մեկ մոլ գյուկոզի օքսիդացումից սինթեզվում է 38 մոլ ԱԵՖ, որը հետագայում մասնակցում է բազմազան գուգորդված ռեակցիաների՝ ապահովելով թերմոդինամիկորեն անշահավետ ռեակցիաների ընթացքը: Այս մեխանիզմով է կատարվում, օրինակ, կոֆերմենտ-Ա-ի ացիլացումը (տես կենսաօրգանական քիմիայի բաժնում):

Բարդ ռեակցիաների հատուկ դաս են կազմում ֆոտոքիմիական ռեակցիաները: Այս ռեակցիաները կատարվում են լույսի ազդեցությամբ: Ֆոտոքիմիական ռեակցիաներ են ֆոտոսինթեզը, տեսողական պրոցեսը, մաշկի արևայրությի առաջացումը և այլն: Ֆոտոքիմիական ռեակցիաները բազմափուլ պրոցեսներ են, որոնց առաջին փուլն է հանդիսանում ֆոտոգրաված մոլեկուլների առաջացումը՝





$\text{A}^*$  գրգռված մոլեկուլները ռեակցում են ռեագենտների հետ առաջացնելով ակտիվ ինտերմեդիատներ՝ ռադիկալներ, իոններ՝




Այս ռեակցիան անվանում են առաջնային: Առաջնային ռեակցիայի ինտերմեդիատները մասնակցելով երկրորդային ռեակցիաներին առաջանում են վերջնանյութեր՝



Օրգանիզմների մեջ մասում ֆոտոսինթեզին մասնակցում է քլորոֆիլը, որը կատարում է լուսային էներգիայի փոխանցողի դեր:



Ռեագենտի գրգռված մոլեկուլ՝  $\text{A}^*$ , մասնակցում է առաջնային ֆոտոքիմիական ռեակցիային: Երկրորդային ռեակցիաներից առաջացած ինտերմեդիատները՝  $\text{X}_1, \text{X}_2, \dots$ , փոխազդելով ածխաթթու գազի և ջրի հետ, ի վերջո իրականացնում են գյուկոզի սինթեզը՝




Անհրաժեշտ է նշել, որ գյուկոզի սինթեզի  $\Delta G^{\circ} = + 2870 \text{ kJ/mol}$ , այսինքն ընթանում է Գիբսի էներգիայի մեծացումով, բայց դա չի հակասում թերմոդինամիկայի երկրորդ օրենքին, քանի որ պրոցեսը գուգորդված է լույսի կլանման հետ:

## 2.7. Կատալիզ

Ուեակցիայի ակտիվացնան էներգիայի բարձր արժեքի դեպքում մոլեկուլարի քիչ մասն է լինում ակտիվ և ռեակցիան ընթանում է դանդաղ: Յետևաբար, որևէ ձևով ռեակցիայի  $E_a$  -ն փոքրացնելիս, ռեակցիան կընթանա արագ:

Կատալիզատորներ են կոչվում այն նյութերը, որոնք ընտրողաբար մեծացնում են ռեակցիայի արագությունը, սակայն նրանց քանակը և բաղադրությունը ռեակցիայի արդյունքում չի փոխվում: Կատալիզատորները իջեցնում են ռեակցիայի  $E_a$  - ն և ստիպում, որ այն ընթանա արագ: Օրինակ, ջրածնի պերօսիդի քայլայունը՝




Ըստ (2.14.) հավասարման կարելի է հաշվել ռեակցիայի արագության հաստատումի մեծացումը կատարելիքորի ներկայությամբ.

$$\lg \frac{k_{(\text{կատալիզ.)}}}{k_{(\text{արանց և սպառակա.)}}} = \frac{E_{a_1} - E_{a_2}}{2,3RT} = \frac{76000 - 57000}{2,3 \cdot 8,31 \cdot 298} = 3,3$$

$$\frac{k_{(\text{կատուլիք.})}}{k_{(\text{արանիա և ատուլիք.})}} = 10^{3,3} \approx 2100 \text{ անգամ:}$$


Ակտիվացման էներգիան ավելի մեծ չափով է փոխվում, եթե կատալիզատորի դեր են կատարում ֆերմենտները՝ բիոլոգիական կատալիզատորները: Օրինակ, սախարոզը կարող է հիդրոլիզվել թթվի կամ սախարուաց ֆերմենտի ներկայությամբ:





Երկրորդ դեպքում արագությունը մեծանում է  $10^{22}$  անգամ:

Կատալիզատորի ներկայությամբ ընթացող պրոցեսը կոչվում է կատալիզ: Տարրերում են հիմնոգեն և հետերոգեն կատալիզ:

**Հընդգեն կատալիզի դեպքում կատալիզատորը և ռեակցող նյութերը գտնվում են միևնույն ֆազում՝ հեղուկ կամ գազային։ Օրինակ,  $\text{SO}_2$ -ի օրսիդացումը  $\text{NO}_-$ ի ներկայությամբ՝**




Ուեակցիան կատարվում է ըստ հետևյալ մեխանիզմի՝






Կատալիգատորը ռեակցող նյութերից մեկի հետ առաջացնում է միջանկայի միազդություն, ռեակցիան ավարտվելուց հետո

Կատալիզատորը անջատվում է անփոփոխ վիճակում: Միջանկյալ միացության առաջացման  $E_a$  - ն ավելի փոքր է:

Դոնոգեն կատալիզի օրինակ է նաև ջրածնի պերօքսիդի քայլայումը ջրային լուծություն երկարի (II) աղերի ներկայությամբ՝




Կատալիտիկ քայլայումը ընթանում է հետևյալ մեխանիզմով՝




Տարրական ռեակցիաները գումարելով և կրծատելով կրկնվող իոններն ու ռադիկալները, կերևա, որ  $\text{Fe}^{2+}$  իոնը չի մտնում գումարային ռեակցիայի հավասարման մեջ և նրա քանակը ռեակցիայի արդյունքում մնում է անփոփոխ:


**Դետերոգեն կատալիզ:** Դետերոգեն կատալիզի դեպքում կատալիզատորը և ռեակցվող նյութերը գտնվում են տարբեր ֆազերում: Յաճախ ռեակցող նյութերը գագեր են, իսկ կատալիզատորը՝ պինդ նյութ:




Ունակցիան ընթանում է կատալիզատորի մակերեսին: Դիֆուզիայի հաշվին ռեակցող մոլեկուլները մոտենում են կատալիզատորի մակերեսին և կապվում նրա հետ՝ տեղի է ունենում ակտիվ ադսորբցիա կամ քեմոսորբցիա, ինչը մեծացնում է մոլեկուլների ակտիվությունը: Դա բացադրվում է նրանով, որ կատալիզատորի մակերեսային ատոմների ուժային դաշտի ազդեցության տակ փոխվում է մոլեկուլների էլեկտրոնային քաղանթների կառուցվածքը, թուլանում են կապերը ատոմների միջև և մոլեկուլները դառնում են ակտիվ: Օրինակ՝



մեխանիզմ՝




Նույն մակերեսին ադսորբցիում է նաև ջրածնի ատոմը: Ունակցիայի ընթացքում մակերեսային կապերից մեկը քայլայվում և ջրածնի ատոմին է միանում՝




Ապա ջրածնի մյուս ատոմը միանում է հարևան կենտրոնին և ադսորբցված մոլեկոլի հետ առաջացնում մյուս կապը, լոիվ հիդրելով ածխաջրածնին: Այսպիսով, հետերոգեն կատալիզի դեպքում ևս ռեակցվող նյութերը կատալիզատորի հետ առաջացնում են միջանկյալ միացություններ, որոնց  $E_a$  -ն փոքր է: Միջանկյալ միացություններն առաջանում են կատալիզատորի մակերեսի ակտիվ կենտրոններում: Վերջիններս հարուստ են էներգիայով և կազմում են կատալիզատորի մակերեսի ոչ մեծ մասը: Կատալիզատորի մակերեսը և, հետևաբար, ակտիվ կենտրոնների թիվը մեծացնելու համար կատալիզատորը մանրացնում են և նստեցնում հատուկ իներտ կրիչների վրա:

## 2.8. Ֆերմենտային կատալիզ

Կենդանի օրգանիզմներում և բույսերում կենսաբանական պրոցեսները ընթանում են բիոլոգիական կատալիզատորների՝ ֆերմենտների մասնակցությամբ: Ֆերմենտները բարձրամոլեկուլային միացություններ՝ սպիտակուցներ են: Նրանք կարգավորում են ռեակցիաների արագությունը և կարող են արագացնել այն  $10^4$  -  $10^5$  անգամ: Ֆերմենտներին բնորոշ է բարձր սպեցիֆիկություն (ընտրողականություն), այսինքն տվյալ ֆերմենտը կարգավորում է որոշակի ռեակցիաների արագությունը: Սովորաբար ֆերմենտը պարունակում է մեկ կամ մի քանի ակտիվ կենտրոններ, որոնց վրա է տեղի ունենում սուբստրատի փոխարկումը: Ակտիվ կենտրոնը կարող է կազմված լինել մեկ կամ մի քանի ամինաթթվի մնացորդից: Որոշ ֆերմենտների ակտիվ կենտրոնի կազմի մեջ են մտնում նաև ոչ սպիտակուցային միացություններ կոֆերմենտներ, որոնք հիմնականում վիտամինների ածանցյալներ են: Ֆերմենտային ռեակցիայի օրինակ է միզանյութի քայլայումը ուրեագ ֆերմենտի ազդեցությամբ.



Կամ գյուկոզի օքսիդացումը գյուկոզօքսիդագ ֆերմենտի ներկայությամբ.



Ֆերմենտային կատալիզը, ի տարբերություն սովորական քիմիական կատալիզի, ունի բարդ բնույթ: Սուրստրատի ցածր կոնցենտրացիայի դեպքում ռեակցիան ընթանում է առաջին կարգի ռեակցիաների կինետիկական հավասարման համաձայն, իսկ սուրստրատի բարձր կոնցենտրացիաների դեպքում ռեակցիան ընթանում է զրոյական կարգի ռեակցիաների կինետիկական հավասարման համաձայն, այսինքն ամբողջ ֆերմենտը մտնում է ռեակցիայի մեջ, բոլոր ակտիվ կենտրոնները զբաղված են սուրստրատի մոլեկուլներով և ռեակցիայի արագությունը հասնում է առավելագույնի: Ռեակցիան իրականանում է ֆերմենտ-սուրստրատային կոմպլեքսի առաջացումով:



որտեղ՝  $E$  – ֆերմենտ,  $S$  – սուրստրատ,  $P$  - ռեակցիայի վերջնանյութեր:

Առաջացած ֆերմենտ-սուրստրատային կոմպլեքսը քայլավում է ֆերմենտի և վերջնանյութերի: Փուլերից յուրաքանչյուրը բնութագրվում է իր արագության հաստատումով:

ա. ֆերմենտ-սուրստրատ կոմպլեքսի առաջացման արագությունը՝

$$V_{\text{առաջ.}} = k_1([E] - [ES])[S] \quad (2.17.)$$

$[ES]$  - ֆերմենտ-սուրստրատ կոմպլեքսի կոնցենտրացիա,

$[S]$  - սուրստրատի կոնցենտրացիա,

$([E] - [ES])$  - ազատ ֆերմենտի կոնցենտրացիա:

Քանի որ  $[S] \gg [E]$ , ապա նշանակում է, որ ֆերմենտի հետ կապված  $S$ -ի կոնցենտրացիան աննշան է և սուրստրատի տվյալ պահի կոնցենտրացիան ընդունվում է հավասար նրա ելային կոնցենտրացիային:

բ. ֆերմենտ-սուրստրատ կոմպլեքսի քայլավայման ռեակցիայի արագությունը հավասար է՝

$$V_{\text{քայլ.}} = k_2 [ES] \quad (2.18.)$$

գ. վերջնանյութերի առաջացման ռեակցիայի արագությունը հավասար է՝

$$V_{\text{վերջ.}} = k_3 [ES] \quad (2.19.)$$

Հավասարակշռության պահին ֆերմենտ-սուրստրատ կոմպլեքսի առաջացման արագությունը հավասար է՝

$$V_{\text{առաջ.}} = V_{\text{քայլ.}} + V_{\text{վերջ.}}$$

$$k_1([E] - [ES])[S] = k_2 [ES] + k_3 [ES], \quad \text{որտեղից}$$

$$\frac{[S]([E]-[ES])}{[ES]} = \frac{k_2 + k_3}{k_1} = K_m$$

$$[ES] = \frac{[E][S]}{K_m + [S]} \quad (2.20.)$$

Տեղադրելով  $[ES]$ -ի արժեքը  $V_{\text{պեր}} = k_3 \cdot [ES]$  հավասարման մեջ, կստանանք՝

$$V_{\text{պեր}} = k_3 \frac{[E][S]}{K_m + [S]} \quad (2.21.)$$

$$V_{\text{բայթ.}} = k_2 \frac{[E][S]}{K_m + [S]} \quad (2.22.)$$

Եթե ֆերմենտը հագեցած է սուբստրատով, այսինքն  $[E] = [ES]$  ֆերմենտը գործնականորեն ամրողովվին գտնվում է  $ES$  կոմպլեքսի ձևով, ռեակցիայի արագությունն առավելագույնն է:

$$V_{\text{պեր}} = V_{\max} = k_3 [E] \quad (2.23.)$$

(2.23.) հավասարումը տեղադրելով (2.21.) -ի մեջ, կստանանք

$$V_{\text{պեր}} = k_3 \frac{[E][S]}{K_m + [S]} = \frac{V_{\max}[S]}{K_m + [S]}$$

$$V_{\text{պեր}} = V_{\max} \frac{[S]}{K_m + [S]} \quad (2.24.)$$

Այս հավասարումը կոչվում է Միխայելիս-Մենտենի հավասարում,

իսկ  $K_m$  -ը Միխայելիս-Մենտենի հաստատում: Եթե  $V_{\text{պեր}} = \frac{V_{\max}}{2}$ , ապա

$$\frac{V_{\max}}{2} = V_{\max} \frac{[S]}{K_m + [S]}, \quad \frac{1}{2} = \frac{[S]}{K_m + [S]}, \quad K_m + [S] = 2[S], \quad K_m = [S] \quad (2.25.)$$

Միխայելիս-Մենտենի հաստատումը հավասար է սուբստրատի այն կոնցենտրացիային, որի դեպքում ռեակցիայի արագությունը կազմում է առավելագույն արագության կեսը և ունի մոլ/լ չափողականություն:  $K_m$  -ը  $ES$  կոմպլեքսի կայունության չափն է, որքան բարձր է  $K_m$  -ը, այնքան ավելի անկայուն է  $ES$  կոմպլեքսը: Կարող է տեղի ունենալ երկու ծայրահեռ դեպք.

1.  $S$ -ի ցածր կոնցենտրացիայի դեպքում  $K_m \gg [S]$


$$V_{\text{պեր}} = V_{\max} \frac{[S]}{K_m + [S]}$$

$[S]$  -ը հայտարարում կարելի է անտեսել՝

$$V_{\text{վերջ}} = \frac{V_{\text{max}}}{K_m} [S],$$

և ռեակցիայի արագությունը արտահայտվում է առաջին կարգի կինետիկական հավասարումով:


2. Տ-ի բարձր կոնցենտրացիայի դեպքում՝  $[S] >> K_m$ , հայտարարում կարելի է անտեսել  $K_m$ , այդ դեպքում  $V_{\text{վերջ}} = V_{\text{max}}$ , և ռեակցիայի արագությունը կարտահայտվի զրոյական կարգի հավասարումով՝ կինետիկական կորը կունենա հետևյալ տեսքը՝




## 2.9 Լաբորատոր աշխատանք

Ռեակցիայի արագության հաստատումի որոշումը:


Ռեակցիան տարվում է այնպէս, որ նրա արագությունը կախված լինի միայն  $H_2O_2$ -ի կոնցենտրացիայից, այսինքն ռեակցիան դառնա կեղծ մոնոմոլեկուլար: Որոշենք յոդաջրածնական թթվի և ջրածնի պերօքսիդի միջև ընթացող ռեակցիայի արագության հաստատումը:




Այդ նպատակով անհրաժեշտ  $HI$ -ը ստացվում է նատրիումի կամ կալիումի յոդիդը ծծմբական թթվի հետ փոխազդելիս:



Ռեակցիային մասնակցած  $H_2O_2$  քանակը կարելի է որոշել ըստ անջատված յոդի համարժեք քանակի, իսկ յոդի քանակը կարելի է որոշել  $Na_2S_2O_3$  լուծույթով տիտրելով՝



Այսպիսով փորձի ընթացքում հաջորդաբար տեղի են ունենում երեք ռեակցիա՝



(ա) և (գ) ռեակցիաները գործնականում ընթանում են ակնարթոռնեմ: Դա նշանակում է, որ գումարային ռեակցիայի արագությունը պայմանավորված է միայն (բ) ռեակցիայի արագությամբ: Քանի որ ռեակցիայի ընթացքում  $NaI$  - ի և  $HI$  - ի կոնցենտրացիաները մնում են հաստատում՝ (ա) ռեակցիայում ծախսված  $NaI$  - ը վերականգնվում է (գ) ռեակցիայում, ապա ռեակցիայի արագությունը կախված է միայն  $H_2O_2$

Կոնցենտրացիայից: Ուեակցիայի արագության հաստատումը որոշվում է լ կարգի կինետիկական՝ (2.5.) հավասարումով: Նշանակենք՝  $C_0 = a$  և  $C = a - x$ : Այդ դեպքում՝

$$k = \frac{2,3}{t} \lg \frac{a}{a-x} \quad (2.26)$$

**Փորձի ընթացքը.** 200 մլ տարրողություն ունեցող կոլրի մեջ լցնել 100մլ 0,4%  $\text{NaI}$ -ի (կամ  $\text{KI}$  -ի) լուծույթ և 5մլ 2Ն  $\text{H}_2\text{SO}_4$  լուծույթ: 0,05Ն  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  լուծույթով լցված բյուրետից կոլրի պարունակությանը ավելացնել 1 մլ  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  լուծույթ, ապա 5 կարիլ 0,5 % օսլայի լուծույթ (որպես ինդիկատոր) և 10 մլ 0,05 Ն  $\text{H}_2\text{O}_2$  լուծույթ, որը համարժեք է  $A$  մլ 0,05 Ն  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  լուծույթին: Թափահարելով խառնել կոլրի պարունակությունը և վարկյանաչափով նշել կապույտ գունավորման առաջին անգամ հայտնվելու պահը ( $t_1$ ): Այդ նույն պահին բյուրետից ավելացնել ևս 1 մլ 0,05 Ն  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  լուծույթ, խառնել կոլրի պարունակությունը՝ կապույտ գունավորումը անհետանում է և ապա նորից հայտնվում որոշ ժամանակ անց: Նշել առաջին և երկրորդ անգամ կապույտ գունավորման հայտնվելու միջև ընկած ժամանակը ( $t_2$ ): Նույն ձևով փորձը կրկնել 4-5 անգամ:  $t_2$  և այլ ժամանակահատվածները հաշվել կապույտ գունավորման առաջին անգամ հայտնվելու պահից սկսած ( $t_0$ ): Դրանց հետո կոլրի պարունակությանը ավելացնել մի քանի կարիլ 1 Ն ամոնիումի մոլիբդենատի լուծույթ (կատալիզատոր) և արագորեն անջատված յոդը տիտրել 0,05 Ն  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  լուծույթով՝ մինչև լուծույթի լրիկ գունաթափելու: Նշել 0,05Ն  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  լուծույթի ընդհանուր ծախսը (հաշվել փորձի սկզբից): Այսպիսով պարզում են, թե փորձի համար վերցրած 10 մլ 0,05Ն  $\text{H}_2\text{O}_2$  լուծույթը ընդհանուր քամակով ո՞րքան  $A$  մլ 0,05Ն  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  լուծույթին է համարժեք: Դա նշանակում է, որ փորձի սկզբում ( $t_0$ ) ռեակցիոն խառնուրդում պարունակվել է ( $A-1$ ) մլ 0,05Ն  $\text{H}_2\text{O}_2$  լուծույթ և, հետևաբար,  $a = A-1$ : Կապույտ գունավորման երկրորդ անգամ հայտնվելու ( $t_2$ ) պահին  $x = 2$ , և այլն:

Գրանցել փորձի տվյալները և կատարել հաշվարկները: Ուեակցիայի արագության հաստատումը հաշվելու համար (2.26.) հավասարումը հարմար է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$k = \frac{2,3}{t} [\lg(A-1) - \lg(A-1-x)]$$

Հավասարման մեջ տեղադրելով  $A$  և  $x$  արժեքները (արտահայտված 0,05 Ն  $\text{Na}_2\text{S}_2\text{O}_3$  մլ-ով) և  $t$  ժամանակը (րոպե) հաշվել  $k$  -ի արժեքը

յուրաքանչյուր ժամանակահատվածի համար: Եթե փորձից պարզվի, որ  $A = 10$  նլ, ապա հաշվարկները կունենան հետևյալ տեսքը՝

$$k_1 = \frac{2,3}{t_1} \lg \frac{10-1}{10-1-1}, \quad k_2 = \frac{2,3}{t_2} \lg \frac{10-1}{10-1-2}, \quad k_3 = \frac{2,3}{t_3} \lg \frac{10-1}{10-1-3}$$

Փորձը խնամքով կատարելու դեպքում  $k$ -ի արժեքների տարրերությունը չպետք է գերազանցի նի քանի տասնորդականից:

### 3. Քիմիական հավասարակշռություն

Դասական թերմոդինամիկայի հիմնական պատկերացումները վերաբերում են մեկուսացված համակարգերին և դրանցում հաստատված հավասարակշռային պրոցեսներին: Կենդանի օրգանիզմը բաց համակարգ է, որում ընթացող պրոցեսները դարձելի չեն: Ոչ դարձելի պրոցեսներն օրգանիզմում ընթանում են ստացիոնար պայմաններում (ճնշման, ջերմաստիճանի, համակարգի ազատ էներգիայի, էնտրոպիայի հաստատունություն) և շատ նման են հավասարակշռության վիճակում գտնվող թերմոդինամիկական համակարգերին: Երկու դեպքում էլ արտաքին ազդակների բացակայության դեպքում ժամանակի ընթացքում, համակարգում փոփոխություններ չեն կատարվում: Այս նմանությունը թույլ է տալիս ստացիոնար բաց համակարգի նկատմամբ կիրառել Լե-Շատելի սկզբունքը:


#### 3.1. Դարձելի և ոչ դարձելի պրոցեսներ

Թերմոդինամիկական համակարգում ընթացող և նրա վիճակը փոփոխող պրոցեսները կարող են լինել հավասարակշռային և ոչ հավասարակշռային:

Հավասարակշռային կամ թերմոդինամիկորեն դարձելի են այն պրոցեսները, որոնց ժամանակ համակարգի վերադարձը սկզբնական վիճակին էներգիայի ծախս չի պահանջում և դրա հետ կապված շրջապատող միջավայրում փոփոխություններ չեն կատարվում: Դարձելի պրոցեսն իրականացնելիս ջերմության ծևով էներգիա չի ցրվում:

Ոչ հավասարակշռային կամ թերմոդինամիկորեն ոչ դարձելի են կոչվում այն պրոցեսները, որոնց ժամանակ համակարգի վերադարձը իր սկզբնական վիճակին հնարավոր է միայն արտաքինից էներգիա ծախսելով: Ոչ դարձելի պրոցեսները բնութագրվում են էներգիայի մի մասի անցումով ջերմության և որքան մեծ է ջերմության փոխարկվող էներգիան, այնքան այդ պրոցեսն ոչ դարձելի է:

Քննարկենք քիմիական ռեակցիաների մի քանի օրինակ.



Ռեակցիաների համար տրված են Գիբսի էներգիայի փոփոխությունը ստանդարտ պայմաններում ( $P=101,3 \text{ կՊա}, T=298 \text{ K}$ ): Այդ պայմաններում (1) ռեակցիայում առաջանաւ է աննշան քանակությամբ  $\text{HI}$ : (2) ռեակցիայում  $\text{Hb}$  և թթվածինը փոխագրում են ոչ լրիվ (նույնը տեղի է ունենում թոքերում), (3) ռեակցիայում գլուկոզը ամբողջությամբ վերածվում է  $\text{CO}_2$ -ի՝ համակարգում բավարար քանակությամբ թթվածին լինելու դեպքում: Այսպիսով, (1) և (2) ռեակցիաները թերմոդինամիկորեն դարձելի են, իսկ (3) ռեակցիան ոչ դարձելի:

Ռեակցիաները լինում են նաև ըստ ուղղության դարձելի և ըստ ուղղության ոչ դարձելի:

Դարձելի են կոչվում այն քիմիական ռեակցիաները, որոնք տվյալ արտաքին պայմաններում կարող են ինքնարերաբար ընթանալ ինչպես ուղիղ, այնպես էլ հակառիք ուղղություններով:

Ռեակցիայի դարձելիությունը ըստ ուղղության չպետք է նույնացնել այդ ռեակցիայի իրականացման թերմոդինամիկական դարձելիության հետ: Օրինակ, տվյալ պայմաններում ոչ դարձելի հանդիսացող ռեակցիան, պայմանները փոխելիս, կարող է դառնալ դարձելի: Այսպես, (3) ռեակցիան դառնում է դարձելի, եթե այն ընթանում է բույսերի տերևներում արևի լույսի ազդեցությամբ:

Ռեակցիայի դարձելիության թերմոդինամիկական չափանիշ է հանդիսանում համակարգի Գիբսի էներգիայի փոփոխությունը ( $\Delta G$ ): Ընդունված է ռեակցիան համարել դարձելի, եթե  $\Delta G$ -ի բացարձակ արժեքը չի գերազանցում 10 կՋ/նոլ: Այս թերմոդինամիկական չափանիշը կիրառելի է նաև ֆիզիկական պրոցեսների համար: Դարձելի ֆիզիկական պրոցեսներ են լուծնան պրոցեսը, գոլորշիացումը, հալեցումը: Ոչ դարձելի ֆիզիկական պրոցեսներ են խտացումը (կոնդենսացում), նստեցումը, բյուրեղացումը:

Դարձելի ռեակցիաներին հատուկ է քիմիական հավասարակշռության վիճակը: Յանակարգի վիճակը բնութագրվում է որպես հավասարակշռային, եթե տվյալ պայմաններում ուղիղ և հակարգը ռեակցիաները ընթանում են, սակայն ելանյութերի և վերջնանյութերի քանակը համակարգում չի փոխվում: Ըստ թերմոդինամիկայի 2-րդ օրենքի քիմիական հավասարակշռային վիճակում համակարգի Գիբսի էներգիան չի փոխվում:  $\Delta G = 0$ :

### 3.2. Յավասարակշռության հաստատումի կապը Գիբսի էներգիայի հետ

Քիմիական ռեակցիայի ընթացքում ելանյութերի քանակը նվազում է, իսկ վերջնանյութերի քանակը՝ աճում: Յանապատասխանաբար փոխվում են ելանյութերի և վերջնանյութերի կոնցենտրացիաները:

Յավասարակշռություն հաստատվելիս, նյութերի կոնցենտրացիաները համակարգում դադարում են փոխվել և կարող են մնալ հաստատուն այնքան ժամանակ, քանի դեռ չեն փոխվել արտաքին պայմանները: Այդ կոնցենտրացիաները կոչվում են հավասարակշռային: Յավասարակշռային կոնցենտրացիաների միջև փոխհարաբերությունը արտահայտվում է ներգործող գանգվածների օրենքով: Ներգործող զանգվածների օրենքը դիտարկենք հետևյալ ռեակցիայի օրինակով՝



որտեղ՝ A և B ելանյութեր են, C և D՝ վերջնանյութեր, a,b,c,d՝ համապատասխան ստեխիոմետրիկ գործակիցներ:

Դավասարակշռային կոնցենտրացիաները նշանակելով քառակուսի փակագծերով՝ [A], [B], [C], [D], կարելի է դուրս բերել ռեակցիայի հավասարակշռության հաստատումը՝

$$V_{\text{ռողի}} = k_1[A]^a[B]^b, \quad V_{\text{հակ.}} = k_2[C]^c[D]^d$$

Դավասարակշռության վիճակում  $V_{\text{ռողի}} = V_{\text{հակ.}}$ , հետևաբար՝

$$K_c = \frac{k_1}{k_2} = \frac{[C]^c [D]^d}{[A]^a [B]^b} = \text{const} \quad (3.2)$$

Կc մեջությունը անվանում են ռեակցիայի **հավասարակշռության հաստատում**, իսկ (3.2) հավասարումը հանդիսանում է ներգրոշող զանգվածների օրենքի մարենատիկական արտահայտությունը դարձելի ռեակցիաների համար և սահմանվում է հետևյալ կերպ.

Դարձելի ռեակցիաներում, հաստատում արտաքին պայմաններում ( $P, T$ ), հավասարակշռության վիճակում վերջնանյութերի և ելանյութերի կոնցենտրացիաների արտադրյալների հարաբերությունը, հաշվի առնելով ստեխիոմետրիկ գործակիցները, հաստատում մեջություն է և կախված չէ համակարգի քիմիական բաղադրությունից (Յուլիբերգ և Վագե, 1864թ.):

Դավասարակշռության հաստատումի չափողականությունը կախված է ռեակցիայի ստեխիոմետրիայից:

$$\text{Օրինակ՝ } K_c = \frac{[\text{HI}]^2}{[\text{H}_2][\text{I}_2]} \text{ դեպքում չափողականություն չունի, իսկ}$$

$$K_c = \frac{[\text{HbO}_2]}{[\text{Hb}][\text{O}_2]} \text{ դեպքում չափողականություն է լնոլ:}$$

Գիրսի էներգիայի և հավասարակշռության հաստատումի միջև կապը կախվածություն (Վանթ-Ռոֆի հզորելի հավասարում).

$$\Delta G = \Delta G^\circ + RT \ln \Pi_c \quad (3.3)$$

$\Delta G^\circ$ -ն տվյալ ռեակցիայի համար հաստատում մեջություն է և հավասար է այդ ռեակցիայի Գիրսի էներգիայի փոփոխությանը ստանդարտ պայմաններում:  $\Pi_c$  - մեջությունը (կոնցենտրացիայի պոտենցիալ) տվյալ պայմաններում, մինչև հավասարակշռության հաստատվելը ռեակցիային մասնակող նյութերի կոնցենտրացիաների ստեխիոմետրիկ հսարաբերությունն է:

$$\Pi_c = \frac{C_c^c \cdot C_d^d}{C_A^a \cdot C_B^b} \quad (3.4)$$

Ինչպես հայտնի է թերմոդինամիկայի 2-րդ օրենքից, հավասարակշռության վիճակում  $\Delta G = 0$  և (3.3) հավասարումից հետևում է, որ

$$\Delta G^\circ = -RT \ln K_c \quad (3.5)$$

Այսպիսով,  $K_c$ -ով արտահայտում են կոնցենտրացիաների պոտենցիալը հավասարակշռության վիճակում, իսկ  $\Pi_c$ -ի արժեքը որոշվում է

ոչ թե հավասարակշռային, այլ տվյալ պահին համակարգի նյութերի ցանկացած ընթացիկ կոնցենտրացիաներով՝  $C_A$ ,  $C_B$ ,  $C_C$ ,  $C_D$ :

Դամադրելով (3.4) և (3.5) հավասարումները կարելի է ստանալ պարզ կախվածություն:

$$\Delta G = RT \ln \frac{\Pi_c}{K_c} \quad (3.6)$$

որտեղ

$$\Pi_c = \frac{C_c^c \cdot C_d^d}{C_A^a \cdot C_B^b}, \quad K_c = \frac{[C]^c [D]^d}{[A]^a [B]^b}$$

(3.6) բանաձևի միջոցով հնարավոր է որոշել ռեակցիայի ուղղությունը, եթե տվյալ ջերմաստիճանում հայտնի են  $\Pi_c$  և  $K_c$  արժեքները: Դիտարկենք հետևյալ դեպքերը.

1.  $\Pi_c < K_c$ ,  $\Pi_c / K_c < 1$ ,  $\ln \Pi_c / K_c < 0$  և  $\Delta G < 0$ , այդպիսի ռեակցիան ինքնաբերաբար կընթանա ուղղությամբ, այսինքն ձախից դեպի

աջ:

2.  $\Pi_c > K_c$ ,  $\Pi_c / K_c > 1$ ,  $\ln \Pi_c / K_c > 0$  և  $\Delta G > 0$ , այդպիսի ռեակցիան ինքնաբերաբար կընթանա հակառակ ուղղությամբ՝ դեպի ձախ:

3.  $\Pi_c = K_c$ ,  $\Pi_c / K_c = 1$ ,  $\ln \Pi_c / K_c = 0$  և  $\Delta G = 0$ : Տեղի ունի քիմիական հավասարակշռություն:

Ստանդարտ պայմաններում, (ընդունելով նյութերի կոնցենտրացիաները հավասար 1 մոլ/լ), կստանանք  $\Pi_c^0 = 1$  և (3.6) հավասարումը կընդունի (3.5) հավասարման տեսքը: (3.5) հավասարումից հետևում է, որ

$$K_c = e^{-\Delta G^\circ / RT} \quad (3.7)$$

Տեղադրելով  $\Delta G^\circ$ -ի արժեքները վերը քննարկված երեք ռեակցիաների համար, կստանանք  $K_{C(1)}=0.52$ ,  $K_{C(2)}=86$  լ/մոլ,  $K_{C(3)}=10^{500}$  մոլ<sup>5</sup>·լ<sup>-5</sup>: Տվյալներից երևում է, որ գյուկողի օքսիդացման  $K_c$ -ն շատ մեծ է և այդ ռեակցիան գործնականորեն ոչ դարձելի է, իսկ (1) և (2) ռեակցիաները ստանդարտ պայմաններում դարձելի են:

**Օրինակ 1.** Գյուկող -1-ֆոսֆատ  $\rightleftharpoons$  գյուկող -6-ֆոսֆատ փոխարկման ռեակցիայի հավասարակշռության հաստատումը  $K = 17$ , եթք  $pH = 7$ : Հաշվել  $\Delta G$ -ի արժեքը:

**Լուծում:**  $\Delta G^\circ = -RT \ln K_c$ ,  $\Delta G^\circ = -2,3RT \lg K_c$

$$\Delta G^\circ = -2,3 \cdot 1,987 \cdot 298 \cdot \lg 17 = -1700 \text{ կալ/մոլ}$$

$\Delta G^\circ$ -ի բացասական արժեքը վկայում է, որ ստանդարտ պայմաններում տրամսֆոսֆորացման ռեակցիան ընթանում է ինքնաբերաբար:

Այսպիսով, որքան ավելի բացասական է  $\Delta G^\circ$  -ի արժեքը, այնքան  $K_h$ -ի արժեքը դրական է ( $K_h >> 1$ ) և այնքան մեծ չափով է հավասարակշռությունը տեղաշարժված ռեակցիայի արդյունքների առաջացման կողմը: Պեսք է նշել, որ  $\Delta G^\circ$  -ի արժեքը

պարտադիր չէ, որ կանխորոշի ռեակցիայի իրական արդյունքը, այն կանխորոշում է միայն ռեակցիայի հավասարակշռային վիճակը  $25^{\circ}\text{C}$ - ում և պրոցեսի սկզբունքային հնարավորությունը: Սակայն դա չի նշանակում, թե ռեակցիան իրականում կը նրանա, քանի որ նյութերի մեջ մասը  $25^{\circ}\text{C}$ - ում կայուն են և ռեակցիան ընթանալու համար պահանջվում է էներգիա ( $E_a$ ) կամ կատալիզատոր:

Գագեր պարունակող համակարգերի համար նյութերի կոնցենտրացիաները փոխարկելով նրանց պարցիալ ծնշումներով, հավասարակշռության հաստատունը կարելի է արտահայտել  $K_p$ -ով:

$$K_p = K_c (RT)^{\Delta n} \quad (3.8)$$

$K_c$  -ի և  $K_p$  -ի միջև կապը կարելի է դուրս բերել, օգտվելով  $PV = nRT$  բանաձևից:

$$P = \frac{n}{V} RT = CRT, \text{ որտեղից}$$

$$K_p = \frac{C_c^c (RT)^c \cdot C_d^d (RT)^d}{C_A^a (RT)^a \cdot C_B^b (RT)^b}, \quad K_c = K_p (RT)^{-\Delta n} \quad (3.9)$$

Որտեղ,  $\Delta n$ -ը ռեակցիայի գազային արդյունքների և սկզբնանյութերի մոլերի թվի տարբերությունն է:  $\Delta n = c + d - (a + b)$ : Եթե մոլերի թիվը հավասար է 1, ապա  $K_c = K_p$ :

$K_c$  և  $K_p$  միջև եղած կապը դուրս բերենք  $2\text{CO}_{(q)} + \text{O}_{2(q)} \rightleftharpoons 2\text{CO}_{2(q)}$  հավասարակշռային համակարգի համար.

$$K_c = \frac{[\text{CO}_2]^2}{[\text{CO}]^2 [\text{O}_2]}; \quad K_p = \frac{P_{\text{CO}_2}^2}{P_{\text{CO}}^2 \cdot P_{\text{O}_2}}$$

$$K_p = \frac{[\text{CO}_2]^2 (RT)^2}{[\text{CO}]^2 (RT)^2 [\text{O}_2] RT}$$

Որտեղից  $K_p = K_c (RT)^{-1}$

**Օրինակ 2.** Ամոնիակի սինթեզի  $\text{N}_2 + 3\text{H}_2 \rightleftharpoons 2\text{NH}_3$  ռեակցիայի  $K_p = 2,32 \cdot 10^{-13}$ , ( $\text{Պա}^{-2}$ ),  $350^{\circ}\text{C}$ : Հաշվել  $K_c$  նույն ջերմաստիճանում ( $R = 8,314$ ):

**Լուծում:** Օգտվելով (3.8.) բանաձևից գտնենք  $K_c$  -ի արժեքը:

$$K_p = K_c (RT)^{-\Delta n}$$

Ինչպես երևում է  $N_2 + 3H_2 \rightleftharpoons 2NH_3$  ռեակցիայի հավասարումից  
 $\Delta n = -2$

$$K_C = K_P \cdot (RT)^2 = 2.32 \cdot 10^{-13} (8.314 \cdot 10^3 \cdot 623)^2 = 6.224$$

$$\text{Պատ. } K_C = 6.224:$$

Օգտվելով վերը բերված առնչություններից կարելի է հաշվարկել.

ա) Այսուհետեւ սկզբնական կոնցենտրացիաները, եթե հայտնի են հավասարակշռայինները,

բ) Այսուհետեւ հավասարակշռային կոնցենտրացիաները, եթե հայտնի են հավասարակշռության հաստատունը և սկզբնական կոնցենտրացիաները:

**Օրինակ 3.** Ածխածնի (IV) օքսիդի փոխազդեցությունն ամորֆ ածխածնի հետ ( $v=const$ ) որոշակի ջերմաստիճանում հասնում է հավասարակշռության: Այդ պահին խառնուրդը պարունակում է 0,03 մոլ/լ  $CO_2$ , 0,04 մոլ/լ  $CO$ : Ածխածնի (IV) օքսիդի սկզբնական ո՞ր կոնցենտրացիային է դա համապատասխանում:

**Լուծում:** Ըստ  $CO_{2(q)} + C_{\text{ամորֆ}} \rightleftharpoons 2CO$  հավասարման հավասարակշռության պահին 0,04 մոլ.  $CO$ -ի հայտնվելը համապատասխանում է  $CO_2$ -ի կոնցենտրացիայի փոքրացմանը 0,02 մոլ/լ-ով, հետևաբար՝

$$C_{CO_2} = 0,02 + 0,03 = 0,05 \text{ մոլ/լ:}$$

**Օրինակ 4.** Որոշել  $2H_2S_{(q)} + 3O_{2(q)} \rightleftharpoons 2SO_{2(q)} + 2H_2O$  ռեակցիայի հավասարակշռության հաստատունը, եթե  $C_{H_2S} = 0,06$  մոլ/լ,  
 $C_{O_2} = 0,09$  մոլ/լ, իսկ հավասարակշռության պահին փոխազդել է  $H_2S$ -ի 50%:

**Լուծում:** Քանի որ փոխազդել է  $H_2S$  -ի 50 % -ը, ապա նրա հավասարակշռային կոնցենտրացիան հավասար է 0,03 մոլ/լ,  $SO_2$ -ի և  $H_2O$ -ի հավասարակշռային կոնցենտրացիան նույնական հավասար կլինի 0,03 մոլ/լ, իսկ թթվածնի հավասարակշռային կոնցենտրացիան հավասար է  $0,09 - 0,045 = 0,045$  մոլ/լ:

$$K_h = \frac{[SO_2]^2 \cdot [H_2O]^2}{[H_2S]^2 [O_2]^3} = \frac{0,03^2 \cdot 0,03^2}{0,03^2 \cdot 0,045^3} = 9,8$$

**Օրինակ 5.** Որոշել Այսուհետեւ բանակական բաղադրությունը (%) հավասարակշռային խառնուրդում, եթե  $C_{H_2} = 0,06$  մոլ/լ,  
 $CCl_2 = 0,04$  մոլ/լ: Ի նկատի ունենալ, որ  $v = const$  իսկ ռեակցիան ընթանում է այնպիսի ջերմաստիճանում, որ  $K_h = 1$ :

**Լուծում:**  $H_{2(q)} + Cl_{2(q)} \rightleftharpoons 2HCl_{(q)}$

Ենթադրությունը փոխազդել է  $x$  մոլ  $H_2$ ,  $x$  մոլ  $Cl_2$ , հետևաբար առաջացել է  $2x$  մոլ  $HCl$ :

$[H_2] = (0,06-x)$  մոլ/լ,  $[Cl_2] = (0,04-x)$  մոլ/լ: Օգտվելով (3.3) հավասարումից գտնենք  $x$ -ի արժեքը

$$K_h = \frac{(2x)^2}{(0.06 - x)(0.04 - x)} = 1 ; \quad x = 0.016$$

$$[HCl] = 2 \cdot 0.016 = 0.032 \text{ мол/л}, [H_2] = 0.044 \text{ мол/л}, [Cl_2] = 0.024 \text{ мол/л}$$


$$\sum v = 0.032 + 0.044 + 0.024 = 0.1$$

$$\varphi_{H_2} = \frac{0.044}{0.1} \cdot 100 = 44\%$$

$$\varphi_{Cl_2} = \frac{0.024}{0.1} \cdot 100 = 24\% ; \quad \varphi_{HCl} = 32\%$$

**Օրինակ 6.** Ըստ  $CO_{(q)} + Cl_{2(q)} \rightleftharpoons COCl_2$  ռեակցիայի հավասարման գտնել ֆուզենի ելքը (%), եթե  $C_{CO} = 0.006 \text{ мол/л}$ ,  $C_{Cl_2} = 0.002 \text{ мол/л}$ :

$K_c = 64$ :



**Պատ.** 86,5%

### 3.3. Քիմիական հավասարակշռության հաստատումի կախվածությունը ջերմաստիճանից

Հավասարակշռության հաստատում մեծությունը կախված է ջերմաստիճանից: Այդ կախվածությունը արտահայտվում է Վան-Շոֆի իզոբարի հավասարումով: Յամադրելով թերմոդինամիկայի (1.14) և (3.5) հիմնական հավասարումները Վան-Շոֆը ստացել է հետևյալ բանաձևը.


$$\Delta G^\circ = \Delta H^\circ - T\Delta S^\circ$$

$$\Delta G^\circ = \Delta H^\circ - T\Delta S^\circ = -RT\ln K_h$$

$$\ln K_h = \frac{\Delta S^\circ}{R} - \frac{\Delta H^\circ}{RT} \quad (3.10) \quad (\text{Վան-Շոֆի իզոբարի հավասարում})$$

$\ln K_h - \frac{1}{T}$  –ից ունեցած կախվածության գրաֆիկը բացասական թեքությամբ ուղիղ գիծ է, որն օրդինատների առանցքից կտրում է  $\frac{\Delta S^\circ}{R}$

հատվածը, իսկ թեքության անկյան տանգենսը հավասար է  $-\frac{\Delta H^0}{R}$   
մեծությամբ՝ էկզոքերմ և  $\frac{\Delta H^0}{R}$ ՝ էնդոքերմ ռեակցիաների համար:



**Նկ. 3.1.**  $\ln K$  –ի ջերմաստիճանի հակադարձ մեծությունից ունեցած կախվածության գրաֆիկը էկզոքերմ (ա) և էնդոքերմ (բ) ռեակցիաների համար:

Օգտվելով Վանթ-Շոֆի հավասարումից որոշվում է թերմոդինամիկական հիմնական ֆունկցիաները՝  $\Delta H^0$  և  $\Delta S^0$ :

Բացի գրաֆիկականից հայտնի է նաև որոշման կինետիկական եղանակ: Երկու տարրեր ջերմաստիճաններում որոշում են հավասարակշռության հաստատունները և տեղադրում (3.10) հավասարման մեջ.

$$\ln K_1 = \frac{\Delta S^0}{R} - \frac{\Delta H^0}{RT_1}; \quad \ln K_2 = \frac{\Delta S^0}{R} - \frac{\Delta H^0}{RT_2}$$

Երկու հավասարումների տարրերությունից որոշվում է  $\Delta H^0$ ,

$$\ln \frac{K_1}{K_2} = \frac{\Delta H^0}{R} \left( \frac{1}{T_2} - \frac{1}{T_1} \right) \quad (3.11)$$

### 3.4. Տարրեր գործոնների ազդեցությունը հավասարակշռության վիճակի վրա: Լե-Շատեյեի սկզբունքը

(3.6) հավասարումը հնարավորություն է տալիս կանխագուշակել հավասարակշռության տեղաշարժի ուղղությունը, նյութերից որևէ մեկի կոնցենտրացիայի կամ համակարգի ջերմաստիճանը փոփոխելիս:

Համակարգում գտնվող նյութերից որևէ մեկն ավելացնելիս, օրինակ A, նրա կոնցենտրացիան կրածնա ավելի մեծ, քան հավասարակշռայինը: Համապատասխանաբար  $\Pi_c$  կրածնա  $K_C$ -ից փոքր, իսկ  $\Pi_c/K_C < 1$  և ռեակցիան կընթանա ազ այնքան ժամանակ, մինչև նորից հաստատվի հավասարակշռություն: Ընդ որում,  $C_A$  -ն կակսի փոքրանալ

և մոտենալ [A] սկզբնական արժեքին: Համակարգին վերջնանյութերից որևէ մեկն ավելացնելից, օրինակ D, տեղի կունենա ճիշտ հակառակը՝  $\frac{\eta_c/K_c}{\eta_c/K_c - 1} > 1$  և ռեակցիան կը ներառնա ծախ մինչև  $C_D$ -ն հավասարվի [D]:

Այսպիսով, հավասարակշռության մեջ գտնվող համակարգի նյութերից որևէ մեկի կոնցենտրացիայի փոփոխությունը խթանում է ռեակցիայի ընթացքն այն ուղղությամբ, որը նպաստում է փոփոխված կոնցենտրացիայի սկզբնական արժեքի վերականգնմանը:

Հավասարակշռության հաստատումի ջերմաստիճանային կախվածությունը հարմար է ներկայացնել (3.10) բանաձևի օգնությամբ՝

$$\ln K_c = \frac{\Delta S^0}{R} - \frac{\Delta H^0}{RT}$$

1. Էնդոթերմ պրոցեսի ( $\Delta H > 0$ ) դեպքում,  $\frac{\Delta H^0}{R}$  մեծությունը դրական է և ջերմաստիճանը բարձրացնելիս արժեքը փոքրանում է, իսկ  $K_c$  արժեքը՝ մեծանում, այսինքն հավասարակշռությունը տեղաշարժվում է դեպի աջ: Ընդ որում, տեղի է ունենում ջերմության լրացուցիչ կլանում և համակարգի ջերմաստիճանը նվազում է:


2. Էկզոթերմ պրոցեսի ( $\Delta H < 0$ ) դեպքում,  $\frac{\Delta H^0}{R}$  մեծությունը բացա-

սական է և ջերմաստիճանը բարձրացնելիս  $K_c$  արժեքը նվազում է, այսինքն հավասարակշռությունը տեղաշարժվում է դեպի ձախ, ջերմությունը կլանվում է, որից համակարգի ջերմաստիճանը նվազում է:

Այսպիսով, համակարգի ջերմաստիճանի փոփոխությունը խթանում է ռեակցիայի ընթացքն այն ուղղությամբ, որը նպաստում է սկզբնական ջերմաստիճանի վերականգնմանը: Ջերմաստիճանի բարձրացումը հավասարակշռությունը շեղում է էնդոթերմ ռեակցիայի կողմը, իսկ հջեցումը՝ էկզոթերմի կողմը:

Լե-Շատեյէի (1850-1936) կողմից սահմանված է մի ընդհանուր սկզբունք, որը թույլ է տալիս կանխագուշակել հավասարակշռության տեղաշարժը. հավասարակշռային համակարգի վրա որևէ գործնի ազդեցությունը առաջ է բերում հավասարակշռության տեղաշարժ այն ուղղությամբ, որը նպաստում է համակարգի սկզբնական վիճակի վերականգնմանը: Ակնհայտ է, որ Լե-Շատեյէի սկզբունքը լիովին համապատասխանում է թերմոդինամիկայի օրենքներից բխող եզրակացություններին:

**Օրինակ 7.** Քննարկենք թթվածնի պարզիալ ճնշման փոփոխության ազդեցությունը օրգանիզմում թթվածնի տեղափոխման վրա: Արտաքին շնչառության հիմքում ընկած է ռեակցիան.



Թոքերում թթվածնի բարձր ճնշման տակ, երակային արյունը հարստանում է թթվածնով, քանի որ, ըստ Լե-Շատեյէի սկզբունքի, ռեակցիայի հավասարակշռությունը տեղաշարժվում է աջ՝

HbO<sub>2</sub> առաջացման կողմը: Դեպի հյուսվածքներն անցնող արտերիալ արյունը, ընդհակառակը, գտնվում է թթվածնի ցածր պարզիալ ճնշման տակ և հավասարակշռությունը տեղաշաղովում է դեպի ծախ ՀbO<sub>2</sub>-ի քայրայնան կողմը: Արյունքում, թթվածինն արյունից անցնում է հյուսվածքներին:


Հետազոտությունները ցույց են տվել, որ օրգանիզմներում բազմաթիվ կենսաբանական պրոցեսների ընթացքը կարգավորվում է հավասարակշռության տեղաշարժով այս կամ այն կողմը, համաձայն Լեշատելյի սկզբունքի: Օրինակ, արյան թH-ի հաստատունությունը հիմնված է բուժերային համակարգերի հավասարակշռության տեղաշարժի վրա (տես «Բուժերային համակարգեր»):

### 3.5. Լաբորատոր աշխատանք

**Նպատակը.** Փորձով ուսումնասիրել քիմիական հավասարակշռության տեղաշարժը ռեակցիային մասնակցող նյութերի կոնցենտրացիան և ջերմաստիճանը փոփոխելիս:

**Ռեակտիվներ.** FeCl<sub>3</sub> և KSCN հագեցած լուծույթներ. KCl<sub>բյուրեղ.</sub>, յոդի լուծույթ (C= 0,05 մոլ/լ), 0,5 % օւլայի լուծույթ:

**Փորձ 1.Կոնցենտրացիայի փոփոխության ազդեցությունը հավասարակշռային վիճակի վրա:** Փորձի համար հարմար է օգտվել երկարի (III) ռոդանիդի առաջացման ռեակցիայից.



FeCl<sub>3</sub>-ի լուծույթը դեղին է, KSCN և KCl անգույն են, իսկ Fe(SCN)<sub>3</sub> ունի կարմիր գույն: Երկարի (III) ռոդանիդի կոնցենտրացիայից է կախված լուծույթի գույնի ինտենսիվությունը, որից ելեկով կարելի է եզրակացնել, թե ինչ չափով է տեղաշարժվում հավասարակշռությունն այս կամ այն ուղղությամբ:


**Փորձի ընթացքը.** 20 մլ ջրին ավելացնել 2-ական կարիլ FeCl<sub>3</sub> և KSCN-ի լուծույթներ: Ստացված կարմիր գույնի լուծույթը փորձանոթների մեջ քաժանել 4 մասի: 1-ին փորձանոթը բողնել համեմատելու համար: 2-րդ փորձանոթի մեջ աստիճանաբար կարեցնել մի քանի կարիլ FeCl<sub>3</sub>-ի հագեցած լուծույթ: Ի՞նչ է նկատվում: Այդուսակ1-ում նշել հեղուկի գույնի փոփոխությունը և հավասարակշռության տեղաշարժի ուղղությունը: 3-րդ փորձանոթի մեջ աստիճանաբար կարեցնել մի քանի կարիլ KSCN: Կրկին դիտարկել փոփոխությունը և գրանցել: 4-րդ փորձանոթի մեջ փոքր քանակներով ավելացնել չոր KCl, անընդհատ խառնելով լուծույթը, որպեսզի KCl լուծվի և դիտել գույնի փոփոխությունը: Բոլոր փորձանոթներում ստացված լուծույթների գույները համեմատել, դիտարկման արդյունքները գրանցել աղյուսակ 1-ում:

**Այդուսակ 1**

Իործանոր	ավելացվող նյութ	գույնի ինտենսիվության փոփոխությունը	հավասարակշռության տեղաշարժի ուղղությունը
1.	FeCl <sub>3</sub>		
2.	KSCN		
3.	KCl		

Փորձի արդյունքներից ելնելով պատասխանել որքանով է արդյո՞ք համապատասխանում քիմիական հավասարակշռության տեղաշարժը Լե-Շատեյի սկզբունքին:


**Փորձ 2. Ջերմաստիճանի փոփոխության ազդեցությունը հավասարակշռային վիճակի վրա:** Երկու փորձանոթներում վերցնել 4-ական մլ օսլայի լուծույթ և ավելացնել 4-ական կաթիլ յոդի լուծույթ: Փորձանոթներից մեկը թողնել համեմատության համար (ստորգիչ լուծույթ): 2-րդ փորձանոթը տեղադրել եռացող ջրային բաղնիքի մեջ: Դիտարկել գույնի փոփոխությունը: Սառեցնել տաքացրած փորձանոթը:  $^{\circ}\text{C}$  է նկատվում:



դեղին անգույն կապույտ

Հիմնվելով փորձի արդյունքների վրա որոշել ռեակցիան էկզորերմ է, թե՞ էնդորերմ:

**Փորձ 3. Միջավայրի ազդեցությունը հավասարակշռության տեղաշարժի վրա:** Նարնջագույն դիքրոնատ հոնի  $\text{Cr}_2\text{O}_7^{2-}$  և դեղին քրոնատ հոնի  $\text{CrO}_4^{2-}$  միջև գոյություն ունի հավասարակշռություն:



Այսպիսով, հիմնային միջավայրում հավասարակշռությունը տեղաշարժվում է  $\text{CrO}_4^{2-}$  իոնների առաջացման կողմը և լուծույթը ստանում է դեղին գույն, իսկ թթվային միջավայրում հավասարակշռությունը տեղաշարժվում է  $\text{Cr}_2\text{O}_7^{2-}$  իոնների առաջացման կողմը և լուծույթը դառնում է նարնջագույն:

Կալիումի դիքրոնատի ( $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$ ) 5-6 կաթիլ նարնջագույն լուծույթին ավելացնել ուժեղ հիմքի լուծույթի 1-2 կաթիլ: Լուծույթը ստանում է դեղին գույն, դեղին լուծույթին ուժեղ թթվի 1-2 կաթիլ ավելացնելիս, վերականգնվում է նարնջագույնը:

## 4. Ուսմունք լուծույթների մասին

### 4.1. Լուծույթների բժշկակենսաբանական դերը: Դիմնական հասկացություններ

Լուծույթները բնության անենատարածված համակարգերից են և ունեն մեծ նշանակություն, քանի որ քիմիական փոխարկումների ճնշող մեծամասնությունն ընթանում է լուծույթներում: Լուծույթների մասին ուսմունքը մեծ նշանակություն ունի բժիշկների համար, քանի որ կարևոր կենսաբանական հեղուկները՝ արյունը, ավիջը, մեզը ողնութեղային հեղուկը աղերի, սպիտակուցների, շաքարների և լիպիդների ջրային լուծույթներն են: Մանդի յուրացումը կապված է սննդանութերի լուծված վիճակի անցնելու հետ: Կենսահեղուկները մասնակցում են դեղամիջոցների, սնուցող նյութերի (ճարպեր, ամինաթթուներ, թթվածին) տեղափոխմանը դեպի հյուսվածքներ և տարեր օրգաններ, ինչպես նաև օրգանիզմից նյութափոխանակման արդյունքների (նիզաննյութ, բիլիռուրին, CO<sub>2</sub> և այլն) հեռացմանը:

Կենսաբանական հեղուկներում թթվայնությունը, աղերի և օրգանական նյութերի կոնցենտրացիաները հաստատում են պահպանվում (կոնցենտրացիոն հոմեոստազ):

Լուծույթները համարվում են դիսպերս համակարգերի (դիսպերսում-տրոհում) մի ենթախումբ, որի ստույգ անվանումն է իոնական, մոլեկուլային կամ իսկական դիսպերս համակարգ:

Լուծույթներ են կոչվում այն համասեռ ֆիզիկական համակարգերը, որոնք կազմված են երկու կամ ավելի բաղադրամասերից, որոնց քանակները կարելի է փոփոխել որոշակի սահմաններում:

Լուծույթի առաջացմանը մասնակցող մասնիկները (ատոմ, իոն, մոլեկուլ) փոխադարձաբար ներթափանցում են միջնութեկուլային տարածքները, որի հետևանքով առաջանում է երկու կամ ավելի նյութերից բաղկացած միաֆազ համակարգ:

Եթեուկ լուծույթների բաղադրամասերը բնութագրելու համար օգտվում են լուծիչ և լուծվող նյութ հասկացություններից (այնու լուծույթների և գազային խառնուրդների նկատմամբ այդ հասկացությունները չեն կիրառվում):

Լուծույթ առաջացրած նյութերից լուծիչ է համարվում այն բաղադրամասը, որի ագրեգատային վիճակը համընկնում է լուծույթի ագրեգատային վիճակին: Եթե լուծույթի բաղադրամասերն ունեն նույն ագրեգատային վիճակը, ապա լուծիչ է համարվում այն նյութը, որի քանակն ավելի մեծ է: Սակայն այդպիսի տարրաբաժանումը խիստ պայմանական է, իսկ այն նյութերի դեպքում, որոնք կարող են խառնվել անսահմանափակ քանակով, ընդհանրապես անհմաստ է:

## 4.2. Լուծման պրոցեսի թերմոդինամիկան

Եթե որոշակի պայմաններում ( $P, T = \text{const}$ ) նյութի լուծումն ընթանում է ինքնաբերաբար, ապա թերմոդինամիկական տեսանկյունից պրոցեսն ուղեկցվում է համակարգի Գիբսի էներգիայի փոքրացումով.

$$\Delta G = \Delta H - T\Delta S < 0 \quad (4.1.)$$

Լուծույթ առաջացնող նյութերը լուծման ընթացքում փոխում են իրենց կառուցվածքը: Այդ նյութերի միջև տեղի ունեցող փոխազդեցությունները պայմանավորում են համակարգի հատկությունները: Այդ են վկայում, մասնավորապես, լուծույթների պատրաստման ընթացքում որոշված ջերմային ( $\Delta H$ ) և ծավալային ( $\Delta V$ ) բնութագրերը:

Արդեն նշվել է (1.4), որ հեղուկներում պինդ նյութերի լուծման էնթալպիայի փոփոխությունը մեծ մասմբ դրական է ( $\Delta H_{\text{լուծ.}} > 0$ ), հազվադեպ՝ բացասական ( $\Delta H_{\text{լուծ.}} < 0$ ):

Դեղուկներում զագի լուծումը համարյա միշտ ուղեկցվում է էնթալպիայի փոքրացումով ( $\Delta H_{\text{լուծ.}} < 0$ ): Այդ պրոցեսը նման է նյութի խտացմանը, որը էկզուտեր պրոցես է:

(4.1.) անհավասարությունից երևում է, որ եթե լուծման պրոցեսի էնթալպիայի փոփոխությունը դրական է, ապա նյութի ինքնաբերաբար լուծումը անպայման կապված է էնթրոպիայի մեծացման հետ ( $\Delta S > 0$ ), քանի որ միայն այդ դեպքում էնթալպիական և էնտրոպիական գործոնների տարրերությունը կլինի բացասական:

Ցանկացած լուծույթի առաջացում դարձելի բարդ պրոցես է, որն ընդգրկում է լուծում կամ նյութի անցում լուծույթ և հակառակը՝ նրա անջատումը լուծույթից: Դեղուկներում պինդ նյութի լուծման պրոցեսն սկսվում է նյութի մոլեկուլների, աստղմների կամ իոնների անջատումով բյուրեղի մակերեսից սեփական տատանումների և լուծիչի մոլեկուլների ազդեցության տակ: Այնուհետև բյուրեղական ցանցից կտրված մասնիկները աստիճանաբար բաշխվում են հեղուկի ամբողջ ծավալում դիֆուզիայի շնորհիվ: Լուծույթում լուծվող նյութի քանակի մեծացման հետ փոքրանում է կոնցենտրացիայի գրադիենտը և, հետևաբար, փոքրանում է նաև պինդ նյութի մակերեսից մասնիկների լուծույթ անցնելու պրոցեսի արագությունը: Եթե մակերեսից մասնիկների պոկման արագությունը ( $V_{\text{լուծ.}}$ ) հավասարվում է պինդ նյութի մակերեսի վրա մասնիկների նստեցման արագությանը ( $V_{\text{բյուր.}}$ ) հաստատվում է հավասարակշռություն.

$$V_{\text{լուծ.}} = V_{\text{բյուր.}}; \quad \Delta G = 0$$

Լուծույթը, որի համար որոշակի ջերմաստիճանում և ճնշման տակ  $\Delta G = 0$ , կոչվում է **հագեցած**: **Զհագեցած լուծույթի համար՝**

$$V_{\text{լուծ.}} > V_{\text{բյուր.}}; \quad \Delta G < 0$$

**Գերհագեցած լուծույթի համար՝**

$$V_{\text{լուծ.}} < V_{\text{բյուր.}}; \quad \Delta G > 0$$

### 4.3. Գագերի լուծելիությունը հեղուկներում, Հենրիի և Սեչենովի օրենքները

Գագի լուծումը հեղուկում սահմանափակ է: X գագի որոշակի կոնցենտրացիայի դեպքում հաստատվում է հավասարակշռություն.

$$X(g) \rightleftharpoons X(h)$$

Գագը հեղուկում լուծվելիս տեղի է ունենում գագի ծավալի զգալի փոքրացում: Այդ պատճառով, համաձայն Լե-Շատեյշի սկզբունքի, ճնշումը բարձրացնելիս հավասարակշռությունը տեղաշարժվում է դեպի աջ և գագի լուծելիությունը մեծանում է: Այսպիսով, գագի լուծելիությունը ուղիղ համեմատական է նրա ճնշմանը: Այս առնչությունը արտահայտվում է Հենրիի օրենքով. տվյալ ջերմաստիճանում, հեղուկի որոշակի ծավալում լուծված գագի քանակը ուղիղ համեմատական է գագի ճնշմանը: Հենրիի օրենքը մաքեմատիկորեն արտահայտվում է.

$$C(x) = K(x) \cdot P(x)$$

որտեղ  $C(x)$  - գագի կոնցենտրացիան հագեցած լուծույթում, մոլ/լ  
 $P(x)$  - գագի ճնշումը հեղուկի վրա, Պա

$$K(x) - \text{տվյալ գագի համար Հենրիի հաստատումը, մոլ/լ} \cdot \text{Պա}$$

Հենրիի հաստատումը կախված է գագի բնույթից, լուծիչից և ջերմաստիճանից: Հենրիի օրենքը կիրառելի է համեմատաբար նոր լուծույթների համար, գագի և լուծիչի միջև քիմիական փոխազդեցության բացակայության և ոչ մեծ ճնշման դեպքում:

Հենրիի օրենքը հանդիսանում է Դալտոնի ընդհանուր օրենքի մասնավոր դեպքը: Գագային խառնուրդ հեղուկում լուծելիս, խառնուրդի յուրաքանչյուր բաղադրիչի լուծելիությունը որոշվում է ըստ Դալտոնի օրենքի. հաստատուն ջերմաստիճանում, գագային խառնուրդի յուրաքանչյուր բաղադրիչի լուծելիությունը համեմատական է հեղուկի վրա տվյալ բաղադրիչի պարցիալ ճնշմանը և կախված չէ խառնուրդի ընդհանուր ճնշումից և բաղադրիչների բնույթից:

$$C(x) = K(x) \cdot P_i$$

որտեղ,  $P_i$  - տվյալ բաղադրիչի պարցիալ ճնշումն է և ցույց է տալիս բաղադրիչի ճնշման բաժինը ընդհանուր ճնշման մեջ: Բաղադրիչի պարցիալ ճնշումը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$P_i = P_{\text{ընդ.}} \cdot N_i$$

որտեղ  $P_i$  - բաղադրիչի պարցիալ ճնշումը,

$$P_{\text{ընդ.}} - \text{գագային խառնուրդի ընդհանուր ճնշումը},$$

$$N_i - \text{բաղադրիչի մոլային բաժինը}:$$

**Օրինակ 1.** Օդը կազմված է 78% ազոտից, 21% թթվածնից, 1% արգոնից (ըստ ծավալի): Որոշել ազոտի կոնցենտրացիան ջրում 298

K, եթե Հենրիի հաստատումը հավասար է  $6,13 \cdot 10^{-9}$  մոլ/լ.Պա:

**Լուծում.** Ազոտի մոլային բաժինը հավասար է ազոտի ծավալային բաժնին և կազմում է 0,78, որտեղից

$$P_{(N_2)} = P_{\text{ընդ.}} \cdot 0,78 = 101325 \cdot 0,78 = 79033,5 \text{ Pa:}$$

$$C_{(N_2)} = K_{(N_2)} \cdot P_{(N_2)} = 6,13 \cdot 10^{-9} \cdot 79033,5 = 4,84 \cdot 10^{-4} \text{ моль/л:}$$

Ուստի ֆիզիոլոգ հ.ս. Սեչենովը ուսումնասիրելով գազերի լուծելիությունը էլեկտրոլիտների լուծույթներում, հաստատեց հետևյալ օրինաչափությունը.

Գազերի լուծելիությունը հեղուկներում նվազում է էլեկտրոլիտների ներկայությամբ (Սեչենովի օրենք):

Մաթեմատիկորեն Սեչենովի օրենքը արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$C(x) = C_0(x) \cdot e^{-KC_t}$$

որտեղ  $C(x)$  - գազի լուծելիությունը էլեկտրոլիտի ներկայությամբ

$$C_0(x) - \text{գազի լուծելիությունը մաքուր լուծիչում}$$

$$C_t - \text{էլեկտրոլիտի կոնցենտրացիան}$$

$K$  - Սեչենովի հաստատուն, որը կախված է գազի և էլեկտրոլիտի բնույթից, ջերմաստիճանից:

Էլեկտրոլիտների ներկայությամբ գազերի լուծելիության նվազման պատճառներից մեկը էլեկտրոլիտների իոնների հիդրատացումն (սոլվատացում) է լուծիչի նոլեկուլներով: Յիդրատացման հետևանքով նվազում է լուծիչի ազատ մոլեկուլների թիվը, և հետևաբար, նվազում է գազի լուծվելու հնարավորությունը:

Դենրիի և Սեչենովի օրենքների ունեն մեծ գործնական նշանակություն ինչպես թիմիայում, այնպես էլ բժշկության մեջ: Ենշման փոփոխության հետևանքով արյան մեջ գազերի լուծելիության փոփոխությունը կարող է առաջացնել ծանր հիվանդություններ: Այդպիսի հիվանդություն է կեսոնային հիվանդությունը, որն առաջանում է ճնշման կտրուկ փոքրացման դեպքում՝ ջրասույզների, օդաչուների մոտ: Օրինակ ծովի մակերևույթից 40 մ և ավելի խորության վրա ընդհանուր ճնշումը մեծանում է մոտ 4 անգամ և կազմում է մոտավորապես 400 կՊա: Այդպիսի ճնշման պայմաններում ազոտի լուծելիությունն արյան պլազմայում 4 անգամ ավելի է, քան ծովի մակերևսին: Ջրասույզին չափազանց արագ մակերես բարձրացնելիս, ճնշումը թոքերում կտրուկ նվազում է, և հետևաբար, զգալիորեն նվազում է գազերի լուծելիությունը արյան պլազմայում: Գազի մի մասը անջատվում է արյունից պղպջակների ձևով, որոնք խցանում են տարբեր օրգանների և հյուսվածքների մասը անորները (էնքոլիա), արյունքում առաջանում է հյուսվածքների ծանր ախտահարում և նույնիսկ մահ: Նույնը կարող է կատարվել ինքնաթիռների խցիկների, տիեզերագնացների սկաֆանորների հերմետիկությունը խախտվելիս:

Միևնույն ժամանակ որոշ հիվանդությունների բուժման նպատակով (գազային գանգրենա, տրոֆիկ խոցեր և այլն) կիրառվում է հիպերբարիկ օքսիգենացումը՝ հիվանդին տեղավորում են բարոխցիկում, ուր տրվում է բարձր ճնշմամբ թթվածնով հարստացված օդ (խիստ հսկողության պայմաններում), արդյունքում հյուսվածքների նատակարարումը թթվածնով լավանում է:

#### 4.4. Լուծույթի քանակական բաղադրության արտահայտման եղանակները

Լուծույթի բաղադրության արտահայտման հիմնական քանակական բնութագիրը լուծույթի կոնցենտրացիան է:

Նյութի (լուծույթի չ բաղադրամասի) կոնցենտրացիա է կոչվում այն մեջությունը, որը չափվում է որոշակի զանգվածով (ծավալով), լուծույթի կամ լուծիչի մեջ պարունակվող նյութի քանակով կամ զանգվածով: Կոնցենտրացիայի արտահայտման եղանակներն են. նյութի քանակի (մոլային), համարժեքի մոլային (նորմալ), մոլալ կոնցենտրացիաները, զանգվածային, մոլային, ծավալային բաժինները, տիտրը:

Նյութի քանակի  $n(x)$  կոնցենտրացիան (մոլային կոնցենտրացիա) նյութի քանակի  $n(x)$  և լուծույթի ծավալի  $V$  հարաբերությունն է՝

$$C_{M(x)} = U_{(x)} = \frac{n_{(x)}}{V_{(L-P)}} = \frac{m_{(x)}}{M_{(x)} \cdot V_{(L-P)}} \quad (4.2)$$

Միավորների միջազգային համակարգում մոլային կոնցենտրացիայի միավորն է՝ մոլ/մ<sup>3</sup>: Գործնականում օգտագործվում է նաև մոլ/դմ<sup>3</sup> կամ մոլ/L:

Բժշկության մեջ կիրառվում է մոլ/L չափողականությունը:

**Օրինակ 2.** 100 մլ արյան պլազմայում պարունակվում է 0.326 գ նատրիում իոններ: Ինչպիսի՞ն է նրա մոլային կոնցենտրացիան:

**Լուծում.** Օգտվելով (4.2) բանաձևից և մոլ/L չափողականությունից հաշվենք.

$$C_{M(Na^+)} = \frac{0,326}{23 \cdot 0,1} = 0,142 \text{ мол/L}$$

**Պատճեն:** 1L արյան պլազման պարունակում է 0.142 մոլ Na<sup>+</sup> իոններ:

**Օրինակ 3.** Թունավորումների ժամանակ մարդու ստամոքսը լվանում են հակաթույն հանդիսացող նատրիումի թիոսուլֆատի լուծույթով, որի 0.5 լիտրը պարունակում է 26.1 գ թիոսուլֆատ  $Na_2S_2O_3$ : Հաշվել նատրիումի թիոսուլֆատի մոլային կոնցենտրացիան այդ լուծույթում:

**Լուծում.**  $C_{M(Na_2S_2O_3)} = \frac{26,1}{0,5 \cdot 158} = 0,33 \text{ мол/L}$

**Պատճեն:** 0,33 մոլ/L:

**Մոլյալ կոնցենտրացիան**  $C_{m(x)}$  լուծույթի x բաղադրամասի քանակի ( $n_x$ ) հարաբերությունն է լուծիչի զանգվածին.

$$C_{m(x)} = \frac{n_{(x)}}{m_{(L-x)}} = \frac{m_{(x)}}{M_{(x)} \cdot m_{(L-x)}} \quad (4.3)$$

Չափողականությունն է մոլ/կգ<sub>(լուծիչ)</sub>:

**Օրինակ 4.** Յաշվել միզանյութի մոլյալ կոնցենտրացիան լուծույթում, եթե

45 գ ջրում լուծվել է 15 գ միզանյութ ( $M = 60$  գ/մոլ)

**Լուծում.** Ըստ (4.3) բանաձևի.

$$C_m = \frac{15}{60 \cdot 0,045} = 5,56 \text{ մոլ/կգ}$$

**Պատճեն 5.56 մոլ/կգ:**

Դամարժեքի մոլային կոնցենտրացիան (նորմալ կոնցենտրացիա)

$C(\frac{1}{z}x)$  կամ  $U_{(x)}$  կամ  $C_{n(x)}$  քիմիական համարժեքի նյութի քանակի

հարաբերությունն է լուծույթի ծավալին.

$$C_{N(x)} = U_{(x)} = C(\frac{1}{z}x) = \frac{n(\frac{1}{z}x)}{V_{l-p}} \quad (4.4)$$

$$C_{N(x)} = \frac{m}{M(\frac{1}{z}X)V} = \frac{mz}{MV} = C_M Z$$

որտեղ  $\frac{1}{z}$  - ը համարժեքության գործոնն է,

$$f(x) = \frac{1}{z} \quad (4.5)$$

որտեղ z-ը թթվի հիմնայնությունն է կամ հիմքի թթվայնությունը, ՕՎ ռեակցիաներում մեկ մասնիկի կողմից տված կամ վերցրած էլեկտրոնների թիվը, իսկ աղերի միջև ընթացող իոնափոխանակման ռեակցիաներում 1 մոլէկուլի փոխանակած լիցքերի թիվը: Դամարժեքության գործոնը  $f(x)$  -ը, մի թիվ է, որը ցույց է տալիս, թե x նյութի իրական մասնիկի որ մասն է համարժեք ջրածնի մեկ իոնին տվյալ թթվահիմնային ռեակցիայում կամ մեկ էլեկտրոնին տվյալ օքսիդավերականգնման ռեակցիայում: Նորմալ կոնցենտրացիայի չափողականությունն է մոլ/մ<sup>3</sup>, մոլ/դմ<sup>3</sup> կամ մոլ/լ:

**Օրինակ 5:** 200 մլ լուծույթը պարունակում է 19,6 գ ծծմբական թթու:


Յաշվել ծծմբական թթվի նորմալ կոնցենտրացիան լուծույթում:

**Լուծում:** Օգտվում ենք (4.4) բանաձևից: Բանի որ ծծմբական թթվի z-ը երկուս է՝

$$n\left(\frac{1}{z} \text{H}_2\text{SO}_4\right) = \frac{19,6 \cdot 2}{98} = 0,4; \quad \text{C}_{\text{H}_2\text{SO}_4} = \frac{0,4}{0,2} = 2 \text{ мол/л}$$

**Օրինակ 6:** 2 լ լուծույթում պարունակվում է 15,8 գ կալիումի պերմանգանատ: Յաշվել  $\text{KMnO}_4$ -ի նորմալ կոնցենտրացիան լուծույթում, եթե այն վերականգնիչի հետ փոխազդում է թթվային միջավայրում,  $M_{(\text{KMnO}_4)} = 158$  գ/մոլ:

**Լուծում:** Թթվային միջավայրում  $\text{KMnO}_4$  -ը վերականգնվում է մինչև  $\text{Mn}^{2+}$ : Յուրաքանչյուր մոլեկուլ ընդունում է 5 էլեկտրոն:



հետևաբար՝  $z = 5$ ,

$$n\left(\frac{1}{z} \text{KMnO}_4\right) = \frac{15,8 \cdot 5}{158} = 0,5 \text{ мол};$$

$$C\left(\frac{1}{z} \text{KMnO}_4\right) = \frac{0,5 \text{ мол}}{2 \text{ л}} = 0,25 \text{ мол/л}$$

**Պատ.**՝ 0,25 մոլ/լ

Յամաձայն համարժեքների օրենքի տարբեր կոնցենտրացիաների դեպքում՝

$$V_{(x_1)} \cdot n_{(x_1)} = V_{(x_2)} \cdot n_{(x_2)} \quad (4.6)$$

**Տիտրը (T)** լուծված նյութի զանգվածն է լուծույթի միավոր ծավալում (գ/մլ).

$$T = \frac{C_{N_{(x)}} M \left(\frac{1}{z}\right)}{1000}$$

Զանգվածային բաժինը  $\omega(x)$  լուծված նյութի և լուծույթի զանգվածների հարաբերությունն է, արտահայտված միավորի մասերով կամ տոկոսներով.

$$\omega(x) = \frac{m_{(x)}}{m_{l-p}} \cdot 100\%$$

Գործնականում պահանջվում է պատրաստել լուծույթ տրված զանգվածային բաժնով:

**Օրինակ 7:** Պատրաստել նատրիումի հիդրօքսիդի 400 գ լուծույթ, որում  $\text{NaOH}$ -ի զանգվածային բաժինը 0,05 է:

**Լուծում:** Նախ պետք է գտնել, թե քանի՞ գրամ  $\text{NaOH}$  է անհրաժեշտ այդ լուծույթի պատրաստման համար՝

$$0,05 = \frac{m_{\text{NaOH}}}{400}, \quad m_{\text{NaOH}} = 20 \text{ գ:}$$

Զրի զանգվածը կկազմի՝  $400 - 20 = 380$  գ:

**Պատ.** պահանջվող լուծույթը պատրաստելու համար կշռել 20 գ  $\text{NaOH}$ , նորա վրա պելացնել 380 մլ ջուր և խառնել մինչև լուծվելը:

**Մոլյար բաժինը** լուծույթում տվյալ նյութի մոլերի թվի՝  $n_{(i)}$  հարաբերությունն է լուծույթ առկա բոլոր բաղադրամասերի մոլերի գումարային թվին:

$$N_i = \frac{n_i}{\sum n_{i_{l-p}}} < 1$$

Լուծույթի բաղադրամասերի մոլային բաժինների գումարը հավասար է 1:

**Օրինակ 8:** Լուծույթը ստացվում է 15 գ միզանյութը 45 գ ջրում լուծելիս: Հաշվել միզանյութի մոլային բաժինը տոկոսներով:

Լուծում:  $N_i = \frac{15/60}{15/60 + 45/18} \cdot 100 = 0,09 \cdot 100 = 9\%$

#### 4.6. Լաբորատոր աշխատանք

Տրված կոնցենտրացիայով լուծույթի պատրաստումը:

**Փորձ 1. Սոլյար կոնցենտրացիայի լուծույթի պատրաստումը:** Արյան պլազմայի ռեկալցինացման ժամանակը որոշելու համար օգտագործում են կալցիումի քլորիդի 0.025 մոլ/լ կոնցենտրացիայի լուծույթ ( $\rho = 1$  գ/մլ): Այդ լուծույթը կարելի է պատրաստել չոր, շիկացրած  $\text{CaCl}_2$ -ից:

Պատրաստել 250 մլ 0,025 Մ  $\text{CaCl}_2$ -ի լուծույթ:

**Փորձի ընթացքը:** Հաշվել  $\text{CaCl}_2$ -ի անհրաժեշտ զանգվածը, կշռել անալիտիկ կշեռքով: Կշռանքը տեղափոխել քիմիական բաժակի մեջ և խառնելով լուծել թորած ջրում: Խիտ լուծույթը տեղափոխել 250 մլ չափից կոլրի մեջ՝ մի քանի անգամ լվանալով քիմիական բաժակը: Ավելացնել ջուր մինչև նիշը և խառնել կոլրի պարունակությունը:

**Փորձ 2. Խիտ լուծույթից նոսր լուծույթի պատրաստումը:** Վերը նշված 0,025 մոլ/լ կալցիումի քլորիդի լուծույթը կարելի է պատրաստել նաև խիտ լուծույթը նոսրացնելով: Պատրաստել 250 մլ 0,025 Մ  $\text{CaCl}_2$ -ի լուծույթ 10 %  $\text{CaCl}_2$ -ի լուծույթից ( $\rho = 1,04$  գ/մլ):

**Փորձի ընթացքը:** Հաշվել.

- ա. 250 մլ 0,025 Մ  $\text{CaCl}_2$ -ի լուծույթում նյութի զանգվածը,
- բ. 10 %  $\text{CaCl}_2$ -ի խիտ լուծույթի զանգվածը, որը պարունակում է ա. կետում հաշվարկված նյութի զանգվածը,

գ) 10 %  $\text{CaCl}_2$ -ի լուծույթի ծավալը:

Պիպետով վերցնել անհրաժեշտ ծավալի  $\text{CaCl}_2$ -ի լուծույթ, տեղափոխել 250 մլ չափից կոլրի մեջ, ավելացնել թորած ջուր մինչև նիշը և խառնել:

#### 4.7. Ոչ էլեկտրոլիտների նոսր լուծույթների կոլիգատիվ հատկությունները

Լուծույթների այն հատկությունները, որոնք պայմանավորված են միայն լուծված նյութի մասնիկների թվով կոչվում են կոլիգատիվ (կոլեկ-

տիվ): Կոլիգատիվ նշանակում է միմյանց հետ կապված: Կոլիգատիվ հատկությունները դիտարկվում են նոսր լուծույթների համար, որոնց հատկությունները մոտ են իդեալական լուծույթների հատկություններին:

Նոսր լուծույթներում կարելի է ընդունել, որ լուծման պրոցեսում էնթալպիայի և ծավալի փոփոխություն չի կատարվում՝  $\Delta V=0$ ,  $\Delta H=0$ : Այսպիսի լուծույթներում լուծված նյութի մասնիկները գտնվում են միմյանցից մեծ հեռավորությունների վրա, նրանց միջև փոխազդեցությունը ինչպես նաև մասնիկների ազդեցությունը լուծիչի վրա կարելի է անտեսել և ընդունել, որ լուծիչը գործնականորեն չի փոխում իր հատկությունները: Սովորաբար, քննարկում են լուծույթների չորս կրկիգատիվ հատկություն՝ **լուծիչի հագեցած գոլորշու ծնշման իջեցում, լուծույթի եռման ջերմաստիճանի բարձրացում, պմղեցման ջերմաստիճանի իջեցում, օսմոտիկ ծնշում**.

#### 4.7.1. Ռառվի օրենքը

Բնական գոլորշիացման հետևանքով հեղուկի վրա գոյանում է գոլորշի, որի ճնշումը կարելի է չափել: Գոլորշիացման էնդորերն պրոցեսի հետ միաժամանակ տեղի է ունենում գոլորշու կոնդենսացման էկզորերն պրոցես: Որոշ ժամանակ անց համակարգում ստեղծվում է դիմանիկ հավասարակշռություն ( $\Delta G=0$ ): Հեղուկ-գոլորշի համակարգի հավասարակշռային վիճակը բնութափում է հագեցած գոլորշու ճնշումով: *Տվյալ ջերմաստիճանում մաքուր լուծիչի հագեցած գոլորշիների ծնշումը ( $P_0$ ) հաստատում մեծություն է և հանդիսանում է տվյալ լուծիչի թերմոդինամիկական բնութափերից մեջը:*

Հեղուկ-գոլորշի հավասարակշռային համակարգին որևէ չզնդող նյութ ավելացնելիս հավասարակշռությունը խախտվում է՝ լուծույթում լուծիչի կոնցենտրացիան փոքրանում է: Լուծիչի կոնցենտրացիան վերականգնվելու համար գոլորշու մի մասը կոնդենսանում է, որի հետևանքով հագեցած գոլորշու ճնշումը իջնում է: Այսպիսով, միևնույն ջերմաստիճանում լուծիչի հագեցած գոլորշիների ճնշումը լուծույթի վրա ավելի ցածր է, քան մաքուր լուծիչի վրա:

Լուծույթի վրա հագեցած գոլորշիների ճնշման իջեցումը կլինի այնքան զգալի, որքան շատ նյութ է լուծված և հետևաբար, որքան քիչ է լուծիչի մոլյար բաժինը լուծույթում: Նշանակում է լուծիչի գոլորշիների ճնշումը ( $P$ ) լուծույթի վրա ուղիղ համեմատական է լուծիչի մոլյար բաժնին ( $N_1$ )՝

$$P = kN_1 \quad (4.7)$$

որտեղ  $P$ -գոլորշիների ճնշումը լուծույթի վրա,

$N_1$ - լուծիչի, մոլյար բաժինը և հավասար է՝

$$N_1 = \frac{n_1}{n_1 + n_2}, \text{ իսկ} \quad N_2 = \frac{n_2}{n_1 + n_2}$$

որտեղ  $N_2$ - լուծված նյութի մոլյար բաժինն է:

$n_1$  և  $n_2$  -ը հաճապատասխանաբար լուծիչի և լուծված նյութի մոլերի քվերն են,  
կ-համեմատականության գործակից, Ռառվլի հաստատում:

կ գործակցի ֆիզիկական իմաստը հետևյալն է. սահմանային դեպքում, երբ լուծված նյութի պարունակությունը հավասար է զրոյի, այսինքն ունենք մաքուր լուծիչ՝  $N_1=1$  և կ քվապես հավասար է մաքուր լուծիչի գոլորշիների ճնշմանը՝  $k = P_0$ : Այստեղից (4.7) հավասարումը կընդունի հետևյալ տեսքը՝

$$P = P_0 N_1 \quad (4.8)$$

Յայտնի է, որ  $N_1 + N_2 = 1$ , իսկ  $N_1 = 1 - N_2$ : Տեղադրելով  $N_1$ -ի այս արտահայտությունը (4.8) հավասարման մեջ, կստացվի՝

$$P = P_0(1 - N_2) = P_0 - P_0 N_2 \text{ կամ } P_0 - P = P_0 N_2, \text{ որտեղից}$$

$$N_2 = \frac{P_0 - P}{P_0} \quad (4.9)$$

որտեղ՝  $P_0 - P$  -հագեցած գոլորշիների ճնշման անկում է, իսկ

$$\frac{P_0 - P}{P_0} - \text{հագեցած գոլորշիների ճնշման հարաբերական անկումը:}$$

Այսպիսով (4.9) հավասարումը արտահայտում է Ռառվլի օրենքը՝ չընդող ոչ էլեկտրոլիտի նոսր լուծույթի վրա լուծիչի հագեցած գոլորշիների ճնշման հարաբերական անկումը հավասար է լուծված նյութի մոլյար բաժնին:

Օրինակ 9. 8,8 գ ացետալդեհիդը լուծել են 180 գ ջրում: Որոշել հագեցած գոլորշիների ճնշումը լուծույթի վրա  $100^{\circ}\text{C}$ -ում, եթե այդ ջերմաստիճանում ջրի հագեցած գոլորշիների ճնշումը հավասար է  $101,325$  կՊա (1 մթն.):

**Լուծում:** Ըստ (4.9) հավասարման՝


$$\frac{8,8/44}{8,8/44 + 180/18} = \frac{101,325 - P}{101,325}; \quad \frac{0,2}{10,2} = \frac{101,325 - P}{101,325}$$

$$\text{Պատճ՝ } P = 99,338 \text{ կՊա:}$$

#### 4.7.2. Եռման և պնդեցման ջերմաստիճան

Հեղուկը եռում է այն ջերմաստիճանում, որի դեպքում նրա հագեցած գոլորշիների ճնշումը հավասարվում է արտաքին ճնշմանը: Օրինակ,  $101,3$  կՊա մթնոլորտային ճնշման տակ ջուրը եռում է  $100^{\circ}\text{C}$ -ում: Ջրում որևէ չընդող նյութ լուծելիս, ըստ Ռառվլի օրենքի ջրի գոլորշիների ճնշումը կիշնի, և որպեսզի գոլորշիների ճնշումը վերականգնվի և նորից հասնի  $101,3$  կՊա, անհրաժեշտ է լուծույթը տաքացնել  $100^{\circ}\text{C}$ -ից բարձր ( $\Delta H > 0$ ): Այսպիսով, լուծույթի եռման ջերմաստիճանն ավելի բարձր է, քան լուծիչի եռման ջերմաստիճանը, իսկ տաքերությունը՝  $\Delta t_{\text{եռ.}} = t_{\text{եռ.լ-ք}} - t_{\text{եռ.լ-չ}}$ :

Մաքուր լուծիչը պնդանում է այն ջերմաստիճանում, որի դեպքում հագեցած գոլորշու ճնշումը հեղուկ և պինդ ֆազերի վրա հավասարվում են: Քննարկենք ջուր-սառույց հավասարակշռային համակարգը:



**Նկ. 4.1.** Սառույցի, ջրի և ջրային լուծույթի հագեցած գոլորշու ճնշման ջերմաստիճանային կախվածության կորերն են:

ՕԱ և Օ'Ա' – հեղուկ և գոլորշի ֆազերի հավասարակշռության կորեր (եռման կորեր) համապատասխանաբար ջրի և լուծույթի համար, ՕԲ և Օ'Բ' – պինդ և հեղուկ ֆազերի հավասարակշռության կորեր (համան կորեր ջրի և լուծույթի համար), ՕС – պինդ և գոլորշի ֆազերի հավասարակշռության կոր (սուրբիմացման կոր):

Ջրում որևէ չընդող նյութ լուծելիս, հեղուկ ֆազում ջրի կոնցենտրացիան կնվազի և  $H_2O_{(w)} \rightleftharpoons H_2O_{(h)}$  հավասարակշռությունը կխախտվի և սառույցը կհալվի: Նոր հավասարակշռություն ստեղծելու համար (սառույցի քանակը վերականգնելու համար) անհրաժեշտ է իջեցնել ջերմաստիճանը  $0^{\circ}\text{C}$ -ից ցածր ( $\Delta H < 0$ ), հետևաբար լուծույթի պնդեցման ջերմաստիճանն ավելի ցածր է, քան մաքուր լուծիչինը, իսկ տարրերությունը՝

$$\Delta t_{\text{պնդ.}} = t_{\text{պնդ.}} - t_{\text{անոլ.}}$$

Ըստ Ռաուլի օրենքի նոր լուծույթների հագեցած գոլորշու ճնշման իջեցումը համեմատական է լուծված նյութի մոլյար բաժնին: Այսպիսով, նոսր լուծույթների եռման ջերմաստիճանի բարձրացումը և պնդեցման ջերմաստիճանի իջեցումը համեմատական են լուծույթի մոլյալ կոնցենտրացիային և աճում են դրա բարձրացման հետ:

Ի տարրերություն Ռաուլի օրենքի կոնցենտրացիան այս դեպքում արտահայտվում է մոլյալությամբ:

$$\Delta t_{\text{բռմ.}} = E \cdot C_m \quad (4.10)$$

$$\Delta t_{\text{պնդ.}} = K \cdot C_m \quad (4.11)$$

որտեղ  $C_m$  – նյութի մոլյալ կոնցենտրացիան է (մոլերի թիվը 1000 գ լուծիչում),  $E$  – էքուլիոսկոպիկ հաստատուն է (էքուլիո-եռալ),  $K$  – կրիոսկոպիկ հաստատուն է (կրիոս – սառել):

Էքուլիոսկոպիկ հաստատուն կամ եռման ջերմաստիճանի մոլյալ բարձրացում է կոչվում է 1000 գ լուծիչում մեկ մոլ նյութ պարունակող

Լուծույթի եռման ջերմաստիճանի բարձրացումը: Օրինակ,  $E_{H_2O} = 0,52^\circ$ ;  $E_{բենզոլ} = 2,57^\circ$ :

Կրիոսկոպիկ հաստատում կամ պնդեցման ջերմաստիճանի մոլյալ իջեցում է կոչվում 1000 գ լուծիչում մեկ մոլ նյութ պարունակող լուծույթի պնդեցման ջերմաստիճանի իջեցումը:  $K_{H_2O} = 1,86^\circ$ ;  $K_{բենզոլ} = 5,12^\circ$ :

Եքուլիոսկոպիկ և կրիոսկոպիկ հաստատումները կախված են միայն լուծիչի բնույթից, իսկ լուծված նյութի բնույթից և կոնցենտրացիայից կախված չեն: Բանի որ  $\Delta t_{\text{բա}} & \Delta t_{\text{պա}}$  համեմատական են լուծված նյութի մոլերի թվին, ապա լուծույթի նշված բնութագրերը կախված են միայն լուծված նյութի մասնիկների թվից:

Լուծույթի եռման ջերմաստիճանի բարձրացումը և պնդեցման ջերմաստիճանի իջեցումը համեմատական է լուծված նյութի մասնիկների թվին և կախված չէ մասնիկների բնույթից (Պատուի II օրենք):

**Օրինակ 10.** Ո՞ր ջերմաստիճանում կեռա սախարողի  $C_m = 0,2$  մոլ/կգ ջրային լուծույթը:

**Լուծում:**  $E_{H_2O} = 0,52 \frac{\text{կգ}\cdot\text{աստ.}}{\text{մոլ}}, \quad \Delta t_{\text{բա}} = E \cdot C_m = 0,52 \cdot 0,2 = 0,104^\circ\text{C}$

$$t_{\text{բա}} = t_{\text{բա},\text{լ-չ}} + \Delta t_{\text{բա}} = 100^\circ + 0,104^\circ = 100,104^\circ\text{C}$$

Լուծույթների եռման և պնդեցման ջերմաստիճանների չափման վրա է հիմնված նյութերի մոլյար զանգվածների որոշման եքուլիոնետրիկ և կրիոնետրիկ եղանակները:

Չայտնի է, որ լուծույթի մոլյալությունը որոշվում է ըստ բանաձևի՝

$$C_m = \frac{m_{\text{լ-ծ նյութ}} \cdot 1000}{m_{\text{լ-չ}} \cdot M_{\text{լ-ծ նյութ}}}, \text{ որտեղից}$$

$$\Delta t_{\text{բա}} = E \frac{m_{\text{լ-ծ նյութ}} \cdot 1000}{m_{\text{լ-չ}} \cdot M_{\text{լ-ծ նյութ}}} \quad \text{և} \quad M_{\text{լ-ծ նյութ}} = \frac{E \cdot m_{\text{լ-ծ նյութ}} \cdot 1000}{\Delta t_{\text{բա}} \cdot m_{\text{լ-չ}}},$$

$$\Delta t_{\text{պա}} = \frac{K \cdot m_{\text{լ-ծ նյութ}} \cdot 1000}{m_{\text{լ-չ}} \cdot M_{\text{լ-ծ նյութ}}} \quad \text{և} \quad M_{\text{լ-ծ նյութ}} = \frac{K \cdot m_{\text{լ-ծ նյութ}} \cdot 1000}{\Delta t_{\text{պա}} \cdot m_{\text{լ-չ}}}$$


**Օրինակ 11.** Որոշել նյութի մոլյար զանգվածը, եթե հայտնի է, որ 36 գ նյութը 500 մլ ջրում լուծելիս առաջացած լուծույթը պնդացել է  $-0,744^\circ\text{C}$ -ում:

**Լուծում:**  $\Delta t_{\text{պա}} = 0 - (-0,744) = 0,744$

$$M_{\text{լ-ծ նյութ}} = \frac{1,86 \cdot 36 \cdot 1000}{0,744 \cdot 500} = 180 \text{ գ/մոլ}$$

### 4.7.3. Օսմոս, օսմոտիկ ճնշում

Կենդանի և բուսական օրգանիզմներում գոյություն ունեցող թաղանթները գործնականում կիսաթափանցելի են: Այժմ նրանք կիրավում են նաև փորձնական հետազոտություններում: Այդպիսի թաղանթները բաժանում են լուծիչը լուծույթից կամ տարրեր կոնցենտրացիայի լուծույթները միմյանցից: Կիսաթափանցիկ թաղանթի միջով անցնում են միայն լուծիչի մոլեկուլները, իսկ լուծված նյութի մոլեկուլները կամ ինները չեն անցնում: Օրինակ, եթե ջրով լցված բաժակի մեջ ընկղմված է գյուկոզի լուծույթով լցված գլան, որի ներքևի մասը պատրաստված է կիսաթափանցիկ թաղանթից, ապա համակարգում սկսվում է կոնցենտրացիաների հավասարեցման ինքնաբերաբար պրոցես՝ լուծիչի մոլեկուլները թաղանթով սկսում են անցնել գլանի մեջ (նկ. 4.2): Նույնը կկատարվեր, եթե կիսաթափանցիկ թաղանթը դրված լիներ գյուկոզի տարրեր կոնցենտրացիայով լուծույթների միջև՝ ջրի մոլեկուլները նոսր լուծույթից կանցնեին դեպի ավելի խիտ լուծույթ:



Նկ. 4.2.

Կիսաթափանցիկ թաղանթի միջով լուծիչի մոլեկուլների ինքնաբերաբար անցումը լուծիչից դեպի լուծույթ կամ նոսր լուծույթից դեպի ավելի խիտ լուծույթ, կոչվում է օսմոս:

Թերմոդինամիկորեն օսմոսի շարժից ուժն է հանդիսանում համակարգում կոնցենտրացիաների հավասարեցման ձգությունը: Քանի որ, այդ դեպքում համակարգի էնտրոպիան մեծանում է ( $\Delta S > 0$ ), համակարգն անցնում է ավելի անկարգավորված վիճակի, Գիրսի էներգիան նվազում է ( $\Delta G < 0$ ), քիմիական պոտենցիալները հավասարվում են: Այսպիսով, օսմոսի ինքնաբերաբար պրոցես է:

Օսմոսի հետևանքով գլանում հեղուկի ծավալը մեծանում է և միացը բարձրանում: Արտաքին ճնշումը գործադրելիս կարելի է առաջացնել հակառակ պրոցես՝ լուծիչը դուրս բերել լուծույթից: Այս եղանակով հնարավոր է ծովազդից ստանալ մաքուր ջուր: Միացի որոշակի բեռնավորվածության դեպքում կիսատառվի դինամիկ հավասարակշռություն ( $\Delta G = 0$ ) գլանի մեջ մտնող և գլանից դուրս եկող լուծիչի մոլեկուլների քանակները կիսավասարվեն:

Այն ճնշումը, որն անհրաժեշտ է գործադրել, որպեսզի հաստատվի հավասարակշռություն, այսինքն օսմոսը դադարի, կոչվում է օսմոտիկ:

**Ճնշում:** Վանտ-Շոֆը առաջարկել է ոչ էլեկտրոլիտների նոսր լուծույթների օսմոտիկ ճնշումը հաշվարկելու ենափրկիկ բանաձև՝

$$\pi = C_M RT \quad (4.12)$$

որտեղ  $\pi$  - օսմոտիկ ճնշումը, կՊա (կամ մթն.) ,

$C_M$  - լուծույթի մոլար կոնցենտրացիան, մոլ/լ ,

$$R - գազային ունիվերսալ հաստատում, 8,31 \frac{\text{կՊա} \cdot \text{Լ}}{\text{մոլ} \cdot \text{K}} \text{ կամ } 0,082 \text{ L} \cdot \text{մթն.} / \text{մոլ} \cdot \text{K}$$

T - բացարձակ ջերմաստիճանը, K:

**Օրինակ 12.** Արյան պլազման պնդանում է  $-0,59^{\circ}\text{C}$  -ում: Որքա՞ն է նյութերի գործող կոնցենտրացիան պլազմայում և որքա՞ն է պլազմայի օսմոտիկ ճնշումը  $37^{\circ}\text{C}$ -ում:

**Լուծում:**  $\Delta t = 0 - (-0,59) = 0,59$ : (4.11) հավասարումից հետևում է՝

$$C_m = \frac{\Delta t_{պնդ.}}{K} = \frac{0,59 \text{ K}}{1,86 \text{ K} \cdot \text{կգ}/\text{մոլ}} = 0,32 \text{ մոլ}/\text{կգ} (\text{H}_2\text{O})$$

Նոսր լուծույթների համար ընդունելով՝  $C_m = C_M$ ,

$$\pi = C_M RT = 0,32 \text{ մոլ}/\text{l} \cdot 8,31 \frac{\text{կՊա} \cdot \text{Լ}}{\text{մոլ} \cdot \text{K}} \cdot 310\text{K} = 820 \text{ կՊա:}$$

(4.12) հավասարման մեջ տեղադրելով  $C_m = n/v$  արժեքը կստացվի՝  $\pi = (n/V)RT$  կամ  $\pi V = nRT$  հավասարումը, որը հիշեցնում է իդեալական գազի վիճակի կապեյրոն-Սենդելեսկի հավասարումը: Այս նմանության հիման վրա Վանտ-Շոֆը եկավ այն եղրակացության, որ լուծույթն առաջանում է այնպիսի օսմոտիկ ճնշում, որը կառաջացներ լուծված նյութը, եթե տվյալ ջերմաստիճանում գտնվեր գազային վիճակում և գրադեցներ լուծույթի ծավալին հավասար ծավալ:

Օսմոտիկ ճնշումը կարելի է չափել ուղղակի և անուղղակի եղանակով: Ուղղակիորեն օսմոտիկ ճնշումը չափում են հատուկ գործիքների՝ օսմոմետրների միջոցով: Անուղղակի ձևով օսմոտիկ ճնշումը կարելի է որոշել կրիոմետրիկ եղանակով.

$$\Delta t_{պնդ.} = k C_m; \quad \pi = C_M RT$$

Նոսր լուծույթների համար ընդունելով  $C_m \approx C_M$ , կստացվի՝

$$\pi = \frac{\Delta t_{պնդ.} \cdot RT}{K} = 12,04 \cdot \Delta t_{պնդ.} (\text{մթն.})$$

Օսմոտիկ չափումների հիման վրա կարելի է որոշել լուծված նյութի մոլային զանգվածը ըստ հետևյալ հավասարման.

$$\pi = \frac{n}{V} RT = \frac{m_{L, \text{նյութ}}}{M_{L, \text{նյութ}} \cdot V} RT, \text{ որտեղից}$$

$$M_{L, \text{նյութ}} = \frac{m_{L, \text{նյութ}} \cdot RT}{\pi \cdot V}$$

Զրային լուծույթի համար, եթե  $T = 276\text{K}$ ,  $K=486$ ,  $R = 0,082 \text{ L} \cdot \text{մթն.}/\text{մոլ} \cdot \text{K}$ :

#### **4.7.4. Օսմոսի դերը կենդանական և բուսական կենսահամակարգերում**


Բջիջների քաղանթները օժտված են կիսաթափանցիկ քաղանթների հատկություններով, այդ պատճառով ջրի և հինների, մետարոլիտների տեխսափոխությունը և նյութերի կոնցենտրացիաների կարգավորումը որոշակի չափով հանդիսանում է օսմոսի արդյունք: Օսմոտիկ ճնշումը ապահովում է բջիջների առաձգականությունը (տուրգոր), որն էլ պայմանավորում է մաշկի և մկանների էլաստիկությունը, օրգանների որոշակի ծևը: Միևնույն օսմոտիկ ճնշումն ունեցող լուծույթները կոչվում են իզոտոնիկ: Իզոտոնիկ լուծույթները պարունակում են օսմոակտիվ մասնիկների միևնույն քանակությունը, ունեն նույն օսմոնույթություն: Օրինակ, արյունը, ավիշը, հյուսվածքային հեղուկները լուծույթներ են, որոնք իզոտոնիկ են 0,9 % NaCl լուծույթին ( $0,15 \text{ мղ/л}$ ) և 5% գլուկոզի լուծույթին: Այս պատճառով 0,9 % NaCl լուծույթն անվանում են ֆիզիոլոգիական լուծույթ: Իզոտոնիկ լուծույթում բջիջները պահպանում են իրենց չափսերը և գործում են նորմալ: Ֆիզիոլոգիական լուծույթից բարձր օսմոտիկ ճնշում ունեցող լուծույթները կոչվում են **հիպերտոնիկ**, իսկ ավելի ցածր օսմոտիկ ճնշում ունեցող լուծույթները՝ **հիպոտոնիկ**:

Բջիջը հիպերտոնիկ լուծույթում տեղավորելիս, ջուրը բջջից կիեռանա դեպի ավելի խիտ լուծույթ և բջջաթաղանթը կկնճռուտվի: Այս երևույթը կոչվում է **պլազմոլիզ**: Յիպոտոնիկ լուծույթում տեղավորելիս, ջուրը ավելի նոսր լուծույթից կանցնի բջջի ներսը, այն կուռչի, բջջաթաղանթը կպատռվի: Բջիջների նմանատիպ քայլքայումը կոչվում է **լիզիս**, իսկ էրիթրոցիտների դեպքում՝ **հեմոլիզ**: Արյան օսմոտիկ ճնշումը հաստատում մեծություն է՝  $310 \text{ K}$  ( $37^{\circ}\text{C}$ ) կազմում է  $780 \text{ կՊա}$  ( $7,7 \text{ մբ.н.}$ ) և նույնիսկ ծանր ախտահարումների դեպքում տատանումները չեն գերազանցում մի քանի տասնյակ կՊա-ից: Դա նշանակում է, որ օրգանիզմ կարելի է ներմուծել մեծ քանակությամբ միայն իզոտոնիկ լուծույթներ: Օսմոսի երևույթը լայնորեն կիրառվում է բժշկության մեջ: Օրինակ, վիրաբուժության մեջ օգտագործում են հիպերտոնիկ վիրակապեր՝ որոնք ներծծված են  $10 \% \text{ NaCl}$  լուծույթով: Օսմոսի շնորհիվ հեղուկի վերքից հոսքը ուղղվում է դեպի դուրս, ինչը ապահովում է վերքի մաքրումը թարախից և միկրոօրգանիզմներից: Կարելի է բերել նաև այլ օրինակներ:

#### **4.7.5. Ղոնանի հավասարակշռություն: Սախտակուցների դերը ինների վերաբաշխման պրոցեսում**

Գիրսը կանխատեսեց, իսկ Ղոնանը փորձով հաստատեց, որ բջջաթաղանթների (կիսաթափանցիկ քաղանթների) երկու կողմում ինները անհավասարաչափ են քաշված: Կենսաբանական քաղանթները թափանցելի են նաև փոքր մոլեկուլային զանգված ունեցող որոշ ինների համար: Այս երևույթը կոչվում է Գիրս-Ղոնանի էֆեկտ: Ինների անհավասարաչափ քաշիման պատճառն այն է, որ բջջի ներսում


սպիտակուցի կոնցենտրացիան միշտ ավելի մեծ է, քան արտաքջային տարածքում: Բաշխման սկզբնական պահին փոքր և մեծ մոլային զանգվածներով նյութերի (օրինակ՝ NaCl և սպիտակուցի աղի՝ RNA) կոնցենտրացիաները թաղանթի երկու կողմում այսպիսին են(նկ. 4.3.ա):



#### Նկ. 4.3. ա

Փոքր չափերով Cl<sup>-</sup> իոնները ( $C_{(Cl^-)} = x$ ) ըստ կոնցենտրացիաների գրադիենտի օրենքի կանցնեն արտաքջային տարածքից (դուրսից) ներթաջային տարածք (ներս):

Սպիտակուցի մակրոանիոնները (R<sup>+</sup>) թաղանթով չեն անցում: Ելեկտրաչեղողության պահովման համար Cl<sup>-</sup> իոնների անցումն ուղեկցվում է Na<sup>+</sup> իոնների նույնպիսի քանակի անցումով: Հավասարակշռության հաստատման ժամանակ երկու տարածքներում կոնցենտրացիաների արժեքներն են.



#### Նկ. 4.3. բ

Որտեղ  $x$ -ը  $Na^+$  և  $Cl^-$  իոնների կոնցենտրացիաների փոփոխությունն է  $NaCl$  -ի դուրսի ներս տեղափոխությունների արդյունքում:

Հավասարակշռության պահին հավասարվում են թաղանթով անցնող իոնների հավասարակշռային կոնցենտրացիաների արտադրյալները: Սա թաղանթային հավասարակշռության պայմանն է:

$$\begin{aligned} C_{(Na+)_0} \cdot C_{(Cl-)_0} &= C_{(Na+)_n} \cdot C_{(Cl-)_n} \\ x(C_0 + x) &= (C_n - x)(C_n - x), \text{ որտեղից} \\ x &= \frac{C_n^2}{2C_n + C_0} \end{aligned} \quad (4.13)$$

Քննարկենք մի քանի հնարավոր մասնավոր դեպքը:

Եթե. 1.  $C_n >> C_0$ , ապա հավասարումն ընդունում է հետևյալ տեսքը.

$$x = \frac{C_n}{2} \quad (\text{դուրսի իոնների կեսը կանցնեն ներս})$$

$$2. C_{\eta} = C_a, \text{ հավասարումը կլինի. } x = \frac{C_n}{3} \text{ (դրսի իոնների 1/3}$$

(կանցնեն ներս)

3.  $C_{\eta} << C_a$ , ապա դրսից իոնների ինչոր քանակ միևնույնն է կանցնի դեպի ներս:


Այսպիսով, իոնների անհավասարաչափ բաշխման հետևանքով քջի ներսում օսմոտիկ ճնշումը միշտ ավելի մեծ է արտաքջային տարածքի համեմատ: Իոնների անհավասարաչափ բաշխումը դեր ունի նաև թաղանքային պոտենցիալի ծագման մեջ (հավասարակշռության պահին հավասարվում են անցնող իոնների կոնցենտրացիաների արտադրյալները, բայց ոչ դրանց գումարները, որոնք ներսում և դրսում տարբեր են):

Դոնանի հավասարումը հնարավորություն է տալիս կանխագուշակել իոնների, դեղամիջոցների տեղափոխման ինչպես ուղղությունը, այնպես էլ քանակը:

#### 4.7.6. Լաբորատոր աշխատանք

**Փորձ 1. Լուծված նյութի նոլային զանգվածի որոշումը կրիոսկոպիկ եղանակով:**

**Փորձի ընթացքը:** Փորձը կատարում են հատուկ սարքում: Սարքը կազմված է 600 - 700 մլ տարրողություն ունեցող արտաքին բաժակից, լայն փորձանորից փակված կառուչուկե խցանով, որն ունի երկու անցք՝ ջերմաչափի և մետաղական խառնիչի համար: Փորձը կատարել հետևյալ հաջորդականությամբ՝



**Նկ. 4.4.** Կրիոսկոպիկ եղանակով նյութի նոլային զանգվածի որոշման սարք: 1. արտաքին բաժակ, 2. ներքին բաժակ, 3. խառնիչ, 4. ջերմաչափ:

1. պատրաստել սառեցնող խառնուրդ, կազմված երեք մաս սառուցից և մեկ մաս կերակրի աղից և նրանով լցնել արտաքին բաժակի 3/4: Սովորական ջերմաչափով չափել սառեցնող խառնուրդի ջերմաստիճանը: Այն պետք է լինի - 3°C մինչև - 5°C:
2. Փորձանորի (2) մեջ լցնել թորած ջուր այնքան, որ հեղուկի մակարդակը 1 - 1,5 սմ բարձր լինի ջերմաչափի գնդիկից:
3. Փորձանորը փակել խցանով և իջեցնել սառեցնող խառնուրդի մեջ:
4. Զուրճ անընդհատ խառնելով հետևյալ ջերմաստիճանի փոփոխությանը: Սկզբում ջերմաստիճանը մի փոքր իջնում է ջրի պնդեցման

իրական կետից ցածր (գերսառեցում), ապա սկսվում է պնդեցումը, անջատվում է ջերմություն, ջերմաստիճանը բարձրանում է հասնելով հաստատուն արժեքի: Նշել այդ ջերմաստիճանը՝ տպն. Լ-Հ:

5. Նույն փորձը կատարել գյուկոզի (կամ այլ ոչ էլեկտրոլիտի) 40% լուծույթով: Այս դեպքում պետք է ի նկատի ունենալ, որ լուծույթը պնդանում է որոշակի ջերմաստիճանային միջակայքում: Դա բացատրվում է նրանով, որ սարույցի բյուրեղների անջատվելու հետ մեկտեղ լուծույթի կոնցենտրացիան աստիճանաբար մեծանում է, իսկ պնդեցման ջերմաստիճանը անընդհատ իջնում: Լուծույթի պնդեցման ջերմաստիճան պետք է ընդունել ջերմաչափի ցուցմունքը, եթե գոյանում են առաջին բյուրեղները (տպն.Լ-Բ):

1. Լուծույթի պնդեցման ջերմաստիճանի իջեցումը՝

$$\Delta t_{պնդ.} = t_{պնդ. Լ-Հ} - t_{պնդ. Լ-Բ}$$

2. Լուծված նյութի 40 % լուծույթում՝  $\frac{m_{L-նյութ}}{m_{L-Հ}} = \frac{40}{60}$

3.  $M_{L-նյութ} = K \frac{m_{L-նյութ} \cdot 1000}{\frac{1}{պնդ.} \cdot m_{L-Հ}}$  բանաձևով հաշվել լուծված

նյութի մոլյար զանգվածը:

4. Որոշել փորձի սխալը տոկոսներով:

## 5. Հավասարակշռությունը էլեկտրոլիտների ջրային լուծույթներում

### 5.1. Էլեկտրոլիտների նոր լուծույթների հատկությունների շեղումը Ռաուլի և Վանթ-Շոֆի օրենքներից: Իզոտոնիկ գործակից, դիսուլման աստիճան


Ուսումնասիրելով որոշ աղերի, թթուների և հիմքերի լուծույթների օսմոտիկ ճնշումները Վանթ-Շոֆը պարզեց, որ փորձնականորեն ստացված տվյալները գերազանցում են տեսականորեն հաշվածին՝ պիոր. > **Պտեսակ:** Նույնանման շեղումներ ստացվեցին նաև այդ նյութերի մյուս կոլիգատիկ հատկությունների համար: Նշանակալից էր այն փաստը, որ տվյալ լուծույթի բոլոր կոլիգատիկ հատկությունների շեղումները հավասար էին միջյանց: Որպեսզի ոչ էլեկտրոլիտների լուծույթների կոլիգատիկ հատկությունների հավասարումները հնարավոր լինի կիրառել աղերի, թթուների և հիմքերի՝ այսինքն էլեկտրոլիտների լուծույթների համար, Վանթ-Շոֆը նոցրեց ուղղման գործակից՝ որը կոչվում է **իզոտոնիկ գործակից:** Այսպիսով՝

$$i = \frac{\pi_{\text{Փորձ.}}}{\pi_{\text{տեսակ.}}} = \frac{(P_0 - P)_{\text{Փորձ.}}}{(P_0 - P)_{\text{տեսակ.}}} = \frac{\Delta t_{\text{պնդ.Փորձ.}}}{\Delta t_{\text{պնդ.տեսակ.}}} = \frac{\Delta t_{\text{եռ.Փորձ.}}}{\Delta t_{\text{եռ.տեսակ.}}} \quad (5.1.)$$

Ոչ էլեկտրոլիտների լուծույթների համար  $i = 1$ , իսկ էլեկտրոլիտների լուծույթների համար  $i > 1$ , ընդ որում  $i - 1$ -ի մեծությունը կախված է էլեկտրոլիտի բնույթից և լուծույթի կոնցենտրացիայից: Լուծույթի նորացման հետ  $i - 1$  մեծանում է:

Ելնելով նշված շեղումներից Արենիոսը եկավ այն եզրակացության, որ էլեկտրոլիտները ջրային լուծույթում տրոհվում են՝ դիսովում են իոնների: Դրա հետևանքով մեծանում է մասնիկների թիվը լուծույթում և համապատասխանաբար մեծանում են կոլիգատիկ հատկությունները:

Էլեկտրոլիտիկ դիսուլման մեխանիզմը քննարկենք  $\text{NaCl}$  -ի օրինակով: Քաստատված է, որ բյուրեղական վիճակում  $\text{NaCl}$  բյուրեղականդակի էներգիան, այսինքն  $\text{Na}^+$  և  $\text{Cl}^-$  իոնների միջև էլեկտրաստատիկ ձգողության ուժը կազմում է 765 կՋ/մոլ: Նշանակում է, աղք առանձին իոնների տրոհելու համար անհրաժեշտ է ծախսել նույնքան ջերմություն: Այդ ջերմությունը ստացվում է լուծույթ անցած իոնների հիդրատացումից՝



Հիդրատացման գումարային էնթալփիան կազմում է՝

$$\Delta H^0_{\text{հիդր.}} = \Delta H^0_{\text{հիդր.}\text{Na}^+} + \Delta H^0_{\text{հիդր.}\text{Cl}^-} = [(-398) + (-377)] \text{ կՋ/մոլ} = -775$$

կՋ/մոլ

Այսպիսով՝ հիդրատացումից անջատված ջերմությունը բավարար է  $\text{NaCl}$  բյուրեղականդակը քայլաբելու և  $\text{NaCl}$  դիսուլման համար:

Թույլ էլեկտրոլիտները ջրային լուծույթում ամբողջությամբ չեն դիսուլվում: Եթե անբողջությամբ դիսուլվեին, ապա ի հզոտոնիկ գործակիցը կարտահայտվեր ամբողջական թվերով: Օրինակ  $\text{NaCl}$  համար  $i = 2$ ,  $\text{CaCl}_2$ -ի համար  $i = 3$ ,  $\text{CH}_3\text{COOH}$ -ի համար  $i = 2$ : Իրականում  $i = 2$  արտահայտվում է կոտորակային թվերով և դա նշանակում է, որ էլեկտրոլիտների ջրային լուծույթներում իոնների հետ միաժամանակ պարունակվում են նաև չփինոցված մոլեկուլներ: Դիսուլված և չփինոցված մոլեկուլների թիվը քանակապես բնութագրվում է դիսուլման աստիճանով: Էլեկտրոլիտիկ դիսուլման աստիճանը՝  $\alpha$  ցույց է տալիս իոնների դիսուլված մոլեկուլ թվի (n) հարաբերությունը էլեկտրոլիտի մոլեկուլ ընդհանուր թվին (N), այսինքն՝  $\alpha = n/N$ : Այսպիսով՝ ան էլեկտրոլիտի դիսուլված մոլեկուլ բաժինն է: Ուժեղ էլեկտրոլիտների դիսուլման աստիճանը կոչվում է թվացող դիսուլման աստիճան (թացատրությունը «Ուժեղ էլեկտրոլիտներ» բաժնում): Ա կարելի է արտահայտել իզոտոնիկ գործակցի միջոցով: Ենթադրենք ջրում լուծված է 1 մոլ էլեկտրոլիտ, որոնցից ա մոլը դիսուլվել է: Չփինոցված մոլեկուլ թիվը կազմում է  $1 - \alpha$ , իսկ գոյացած իոնների մոլեկուլ թիվը  $\alpha \cdot m$ , որտեղ  $m = 1/\alpha$  էլեկտրոլիտի մեկ մոլեկուլի դիսուլմից առաջացած իոնների թիվն է: Սասմիկների մոլեկուլ ընդհանուր թիվը (չփինոցված մոլեկուլներ և իոններ) կազմում է  $1 - \alpha + \alpha m$ : Իզոտոնիկ գործակիցը լուծույթում բոլոր մասնիկների (մոլեկուլներ, իոններ) մոլեկուլ թվի հարաբերությունն է լուծված էլեկտրոլիտի մոլեկուլ թվին:

$$i = \frac{1 - \alpha + \alpha m}{1} = 1 + \alpha(m - 1), \quad \text{որտեղից } i - 1 = \alpha(m - 1)$$

$$\alpha = \frac{i - 1}{m - 1} \quad (5.2.)$$

Լուծույթն անսահման նոսրացնելիս  $\alpha$ -ն ձգտում է 1 (100 %), իսկ  $i - 1$  ձգտում է 0:

Օգտվելով իզոտոնիկ գործակցից կարելի է կոլիգատիվ հատկությունների հավասարումները կիրառել էլեկտրոլիտների լուծույթների նկատմամբ՝

$$\frac{P_0 - P}{P_0} = iN_2, \quad \Delta t_{\text{եռ.}} = iEm, \quad \Delta t_{\omega\pi\eta.} = iKm, \quad \pi = icRT \quad (5.3)$$

(5.1.), (5.2.), (5.3.) հավասարումներով կարելի է լուծել մի շարք խնդիրներ՝ որոշել  $\alpha$ ,  $i$ ,  $m$ ,  $\pi$ ,  $\Delta t_{\text{եռ.}}$ ,  $\Delta t_{\omega\pi\eta.}$ ,  $P_0 - P$ : Ներկայացնենք այդպիսի խնդիրների օրինակներ:

**Օրինակ 1.** Ինչոր նյութի 0.01 Մ լուծույթի օսմոտիկ ճնշումը  $0^{\circ}\text{C}$  –ում հավասար է 0.32 մբն: Էլեկտրոլիտ է արդյո՞ք այդ նյութը:

**Լուծում.**  $\pi_{\text{տեսակ.}} = CRT = 0.01 \text{ մոլ/l} \cdot 0.082 \frac{\text{մբ.} \cdot \text{l}}{\text{մոլ} \cdot \text{K}} \cdot 273 \text{ K} = 0.22 \text{ մբ.}$

$$\pi_{\text{գոր.}} > \pi_{\text{տեսակ.}}$$

Դա նշանակում է, որ լուծված նյութը էլեկտրոլիտ է, իսկ

$$i = \frac{\pi_{գործ.}}{\pi_{տեսակ.}} = \frac{0.32}{0.22} = 1.45$$

### 5.1.1. Լաբորատոր աշխատանք

**Փորձ 1.** Էլեկտրոլիտի լուծույթի օսմոտիկ կոնցենտրացիայի և իզոտոնիկ գործակցի որոշումը: Փորձը կատարել (4.5.5.) գլխում նկարագրված կրիոմետրիկ սարքի միջոցով և նույն հաջորդականությամբ, ինչպես ոչ էլեկտրոլիտի մոլային զանգվածի որոշման ժամանակ:

Անհրաժեշտ նյութեր՝ թորած ջուր, սառույց, կերակրի աղ, հետազոտվող լուծույթ՝ 5 % նատրիումի սոլֆատի լուծույթ:

**Փորձի ընթացքը:** Որոշել թորած ջորի տպան. և 5 % նատրիումի սոլֆատի լուծույթի տպան.:

**Նաշվարկմեր:** Նաշվել 5 % նատրիումի սոլֆատի լուծույթի կոնցենտրացիան և այդ լուծույթի Ճապա. տեսակ.: Ըստ փորձի արդյունքների հաշվել Ճապա. փորձ.: Նաշվել լուծույթի իզոտոնիկ գործակիցը և օսմոտիկ կոնցենտրացիան՝ iC:

$$i = \frac{\Delta t_{պան.Փորձ.}}{\Delta t_{պան.տեսակ.}}$$

## 5.2. Ուժեղ էլեկտրոլիտներ, իոնական ուժ, ակտիվության գործակից

Ֆիզիկաքիմիական մեթոդներով ապացուցված է, որ ուժեղ էլեկտրոլիտները ամբողջությամբ տրոհվում են իոնների: Սակայն ուժեղ էլեկտրոլիտների փորձով որոշված i-ն, α-ն, էլեկտրահաղորդականությունը, կոլիգատիվ հատկությունները ունեն ավելի փոքր արժեքներ, քան նրանց

100 % դիսուցում: Օրինակ NaCl լուծույթում  $i \neq 2$ ,  $\alpha \neq 1$ , այլ  $i < 2$  և  $\alpha < 1$ : Այս շեղումները բացատրվեցին Դերայի և Ջյուկելի կողմից առաջարկված ուժեղ էլեկտրոլիտների էլեկտրաստատիկ տեսությամբ: Դանաձայն այս տեսության:

1. Ուժեղ էլեկտրոլիտների լուծույթներում նույնանուն իոնների միջև գործում են էլեկտրաստատիկ վանողական, իսկ տարանուն իոնների միջև՝ ձգողական ուժեր, որոնց ազդեցությամբ իոնները ձգուում են լուծույթում դասավորվել կարգավորված, ինչպես բյուրեղավանդակում, միայն իոնների միջև հեռավորությունները մեծ են: Մյուս կողմից իոնների շերմային շարժումը նպաստում է նրանց քառսային շարժմանը

լուծույթում: Շնորհիվ էլեկտրաշարժ ուժերի յուրաքանչյուր ինն շրջապատված է տարանուն իններից կազմված թաղանթով, որը կոչվում է **իննական մթնոլորտ**: ի-ի կախվածությունը կոնցենտրացիայից բացատրվում է միջինական փոխագրեցության ուժերով: Դաստանուն էլեկտրական դաշտում ինների շարժունակությունը փոքրանում է, քանի որ կենտրոնական ինը և նրա գնդային իննական մթնոլորտը շարժվում են դեպի հակառակ բևեռներ և թվում է, թե ինների թիվը փոքր է: Որքան մեծ է լուծույթի կոնցենտրացիան, այնքան խիտ է իննական մթնոլորտը և այնքան փոքր է ինների շարժունակությունը, հետևաբար՝ էլեկտրահաղորդականությունը և  $\alpha$ -ն:

2. Ինները շրջապատված են սոլվատային (հիդրատային) թաղանթներով, ինչը նույնպես արգելակում է դրանց շարժումը: Որքան մեծ է իննի լիցքը, այնքան մեծ է սոլվատային թաղանթը:

3. Ուժեղ էլեկտրոլիտների լուծույթներում ինները ասոցվում են առաջացնելով իննական գույգեր՝ դուալիտ ( $K^+An^-$ ), տրիպալիտ ( $K^+An^-Kt^+$  կամ  $An^-Kt^+An^-$ ), քանի որ լուծույթում բյուրեղացանց չեն կարող առաջացնել:

Այդ ամենը սահմանափակում է լուծույթում ինների շարժման արագությունը և թուլացնում է դրանց ազդեցությունը լուծույթների կոլիգատիվ հատկությունների վրա:

Ուժեղ էլեկտրոլիտների փորձով որոշված  $\alpha$ -ի արժեքը կոչվում է **թվացող դիսուլվացման աստիճան**: Լուծույթը նոսրացնելիս ազդեցատները քայլայվում են և  $\alpha$ -ն մեծանում է ( $\alpha \rightarrow 1$ ): Որպեսզի զանգվածների ներգործման օրենքը կիրառելի լինի ուժեղ էլեկտրոլիտների համար Լյուիսը նշորեց թվացող կամ  $\epsilon$ ֆեկտիվ կոնցենտրացիա հասկացությունը, այսպես կոչված ակտիվությունը (ա):

$$a = f \cdot C \quad (5.4.)$$

Ակտիվությունը (ա)  $\epsilon$ ֆեկտիվ կոնցենտրացիան է: **f-ը ակտիվության գործակիցն է**, այս փոքր է մեկից: Շատ մեծ նոսրացման ժամանակ  $f \rightarrow 1$  և  $a = C$ : **f-ը ցույց է տալիս ու կոնցենտրացիայով ուժեղ էլեկտրոլիտի լուծույթի վարքի շեղումը անվերջ նոսր լուծույթի համեմատ**, որում միջինական փոխագրեցության ուժերը անտեսվում են: Բազմալիցք ինների դեպքում  $f$ -ի փոփոխությունը ավելի զգալի է: Նոսր լուծույթներում ինների բնույթն աննշան է ազդում  $f$ -ի վրա, քանի որ այդ դեպքում միջինական փոխագրեցությունները որոշվում են ինների լիցքով և կոնցենտրացիայով: **f-ը որոշվում է Դեբայ-Յուկելի հավասարումով**.

$$\lg f = -0.51z^2 \cdot \sqrt{I} \quad (5.5.)$$

որտեղ  $z$ - իննի լիցքն է,  $I$ - իննական ուժը.

$$I = \frac{1}{2} \sum C_i Z_i^2 \quad (5.6.)$$

Որքան մեծ է I-ն այնքան փոքր է f-ը: Այս հավասարումները Դեբայ-Շյուկելի օրենքի մաթեմատիկական արտահայտություններն են, որը ձևակերպվում է այսպես.

**միևնույն իոնական ուժով ուժեղ էլեկտրոլիտների նոսր լուծույթներում նույնալիցք կատիոնների և անիոնների (օրինակ՝ +1 և -1) ակտիվության գործակիցները հավասար են և կախված չեն նրանց բնույթից:**

Այս հավասարումները կիրառելի են նոսր լուծույթների նկատմամբ, որոնց  $0.01 \geq I > 0.001$ : Այս սահմաններում չի կարելի անտեսել իոնական ուժը և կարելի է ուժեղ էլեկտրոլիտների  $K_{\text{ոփ}}$  հաշվել կոնցենտրացիաների փոխարեն տեղադրելով ակտիվությունները (ա):

Օրինակ  $\text{HCl}$  լուծույթի համար.

$$K_{\text{ոփ}} = \frac{a_{\text{H}^+} \cdot a_{\text{Cl}^-}}{a_{\text{HCl}}}$$

$K_{\text{ոփ}}$ . –ը կոչվում է թերմոդինամիկական դիսուցման հաստատում:

### Տիպական խնդիրների օրինակներ

**Օրինակ 1.** 250 գ ջրում 1.7 գ ցինկի քլորիդ պարունակող լուծույթը պնդանում է  $-0.2325^{\circ}\text{C}$  -ում: Որոշել ցինկի քլորիդի թվացող դիսուցման աստիճանն այդ լուծույթում:  $K_{\text{ոփ}} = 1.86$ :

**Լուծում.**  $\Delta t_{\text{պնդ.գործ.}} = 0 - (-0.2325) = 0.2325^{\circ}\text{C}$

$$\Delta t_{\text{պնդ.տեսակ.}} = K \cdot m = K \frac{g_2 \cdot 1000}{g_1 \cdot M_2} = 1.86 \cdot \frac{1.7 \cdot 1000}{250 \cdot 136} = 0.093^{\circ}\text{C}$$

$$i = \frac{\Delta t_{\text{պնդ.գործ.}}}{\Delta t_{\text{պնդ.տեսակ.}}} = \frac{0.2325}{0.093} = 2.5$$

$$\alpha = \frac{i-1}{m-1} = \frac{2.5-1}{3-1} = \frac{1.5}{2} = 0.75$$

**Օրինակ 2.** 0.1 Ն ցինկի սուլֆատի լուծույթի օսմոտիկ ճնշումը  $0^{\circ}\text{C}$  –ում հավասար է  $1.59 \cdot 10^5$  Պա է: Որոշել լուծույթի պնդեցման ջերմաստիճանը:

**Լուծում.** 0.1 Ն լուծույթը հանդիսանում է  $0.05$  Մ լուծույթ, քանի որ  $\pi = \frac{U}{2}$

$$\pi = cRT = 0.05 \text{ մոլ/L} \cdot 8.31 \frac{\text{կՊա} \cdot \text{Լ}}{\text{մոլ} \cdot \text{K}} 273 \text{ K} = 113.4 \text{ կՊա}$$

$$\pi = 1.59 \cdot 10^5 \text{ Պա} = 1.59 \cdot 10^2 \text{ կՊա}$$

$$i = \frac{1.59 \cdot 10^2}{113.4} = \frac{159}{113.4} = 1.4$$

Ընդունելով՝  $C \approx m$ ,  $\Delta t_{\text{պահ.գործ.}} = ikm = 1.4 \cdot 1.86 \cdot 0.05 = 0.1302$

$^{\circ}\text{C}$

$$t_{\text{պահ.}} = 0 - \Delta t_{\text{պահ.}} = 0 - 0.1302 = -0.1302 \text{ } ^{\circ}\text{C}$$

**Օրինակ 3.** Որոշել գյուկոզի լուծույթի մոլյար կոնցենտրացիան, եթե այդ լուծույթը  $18 \text{ } ^{\circ}\text{C}$ -ում իզոտոնիկ է  $0.5 \text{ M}$  կալցիումի քլորիդի լուծույթին: Կալցիումի քլորիդի բվացող դիսունգան աստիճանը տրված լուծույթում կազմում է  $65.4 \%$ :

**Լուծում.**  $\text{Կալցիումի} \quad \text{քլորիդի} \quad \text{լուծույթում}$

$$\alpha = 0.654, \quad \alpha = \frac{i-1}{m-1}, \quad \text{որտեղից՝}$$

$$i = 1 + \alpha(m - 1) = 1 + 0.654(3 - 1) = 2.308:$$

$$\pi_{\text{CaCl}_2} = iC_{M(\text{CaCl}_2)} RT; \quad \pi_{\text{զյուկոզ}} = C_{M \text{զյուկոզ}} RT$$

$$\pi_{\text{CaCl}_2} = \pi_{\text{զյուկոզ}}, \quad \text{հետևաբար} \quad iC_{M(\text{CaCl}_2)} = C_{M \text{զյուկոզ}}$$

Լուծույթները իզոտոնիկ են, նշանակում է՝

$$C_{M \text{զյուկոզ}} = 2.308 \cdot 0.5 = 1.154 \text{ M:}$$

**Օրինակ 4.** Յաշվել  $\text{OH}^-$  իոնի ակտիվությունը և  $\text{pOH}$   $\text{NaOH} -\text{ի } 0.2 \text{ L}$  լուծույթում, ընդունելով  $f = 0.8$ :

**Լուծում.**  $C_U = C_{\text{U}} = 0.2 \text{ мոլ/L}$ ,

$$a_{\text{OH}^-} = f \cdot C_U = 0.8 \cdot 0.2 = 0.16 \text{ мոլ/L}$$

$$\text{pOH} = -\lg a_{\text{OH}^-} = -\lg 0.16 = -\lg 1.6 \cdot 10^{-1} = 1 - \lg 1.6 = 1 - 0.2 = 0.8$$

**Օրինակ 5.** Յաշվել  $0.01 \text{ мոլ/L MgSO}_4$  և  $0.01 \text{ мոլ/L MgCl}_2$  պարունակող լուծույթի իոնական ուժը և իոնների ակտիվությունը:

**Լուծում** ա) Յաշվենք իոնական ուժը:

$$I = \frac{1}{2}(C_{Mg^{2+}} \cdot Z_{Mg^{2+}}^2 + C_{SO_4^{2-}} \cdot Z_{SO_4^{2-}}^2 + C_{Cl^-} \cdot Z_{Cl^-}^2) =$$

$$= \frac{1}{2}(0.02 \cdot 2^2 + 0.01 \cdot 2^2 + 0.02 \cdot 1^2) = \frac{1}{2}(0.08 + 0.04 + 0.02) = \frac{1}{2} \cdot 0.14 = 0.07$$

բ) Յաշվենք ակտիվության գործակիցը տարբեր իոնների՝  $Mg^{2+}$  և  $SO_4^{2-}$  համար.

$$\lg f = -0.51 \cdot z^2 \sqrt{I} = -0.51 \cdot 2^2 \sqrt{0.07} = -0.53 \quad \text{որտեղից } f = 0.3:$$

$$Cl^- \text{ իոնի համար} \quad \lg f = -0.51 \cdot 1^2 \sqrt{0.07} = -0.13; \quad f = 0.74$$

գ) Յաշվենք իոնների ակտիվությունը՝


$$a_{Mg^{2+}} = 0.02 \text{ мол/л} \cdot 0.3 = 0.006 \text{ мол/л}$$

$$a_{SO_4^{2-}} = 0.01 \text{ мол/л} \cdot 0.3 = 0.003 \text{ мол/л};$$

$$a_{Cl^-} = 0.02 \text{ мол/л} \cdot 0.74 = 0.0148 \text{ мол/л};$$

### 5.3. Զանգվածների ներգործման օրենքի կիրառումը թույլ էլեկտրոլիտների նկատմամբ, Օստվալդի նոսրացման օրենքը

Թույլ էլեկտրոլիտների դիսուցումը դարձելի պրոցես է և կիրառելով զանգվածների ներգործման օրենքը կստանանք. Օրինակ,  $KA$  էլեկտրոլիտը դիսուցվում է



Ըստ զանգվածների ներգործման օրենքի՝

$$V_1 = k_1[KA], \quad V_2 = k_2[K^+][A^-]$$

Լուծույթում ստեղծվում է հավասարակշռություն, նշանակում է  
 $V_1 = V_2$  կամ  $k_1[KA] = k_2[K^+][A^-]$

Հավասարակշռության հաստատունը հավասար է՝


$$K_n = \frac{k_1}{k_2} = \frac{[K^+][A^-]}{[KA]} \quad (5.6.)$$

զանգվածների ներգործման օրենքի ատահայտությունը դարձելի պրոցեսի համար, որտեղ  $[K^+]$  և  $[A^-]$  - էլեկտրոլիտի իոնների հավասարակշռային մոլյար կոնցենտրացիաներն են;  $[KA]$  - չդիսուցված էլեկտրոլիտի հավասարակշռային մոլյար կոնցենտրացիան է;  $K_n$  - դիսուցման հաստատունը:

Դիսուցման հաստատունը ցույց է տալիս թույլ էլեկտրոլիտի դիսուցվելու ընդունակությունը: Որքան մեծ է  $K_n$ , այնքան էլեկտրոլիտը ուժեղ է դիսուցվում և լուծույթում բարձր է իոնների կոնցենտրացիան: Օրինակ,

$20^\circ C$ -ում  $K_{CH_3COOH} = 1.86 \cdot 10^{-5}$ ,  $K_{HCOOH} = 1.8 \cdot 10^{-4}$ : Նշանակում է մրջնաթթուն նոտավորապես տաս անգամ ավելի ուժեղ թթու է քան քացախաթթուն: Այսպիսով, դիսուցման հաստատունը տվյալ էլեկտրոլիտի ուժը բնուրագորոշ մնանական է և կախված է լուժիչի բնույթից և ցերմաստիճանից, իսկ լուծույթի կոնցենտրացիայից կախված չէ:

Քացախաթթվի օրինակի վրա ցույց տանք դիսուցման հաստատունի ( $K_n$ ), դիսուցման աստիճանի ( $\alpha$ ) և էլեկտրոլիտի մոլյար կոնցենտրացիայի (C) միջև եղած կապը՝



Դիսուցված թթվի մոլյային կոնցենտրացիան կազմում է  $C \cdot \alpha$ , նշանակում է գոյացած իոններից յուրաքանչյուրի կոնցենտրացիան ևս կազմում է  $C \cdot \alpha$ .  $[H^+] = C \cdot \alpha$ ;  $[CH_3COO^-] = C \cdot \alpha$ : Զդիսուցված էլեկտրոլիտի

մոլային կոնցենտրացիան կկազմի՝  $C - C\alpha = C(1 - \alpha)$ : Այս արժեքները տեղադրենք քացախաթթվի դիսոգնան հաստատունի հավասարման մեջ՝

$$K_\eta = \frac{[\text{CH}_3\text{COO}^-][\text{H}^+]}{[\text{CH}_3\text{COOH}]} = \frac{C\alpha \cdot C\alpha}{C(1 - \alpha)} = \frac{C\alpha^2}{1 - \alpha}$$

$$K_\eta = \frac{C\alpha^2}{1 - \alpha} \quad (5.7.)$$

(5.7.) հավասարումը կոչվում է Օստվալդի նոսրացման օրենք և արտահայտում է դիսոգնան աստիճանի կախումը կոնցենտրացիայից:

Եթե էլեկտրոլիտը շատ թույլ է, ապա  $\alpha << 1$  և հայտարարում այն կարելի է անտեսել: Այդ դեպքում (5.7.) հավասարումը կունենա հետևյալ տեսքը՝



$$K_\eta = C\alpha^2 \quad \text{կամ} \quad \alpha = \sqrt{\frac{K_\eta}{C}} \quad (5.8)$$

Հաշվի առնելով, որ  $V = \frac{1}{C}$ ;  $\alpha = \sqrt{KV}$  ( $V$ -ն կոչվում է նոսրացում):

Համապատասխանաբար կարելի է սահմանել Օստվալդի նոսրացման օրենքը՝


**թույլ, թիճար էլեկտրոլիտի դիսոգնան աստիճանը հակարած համեմատական է էլեկտրոլիտի կոնցենտրացիայի քառակուսի արժատին:**



Օստվալդի նոսրացման օրենքից երևում է, որ. 1) թույլ էլեկտրոլիտի դիսոգնան աստիճանը մեծանում է լուծույթը նոսրացնելիս, իսկ անսահման նոսրացման դեպքում հասնում է իր բարձրագույն արժեքին՝ մեկի: Իրոք, քացախաթթվի 1 Ս լուծույթում այն հավասար է 0.13, իսկ 0.0001 Ս լուծույթում 0.306, 2) դիսոգնան աստիճանը կախված է ջերմաստիճանից և մինչև որոշակի ջերմաստիճան բարձրացնելիս մեծանում է (նույնը  $K_\eta$ -ի համար) 3) թույլ էլեկտրոլիտի  $\alpha$  կախված է լուծույթում այլ իոնների ներկայությունից: Թույլ էլեկտրոլիտի  $\alpha$  փոքրանում է լուծույթին նրա հետ ընդհանուր իոն ունեցող որևէ ուժեղ էլեկտրոլիտ ավելացնելիս: Օրինակ, քացախաթթվի լուծույթին նատրիումի ացետատ ավելացնելիս՝



Համակարգում ավելանում է ացետատ իոնի կոնցենտրացիան, հավասարակշռությունը տեղաշարժվում է քացախաթթվի մոլարացման (ձախ) կողմը և դիսոգնան աստիճանը փոքրանում է:

Բազմահիմն թրուները և բազմաթթու հիմքերը դիսոցվում են փուլերով: Օրինակ, ֆոսֆորական թթվի դիսոցումը կատարվում է երեք փուլով





Փուլերը բնութագրվում են դիսոցման հաստատումներով՝

$$K_1 = \frac{[\text{H}^+][\text{H}_2\text{PO}_4^-]}{[\text{H}_3\text{PO}_4]} = 7 \cdot 10^{-3}, \quad K_2 = \frac{[\text{H}^+][\text{HPO}_4^{2-}]}{[\text{H}_2\text{PO}_4^-]} = 6.2 \cdot 10^{-8}$$

$$K_3 = \frac{[\text{H}^+][\text{PO}_4^{3-}]}{[\text{HPO}_4^{2-}]} = 4.4 \cdot 10^{-5}$$

Ընդհանուր դիսոցման հաստատումը հավասար է.

$$K_{\text{գում.}} = K_1 \cdot K_2 \cdot K_3$$

Նույն ձևով են հաշվում բազմաթիվ հիմքերի դիսոցման  $K_{\text{գում.}}$ .

Աստիճանական դիսոցումը բնութագրվում է նրանով, որ յուրաքանչյուր հաջորդ փուլում դիսոցումը դժվարանում է, այսինքն  $K_1 > K_2 > K_3$ : Դա բացատրվում է էլեկտրաստատիկ ծգողությամբ (ըստ Կուլոնի օրենքի): Ինացման էներգիան ամենափոքրն է, երբ իոնը պոկվում է չեզոք մոլեկուլից: Դիսոցման հաջորդ փուլում իոնը պոկվում է հակառակ լիցքավորված մասնիկից, որի համար ավելի շատ էներգիա է պահանջվում:

Էլեկտրոլիտի ուժը կարելի է արտահայտել ուրիշ, ավելի հարմար ձևով դիսոցման հաստատումի Կ<sub>η</sub> փոխարեն օգտվելով նրա տասնորդական լոգարիթմից բացասական նշանով՝  $\rho K_{\eta} = -\lg K_{\eta}$ :

$$\text{Օրինակ, } K_{\text{CH}_3\text{COOH}} = 1.76 \cdot 10^{-5}, \text{ համապատասխանաբար՝}$$

$$\rho K_{\text{CH}_3\text{COOH}} = -\lg 1.76 \cdot 10^{-5} = 4.76$$

Որքան փոքր է  $\rho K_{\eta}$  արժեքը, այնքան համեմատաբար ուժեղ է էլեկտրոլիտը:

Ընդունված է թույլ թթվի  $K_a$ , նշանակել  $K_a$  սիմվոլով (a-acid), իսկ թույլ հիմքինը՝  $K_b$  (b- basis) և համապատասխանաբար՝  $\rho K_a$  և  $\rho K_b$ : Ձևողորդված թթվահիմնային համակարգում՝  $\rho K_a + \rho K_b = 14$ :

#### 5.4. Էլեկտրոլիտների դերը օրգանիզմների կենսագործունեությունում

Էլեկտրոլիտները շատ կարևոր դեր ունեն օրգանիզմների կենսագործնեությունում: Բացի առանձին վերցուած յուրաքանչյուր կատիոնի և անիոնի ունեցած ֆիզիոլոգիական և կենսաքիմիական ֆունկցիաների (ֆերմենտների ակտիվության խթանում և կարգավորում, կենսականորեն անհրաժեշտ բարդ կառուցվածք ունեցող կոմպլեքս միացությունների առաջացում, նյարդային գրգիռի փոխանցում, մկանային կծկում, արյան մակարդելիություն և այլն) գոյություն ունեն նաև նրանց համատեղ ազդեցությամբ պայմանավորված մի շարք պրոցեսներ: Այսպես, ֆիզիոլոգիական հեղուկներում էլեկտրոլիտների

առկայությունը նկատելիորեն ազդում է սպիտակուցների, ամինաթթուների և այլ հատկապես ցածրանոլեկուլային օրգանական միացությունների լուծելիության վրա: Ելեկտրոլիտների առկայությամբ է պայմանավորված նաև ֆիզիոլոգիական հեղուկների օսմոտիկ ճնշման մեջությունը, որի գրադիենտով էլ բացատրվում է ջրի ակտիվ տեղափոխությունը կենդանի օրգանիզմում:

Ելեկտրոլիտները հիդրատների ձևով պահում են ջուրը և դրանով կանխում օրգանիզմի ջրազրկումը: Ելեկտրոլիտների անբավարար քանակի պայմաններում կորուստը հնարավոր չէ վերականգնել նույնիսկ դրա մեջ քանակների օգտագործումով: Ելեկտրոլիտների քանակը կարգավորվում է սննդով և խմելու ջրով:

Արտաքջային հեղուկների ջրի 1/3 -ի կորուստը վտանգավոր է, իսկ 2/3 -ի կորուստն արդեն մահաբեր: Ասվածից բխում է, որ օրգանիզմի էլեկտրոլիտային քալանսի խանգարումները հղի են լուրջ և ծանր հետևանքներով: Նորմայում արյան պլազման պարունակում է 154 մմոլ/լ կատիոնների (հիմնականում նատրիում, կալիում, կալցիում, մագնեզիում) և նույնքան էլ անիոնների (հիմնականում քլորիդ, հիդրոկարբոնատ, սպիտակուցների քազմալիցք մակրոիոններ) համարժեքներ: Առավել կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր էլեկտրոլիտի կոնցենտրացիայի հաստատունությունը ներ- և արտաքջային հեղուկներում:

Մետաղների կատիոններից առավել մեծ նշանակություն ունեն  $\text{Na}^+$  և  $\text{K}^+$ , որոնք հայտնաբերվում են համարյա բոլոր հյուսվածքներում և հեղուկներում:

**Նատրիում:** Նատրիումի ընդհանուր քանակն օրգանիզմում  $\approx 150$  գ է: Նա հիմնականում արտաքջային տարր է: Արյան պլազմայում նրա քանակը 130 – 150 մմոլ/լ է: Նատրիում իոնների անբավարարությունից զարգանում են մի շարք երևույթներ. օսմոտիկ ճնշման անկում (հիպոօսմիա), որի հետևանքով առաջանում է հեմոլիզ, ուղեղի այտուց, արյան խտացում և դրա հետ կապված հեմոդինամիկ խանգարումներ: Նատրիում իոնների գերքանակների դեպքում ուժեղանում է ջրի կուտակումը միջքջային տարածքներում և առաջանում են այտուցներ, թքիցները մասնակի ջրազրկում են, խանգարվում են դրանց ֆունկցիաները: Բացի դրանից արգելակվում է նյարդային գրգռի հաղորդումը և զարգանում է հիպոտոնիա:

**Կալիում:** Կալիումը ներքջային կատիոն է: Արյունը պարունակում է 40 – 60 մմոլ/լ, իսկ պլազման՝ 4 – 5.6 մմոլ/լ: Կալիում իոնները մասնակցում են նյարդային գրգռի փոխանցմանը, մկանների կծկմանը և սրտի գործումներության կարգավորմանը: Օրգանիզմում կալիում իոնի անբավարարության (հիպոկալիեմիա) ժամանակ նկատվում է նյարդանկանային գրգռելիության անկում, արգելակվում է սպիտակուցի սինթեզը և ուժեղանում է դրանց քայլայումը: Այդ բոլորը բերում է մկանային բուլության, հոգնածության, շնչահեղծության, փսխումների, սրտի նորմալ աշխատանքի խախտման, կաթվածի և այլն: Կալիումի իոնների ավել-

ցուկը (հիպերկալիեմիա) օրգանիզմում առաջ է բերում երիկանային հիվանդություն, ուժեղացնում է էրիթրոցիտների և հյուսվածքներում քիչների քայլայումը, թքվահիմնային հավասարակշռությունը խախտվում է, նկատվում է նաև սրտի գործունեության յուրահատուկ խանգարում:

**Կալցիում:** Կալցիում հինների ընդհանուր քանակը հասուն օրգանիզմում 1050 գ է, որի 99 % գտնվում է ոսկրային հյուսվածքում դժվարալույթ ֆուֆատների ձևով: Արյան մեջ գտնվում է  $\approx$  12 մմոլ/լ, իսկ արյան պլազմայում  $\approx$  4.5 – 5.7 մմոլ/լ կալցիում իոն: Կալցիում հինների կտրուկ նվազումը (2.5 մմոլ/լ-ից ցածր) բերում է ուշագնացության և մահվան:

Կարևոր նշանակություն ունի տարբեր կատիոնների անտագոնիզմը: Կատիոններից որևէ մեկի անբավարարության հետևանքով կտրուկ ուժեղանում են մեկ այլ կատիոնով պայմանավորված երևույթները:

#### **5.4.1. Բջջաթաղանթների կառուցվածքը, հինների տրանսպորտը**

Կենդանի բջջը շրջապատված է թաղանթով, որն ունի պաշտպանիչ և ներքջային միջավայրը կարգավորող դեր: Ինները և այլ մոլեկուլները թաղանթի միջով թափանցում են բջջի ներսը, իսկ նյութափոխանակության վերջնանյութերը հեռանում են դուրս:

Բջջաթաղանթները կազմված են սպիտակուցներից և լիպիդներից, իիմնականում ֆուֆոլիպիդներից: Լիպիդները ջրում չեն լուծվում, բայց լուծվում են օրգանական լուծիչներում: Թաղանթային լիպիդների առանձնահատկությունն այն է, որ նրանց մոլեկուլների մի ծայրում գտնվում են հիդրաֆիլ ինոնգեն և բևեռացված խմբեր (օրինակ՝ կարբօքալիլ, ֆուֆատային, խոլինային խմբեր), իսկ մյուս ծայրում հիդրաֆոր երկար ածխաջրածնային շղթա: Լիպիդները գոյացնում են 70 Ա հաստության երկշերտ թաղանթ, որում բևեռային խմբերը շարված են թաղանթի մակերեսներին, իսկ ոչ բևեռային ածխաջրածնային ռադիկալները խորասուզված են դեպի ներս: Սպիտակուցի մոլեկուլները կարող են գտնվել ինչպես թաղանթի արտաքին և ներքին մակերեսի մոտ, այնպես էլ խրվել թաղանթի մեջ՝ մասամբ կամ ամբողջությամբ: Ժամանակակից պատկերացումների համաձայն կենսաթաղանթը դիտվում է իբրև լուծույթ, որում լուծիչը ֆուֆոլիպիդներից, գլիկոլիպիդներից և խոլեստերինից բաղկացած երկշերտ լիպիդային հեղուկ հենքն է, իսկ լուծված նյութը՝ սպիտակուցները և գլիկոպրոտեինները: Շատ դեպքերում թաղանթի ներսում սպիտակուցները և լիպիդները գտնվում են անընդհատ շարժման մեջ:

Սպիտակուցները կատարում են երեք ֆունկցիա՝ պահպանում են թաղանթի կառուցվածքային ամբողջությունը, գործում են որպես ֆերմենտներ, ծառայում են որպես ինների և այլ մոլեկուլների տեղափոխիչներ: Տարբեր նյութեր բջջաթաղանթի միջով տեղափոխվում

Են երկու հիմնական մեխանիզմով՝ սովորական դիֆուզիայի ճանապարհով (անվանում են նաև պասիվ տրանսպորտ) և ակտիվ տրանսպորտի ճանապարհով: Տարբեր լուծված նյութերի թաղանթային թափանցելիությունը կախված է նրանց նոլեկուլների չափերից և լիցքից: Փոքր չեզոք նոլեկուլներից և չքանացված նոլեկուլներից շատերը թափանցում են թաղանթի միջով սովորական դիֆուզիայի ճանապարհով ըստ կոնցենտրացիայի գրադիենտի: Այլ կերպ ասած՝ լուծված թաղանթում այդպիսի տրանսպորտը անվանում են պասիվ:

Որոշ միացություններ, օրինակ ածխաջրերը, վատ են լուծվում թաղանթներում և կարող են տեղափոխվել թաղանթի միջով միայն կոմպլեքսի ձևով: Այդ միացություններից առավել կարևոր է գյուկոզը: Թաղանթային սպիտակուցի հետ գյուկոզը առաջացնում է կոմպլեքս և անցնում է նրա միջով: Այդպիսի պրոցեսը կոչվում է **հեշտացված դիֆուզիա**: Գյուկոզի տրանսպորտը կտրուկ ավելանում է ինսուլին հորոնտի ներկայությամբ: Բջջաթաղանթի միջով հեշտությամբ անցնում են ջրի նոլեկուլները, չնայած նոլեկուլների մեջ թափանցվածությանը:

Սովորաբար, բջջաթաղանթները առավել թափանցելի են անիոնների համար ( $\text{Cl}^-$ ,  $\text{HPO}_4^{2-}$ ), քան կատիոնների ( $\text{H}^+$ ,  $\text{K}^+$ ,  $\text{Na}^+$ ):

Քազմաթիվ կարևոր կենսաբանական պրոցեսներ կատարելու համար անհրաժեշտ է, որպեսզի ներքջային հեղուկը իննական և նոլեկուլային թաղաղությամբ տարբերվի արտաքրջային տարածքից, այսինքն լինի կոնցենտրացիաների գրադիենտ: Օրինակ,  $\text{K}^+$  իոնների կոնցենտրացիան էրիթրոցիտներում մոտ 35 անգամ ավելի է քան արյան պլազմայում: Նատրիումի համար տեղի ունի հակառակ հարաբերությունը:  $\text{Na}^+$  -ի արտաքրջային կոնցենտրացիան մոտ 15 անգամ ավելի է, քան բջջի ներսում:  $\text{K}^+$  և  $\text{Na}^+$  իոնների կոնցենտրացիայի գրադիենտը կայուն պահպանելու համար,  $\text{K}^+$  իոնները պետք է արտաքին միջավայրից, որտեղ նրանց կոնցենտրացիան ցածր է, անընդհատ տեղափոխվեն դեպի բջջի ներսը, որտեղ նրանց կոնցենտրացիան բարձր է: Ընդհակառակը,  $\text{Na}^+$  իոնները բջջի ներքին միջավայրից պետք է տեղափոխվեն դեպի արտաքին միջավայր, որտեղ նրանց կոնցենտրացիան մեծ է: Այսպիսով,  $\text{K}^+$  և  $\text{Na}^+$  իոնների տեղափոխումը կատարվում է ցածր կոնցենտրացիայով միջավայր, այսինքն կոնցենտրացիայի գրադիենտի հակառակ ուղղությամբ: Այդպիսի պրոցեսը բերում է Գիբսի էներգիայի աճի և էնտրոպիայի նվազման և հետևաբար, թերմոդինամիկորեն չի կարող ընթանալ ինքնարերաբար և պահանջում է էներգիայի ծախս: Էներգիայի աղբյուր է հանդիսանում ԱԵՖ-ի հիդրոլիզի ռեակցիան: Ակտիվ տրանսպորտն ապահովում է բջջաթաղանթներում գործող ֆերմենտներով, որոնք հաճախ անվանվում են «ապոնատեր»: Ներկայումս հայտնի են  $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ -ԱԵՖազ,  $\text{Ca}^{2+}$ -ԱԵՖազ,  $\text{Mg}^{2+}$ -ԱԵՖազ,  $\text{H}^+$ -ԱԵՖազ ֆերմենտային համակարգերը:

Կարելի է հաշվել Գիբսի էներգիայի աճը ակտիվ տրանսպորտի դեպքում: Դիտարկենք  $K^+$  իոնների տրանսպորտը արյան պլազմայից դեպի էրիթրոցիտներ.

$$G_{K^+, \text{էրիթր.}} > G_{K^+, \text{պլազմա}}$$

Քանի որ,  $G_{K^+} = G^{\circ}_{K^+} + RT \ln a_{K^+}$ , ապա

$$G_{K^+, \text{էրիթր.}} - G_{K^+, \text{պլազմա.}} = \Delta G = RT \ln \frac{a_{K^+, \text{էրիթր.}}}{a_{K^+, \text{պլազմա.}}} = RT \ln \frac{[K^+]_{\text{էրիթր.}}}{[K^+]_{\text{պլազմա}}}$$



Ընդունելով, որ  $[K^+]_{\text{էրիթր.}} / [K^+]_{\text{պլազմա}} = 35/1$ , կստացվի

$$\Delta G = RT \ln \frac{35}{1} = 8.312 \text{ J/mole} \cdot K \cdot 298 K \ln 35 = 8.842 \text{ J/mole}$$

Այս մեծությունը մոտ 4 անգամ փոքր է ԱԵՖ մինչև ԱԿՖ հիդրոլիզի ռեակցիայի ընթացքում Գիբսի էներգիայի նվազումից:

## 6. Թթումների և հիմքերի տեսությունը


**Արենիուսի տեսությունը** (1887): Ըստ Արենիուսի էլեկտրոլիտիկ դիսոցման տեսության թթու է կոչվում այն նյութը, որը ջրային լուծույթում դիսոցվում է առաջացնելով ջրածնի իոններ  $H^+$ , իսկ հիմք է կոչվում այն նյութը, որը դիսոցվում է առաջացնելով  $OH^-$  իոններ: Այս տեսության համաձայն չեղոքացման ռեակցիան հանգում է  $H^+$  և  $OH^-$  իոնների փոխազդեցությանը, ջրի քիչ դիսոցվող մոլեկուլների առաջացումով: Օրինակ.



Արենիուսի տեսությունը հնարավորություն տվեց քանակապես բնութագրել թթվի և հիմքի ուժը, բացատրել թթուների կատալիտիկ դերը և ուժեղ թթվով, և ուժեղ հիմքով չեղոքացման ռեակցիայի հաստատուն ջերմէթեկտը: Սակայն այն ունի մի շարք սահմանափակումներ՝

1) դիսոցումը թթուների և հիմքերի փոխազդեցության պարտադիր պայման չէ (օրինակ՝  $HCl$  գազի փոխազդեցությունը պինդ ալկալիների հետ),

2)  $OH^-$  խմբեր չպարունակող հիմքերի գոյությունը: Օրինակ.




Չեղոքացման ռեակցիայում հիմքը ամոնիակն է, և  $OH^-$  խումբ չի պարունակում:




Այսպիսով, Արենիուսի տեսությունը կիրառելի է միայն էլեկտրոլիտների ջրային լուծույթների համար, իսկ ոչ ջրային կամ գազային միջավայրերի համար կիրառելի չէ:

**Բրենստեն-Լոուլիի պրոտոնային** (պրոտոլիտիկ) տեսությունը (1923): Ըստ պրոտոնային տեսության թթու է հանդիսանում ցանկացած մասնիկ (մոլեկուլ կամ իոն), որը կարող է անջատել պրոտոն (դոնոր), իսկ հիմք է հանդիսանում ցանկացած մասնիկ (մոլեկուլ կամ իոն), որը կարող է միացնել պրոտոն (ակցեպտոր):

Թթվից հիմքին պրոտոնի անցման ընդհանուր ռեակցիան է.




Թթուն  $H^+$  տալով վեր է ածվում իր գուգորդված հիմքի, իսկ հիմքը  $H^+$  ընդունելով իր գուգորդված թթվի, այսինքն թթվահիմնային հավասարակշռություն է հաստատվում, առաջանուն են երկու թթվահիմնային գույգեր: Ընդ որում ուժեղ թթվին համապատասխանում է թույլ գուգորդված հիմք, իսկ թույլ թթվին ուժեղ գուգորդված հիմք: Օրինակ.




Ըստ պրոտոնային տեսության թթուները կարող են լինել երեք տեսակի՝


1) չեզոք թթուներ - չեզոք մոլեկուլներ՝  $\text{HCl}$ ,  $\text{H}_2\text{SO}_4$ ,  $\text{HNO}_3$ ,  $\text{H}_3\text{PO}_4$  և այլն՝



2) անիոնային թթուներ - բացասական լիցքավորված իոններ՝  $\text{HSO}_4^-$ ,  $\text{H}_2\text{PO}_4^-$ ,  $\text{HPO}_4^{2-}$ ,  $\text{HSO}_3^-$  և այլն՝



3) կատիոնային թթուներ - դրական լիցքավորված իոններ՝  $\text{NH}_4^+$ ,  $\text{H}_3\text{O}^+$ ,  $\text{N}_2\text{H}_5^+$ ,  $[\text{CH}_3 - \text{NH}_3]^+$  և այլն՝



Նույն ձևով կարելի է դասակարգել հիմքերը՝

1) չեզոք հիմքեր –  $\text{H}_2\text{O}$ ,  $\text{NH}_3$ ,  $\text{C}_6\text{H}_5$  –  $\text{NH}_2$ ,  $\text{CH}_3$  –  $\text{NH}_2$ ,  $\text{N}_2\text{H}_4$ ,  $\text{NaOH}$ ,  $\text{Ca}(\text{OH})_2$  և այլն,

2) անիոնային հիմքեր –  $\text{Cl}^-$ ,  $\text{OH}^-$ ,  $\text{NO}_3^-$ ,  $\text{CH}_3\text{COO}^-$  և այլն,


3) կատիոնային հիմքեր –  $\text{H}_2\text{N}$  –  $\text{NH}_3^+$ :

Թթվահիմնային (պրոտոլիտիկ) հավասարակշռության մասնավոր դեպքերն են չեզոքացման, դիսոցման և հիդրոլիզի ռեակցիաները:



**Խնամակցություն պրոտոնի նկատմամբ:**

Խնամաձայն պրոտոնային տեսության նյութի թթվահիմնային հատկությունները կախված են ոչ միայն նրա մոլեկուլների հատկություններից, այլև լուծիչի բնույթից:

Քննարկենք թթվի դիսոցումը ջրային լուծություն՝



Սխեմայից հետևում է, որ ջրու միացնում է թթվի պրոտոնը, վերածվելով դրական լիցքավորված իոնի, այսինքն հանդես է գալիս որպես հիմք: Դա նշանակում է, որ թթվի դիսոցումը կախված է լուծիչի պրոտոն միացնելու հատկությունից: Որքան լուծիչը հեշտությամբ միացնի պրոտոն, այնքան թթու հեշտությամբ կրիստոնցվի և կիմի ուժեղ: Լուծիչի ազդեցությունը թթվի դիսոցման աստիճանի վրա այնքան մեծ է, որ նույնիսկ կարող է փոխակեր հինացնան բնույթը: Դա նշանակում է, որ տվյալ նյութը լուծիչներից մեկում կարող է հանդիսանալ թթու, իսկ այլ լուծիչում՝ հիմք: **Պրոտոնային տեսության մեջ լուծիչի քանակական բնութագիր է հանդիսանում խնամակցությունը պրոտոնի նկատմամբ,** որը որոշվում է տվյալ ջերմաստիճանում, տվյալ լուծիչում 1 մոլ պրոտոնի սոլվատացման ժամանակ անցատված ջերմության քանակով: Օրինակ՝




Տվյալներից հետևում է, որ ամոնիակի խնամակցությունը պրոտոնի նկատմամբ ավելի մեծ է քան ջրինը: Ըստ պրոտոնի նկատմամբ խնամակցության փոքրացման լուծիչները կարելի է դասավորել հետևյալ շարքում  $\text{NH}_3$ ,  $\text{N}_2\text{H}_4$ ,  $\text{H}_2\text{O}$ ,  $\text{C}_2\text{H}_5\text{OH}$ ,  $\text{HCN}$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{CH}_3\text{COOH}$ ,  $\text{HF}$ ,  $\text{H}_2\text{SO}_4$ ,  $\text{HNO}_3$ ,  $\text{HClO}_4$ :


Հարքից հետևում է, որ պրոտոնի նկատմամբ ամենամեծ խնամակցություն հանդիսանում է թերում հեղուկ ամոնիակը: Դա նշանակում է, որ ցանկացած նյութ, որն ընդունակ է տալու պրոտոն հեղուկ ամոնիակում կիանդիսանա թրու: Օրինակ, հեղուկ ամոնիակում լուծված ջուրը իրեն դրսնորում է որպես բավականաչափ ուժեղ թրու:



Ծատ նյութեր, որոնք ջրային լուծույթում հայտնի են որպես թույլ թրուներ, հեղուկ ամոնիակում հանդիսանում են ուժեղ թրուներ: Օրինակ.



Նեղուկ ամոնիակում ուժեղ թրու են հանդիսանում նաև  $\text{CH}_3\text{COOH}$ ,  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{HF}$  և նույնիսկ այնպիսի նյութեր, որոնք ջրային լուծույթում թրվային հատկություններ չեն ցուցաբերում: Օրինակ. սպիրտները՝




Նյութերի թրվային հատկությունները հեղուկ ամոնիակում ավելի ուժեղ են դրսնորվում, քան ջրում:  $\text{H}_2\text{S}$ ,  $\text{HCN}$ ,  $\text{CH}_3\text{COOH}$  և այլ թույլ թրուները հեղուկ ամոնիակում դառնում են նույնքան ուժեղ, որքան  $\text{H}_2\text{SO}_4$ ,  $\text{HCl}$ ,  $\text{HNO}_3$  և այլն: Նշանակում է, հեղուկ ամոնիակում թրուների ուժի միջև տարբերությունը հարթվում է և դա պայմանավորված է պրոտոնի նկատմամբ ամոնիակի մեծ խնամակցությամբ: Զուրը նույնպես օժտված է պրոտոնի նկատմամբ մեծ խնամակցությամբ (զիջում է ամոնիակին) և այդ պատճառով ջրային լուծույթում ևս թրուների ուժի միջև տարբերությունը հարթվում է, սակայն ավելի քիչ, քան հեղուկ ամոնիակում: Զրային լուծույթում  $\text{HCl}$ ,  $\text{HBr}$ ,  $\text{HI}$ ,  $\text{H}_2\text{SO}_4$ ,  $\text{HNO}_3$ ,  $\text{HClO}_4$  և այլն համարյա հավասար ուժեղ թրուներ են: **Այս լուծիչները, որոնցում հարթվում են թրուների (կամ հիմքերի) ուժի տարբերությունը, կոչվում են հարթեցնող լուծիչներ:**

Թրուների համար հարթեցնող լուծիչներ են հանդիսանում պրոտոնի նկատմամբ մեծ խնամակցություն ունեցող նյութերը՝  $\text{NH}_3$ ,  $\text{N}_2\text{H}_4$ ,  $\text{H}_2\text{O}$ :

Քննարկենք թրուների և հիմքերի վարքը անջուր քացախաթթվում: Քացախաթթվում պրոտոնը սոլվատանում է շատ թույլ և թրուների դիսուցումը նրանում դժվարանում է: Քացախաթթվում թրուների ուժն ավելի փոքր է, քան ջրում, և նրանց ուժեղ տարբերությունն ավելի արտահայտված է: Օրինակ, ջրային լուծույթում  $\text{HClO}_4$  և  $\text{HNO}_3$  միանման ուժեղ թրուներ են, իսկ անջուր քացախաթթվում  $\text{HNO}_3$  մոտավորապես 4000 անգամ թույլ է  $\text{HClO}_4$ -ից: **Այս լուծիչները, որոնցում մեծ չափով է արտահայտվում թրուների (կամ հիմքերի) ուժի**





**տարրերությունը, կոչվում են տարրերակող (դիֆերենցող) լուծիչներ:**  
Թթուների համար դիֆերենցող լուծիչներ են հանդիսանում.



և այլ նյութեր, որոնց խնամակցությունը պրոտոնի նկատմամբ փոքր է:

Պրոտոնային տեսությունը ևս սահմանափակ է. 1. կիրառելի չէ պրոտոն չպարունակող, բայց թթվային հատկություններով օժտված նյութերի նկատմամբ (B-ի, Al-ի, Si-ի, Sn-ի հալոգենիներ): 2. Գոյություն չունի թթուների և հիմքերի ուժի միասնական սանդղակ (փոխվում է լուծիչը, փոխվում է ուժը): Ավելի ընդհանուր է Լյուիսի էլեկտրոնային տեսությունը:

Լյուիսի էլեկտրոնային տեսությունը (1923): Ըստ այդ տեսության թթու է կոչվում այն նյութը, որը քիմիական կապ առաջացնելիս ընդունում է էլեկտրոնային զույգ (ունի դատարկ օրբիտալ), իսկ հիմք է կոչվում այն նյութը, որը տրամադրում է չքաշխված էլեկտրոնային զույգ: Այսպիսով, թթուն էլեկտրոնային զույգի ակցեպտոր է, իսկ հիմք՝ դրոնոր: Լյուիսի տեսությունը ընդգրկում է այնպիսի ռեակցիաներ, որոնցում պրոտոններ ընդհանրապես չեն մասնակցում: Ըստ էլեկտրոնային տեսության թթվահիմնային փոխազդեցությունը հանգում է դոնոր-ակցեպտորային մեխանիզմով քիմիական կապի առաջացնանը, արդյունքում առաջանում է կոնյակքս միացություն, որը կոչվում է ադդուկտ: Բերենք նի քանի օրինակ՝



Այս բոլոր ռեակցիաներում էլեկտրոնային զույգի դոնոր հանդիսացող նյութերը կոչվում են Լյուիսի հիմքեր, իսկ էլեկտրոնային զույգի ակցեպտոր հանդիսացող նյութերը՝ Լյուիսի թթուներ: Լյուիսի հիմքերին են պատկանում ամինային ազոտ պարունակող նյութերը (ամոնիակ, ամիններ), թթվածին պարունակող օրգանական նյութերը.

$R_2CO$  ընդհանուր բանաձևով և այլն: Լյուիսի թթուներ են հանդիսանում թորի, այսումինիումի, սիլիցիումի, անագի և այլ տարրերի հալոգենիդները, կոմպլեքսագոյացնող հինները  $Ag^+$ ,  $Cr^{3+}$ ,  $Co^{3+}$ ,  $Pt^{2+}$ ,  $Fe^{2+}$  և այլն:

Լյուիսի տեսությունը ներգրավում է ինչպես չեզորացման, այնպես էլ կոմպլեքսագոյացման, ջրի հետ անհիդրիդների փոխազդեցության և այլ ռեակցիաների: Այս տեսությունը չի բացատրում պրոտոնային թթուների գոյությունը: Օրինակ  $HCl$ -ը չի կարող միացնել էլեկտրոնային գույգ, բայց թթու է:

Լյուիսի տեսությունը հետագայում զարգացվեց Պիրսոնի կողմից (1963 թ.): Նա առաջարկեց Լյուիսի թթուները և հիմքերը բաժանել կոշտ և փափուկ հիմքերի և թթուների:

Կոշտ հիմքերում դոնոր ատոմը մեծ էլեկտրաբացասականությամբ (ամուր է պահում իր վալենտական էլեկտրոնները), փոքր բևեռունակությամբ դժվար օքսիդացող ատոմ է: Բևեռունակությունը կախված է ինչպես մասնիկի լիցքի մեծությունից, այնպես էլ շառավիղից (լիցքի խտությունից): Ակցեպտորին ենթակա էլեկտրոնային գույգ ունեցող օրբիտալի էներգիան փոքր է, այսինքն շառավիղը փոքր է: Դոնոր ատոմների դերում կարող են հանդես գալ  $O$ ,  $N$ ,  $F$ ,  $Cl$ :

Փափուկ հիմքերում դոնոր ատոմը փոքր էլեկտրաբացասականությամբ, մեծ բևեռունակությամբ և ավելի մեծ շառավիղով հեշտ օքսիդացող ատոմ է, որը թույլ է պահում իր վալենտական էլեկտրոնները, քանի որ դրանք հեռու են միջուկից: Դոնոր ատոմների դերում հանդես են գալիս  $C$ ,  $S$ ,  $I$ :

Կոշտ թթուներում ակցեպտոր ատոմների շառավիղը փոքր է և, հետևաբար ունեն մեծ դրական լիցք, մեծ էլեկտրաբացասականություն և փոքր բևեռունակություն: Էլեկտրոնային գույգ ընդունող ազատ ատոմական օրբիտալի էներգիան փոքր է:


Փափուկ թթուները պարունակում են մեծ շառավիղով, փոքր դրական լիցքով, ոչ մեծ էլեկտրաբացասականությամբ և մեծ բևեռունակությամբ օժտված ակցեպտոր ատոմներ: Էլեկտրոնային գույգ ընդունող ազատ օրբիտալի էներգիան մեծ է:

Պարբերական համակարգում խմբերում վերից վար շառավիղի ածի հետ միևնույն լիցքով իննների մոտ փոքրանում է լիցքի խսությունը և նկատվում է անցում կոշտից փափուկին: Օրինակ.  $Al^{3+}$ -ը կոշտ թթու է,  $Ga^{3+}$ -ը՝ փափուկ կամ օքսիդ իննը ( $O^{2-}$ ) կոշտ հիմք, իսկ սուլֆիդ իննը ( $S^{2-}$ )՝ փափուկ: Կոշտ և փափուկ հասկացությունները համարժեք չեն ուժեղ և թույլ թթու և հիմք հասկացություններին:


Տեսության հիւրյունն այն է, որ կոշտ թթուները հիմնականում ռեակցում են կոշտ հիմքերի հետ, իսկ փափուկ թթուները՝ փափուկ հիմքերի հետ: Դա արտահայտվում է նրանով, որ այդ ռեակցիաների արագությունը մեծ է և առաջացող միացություններն ավելի կայուն են, քանի որ իրար հետ փոխազդում են էներգիայով իրար մոտ ատոմական օրբիտալներ:

**6.1. Զուրը որպես թույլ էլեկտրոլիտ, ջրի իոնական արտադրյալ, ջրի ավտոպրոտոլիզի հաստատում, ջրածնական ցուցիչ**

Զուրը շատ թույլ անֆոլիտ է (կարող է և տալ, և ընդունել պրոտոն) և կարող է ենթարկվել ինքնադիսոգման (ավտոպրոտոլիզ), որի ժամանակ ջրի մի մոլեկուլը թթու է, իսկ մյուսը՝ հիմք:



Պարզեցված ձևով.



Ջրի իոնացման հաստատումը հավասար է.

$$K = \frac{[\text{H}^+][\text{OH}^-]}{[\text{H}_2\text{O}]}, \quad \text{որտեղից՝}$$

$$[\text{H}^+][\text{OH}^-] = K [\text{H}_2\text{O}] \quad (6.1.)$$

Հաստատված է, որ  $25^\circ\text{C}$  -ում ըստ էլեկտրահաղորդականության որոշման, մաքուր ջրի  $K=1.8 \cdot 10^{-16}$  և դա նշանակում է, որ ջրի  $555000000$  մոլեկուլներից դիսոգվում է միայն մեկը: Ջրի դիսոգված մոլեկուլների թիվը (կոնցենտրացիան) այնքան քիչ է չդիսոգված մոլեկուլների թվի (կոնցենտրացիայի) նկատմամբ, որ վերջինս կարելի է ընդունել հաստատում և հավասար՝

$$[\text{H}_2\text{O}] = \frac{1000 \text{ g/L}}{18 \text{ g/mol}} = 55.56 \text{ mol/L} \quad (6.2.)$$

Հավասարումից կստացվի՝

$$[\text{H}^+][\text{OH}^-] = 1.8 \cdot 10^{-16} \cdot 55.56 = 10^{-14}$$

$$K_w = [\text{H}^+][\text{OH}^-] = 10^{-14} \quad (6.3.)$$

**Սաքուր ջրում և նոսր ջրային լուծույթներում ջրածնի և հիդրօքսիդի իոնների կոնցենտրացիաների արտադրյալը (ջրի իոնական արտադրյալը) տվյալ ցերմաստիճանում հաստատում մեծություն է, նշանակվում է  $K_w$  (water) և կոչվում է ջրի ավտոպրոտոլիզի հաստատում:  $K_w$  ունի  $\text{mol}^2/\text{L}^2$  չափողականություն:**

$$[\text{H}^+] = \frac{K_w}{[\text{OH}^-]} \quad (6.4.)$$

$$[\text{OH}^-] = \frac{K_w}{[\text{H}^+]} \quad (6.5)$$

Մաքուր ջրում, այսինքն չեզոք միջավայրում՝

$$[\text{H}^+] = [\text{OH}^-] = \sqrt{K_w} = \sqrt{10^{-14}} = 10^{-7} \text{ mol/L}$$

Ջրին թթու ավելացնելիս՝  $[\text{H}^+] > [\text{OH}^-]$ , այսինքն թթվային միջավայրում,  $[\text{H}^+] > 10^{-7}$ , իսկ  $[\text{OH}^-] < 10^{-7}$  և հակառակը՝ հիմնային միջավայրում  $[\text{H}^+] < 10^{-7}$ , իսկ  $[\text{OH}^-] > 10^{-7} \text{ mol/L}$ : Դա նշանակում է, որ միջավայրի թթվային կամ հիմնային հատկությունները կարելի են գնահատել այդ հիմներից

որևէ մեկի կոնցենտրացիայով: Սովորաբար միջավայրի թթվայնությունը կամ հիմնայնությունը որոշում են  $H^+$  իոնների կոնցենտրացիայով: Նման փոքր թվերից օգտվելը հարմար չէ և գործնականում օգտվում են ջրածնական ցուցիչից՝  $pH$ -ից: Ջրածնական ցուցիչը արտահայտում է ջրածնի իոնների կոնցենտրացիայի տասնորդական լոգարիթմը բացասական նշանով՝

$$pH = - \lg[H^+] = - \lg C_{H+}$$

թթվայնությունը՝ խիտ լուծույթների համար օգտվում են  $H^+$  իոնների ակտիվությունից՝  $pH = - \lg a_{H+}$

Մաքրու ջրի և չեղող լուծույթների համար՝  $pH = - \lg 10^{-7} = 7$ :

Թթվային միջավայրում՝

$$[H^+] > 10^{-7}, 10^{-6}, 10^{-5}, 10^{-4}, 10^{-3}, 10^{-2}, 10^{-1}, 1$$

$$pH < 7, 6, 5, 4, 3, 2, 1, 0$$

միջավայրի թթվայնությունը մեծանում է

Հիմնային միջավայրում՝

$$[H^+] < 10^{-7}, 10^{-8}, 10^{-9}, 10^{-10}, 10^{-11}, 10^{-12}, 10^{-13}, 10^{-14}$$

$$pH < 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14$$

միջավայրի հիմնայնությունը մեծանում է

Զրի իոնական արտադրյալից՝  $K_w = [H^+][OH^-]$  կարելի է դուրս բերել հետևյալ առնչությունը՝

$$- \lg K_w = (- \lg[H^+] + (- \lg[OH^-])) = (- \lg 10^{-7}) + (- \lg 10^{-7})$$

$$pK_w = pH + pOH = 14; \text{ որտեղից՝ } pH = 14 - pOH, \text{ իսկ } pOH = 14 - pH$$

Խնդիրների լուծման օրինակներ:

**Օրինակ 1.** Ջրածնի իոնների կոնցենտրացիան լուծույթում կազմում է  $10^{-5}$  մոլ/լ: Որոշել հիդրօքսիդ իոնների կոնցենտրացիան ջրային լուծույթում:

$$\text{Լուծում: } [OH^-] = \frac{10^{-14}}{[H^+]} = \frac{10^{-14}}{10^{-5}} = 10^{-9} \text{ մոլ/լ}$$

**Օրինակ 2.** Ջրային լուծույթում  $[OH^-] = 10^{-4}$  մոլ/լ: Հաշվել լուծույթի  $pH$ -ը:

$$\text{Լուծում: } pOH = - \lg[OH^-] = - \lg 10^{-4} = 4$$

$$pH = 14 - pOH = 14 - 4 = 10 \text{ կամ}$$

$$[H^+] = \frac{10^{-14}}{[OH^-]} = \frac{10^{-14}}{10^{-4}} = 10^{-10}$$

$$pH = - \lg 10^{-10} = 10$$

**Օրինակ 3.** Որոշել  $pH$ -ի արժեքները հետևյալ լուծույթների համար՝  
ա)  $[H^+] = 0.2$  մոլ/լ      բ)  $[H^+] = 0.0006$  մոլ/լ

$$\text{գ) } [H^+] = 4 \cdot 10^{-9} \text{ մոլ/լ      դ) } [H^+] = 8 \cdot 10^{-10} \text{ մոլ/լ:}$$

Լուծույթներից որի՞ թթվայնությունը և որի հիմնայնությունն է ավելի բարձր:

**Լուծում:** ա)  $[H^+] = 0.2 = 2 \cdot 10^{-1}; \text{ } pH = - \lg 2 \cdot 10^{-1} = 1 - \lg 2 = 1 - 0.3 = 0.7$

$$p) [H^+] = 0.0006 = 6 \cdot 10^{-4}; pH = -\lg 6 \cdot 10^{-4} = 4 - \lg 6 = 4 - 0.78 = 3.22$$

$$q) [H^+] = 4 \cdot 10^{-9}; pH = -\lg 4 \cdot 10^{-9} = 9 - \lg 4 = 9 - 0.6 = 8.4$$

$$n) [H^+] = 8 \cdot 10^{-10}; pH = -\lg 8 \cdot 10^{-10} = 10 - \lg 8 = 10 - 0.9 = 9.1$$

Լուծույթներից ա) և բ) թթվային են, իսկ գ) և դ) հիմնային:  
Առավել թթվային է ա) լուծույթը և առավել հիմնային է դ) լուծույթը:

**Օրինակ 4.** Լուծույթի pH -ը հավասար է 5.8: Որոշել  $H^+$  և  $OH^-$  իոնների կոնցենտրացիան այդ լուծույթում:

**Լուծում:**  $pH = -\lg[H^+] = 5.8$  կամ  $\lg[H^+] = -5.8 = -6 + 0.2 = \lg 10^{-6} + \lg 1.58$


$$[H^+] = 1.58 \cdot 10^{-6} \text{ մոլ/L}, \text{ իսկ } [OH^-] = \frac{10^{-14}}{1.58 \cdot 10^{-6}} = 6.3 \cdot 10^{-9} \text{ մոլ/L}$$

Լուծույթների pH -ի արժեքը կարևոր մեջություն է կենսաբանական համակարգերի համար: Օրինակ մարդու արյան pH հաստատում է և հավասար 7.36: Ֆերմենտների ակտիվությունը կախված է միջավայրի pH -ից: Օրինակ՝ ստամոքսահյութի պեպսինը ակտիվ է. pH = 1.5 – 2.0 սահմաններում, արյան կատալազան՝ pH = 7 և այլն: Հայտնի են լուծույթներում pH -ի ճշգրիտ որոշման մի շարք ֆիզիկաքիմիական եղանակներ: Արագ, սակայն որոշ մոտավորությամբ լուծույթի pH -ը կարելի է որոշել ինդիկատորային թղթերով:

### 6.1.1. Թթուների և հիմքերի լուծույթների pH-ի հաշվարկը

**1. Ուժեղ թթվի լուծույթի pH հաշվարկը:**

Գործնականում կարելի է ընդունել, որ ուժեղ թթուն լիկ դիտոցվում է՝



Քանի որ ջուրը շատ թույլ էլեկտրոլիտ է, նրա ինքնադիտոցումց առաջացած  $H^+$  իոնների կոնցենտրացիան անտեսելով, կարելի է ընդունել, որ  $H^+$  իոնները առաջացել են միայն թթվի դիտոցումց և դա նշանակում է՝

$$[H^+] = C_{\text{թթ}}, \text{ որտեղից } -\lg[H^+] = -\lg C_{\text{թթ}}, \text{ pH} = -\lg C_{\text{թթ}} = -\lg C_a, \text{ a - acid}$$

**Օրինակ:** 0.01 M HCl լուծույթի pH հավասար կլինի՝

$$[H^+] = C_a = 0.01 = 1 \cdot 10^{-2}, \text{ pH} = -\lg 10^{-2} = 2$$

**2. Ուժեղ հիմքի լուծույթի pH հաշվարկ:**

Ուժեղ թթվին համանման ընդունելով, որ  $[OH^-] = C_{\text{հիմ}}$ , որտեղից

$$-\lg[OH^-] = -\lg C_{\text{հիմ}} = -\lg C_b \text{ (b - basic)}$$

$$pOH = -\lg C_b, \quad pH = 14 - pOH$$

**Օրինակ:** 0.01 M NaOH լուծույթի pH -ը կլինի՝


$$[OH^-] = C_b = 0.01 = 10^{-2}, \quad pOH = -\lg 10^{-2} = 2, \quad pH = 14 - 2 = 12:$$

Հաշվարկը կարելի էր կատարել նաև ըստ  $[H^+]$ , այսպես  $[OH^-] = 10^{-2}$ ,

$$[H^+] = \frac{10^{-14}}{10^{-2}} = 10^{-12}, \quad pH = -\lg 10^{-12} = 12$$

### 3. Թույլ թթուների լուծույթի pH -ի հաշվարկ:

Ի տարբերություն ուժեղ թթուների, թույլ թթուները լրիվ չեն դիսոցվում:



Հավասարակշռության վիճակում համակարգի հավասարակշռության հաստատումը, այսինքն թթվի դիսոցման հաստատումը՝  $K_a$  հավասար է.

$$K_a = \frac{[\text{CH}_3\text{COO}^-][\text{H}^+]}{[\text{CH}_3\text{COOH}]} = \frac{(c_a \cdot \alpha)^2}{c_a(1-\alpha)} \quad (6.7)$$

Քանի որ թույլ թթուների համար  $\alpha << 1$ , ապա  $\alpha$ -ն հայտարարում կարելի է անտեսել: Դիսոցման հավասարումից հետևում է, որ

$$[\text{CH}_3\text{COO}^-] = [\text{H}^+] = C \cdot \alpha \quad (\text{նրանց քանակները համարժեք են}):$$

Տեղադրելով (6.7) հավասարման մեջ ( $C_a \cdot \alpha$ ) –ի փոխարեն  $[\text{H}^+]$ , կստանանք՝

$$K_a = \frac{[\text{H}^+]^2}{c_a}, \quad [\text{H}^+]^2 = K_a \cdot c_a, \quad [\text{H}^+] = \sqrt{K_a \cdot c_a} \quad (6.8)$$

Պոտենցված ձևով՝

$$-\lg[\text{H}^+] = \frac{1}{2}(-\lg K_a - \lg c_a), \quad \text{որտեղից} \quad \text{pH} = \frac{1}{2}(pK_a - \lg c_a) \quad (6.9)$$


**Օրինակ:** Հաշվենք 0.1 M  $\text{CH}_3\text{COOH}$  լուծույթի pH -ը, եթե  $K_a = 1.86 \cdot 10^{-5}$ :

$$pK_a = -\lg K_a = -\lg 1.86 \cdot 10^{-5} = 5 - \lg 1.86 = 5 - 0.27 = 4.73:$$

$$\text{pH} = \frac{1}{2}(pK_a - \lg c_a) = \frac{1}{2}(4.73 - \lg 10^{-1}) = \frac{1}{2}(4.73 + 1) = \frac{1}{2} \cdot 5.73 = 2.87$$

### 4. Թույլ հիմքերի լուծույթի pH-ի հաշվարկ

Հաշվարկը քննարկենք ամոնիակի լուծույթի օրինակով:  $\text{NH}_4\text{OH}$  դիսոցման լուծույթում կատարվում է մասամբ՝



$$K_b = \frac{[\text{NH}_4^+][\text{OH}^-]}{[\text{NH}_4\text{OH}]} = \frac{(c_b \cdot \alpha)^2}{c_b(1-\alpha)} \quad (6.11)$$

$[\text{NH}_4^+] = [\text{OH}^-]$ , հետևաբար՝  $[\text{NH}_4^+][\text{OH}^-] = [\text{OH}^-]^2$ , կարելի է ընդունել, որ  $[\text{NH}_4\text{OH}] = C_b$  մոլ/L:

Այսպիսով՝

$$K_b = \frac{[\text{OH}^-]^2}{c_b}, \quad \text{իսկ} \quad [\text{OH}^-] = \sqrt{K_b \cdot c_b} \quad (6.12),$$

որտեղից.

$$-\lg[\text{OH}^-] = \frac{1}{2}(-\lg K_b - \lg c_b), \quad \text{կամ} \quad \text{pOH} = \frac{1}{2}(pK_b - \lg c_b), \quad \text{իսկ}$$

$$pH = pK_w - \frac{1}{2}(pK_b - \lg c_b) = 14 - \frac{1}{2}(pK_b - \lg c_b) \quad (6.13)$$

Յաշվենք  $0.1 \text{ M NH}_4\text{OH}$  լուծույթի  $pH$ -ը, եթե  $K_b = 1.8 \cdot 10^{-5}$ :

$$pK_b = -\lg K_b = -\lg 1.8 \cdot 10^{-5} = 5 - \lg 1.8 = 5 - 0.26 = 4.74;$$

$$pH = 14 - \frac{1}{2}(4.74 - \lg 10^{-1}) = 14 - \frac{1}{2}(4.74 + 1) = 14 - \frac{5.74}{2} = 14 - 2.87 = 11.13 :$$

### 6.1.2. Օրինակներ

**Օրինակ 1.** Յաշվել  $0.05 \text{ M NaOH}$  նատրիումի հիդրօքսիդի լուծույթի  $pH$ -ը, եթե դիսուլվացման ընթացել է լրիվ:

Լուծում: Քանի որ դիսուլվացման ընթացել է լրիվ, ապա

$$[\text{OH}^-] = [\text{NaOH}] = C_b = 0.05 = 5 \cdot 10^{-2};$$

$$\begin{aligned} p\text{OH} &= -\lg 5 \cdot 10^{-2} = 2 - \lg 5 = 2 - 0.7 = 1.3; \\ pH &= 14 - 1.3 = 12.7; \end{aligned}$$

**Օրինակ 2.** Յաշվել  $0.08 \text{ M H}_2\text{O}_2$  լուծույթի  $pH$ -ը, եթե  $K_a = 1.8 \cdot 10^{-4}$ :

Լուծում:  $C_a = 0.08 = 8 \cdot 10^{-2} \text{ M/L}$ :

$$pK_a = -\lg 1.8 \cdot 10^{-4} = 4 - \lg 1.8 = 4 - 0.25 = 3.75;$$

$$pH = \frac{1}{2}(pK_a - \lg c_a)$$

$$pH = \frac{1}{2}(3.75 - \lg 8 \cdot 10^{-2}) = \frac{1}{2}(5.75 - \lg 8) = \frac{1}{2}(5.75 - 0.9) = \frac{1}{2} \cdot 4.85 = 2.425$$

**Օրինակ 3.** Յաշվել  $5.4\%$  ցիանաջրածնական թթվի լուծույթի  $pH$ -ը,

ընդունելով լուծույթի խտությունը հավասար  $1 - \text{ի}$   $K_a = 6.2 \cdot 10^{-10}$ :

Լուծում: Թթվի մոլյար կոնցենտրացիան՝  $C_a$ ,

$$n_{\text{HCN}} = \frac{5.4 \text{ q}}{27 \text{ q/MOL}} = 0.2 \text{ MOL}$$

$$C_a = \frac{m}{M \cdot V_L - \rho} = \frac{5.4 \text{ q}}{27 \text{ q/MOL} \cdot 0.1 \text{ L}} = 2 \text{ MOL/L}$$

Քանի որ լուծույթի  $\rho = 1 \text{ g/mL}$ , ապա  $V_{1-\rho} = 100 \text{ mL} = 0.1 \text{ L}$ :

$$pK_a = -\lg 6.2 \cdot 10^{-10} = 10 - \lg 6.2 = 10 - 0.79 = 9.21;$$

$$pH = \frac{1}{2}(pK_a - \lg c_a) = \frac{1}{2}(9.21 - \lg 2) = \frac{1}{2}(9.21 - 0.3) = \frac{1}{2} \cdot 8.91 = 4.445$$

**Օրինակ 4.** Որոշել ամոնիումի հիդրօքսիդի զանգվածային բաժինը (%),

եթե լուծույթի  $pH = 11$ ,  $K_b = 1.8 \cdot 10^{-5}$ ,  $\rho = 1 \text{ g/mL}$ :

Լուծում:  $pK_b = -\lg 1.8 \cdot 10^{-5} = 4.75$ ;  $pH = 11$ ;  $p\text{OH} = 14 - 11 = 3$

$$\text{pOH} = \frac{1}{2}(\text{pK}_b - \lg C_b); \quad 3 = \frac{1}{2}(4.75 - \lg C_b); \quad 6 = 4.75 - \lg C_b;$$

$$\lg C_b = -1.25 = \bar{2}.75; \quad C_b = \text{ant} \lg \bar{2}.75 = 5.6 \cdot 10^{-2};$$

Այսպիսով՝  $C_b = 5.6 \cdot 10^{-2} = 0.056$  Ս: 1000 գ լ-թ = 1000 մլ լ-թ, հետևաբար 100 գ լուծույթում պարունակվում է 0.0056 մոլ, որը կազմում է.

$0.0056 \text{ мол} \cdot 35 \text{ գ/մոլ} = 0.196 \text{ գ}, \quad \text{այսինքն } 0.196 \% \text{ լուծույթ:}$

### 6.1.3. Լաբորատոր աշխատանք

**Փորձ. Թթվաների և հիմքերի լուծույթների pH -ի որոշում:** Տարբեր նյութերի լուծույթների pH -ը մոտավոր ճշտությամբ կարելի է որոշել ունիվերսալ ինդիկատորային թղթի միջոցով: Ունիվերսալ ինդիկատորային թղթի հետ տրվում է նաև pH -ի ցուցնակ 0 – 14 սահմաններում: pH -ի յուրաքանչյուր արժեքին (ամբողջական թվով) համապատասխանում է ինդիկատորային թղթի որոշակի գունավորում: Լուծույթի pH -ը որոշելու համար այդ լուծույթից ապակե ծողիկով կաթեցնում են ինդիկատորային թղթի վրա: Գունավորման ցուցնակով որոշում են pH -ի արժեքը:

**Փորձի ընթացքը:** Պատրաստել 0.01 Ս HCl, 0.01 Ս NaOH, 0.001 Ս CH<sub>3</sub>COOH և 0.001 Ս NH<sub>4</sub>OH լուծույթներ և որոշել այդ լուծույթների pH -ը (կարելի է օգտվել նախօրոք պատրաստված լուծույթներից): Տվյալները գրանցել այդուսակում:

Լուծույթ	pH -ի արժեքը	Լուծույթ	pH -ի արժեքը
0.01 Ս HCl		0.001 Ս CH <sub>3</sub> COOH	
0.01 Ս NaOH		0.001 Ս NH <sub>4</sub> OH	

Ստացված տվյալների հիման վրա կատարել եզրակացություններ:

### 6.2. Աղերի հիդրոլիզ

Ուժեղ թթվից և ուժեղ հիմքից առաջացած աղերի (NaCl, K<sub>2</sub>SO<sub>4</sub>, NaNO<sub>3</sub> և այլն) ջրային լուծույթները ունեն չեզոք ռեակցիա: Թույլ է եկտրոլիտից առաջացած աղի ջրային լուծույթն ունի թթվային կամ հիմնային ռեակցիա: Օրինակ, նատրիումի ացետատի լուծույթը ունի հիմնային, իսկ ամոնիումի թլրիդի լուծույթը՝ թթվային ռեակցիա: Պատճառը աղերի հիդրոլիզն է: **Աղի հիդրոլիզ է կոչվում աղի իոնների փոխազդեցությունը ջրի մոլեկուլների հետ, որի արդյունքում առաջանում է թույլ էլեկտրոլիզ:**

Տարբերում են հիդրոլիզի մի քանի դեպք:

**1. հիդրոլիզ ըստ անիոնի,** այսինքն թույլ թթվից և ուժեղ հիմքից առաջացած աղի հիդրոլիզ: Զննարկենք նատրիումի ացետատի օրինակով՝



Ացետատ իոնը միացնելով ջրի պրոտոնը, առաջացնում է քացախաթորու (թույլ էլեկտրոլիտ), իսկ  $\text{OH}^-$  իոնը մնում է ազատ, քանի որ  $\text{NaOH}$  ուժեղ էլեկտրոլիտ է և դիսուլվում է լրիվ։ Այսպիսով,  $\text{Na}^+$  իոնը հիդրոլիզին չի մասնակցում և հիդրոլիզի հավասարումը արտահայտվում է՝



Միջավայրի ռեակցիան հիմնային է: Յիդրոլիզը բնութագրվում է հիդրոլիզի հաստատունով՝  $K_{\text{հիդ.}}: \text{Արտածենք } K_{\text{հիդ.}}: (6.14) -ից հետևում է, որ համակարգի հավասարակշռության հաստատունը՝$

$$K_{\text{հազ.}} = \frac{[\text{CH}_3\text{COOH}][\text{OH}^-]}{[\text{CH}_3\text{COO}^-][\text{H}_2\text{O}]}$$

Քանի որ ջրի կոնցենտրացիան լուծույթում անհամեմատ մեծ է աղի հիդրոլիզին մասնակցած ջրի քանակից, ապա անտեսելով փոխազդեցության մեջ մտած ջրի քանակությունը, կարելի է ընդունել  $[\text{H}_2\text{O}] = \text{const}$ , այդ դեպքում՝  $K_{\text{հազ.}} [\text{H}_2\text{O}]$  արտադրյալը ևս ներկայացնում է հաստատուն մեջություն և կոչվում է հիդրոլիզի հաստատուն՝

$$K_{\text{հիդ.}} = K_{\text{հազ.}} [\text{H}_2\text{O}] \quad \text{որտեղից}$$

$$K_{\text{հիդ.}} = \frac{[\text{CH}_3\text{COOH}][\text{OH}^-]}{[\text{CH}_3\text{COO}^-]} \quad (6.15)$$

$$\text{Դայտնի է, որ } K_w = [\text{H}^+][\text{OH}^-], \text{ որտեղից : } [\text{OH}^-] = \frac{K_w}{[\text{H}^+]}$$

Տեղադրենք (6.15) հավասարման մեջ՝

$$K_{\text{հիդ.}} = \frac{[\text{CH}_3\text{COOH}]K_w}{[\text{CH}_3\text{COO}^-][\text{H}^+]} = \frac{K_w}{K_a} \quad (6.16)$$

որտեղ՝  $K_a$  քացախաթթվի դիսուլվացիան հաստատունն է: (6.16) հավասարումից հետևում է՝ որքան փոքր է  $K_a$ -ն, այսինքն որքան թույլ է հիդրոլիզի հետևանքով առաջացած թթուն, այնքան մեծ է  $K_{\text{հիդ.}}$  այսինքն խորն է ընթանում հիդրոլիզը: Ըստ  $K_a$  և  $K_w$  արժեքների կարելի է որոշել  $K_{\text{հիդ.}}$ :

**Օրինակ.** քացախաթթվի  $K_a = 1.86 \cdot 10^{-5}$   $25^\circ\text{C}$ , հետևաբար ացետատի

$$K_{\text{հիդ.}} = \frac{K_w}{K_a} = \frac{10^{-14}}{1.86 \cdot 10^{-5}} = 5.37 \cdot 10^{-10}$$

**Լուծույթի  $\text{pH}-ի$  հաշվարկ:** Արտածենք  $\text{pH}$  -ի բանաձևը: (6.15) հավասարումից հետևում է, որ  $\text{CH}_3\text{COOH}$  և  $\text{OH}^-$  առաջանում են համարժեք քանակներով՝  $[\text{OH}^-] = [\text{CH}_3\text{COOH}]$ , հետևաբար՝

$$K_{\text{հիդ.}} = \frac{[\text{OH}^-]^2}{[\text{CH}_3\text{COO}^-]}$$

$[\text{CH}_3\text{COO}^-]$  նշանակելով  $C_{\text{աղ}}$  (աղի մոլար կոնցենտրացիա) կունենանք՝

$$K_{\text{հիդր.}} = \frac{[\text{OH}^-]^2}{C_{\text{աղ}}}$$

$$\text{որտեղից՝ } [\text{OH}^-] = \sqrt{K_{\text{հիդր.}} \cdot C_{\text{աղ}}}$$

(6.16) բանաձևում տեղադրելով  $K_{\text{հիդր.}}$  արժեքը կստանանք՝

$$[\text{OH}^-] = \sqrt{\frac{K_w}{K_a} \cdot C_{\text{աղ}}} , \quad \text{որտեղից՝}$$

$$\text{pOH} = \frac{1}{2}(-\lg K_w + \lg K_a - \lg C_{\text{աղ}}) = \frac{1}{2}(pK_w - pK_a - \lg C_{\text{աղ}})$$

$$\text{pH} = pK_w - \frac{1}{2}(pK_w - pK_a - \lg C_{\text{աղ}}) = \frac{1}{2}(pK_w + pK_a + \lg C_{\text{աղ}}) \quad (6.17)$$

**Խնդիր:** Որոշել 0.1 M  $\text{CH}_3\text{COONa}$  լուծույթի pH -ը, եթե  $K_a = 1.86 \cdot 10^{-5}$ :

**Լուծում:**  $pK_a = -\lg 1.86 \cdot 10^{-5} = 4.75$ : Ըստ (6.17) հավասարման՝

$$\text{pH} = \frac{1}{2}(14 + 4.75 + \lg 10^{-1}) = \frac{1}{2}(18.75 - 1) = \frac{17.75}{2} = 8.875$$

**2. Հիդրոլիզ ըստ կատիոնի** - թույլ հիմքից և ուժեղ թթվից առաջա-  
ցած աղի հիդրոլիզ: Քննարկենք ամոնիումի քլորիդի օրինակով՝



Զրի  $\text{OH}^-$  իոնները կապվում են  $\text{NH}_4^+$  իոններին գոյացնելով թույլ էլեկտրոլիտ, իսկ ազատ  $\text{H}^+$  իոնները լուծույթին հաղորդում են թթվային ռեակցիա՝



Այս դեպքում՝

$$K_{\text{հիդր.}} = \frac{[\text{NH}_4\text{OH}][\text{H}^+]}{[\text{NH}_4^+]} = \frac{[\text{NH}_4\text{OH}]K_w}{[\text{NH}_4^+][\text{OH}^-]} = \frac{K_w}{K_b} \quad (6.18)$$

Որտեղ  $K_b$  թույլ հիմքի դիսուցման հաստատումն է: Որքան փոքր է  $K_b$ , այսինքն որքան թույլ է հիդրոլիզի հետևանքով գոյացած հիմքը, այնքան մեծ է  $K_{\text{հիդր.}}$  և աղի հիդրոլիզը ընթանում է ավելի խորը: (6.16) և (6.18) հավասարումներից հետևում է, որ  $K_{\text{հիդր.}}$  կախված չէ աղի կոնցենտրացիայից:

**Լուծույթի pH -ի հաշվարկ:** Ըստ հայտնի հավասարումների.

$$K_{\text{հիդր.}} = \frac{[\text{NH}_4\text{OH}][\text{H}^+]}{[\text{NH}_4^+]} = \frac{[\text{H}^+]^2}{C_{\text{աղ}}}, \quad [\text{H}^+] = \sqrt{K_{\text{հիդր.}} \cdot C_{\text{աղ}}} = \sqrt{\frac{K_w}{K_b} \cdot C_{\text{աղ}}},$$


$$\text{pH} = \frac{1}{2}(pK_w - pK_b - \lg C_{\text{աղ}}) \quad (6.19)$$

**Խնդիր:** Որոշել 0.1 M  $\text{NH}_4\text{Cl}$  լուծույթի pH -ը, եթե  $K_b = 1.8 \cdot 10^{-5}$ :

**Լուծում:**  $pK_b = -\lg 1.8 \cdot 10^{-5} = 4.75$

$$\begin{aligned} \text{pH} &= \frac{1}{2} (\text{pK}_w - \text{pK}_b - \lg C_{\text{աղ}}) = \frac{1}{2} (14 - 4.75 - \lg 10^{-1}) = \\ &= \frac{1}{2} (14 - 4.75 + 1) = \frac{10.25}{2} = 5.125 \end{aligned}$$

**3. Թույլ հիմքից և թույլ թթվից առաջացած աղերը հիդրոլիզի են ենթարկվում միաժամանակ ըստ կատիոնի և ըստ անիոնի, օրինակ՝ ամոնիումի ացետատը.**



Միաժամանակ կապվում են, ինչպես  $\text{H}^+$ , այնպես էլ  $\text{OH}^-$  իոնները առաջացնելով երկու թույլ էլեկտրոլիտ՝  $\text{CH}_3\text{COOH}$  և  $\text{NH}_4\text{OH}$ :

$$K_{\text{հիդր.}} = \frac{[\text{CH}_3\text{COOH}][\text{NH}_4\text{OH}]}{[\text{CH}_3\text{COO}^-][\text{NH}_4^+]}$$

Բազմապատկենք համարիչը և հայտարարը ջրի իոնական արտադրյալով.

$$K_{\text{հիդր.}} = \frac{[\text{CH}_3\text{COOH}][\text{NH}_4\text{OH}][\text{H}^+][\text{OH}^-]}{[\text{CH}_3\text{COO}^-][\text{NH}_4^+][\text{H}^+][\text{OH}^-]}$$


որտեղից՝

$$K_{\text{հիդր.}} = \frac{K_w}{K_a \cdot K_b} \quad (6.20)$$

Այս դեպքում միջավայրի  $\text{pH}$ -ը կախված է թույլ թթվի և թույլ հիմքի հարաբերական ուժից: Եթե թթվի և հիմքի դիտուման հաստատումները հավասար են, ապա միջավայրը կլինի չեղոք: Եթե  $K_a > K_b$ , ապա միջավայրը կլինի թույլ թթվային և հակառակը՝ եթե  $K_b > K_a$ , միջավայրը կլինի թույլ հիմնային:  $\text{CH}_3\text{COONH}_4$  աղի լուծույթի  $\text{pH} \approx 7$ , քանի որ


$$K_{\text{CH}_3\text{COOH}} = 1.86 \cdot 10^{-5}, \quad K_{\text{NH}_4\text{OH}} = 1.8 \cdot 10^{-5}$$

**4. Բազմահիմն թույլ թթումներից առաջացած աղերը հիդրոլիզվում են փուլերով, ընդունակություն ունենալով առաջին փուլի հիդրոլիզի վերջնանյութերը հանդիսանում են թթու աղեր: Օրինակ՝  $\text{K}_2\text{CO}_3$  աղի հիդրոլիզը առաջին փուլով՝**



$$K_1 \text{ հիդր.} = \frac{K_w}{K_{\text{HCO}_3^-}} = \frac{10^{-14}}{4.7 \cdot 10^{-11}} = 2.1 \cdot 10^{-4}$$



Հաջորդ փուլը կընթանա անհամեմատ դժվար՝



$$K_2 \text{ հիդր.} = \frac{K_w}{K_{\text{H}_2\text{CO}_3}} = \frac{10^{-14}}{4.9 \cdot 10^{-7}} = 2.04 \cdot 10^{-8}$$

Այսպիսով,  $K_1$  հիդր. >  $K_2$  հիդր: Պատճառն այն է, որ  $\text{HCO}_3^-$  իոնները դիսուլվում են ավելի դժվար, քան  $\text{H}_2\text{CO}_3$  մոլեկուլները՝  $K_{\text{HCO}_3^-} < K_{\text{H}_2\text{CO}_3}$  և հիդրոլիզի ընթացքում առաջին հերթին առաջանում է թրու աղ՝  $\text{KHCO}_3$ :

Նույն ձևով է ընթանում բազմաթիվ թրու հիմքերից առաջացած աղերի հիդրոլիզը: Այդ դեպքում առաջին փուլերի հիդրոլիզի վերջնանցութերը հիմնային աղերն են:  $\text{O}_2\text{H}_2\text{O}_2$ ,  $\text{FeCl}_2$  աղի հիդրոլիզի փուլերն են:



Ընդ որում  $K_1$  հիդր >  $K_2$  հիդր, քանի որ  $K_{\text{FeOH}^+} < K_{\text{Fe(OH)}_2}$ :

**Հիդրոլիզի աստիճան (h):** Քանակապես հիդրոլիզը բնութագրվում է նաև հիդրոլիզի աստիճանով, որը ցույց է տալիս հիդրոլիզի ենթարկված աղի մոլերի թվի հարաբերությունը աղի մոլերի ընդհանուր թվին՝

$$h = \frac{C_{\text{հիդր.}}}{C_{\text{աղ}}} \quad (6.21)$$

Օստվալդի նոսրացման օրենքին համանման  $K_{\text{հիդր.}} = \frac{h^2 \cdot C_{\text{աղ}}}{1-h}$ : Քանի

որ  $h \ll 1$ , ապա  $K_{\text{հիդր.}}$  և  $h$ -ի կապը արտահայտվում է ավելի պարզ առընչությամբ՝

$$K_{\text{հիդր.}} = h^2 \cdot C_{\text{աղ}} ; \quad h = \sqrt{\frac{K_{\text{հիդր.}}}{C_{\text{աղ}}}} \quad (6.22)$$

Յավասարումից հետևում է՝

1.  $h$  և  $C_{\text{աղ}}$  միջև կա հակադարձ համեմատական կապ, լուծույթը նոսրացնելիս հիդրոլիզի աստիճանը մեծանում է:


2. Ինչպես  $K_{\text{հիդր.}}$ , այնպես էլ  $h$  -ը ցույց են տալիս հիդրոլիզի ընթացքի խորությունը և կախված են ջերմաստիճանից: Քանի որ հիդրոլիզը հանդիսանում է չեղոքացման ռեակցիայի (էկզորերմ) հակառակ պրոցեսը, ապա այն էնդոթերմ պրոցես է: Լուծույթի ջերմաստիճանը բարձրացնելիս հավասարակշռությունը տեղաշարժվում է դեպի աջ, հիդրոլիզի աստիճանը մեծանում է:

3. Հիդրոլիզը դարձելի պրոցես է, հետևաբար հիդրոլիզի աստիճանը կարելի է մեծացնել կապելով լուծույթի  $\text{H}^+$  կամ  $\text{OH}^-$  իոնները (Լէ-Շատեյեի սկզբունք):  $\text{O}_2\text{H}_2\text{O}_2$



ա. ուժեղ թրու ավելացնելիս հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի աջ, հիդրոլիզի աստիճանը կմեծանա,

բ. ուժեղ հիմք ավելացնելիս հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի ձախ, հիդրոլիզի աստիճանը կփոքրանա:




ա. ուժեղ թրու ավելացնելիս հավասարակշռությունը շեղվում է ձախ


բ. ուժեղ հիմք ավելացնելիս հավասարակշռությունը շեղվում է աջ:

### 6.2.1. Կենսաօրգանական միացությունների հիդրոլիզի դերը կենսագործունեության պրոցեսներում

Կենսաքիմիական պրոցեսներում հիդրոլիզն ունի կարևոր դեր: Օրինակ, ֆերմենտատիվ հիդրոլիզի շնորհիվ սննդի երեք հիմնական բաղադրիչները՝ ճարպերը, սպիտակուցները, ածխաջրերը աղեստամոքսային տրակտում ջրով քայլապատճեն են ավելի փոքր հատվածների: Ընդհանուր տեսքով դա կարելի է ներկայացնել՝




**ԱԵՖ -ի հիդրոլիզը:** ԱԵՖ -ը հանդիսանում է մեծ թվով կենսաբանական պրոցեսների (սպիտակուցների քիոսինթեզ, իոնների տրամապորտ, մկանների կծկում և այլն) էներգիայի առյուլը: Էներգիան անջատվում է ԱԵՖ-ի հիդրոլիզից:  $\text{pH} \geq 7.0$  պայմաններում ԱԵՖ-ը գոյություն ունի ԱԵՖ<sup>4-</sup> անիոնի ձևով և հիդրոլիզի պրոցեսը ներկայացնում է թթվա-հիմնային հավասարակշռություն, որտեղ՝  $\text{ԱԿՖ}^3$ -աղենոզինկրկնակիֆոսֆատի անիոնն է, ԱԵՖ<sup>4-</sup>-աղենոզինենֆոսֆատի անիոնն է:




Հիդրոլիզը կարող է ընթանալ նաև մինչև աղենոզիննեկֆոսֆատ (ԱՍՖ) և աղենոզին:

Այն միացությունները, որոնց հիդրոլիզի արդյունքում անջատվում է զգալի քանակությամբ էներգիա, կոչվում են մակրոէրգ միացություններ: Մակրոէրգ միացություններ են ԱԵՖ, ԱԿՖ, ֆոսֆոենոլփիրուվատը ( $\Delta G^0 = -61.9 \text{ կՋ/մոլ}$ ), կրեատինֆոսֆատը ( $\Delta G^0 = -43.1 \text{ կՋ/մոլ}$ ) և այլ միացություններ: Չնայած նրան, որ որոշ ֆոսֆորօգանական միացությունների համեմատությամբ ԱԵՖ-ի հիդրոլիզի  $\Delta G^0$  ունի միշտն արժեք, ԱԵՖը կենդանի օրգանիզմների հիմնական էներգետիկ «տարադրամն» է: Դա բացատրվում է նրանով, որ բջիջներում էներգիա անջատող և կլանող

ռեակցիաների միջև ԱԵՖ գործում է որպես էներգիայի միջանկյալ փոխադրիչ: Գյուկողի օքսիդացման արդյունքում բջիջներում անջատվում է մեծ քանակությամբ էներգիա: Այդ էներգիայի զգալի մասը կուտակվում է շնորհիվ ԱԵՖ-ի սինթեզի:



Իր հերթին, ԱԵՖ փոխանցում է ծայրային ֆոսֆատային խումբը ցածր էներգիայով մի այլ միացության, հարստացնելով նրան էներգիայով:



Այսպիսով, հիդրոլիզի  $\Delta G$ -ի միջանկյալ արժեքը ունենալու շնորհիվ ԱԵՖ բջիջներում էներգիայի ամենակարևոր փոխադրիչն է և ապահովում է էներգիայի շրջապտույթը բջիջներում:

### 6.2.2. Լաբորատոր աշխատանք

#### Աղերի հիդրոլիզ

##### Փորձ 1. Տարբեր աղերի լուծույթների միջավայրի ռեակցիան

Դինգ փորձանորի մեջ լցնել մեկական մլ ջուր և մեկական կաթիլ լակոնուս: Փորձանորներից չորսին ավելացնել 1 - 2 բյուրեղ հետևյալ աղերից՝  $\text{NaHCO}_3$ ,  $\text{ZnCl}_2$ ,  $\text{CH}_3\text{COONH}_4$ ,  $\text{NaNO}_3$ : Դինգերորդ փորձանորը թողնել համեմատելու համար: Որ աղերն են ենթարկվել հիդրոլիզի: Ի՞նչ ռեակցիա ունի լուծույթների միջավայրը: Ի՞նչու ամոնիումի ացետատի լուծույթը չփոխեց ինդիկատորի գույնը: Գրել աղերի հիդրոլիզի ռեակցիաների նույնության և իոնական հավասարումները:

##### Փորձ 2. Դինգերի աստիճան

Փորձանորներից մեկի մեջ լցնել 5 - 6 կաթիլ նատրիումի կարբոնատի 0.1 Մ լուծույթ, իսկ մյուսի մեջ նույնքան նատրիումի սոլֆիտի 0.1 Մ լուծույթ: Յուրաքանչյուրին ավելացնել 1- 2 կաթիլ ֆենոլֆտակեին: Ո՞ր աղի լուծույթում է գումավորումն ավելի ինտենսիվ և ինչու՞։ Գրել աղերի հիդրոլիզի իոնական հավասարումները: Դաշվել հիդրոլիզի հաստատունը և աստիճանը: Որ աղի հիդրոլիզի աստիճանն է ավելի մեծ և ինչու՞։ Լրացնել աղյուսակը՝

աղ	$\text{K}_{\text{հիդ}}$	հ	$(\text{OH}^-)$	pH
$\text{Na}_2\text{CO}_3$				
$\text{Na}_2\text{SO}_3$				

##### Փորձ 3. Զերմաստիճանի ազդեցությունը հիդրոլիզի աստիճանի վրա:

Նատրիումի ացետատի լուծույթին ավելացնել 1 – 2 կաթիլ ֆենոլֆտակեին: Նշել լուծույթի թույլ գումավորումը (վարդագույն): Գրել հիդրոլիզի իոնական հավասարումը: Փորձանորի պարունակությունը տաքացնել մինչև եռալը: Ինչպես փոխական գույնի ինտենսիվությունը: Ի՞նչ եղանակացության կարելի է հանգել հիդրոլիզի հավասարակշռության տեղաշարժի և լուծույթում  $\text{OH}^-$  իոնների

կոնցենտրացիայի փոփոխության մասին: Փորձանոթի պարունակությունը սառեցնել (ծորակի ջրով): Նշել լուծույթի գույնի փոփոխությունը և բացատրել պատճառը: Եզրակացություն անել հիդրոլիզի աստիճանի վրա ջերմաստիճանի ազդեցության մասին:

## **7. Պրոտոլիտիկ կամ թթվահիմնային բուֆերային համակարգեր**

Օրգանիզմներն օժտված են նույր մեխանիզմներով, նրանում ընթացող ֆիզիոլոգիական և կենսաքիմիական պրոցեսների ներդաշնակնան ու ներքին միջավայրի հատկությունները (ρΗ -ի ամենաբարենպաստ արժեք, տարբեր նյութերի պարունակության որոշակի մակարդակ, ջերմաստիճան, արյան ճնշում և այլն) հաստատուն պահելու համար: Այդ ներդաշնակումը (կոռորդինացում) անվանում են հոմեոստազ (հուն. «հոμեո» - նման, «ստագիս» - հաստատունություն), որն իրականացվում է հումորալ կարգավորման ճանապարհով՝ արյան, հյուսվածքային հեղուկի, ավշի և այլն միջոցով կենսաբանորեն ակտիվ նյութերի (ֆերմենտներ, հորմոններ) օգնությամբ և նյարդային կարգավորող մեխանիզմների մասնակցությամբ (նյարդահորովալ կարգավորում): Օրգանիզմի հատկությունը հաստատուն պահելու կենսաբանական հեղուկների, հյուսվածքների և օրգանների ρΗ-ը, կոչվում է թթվահիմնային հոմեոստազ:

Զրածնի իոնների կոնցենտրացիայի հաստատունությունը մարդու օրգանիզմի համար ունի առաջնակարգ նշանակություն, քանի որ՝

1. H<sup>+</sup> իոնները բազմաթիվ կենսաքիմիական պրոցեսների համար ունեն կատալիտիկ ազդեցություն:

2. Ֆերմենտներն ի հայտ են բերում կենսաբանական ակտիվություն միայն ρΗ -ի խստ որոշակի արժեքների տիրություն:

3. H<sup>+</sup> կոնցենտրացիայի փոփոխությունն արյան և միջիյուսվածքային հեղուկում բերում է օսմոտիկ ճնշման շոշափելի փոփոխության: Արյան ρΗ -ի տեղաշարժը նրա նորմալ (7.36) արժեքից 0.3 միավորով, առաջ է բերում կրոնատող վիճակ, իսկ 0.4 միավորով՝ բերում է մահվան:

ρΗ -ի հաստատունությունը օրգանիզմում ապահովվում է մի շարք ֆիզիոլոգիական և ֆիզիոքիմիական մեխանիզմների օգնությամբ, որոնց մեջ իրենց ուրույն և կարևոր տեղն ունեն բուֆերային լուծույթները:

**Բուֆերային կոչվում են այն լուծույթները, որոնք, մոտավորապես հաստատուն են պահում միջավայրի ρΗ -ը, ինչպես սահմանափակ քանակով ուժեղ թթու կամ ուժեղ հիմք ավելացնելիս, այնպես էլ չափավոր նորացնելիս:**

### **7.1. Թթվահիմնային բուֆերային համակարգերի**

#### **դասակարգումը**

Բուֆերային համակարգերը կազմված են երկու բաղադրամասից և կարող են լինել չորս տեսակի.


1. Թույլ թթվից և նրա աղից, որն առաջացել է ուժեղ հիմքից (գուգորդված հիմք),

ա) CH<sub>3</sub>COOH/CH<sub>3</sub>COONa - ացետատային բուֆեր,

- $\text{CH}_3\text{COOH}/\text{CH}_3\text{COO}^-$ ;  $\text{pH} = 3.75 - 5.75$
- բ)  $\text{H}_2\text{CO}_3/\text{NaHCO}_3$  - բիկարբոնատային բուժեր (հիդրոկարբոնատային),  
 $\text{H}_2\text{CO}_3/\text{HCO}_3^-$ ;  $\text{pH} = 5.4 - 7.4$
- գ)  $\text{HHb}/\text{NaHb}$  - հեմոգլոբինային բուժեր,  
 $\text{HHb}/\text{Hb}^-$ ;  $\text{pH} = 7.2 - 9.2$
- դ)  $\text{HHbO}_2/\text{NaHbO}_2$  - օքսիհեմոգլոբինային բուժեր,  
 $\text{HHbO}_2/\text{HbO}_2^-$ ;  $\text{pH} = 5.95 - 7.95$
2. Թույլ հիմքից և նրա աղից, որն առաջացել է ուժեղ թթվից (զուգորդված թթու)։
- ա)  $\text{NH}_3/\text{NH}_4\text{Cl}$  - ամոնիակային բուժեր,  
 $\text{NH}_3/\text{NH}_4^+$ ;  $\text{pH} = 8.2 - 10.2$
3. Երկու աղերի անհոններից.
- ա) Կարբոնատային բուժեր.  
 $\text{NaHCO}_3/\text{Na}_2\text{CO}_3$ ;  $\text{HCO}_3^-/\text{CO}_3^{2-}$ ;  $\text{pH} = 9.3 - 11.3$
- բ) Ֆուֆատային բուժեր.  
 $\text{NaH}_2\text{PO}_4/\text{Na}_2\text{HPO}_4$ ;  $\text{H}_2\text{PO}_4^-/\text{HPO}_4^{2-}$ ;  $\text{pH} = 6.2 - 8.2$
4. սպիտակուցային բուժեր (Prt «protein» - սպիտակուց).  
 $\text{NH}_2\text{PrtCOO}^-/\text{NH}_3\text{PrtCOO}^-$  կամ  $^+\text{NH}_3\text{PrtCOOH}/^+\text{NH}_3\text{PrtCOO}^-$

## 7.2. Բուժերների ազդեցության մեխանիզմը

Բուժերները երկրադարձիչային համակարգեր են, որոնցում համատեղված են թույլ էլեկտրոլիտի դիսուլվացիա և աղի հիդրոլիզը։ Բուժերային ազդեցությունը պայմանավորված է այս երկու հավասարակշռությունների համատեղումով։ Օրինակ՝



Միևնույն արտաքին գործոնի ազդեցության դեպքում ( $\text{H}_3\text{O}^+$ -ի կամ  $\text{OH}^-$ -ի ավելացում), այս երկու ռեակցիաների հավասարակշռությունների տեղաշարժի ուղղությունները հակադիր են։ Ուժեղ թթու ավելացնելիս ընկճպում է թթվի դիսուլվացիա և ուժեղանում՝ աղի հիդրոլիզը։

Ուժեղ թթու փոխազդելով բուժերի հիմնային բաղադրամասի ( $\text{CH}_3\text{COONa}$ ) հետ՝ փոխարկվում է միջավայրում առկա համարժեք քանակով թույլ թթվի, որի կոնցենտրացիայի մեծացումը բերում է դիսուլվացիան աստիճանի փոքրացման (Օստվալդի նոսրացման օրենք)։ Արդյունքում  $\text{pH}$ -ի տեղաշարժը դեպի թթվային մարզ չնշին է։ Ուժեղ հիմք ավելացնելիս ուժեղանում է թթվի դիսուլվացիա և ճնշվում հիդրոլիզը։ Ուժեղ հիմքը փոխազդելով բուժերի թթվային բաղադրամասի ( $\text{CH}_3\text{COOH}$ ) հետ փոխարկվում է միջավայրում առկա համարժեք քանակով աղի, որի կոնցենտրացիայի աճը նույնպես ընկճում է հիդրոլիզը։  $\text{CH}_3\text{COOH}$ -ի դիսուլվացիան աստիճանի մեծացման և  $\text{CH}_3\text{COONa}$  –ի հիդրոլիզի ընկճման արդյունքում  $\text{pH}$ -ի տեղաշարժը դեպի հիմնային մարզ չնշին է։

### 7.3. Բուֆերային համակարգերի pH -ը

Յուրաքանչյուր բուֆերային համակարգ բնութագրվում է pH -ի որոշակի արժեքով, որն էլ բուֆերային համակարգը ձգտում է հաստատում պահել թթու կամ հիմք ավելացնելիս: Արտածենք pH -ի բանաձևը ացետատային բուֆերային համակարգի օրինակով.



Համաձայն զանգվածների ներգործման օրենքի՝

$$K_a = \frac{[\text{H}^+][\text{CH}_3\text{COO}^-]}{[\text{CH}_3\text{COOH}]} \quad (7.25)$$

$$[\text{H}^+] = K_a \frac{[\text{CH}_3\text{COOH}]}{[\text{CH}_3\text{COO}^-]} \quad (7.26)$$

Թույլ դիսուլված քացախաթթվին ( $K_a = 1.86 \cdot 10^{-5}$ ) նրա աղճ ( $\text{CH}_3\text{COONa}$ ) ավելացնելիս տեղի է ունենում ընդհանուր անհոնի ( $\text{CH}_3\text{COO}^-$ ) կոնցենտրացիայի մեծացում, որից քացախաթթվի դիսուլված մասը մեծանում է և գործնականորեն կարելի է չդիսուլված քացախաթթվի կոնցենտրացիան ընդունել հավասար թթվի մոլյար կոնցենտրացիային և նշանակել  $C_{\text{թթ}}$ : Քանի որ աղճ լրիվ է դիսուլվում, անհոնների կոնցենտրացիան կարելի է ընդունել հավասար աղի կոնցենտրացիային, անտեսելով անհոնների այն փոքր քանակությունը, որն առաջանում է թթվի դիսուլվումից՝  $[\text{CH}_3\text{COO}^-] = C_{\omega\eta}$  (7.26) հավասարումը կընդունի հետևյալ տեսքը՝

$$[\text{H}^+] = K_a \frac{C_{\text{թթ}}}{C_{\omega\eta}} \quad (7.27)$$

որտեղից

$$\text{pH} = \text{p}K_a - \lg \frac{C_{\text{թթ}}}{C_{\omega\eta}} \quad \text{կամ} \quad \text{pH} = \text{p}K_a + \lg \frac{[\text{գուգորդված հիմք}]}{[\text{թթ}]} \quad (7.28)$$

Քանի որ  $C_{\text{թթ}} = \text{Ն}_{\text{թթ}} \cdot V_{\text{թթ}}, C_{\omega\eta} = \text{Ն}_{\omega\eta} \cdot V_{\omega\eta}$ , հավասարումն ընդունում է հետևյալ տեսքը.

$$\text{pH} = \text{p}K_a - \lg \frac{\text{Ն}_{\text{թթ}} \cdot V_{\text{թթ}}}{\text{Ն}_{\omega\eta} \cdot V_{\omega\eta}} \quad (7.29)$$

(7.28.) հավասարումը հայտնի է որպես Հենդերսոն-Հասսելբախի հավասարում:

**Օրինակ 1.** Ինչպես կփոխվի մաքուր ջրի pH -ը, եթե նրա մեկ լիտրին ավելացվի 0.05 մոլ HCl:

**Լուծում:** Հայտնի է, որ մաքուր ջրում  $[\text{H}^+] = 10^{-7}$ , իսկ

$$\text{pH} = 7.05 \text{ մոլ HCl} \text{ ավելացնելիս } \text{pH} - \text{ը} \text{ փոխվում } \text{է} \text{ կտրուկ},$$

$$\text{քանի} \text{ որ} \text{ HCl} - \text{ը} \text{ ուժեղ} \text{ թթու} \text{ է} \text{ և} \alpha \approx 1, [\text{H}^+] = 5 \cdot 10^{-2};$$

$$\text{pH} = -\lg 5 + 2 = 1.3$$

Ինչպես տեսնում ենք  $\rho\text{H}$  -ը 7-ից դառնում է 1.3՝ փոխվում է 5.7 միավորով:

**Օրինակ 2.** Ինչպե՞ս կփոխվի դեցիմոյար (0.1 Ս) ացետատային բուֆերի  $\rho\text{H}$ -ի արժեքը, եթե նրա մեկ լիտրին ավելացվի 0.05 մոլ  $\text{HCl}$ :

**Լուծում:** Ըստ (7.28.) բանաձևի՝

$$\rho\text{H} = 4.75 - \lg \frac{0.1}{0.1} = 4.75$$

0.05 մոլ  $\text{HCl}$  ավելացնելիս՝  $[\text{CH}_3\text{COONa}]$  փոքրանում է 0.05 մոլով, իսկ  $[\text{CH}_3\text{COOH}]$  մեծանում: Հետևաբար՝

$$\rho\text{H} = 4.75 - \lg \frac{0.1 + 0.05}{0.1 - 0.05} = 4.75 - \lg 3 = 4.75 - 0.47 = 4.28$$

Դիմնային բուֆերային համակարգի  $\rho\text{H}$  -ը դուրս բերենք ամոնիակային բուֆերի օրինակով.



$$K_b = \frac{[\text{NH}_4^+][\text{OH}^-]}{[\text{NH}_3]}, \quad [\text{OH}^-] = K_b \frac{[\text{NH}_3]}{[\text{NH}_4^+]}$$

$$\rho\text{OH} = pK_b - \lg \frac{C_{\text{հիմ}}}{C_{\text{աղ}}}$$

$$\rho\text{H} = 14 - pK_b + \lg \frac{C_{\text{հիմ}}}{C_{\text{աղ}}} \quad (7.30)$$

(7.28) և (7.30) հավասարումներից երևում է, որ բուֆերային համակարգի  $\rho\text{H}$  -ը կախված է թթվի կամ հիմքի դիսուցման հաստատումից և բուֆերային համակարգում բաղադրամասերի կոնցենտրացիաների հարաբերությունից, որի պատճառով էլ չափավոր նոսրացումը (10-20 անգամ) բուֆերային համակարգի  $\rho\text{H}$  -ի վրա չի ազդում, քանի որ նոսրացնելիս բաղադրամասերի կոնցենտրացիաների հարաբերությունը մնում է նույնը:  $\rho\text{H}$  -ի որոշակի արժեքով բուֆերներ պատրաստելու համար պետք է օգտագործել համապատասխան դիսուցման հաստատումով թթու կամ հիմք, ինչպես նաև ընտրել բաղադրամասերի կոնցենտրացիայի որոշակի հարաբերություն:

**Օրինակ 3.** Յաշվել ամոնիակային բուֆերի լուծույթի  $\rho\text{H}$  -ը, եթե

$[\text{NH}_4\text{OH}] = [\text{NH}_4\text{Cl}] = 0.2$  մոլ/լ: Ինչպե՞ս կփոխվի  $\rho\text{H}$  -ը, եթե բուֆերի մեկ լիտրին ավելացվի 0.02 մոլ  $\text{HCl}$ ;  $K_b = 1.8 \cdot 10^{-5}$ :

$$\rho\text{H} = 14 - pK_b + \lg \frac{C_{\text{հիմ}}}{C_{\text{աղ}}}$$

$$\rho\text{H} = 14 - 4.73 = 9.27$$

0.02 մոլ  $\text{HCl}$  ավելացնելիս  $\rho\text{H}$  -ը կլինի՝

$$\rho\text{H} = 14 - pK_b + \lg \frac{0.2 - 0.02}{0.2 + 0.02} = 9.27 + \lg \frac{0.18}{0.22} = 9.27 - 0.1 = 9.17$$

pH -ի փոփոխությունը կլինի՝  $9.27 - 9.17 = 0.1$

#### 7.4. Բուֆերային տարրողություն

Բուֆերները անսահմանափակ չեն կարող դիմադրել ուժեղ էլեկտրոլիտի ազդեցությանը:

Բուֆերային տարրողությունը - ուժեղ թթվի կամ ուժեղ հիմքի համարժեքի մոլերի այն քանակն է, որը պետք է ավելացնել մեկ լիտր բուֆերին նրա pH -ը մեկ միավորով փոխելու համար.

$$B = \frac{C}{\Delta pH \cdot V_{\text{բուֆ.}}}$$

B - բուֆերային տարրողությունն է, C - ուժեղ հիմքի (թթվի) համարժեքի մոլերի թիվն է,  $\Delta pH$  -ը pH -ի փոփոխությունն է,  $V_{\text{բուֆ.}}$  -ը բուֆերային լուծույթի ծավալը:

$$B = C, \quad \text{եթե} \quad \Delta pH = 1, \quad V_{\text{բուֆ.}} = 1 \text{ L}$$

Բուֆերային տարրողությունը կախված է բուֆերի բաղադրամասերի կոնցենտրացիաներից և նրանց հարաբերությունից: Ավելի մեծ բուֆերային տարրողությամբ օժտված են խիտ բուֆերային համակարգերը, ինչպես նաև այն համակարգերը, որոնց  $\frac{[\text{թթու}]}{[\text{աղ}]} = 1$

Քննարկենք տարրեր կոնցենտրացիայով, բայց բաղադրամասերի նույն հարաբերությամբ երկու բուֆերային համակարգեր.

$$1) \quad \frac{[\text{թթու}]}{[\text{աղ}]} = \frac{10}{10} = 1 \quad 2) \quad \frac{100}{100} = 1$$

Յուրաքանչյուրին 5 h. մոլ թթու ավելացնելիս՝

$$1) \quad \frac{15}{5} = 3 \quad 2) \quad \frac{105}{95} = 1.1$$

Խիտ բուֆերային համակարգում փոփոխությունն ավելի փոքր է:

Քննարկենք երկու բուֆերային համակարգեր, բաղադրամասերի տարրեր հարաբերությամբ՝

$$1) \quad \frac{[\text{թթու}]}{[\text{աղ}]} = \frac{80}{20} = 4 \quad 2) \quad \frac{50}{50} = 1$$

Յուրաքանչյուրին 10 h. մոլ. թթու ավելացնելիս հարաբերությունը կփոխվի.

$$1) \quad \frac{90}{10} = 9 \quad 2) \quad \frac{60}{40} = 1.5$$

Որտեղ բաղադրամասերի հարաբերությունը հավասար է 1 -ի, փոփոխությունը ավելի փոքր է:

**Օրինակ 4.** Դաշվել 0.2 M ացետատային բուֆերի տարրողությունն ըստ հիմքի:  $pK_a = 4.75$ :

**Լուծում:** Տարողությունն ըստ հիմքի՝ հիմքի հ.մոլ.-երի թիվն է, որը պետք է ավելացնել տուրքած բուժերի մեկ լիտրին նրա ռH -ը 5.75 դարձնելու համար.

$$5.75 = 4.75 - \lg \frac{0.2-x}{0.2+x}; \quad \lg \frac{0.2+x}{0.2-x} = 1; \quad \frac{0.2+x}{0.2-x} = 10 \\ 0.2 + x = 2 - 10x, \quad 11x = 1.8 \quad x = 0.164, \quad B = 0.164 \text{ h.mol/L}$$



## 7.5. Արյան բուժերային համակարգեր

Մարդու օրգանիզմում օրեկան առաջանում է 20–30L 1 Ն ուժեղ թթվին համարժեք թթու, սակայն միջավայրի ռH -ը հաստատում է մնում շնորհիվ օրգանիզմի բուժերների: Արյան գլխավոր բուժերային համակարգերն են. սպիտակուցային, բիկարբոնատային, ֆոսֆատային և հեմոգլոբինային բուժերները:

**Սպիտակուցային բուժեր:** Քանի որ արյան պլազմայի սպիտակուց-ների կողելեկտրիկ կետը 4.9 – 6.3 նարզում է, իսկ պլազմայի ռH = 7.36, ապա սպիտակուցը գործում է իբրև հիմնային բուժերային համակարգ, որի բաղադրիչներն են սպիտակուցի անիոնային ձևը երկրսեռ իոնի հետ.  $\text{NH}_2\text{PrtCOO}^-/\text{NH}_3^+\text{PrtCOO}^-$ :



Գործնականում սպիտակուցային բուժերի գործում եռթյուրունը պայմանավորված է սպիտակուցի նոլեկուլի ամֆոտերությամբ:





Արյան պլազմայի ռH = 7.36: ռH -ի արժեքից ելնելով կարելի է արյան պլազմայում հաշվել  $\text{HCO}_3^- / \text{H}_2\text{CO}_3$  հարաբերությունը՝

$$7.36 = pK_a + \lg \frac{[\text{HCO}_3^-]}{[\text{H}_2\text{CO}_3]}$$


$\text{H}_2\text{CO}_3$  -ի առաջնային դիսոցման ռK<sub>a</sub> = 6.4 (ճշտված ըստ Հենրիի գործակցի 25°C), որտեղից՝


$$\frac{[\text{HCO}_3^-]}{[\text{H}_2\text{CO}_3]} = 10$$

37°C-ի պայմաններում ռK<sub>a</sub> ≈ 6.1, իսկ հարաբերությունը ~20:



Հեմոգլոբինային և օքսիհեմոգլոբինային բուժերների՝ HHb/KHb, HHbO<sub>2</sub>/KHbO<sub>2</sub> տարրողությունը կազմում է արյան ընդիանուր բուժերային տարրողության 75 % -ը:







HHb և HHbO<sub>2</sub> -ը բույլ թրուներ են, ընդ որում HHbO<sub>2</sub> -ը էապես ավելի ուժեղ է, քան HHb -ն.

$$pK_{\text{HHb}} = 8.2; \quad pK_{\text{HHbO}_2} = 6.95$$


Այսան pH -ի նորմալ արժեքի պայմաններում հենոգլորինի միայն 10%-ն է դիսուցված H<sup>+</sup> և Hb<sup>-</sup> իոնների: Նույն պայմաններում օքսիհենոգլորինը դիսուցվում է 65 % -ով:

Բուֆերների գործունեությունը փոխկապակցված է: Այդ կապով է բացատրվում այն փաստը, որ հենոգլորինին թթվածնի միացման և օքսիհենոգլորինից թթվածնի անջատման պրոցեսների վրա էական ազդեցություն ունի ածխաթթու գազի քանակը:


Երիթրոցիտներում առկա են անմիջականորեն միմյանց հետ կապված հետևյալ հավասարակշռությունները.



HHbO<sub>2</sub> -ի չդիսուցված մոլեկուլներն ավելի հեշտ են անջատում թթվածնի, քանի այս անունը իոնները: Յուսվածքներից անջատված ածխաթթու գազը դիֆուզվում է երիթրոցիտների թաղանթով և ներսում կապվելով ջրի հետ, կարբոնամիդրուազ ֆերմենտի ազդեցության տակ, գոյացնում է H<sub>2</sub>CO<sub>3</sub>, ինչը մեծացնում է H<sup>+</sup> իոնների կոնցենտրացիան երիթրոցիտներում:



Դրա հետևանքով օքսիհենոգլորինի հավասարակշռությունը տեղաշարժվում է HHbO<sub>2</sub> չդիսուցված մոլեկուլների առաջացման կողմը և թթվածնի անջատումը հեշտանում է.




Երիթրոցիտներում եղած Hb<sup>-</sup> իոնները ածխաթթվի հետ առաջացնում են HHb քիչ դիսուցվող մոլեկուլներ և հիդրոկարբոնատի իոններ.



HCO<sub>3</sub><sup>-</sup> -ը երիթրոցիտների թաղանթի միջով անցնելով պլազմա, արյան հոսքով տեղափոխվում է ուսափ թոքեր:


Երբ երակային արյունը հասնում է թոքերին HHb փոխագրում է թթվածնի հետ, առաջացնելով օքսիհենոգլորին՝




Միացնելով օքսիհենոգլորինի պրոտոնը հիդրոկարբոնատ իոնը վերածվում է ածխաթթվի՝




Այնուհետև  $H_2CO_3$  -ը քայլայվում է և  $CO_2$  -ը անջատվում է մթնոլորտ.



Ընդ որում արյան  $pH$ -ի տեղաշարժ հիմնայնության կողմն տեղի չի ունենում, քանի որ  $HHbO_2$ -ը ավելի ուժեղ թքու է, քան  $HHb$ : Արյան մյուս կարևորագույն բուժերը ֆոսֆատային բուժերն են ( $H_2PO_4^{2-}/HPO_4^{2-}$ ): Նրա դերը մեծ է երիկամներում, մարսող գեղձերի հյութերում և լեղում: Եթե արյան մեջ  $H_2CO_3$  -ը շատ է և շնչառական վենտիլյացիայի միջոցով չի հանակըռվում, ապա այն հեռանում է երիկամների միջոցով: Տեղի է ունենում հետևյալ պրոցեսը:



Երբ մեծանում է  $HCO_3^{-}$ -ի քանակը, ընթանում է հակառակ պրոցեսը.



Առաջացած  $HPO_4^{2-}$  և  $H_2PO_4^{-}$  իոնների ավելցուկը հեռանում է երիկամներով:

Օրգանիզմի թթվահիմնային հավասարակշռության չափանիշներից է **արյան պահեստային հիմնայնությունը**: Արյան պահեստային հիմնայնությունը չափվում է 100 մլ պլազմայում քիմիապես կապված  $CO_2$ -ի ծավալով ( $CO_2$ -ը հիմնականում գտնվում է հիդրօկարբոնատային ձևով): Նորմայում այն 50 – 70% է: Երբ պահեստային հիմնայնությունը փոքր է 50 %՝  $[H_2CO_3] > [HCO_3^{-}]$ , ապա  $pH$ -ը փոքրանում է և առաջանում է **ացիդոզ**, իսկ պահեստային հիմնայնության մեծացումը, երբ  $[HCO_3^{-}] > [H_2CO_3]$ , կոչվում է **ալկալոզ**: Ացիդոզն ու ալկալոզը առաջանում են երկու ճանապարհով՝

- I. շնչառական, երբ խախտվում է շնչառական ֆունկցիան՝ շնչառական կենտրոնը ընկճվում կամ գրգռվում է և համապատասխանաբար փոքրանում կամ մեծանում է արտաշնչվող  $CO_2$ -ի քանակը:
- II. նյութափոխանակային, երբ խանգարվում է նյութափոխանակությունը և արյան շրջանառությունը, որոնց արդյունքում խախտվում է օրգանիզմից թթվահիմնային արգասիքների արտահանումը: Ժամանակակից կլինիկական պրակտիկայում արյան թթվահիմնային հավասարակշռությունը որոշում են Աստրուաֆի միկրոեղանակով և արտահայտում են BE միավորներով (լատ. BE «բի-էքսցես» - հիմքի ավելցուկ), որը նորմայում հավասար է  $\pm 2.3$  մմոլ/լ: BE -ն հիմքի այն քանակն է, որը պետք է ավելացնել 1լ պլազմային կամ չեզոքացնել 1լ պլազմայում, որպեսզի  $pH$ -ը մնա հաստատուն: Թթվի ավելցուկի դեպքում BE -ն բացասական է, իսկ հիմքի ավելցուկի դեպքում դրական:

Թթվահիմնային հավասարակշռության վերականգնման նպատակով ացիդոզի դեպքում ներարկում են 4 % նատրիումի հիդրոկարբոնատի լուծությութեան հարամեց ծավալը որոշվում է  $V = 0.5mBE$  էնափիրիկ բանաձևով, որտեղ  $m$  -ը մարդու մարմնի զանգվածն է, եթե ացիդոզը սրտի ժամանակավոր դադարի արդյունք է, ապա

լուծույթի ծավալը որոշվում է  $V = mz$  բանաձևով, որտեղ  $z$  -ը սրտի դադարի տևողությունն է: Ակալոգի դեպքում թթվահիճնային հավասարակշռության վերականգնումը բարդ է, պետք է հաշվի առնել մեծ բվով գործոններ: Որպես ժամանակավոր պայքարի միջոց առաջարկվում է ասկորբինաթթվի 5 % լուծույթ:

## 7.6. Լաբորատոր աշխատանք

**Փորձ - 1. Բուֆերային լուծույթների պատրաստումը և pH -ի որոշումը**

Եթեք փորձանոթների մեջ լցնել 0.1 Ն քացախաթթվի և 0.1 Ն նատրիումի ացետատի լուծույթներ այսուսակում նշված քանակներով: pH -մետրի օգնությամբ չափել յուրաքանչյուր լուծույթի pH -ը և համեմատել այդ նույն լուծույթների pH -ի տեսականորեն հաշված արժեքների հետ:

	Փորձանոթի համարը		
	1	2	3
թթվի քանակը, մլ	8	5	3
աղի քանակը, մլ	2	5	7
pH -ի փորձնական արժեքը			
pH -ի արժեքը հաշված տեսականորեն $pH = pK_a - \lg \frac{V_{\text{թթ}}}{V_{\text{աղ}}}$			

**Փորձ - 2. Բուֆերային լուծույթների նոսրացումը**

Թիվ 2 փորձանոթի բուֆերային լուծույթը բաժանել 3 մասի: I մասը նոսրացնել թորած ջրով 2 անգամ, II՝ 3 անգամ, III թողնել համեմատելու համար: Չափել ստացված լուծույթների pH -ը և անել եզրակացություններ:

**Փորձ - 3. Բուֆերային տարրության որոշումը ըստ հիմքի**

Պատրաստել բուֆեր 5 մլ 0.1 Ն քացախաթթվի և 5 մլ 0.1 Ն նատրիումի ացետատի լուծույթներից: Ավելացնել 2 կարիլ ֆենոլֆտալեին և տիտրել NaOH 0.1 Ն լուծույթով մինչև բաց նորու գույն: Գրանցել ալկալու լուծույթի ծախսը: Նաշվել NaOH -ի h.մոլերի թիվը, որը ծախսվել է մեկ լիտր բուֆերի տիտրման վրա ըստ հետևյալ բանաձևի.

$$n_p = \frac{C_{\text{հիմք}} \cdot V_{\text{հիմք}}}{V_p}$$

որտեղ՝  $n_{\text{հիմք}}$  - ալկալու լուծույթի նորմալությունը

$V_{\text{հիմք}}$  - ալկալու լուծույթի ծավալը

$V_p$  - բուֆերային լուծույթի ծավալը:

$$B = \frac{C_h}{pH_2 - pH_1}$$

Մինչև տիտրելը սկսելը բուժերի  $\text{pH}_1 = 4.75$ : Տիտրման վերջում  
լուծույթում կա միայն աղ, որն ենթարկված է հիդրոլիզի:  
Ընդունելով՝  $C_{\text{աղ}} = 0.1 \text{ Ն}$

$$\text{pH}_2 = \frac{1}{2}(14 + 4.75 + \lg 10^{-1}) = \frac{1}{2} \cdot 17.75 = 8.875$$

$$B = \frac{C_h}{8.875 - 4.75} = \frac{C_h}{4.125}$$

## 8. Քանակական անալիզի հիմունքներ

### 8.1. Քիմիական անալիզի բժշկակենսաբանական նշանակությունը:

Քիմիայի կարևորագույն բաժիններից է անալիտիկ քիմիան, որը ուսումնասիրում է տարրեր օբյեկտների որակական և քանակական բաղադրությունը, մշակում հետազոտման եղանակներ:

Առանց իմանալու կենդանի օրգանիզմների տարրեր հյուսվածքների բաղադրությունը և միջավայրը, անհնար է գնահատել օրգանիզմում ընթացող պրոցեսները, մշակել գիտականորեն հիմնավորված բուժնան մեթոդները: Դիվանդության ախտորոշումը հիմնված է հիվանդ և առողջ օրգանիզմ՝ արյան, մեզի, ստամոքսահյութի և այլ բաղադրամասերի անալիզի համեմատության վրա: Դրա համար էլ բժիշկներին անհրաժեշտ է իմանալ անալիտիկ քիմիայի մեթոդները և սկզբունքները: Նրանք հիմնված են քիմիական ընդհանուր օրինաչափությունների և տարրերի քիմիական հատկությունների վրա:

### 8.2. Քիմիական անալիզի եղանակները: Քանակական և որակական անալիզ

Որակական անալիզն օգտագործվում է հետազոտվող օբյեկտում քիմիական առանձին տարրերի որոշման համար, իսկ քանակական անալիզը՝ հետազոտվող օբյեկտի քանակական բաղադրության որոշման համար:

Որակական անալիզը նախորդում է քանակականին: Որակական անալիզ կատարվում է համեմատաբար հազվադեպ, քանի որ հիմնականում հետազոտվող օբյեկտի որակական կազմը նախապես հայտնի է լինում: Օրինակ՝ արյան մեջ միշտ պարունակվումէ հեմոգլոբին և անալիզի ժամանակ որոշվում է նրա քանակը:

#### 8.2.1. Քանակական անալիզի եղանակների դասակարգումը

Քանակական անալիզի եղանակաները կարելի է բաժանել երկու խմբի՝ քիմիական և ֆիզքիմիական: Անալիզի քիմիական եղանակները հիմնված են հետազոտվող նմուշի հետ կատարվող քիմիական ռեակցիաների վրա: Ծախսված ռեակտիվների կամ ստացված արդյունքների քանակով հաշվում են հետազոտվող նմուշի բաղադրությունը: Տարրերում են քիմիական անալիզի կշռաչափական (գրավիմետրիկ) և ծավալաչափական է (տիտրիմետրիկ) եղանակներ:

Կշռաչափական եղանակ: Հետազոտվող նմուշում որևէ բաղադրամասը քանակապես փոխարկում են այլ նյութի և ճշգրիտ կշռում: Այս եղանակն աշխատատար է:

**Ծավալաչափական եղանակ:** Սա հիմնված է լուծույթի տվյալ ծավալում հետազոտվող բաղադրամասի հետ ռեակցիան մինչև վերջ ընթանալու համար անհրաժեշտ հայտնի կոնցենտրացիա ունեցող (ստանդարտ) լուծույթի ծավալի ճշգրիտ չափման վրա: Ծավալաչափական անալիզը կիրառում են կլինիկական և սանհիգիենիկ լաբորատորիաներում արյան, ստամոքսահյութի, մեզի, սննդամբերքի, խնելու ջրերի, միջավայրի էկոլոգիական վիճակի անալիզի համար:

Անալիզի հիմքում ընկած քիմիական ռեակցիայի բնույթից կախված տարրերում են ծավալաչափական անալիզի հետևյալ եղանակները՝

1. թթվակիմնային տիտրում (չեզոքացման եղանակ)
2. օքսիդիմետրիա
3. նստեցման եղանակ
4. կոնալեքսոնոմետրիա

Անալիզի մեթոդ բավականին պարզ է: Սկզբում պատրաստում են ստանդարտ լուծույթ, այսինքն ճշգրիտ հայտնի կոնցենտրացիայով լուծույթ (տիտրանտ): Ստանդարտ լուծույթը կաթիլներով հետազոտվող լուծույթին ավելացնելու գործողությունը կոչվում է **տիտրում:** Տիտրումը կատարվում է հետևյալ կերպ. անհայտ կոնցենտրացիայով հետազոտվող լուծույթի ծիշտ չափված ծավալին զգուշորեն, կաթիլներով բյուրետից ավելացնում են ստանդարտ լուծույթ մինչև համարժեք կետը՝ այն պահը, երբ փոխագրող նյութերի քանակները համարժեք են մինչանց: Համարժեք կետը կարելի է որոշել հնդիկատորի օգնությամբ՝ հետազոտվող լուծույթին ավելացնում են մի քանի կաթիլ ինդիկատոր, որի գույնը համարժեք կետում փոխվում է: Այդ պահին ռեակցիան համարվում է ավարտված:

Գիտենալով ստանդարտ լուծույթի կոնցենտրացիան և այն ծավալը, որը ծախսվել է տիտրման համար, հաշվում են հետազոտվող նյութի քանակը:

Ծավալաչափական եղանակի հաշվարկների հիմքում ընկած է համարժեքների օրենքը՝

$$n_{\text{ստ.}} \cdot V_{\text{ստ.}} = n_{\text{հետ.}} \cdot V_{\text{հետ.}}, \quad n_{\text{հետ.}} = \frac{n_{\text{ստ.}} \cdot V_{\text{ստ.}}}{V_{\text{հետ.}}}$$

**Օրինակ 1.** 20 մլ անհայտ կոնցենտրացիայով աղաթթվի չեզոքացման համար ծախսվել է 25 մլ NaOH, որի 1 մլ պարունակում է 0.04 գ NaOH: Չեզոքացման ռեակցիայի հակասարման հիման վրա հաշվել HCl –ի քանակը հետազոտվող լուծույթում:

$$\text{Լուծում. } T_{\text{NaOH}} = 0.04 \text{ գ/մլ}; \quad n_{\text{NaOH}} = \frac{T_{\text{NaOH}} \cdot 1000}{M(\text{NaOH})} = \frac{0.04 \cdot 1000}{40} = 1 \text{ ն}$$

$$n_{\text{HCl}} = \frac{n_{\text{NaOH}} \cdot V_{\text{NaOH}}}{V_{\text{HCl}}} = \frac{1 \cdot 25}{20} = 1.25 \text{ ն}$$

$$T_{\text{HCl}} = \frac{U_{\text{HCl}} \cdot M(\frac{1}{Z} \text{HCl})}{1000} = \frac{1.25 \cdot 36.5}{1000} = 0.045625 \text{ գ/նլ}$$

$$m_{\text{HCl}} = T_{\text{HCl}} \cdot V_{\text{HCl}} = 0.045625 \text{ գ/նլ} \cdot 20 \text{ նլ} = 0.9125 \text{ գ}$$

Քանակական անալիզի եղանակներից է նաև սպեկտրալ անալիզը, որը հնարավորություն է տալիս որակական և քանակական անալիզը կատարել միաժամանակ:


### 8.3. Թթվահիմնային տիտրում (չեզոքացման մեթոդ):

Տարբերում են՝ թթվաչափություն (ացիդիմետրիա) և հիմքաչափություն (ալկալիմետրիա):

Թթվահիմնային տիտրումը թթվահիմնային հատկություններով օժտված նյութերի քանակի որոշման արագ և ճշգրիտ եղանակ է, որի հիմքում ընկած է պրոտոնի տեղափոխման ռեակցիան:


Թթվահիմնային տիտրումը հատկապես լայն կիրառություն ունի բժշկական պրակտիկայում: Այս մեթոդով կլինիկայում որոշում են ստամոքսահյութի, մեզի, կրծքի կաթի թթվայնությունը, ամոնիակի և միզանյութի պարունակությունը մեզում և այլն:

Թթուների և հիմքերի լուծույթների կոնցենտրացիաները թթվահիմնային տիտրման մեթոդով որոշելու համար անհրաժեշտ է ունենալ թթուների և հիմքերի ստանդարտ լուծույթներ: Թթուները որոշում են տիտրելով ուժեղ հիմքի ստանդարտ լուծույթով, օրինակ NaOH -ի լուծույթով.



Տիտրման այս մեթոդը կոչվում է **ացիդիմետրիա** (acidum - թթու):

Նիմքերը որոշում են տիտրելով ուժեղ թթվի ստանդարտ լուծույթով, օրինակ HCl -ով: Մեթոդը կոչվում է **ալկալիմետրիա** (alkali - ալկալի, meteo - չափում):



Ծավալաչափական անալիզի հիմքում ընկած քիմիական ռեակցիան պետք է բավարարի չորս պահանջի.


- ռեակցիան պետք է ընթանա բավականաչափ արագ,
- ռեակցիան գործնականորեն պետք է ընթանա մինչև վերջ, այսինքն հավասարակշռության հաստատունը պետք է ունենա մեծ արժեք, որպեսզի ցայտուն կերպով երևա տիտրման վերջը,
- ռեակցիան պետք է ընթանա որոշակի ստեխիոմետրիկ հարաբերությամբ, որպեսզի տիտրման տվյալներից հնարավոր լինի հաշվել հետազոտվող նյութի քանակը,

4. տիտրման վերջին կետը նկատելու համար պետք է ընտրել հարմար եղանակ (ճշշտ ընտրել ինդիկատորը):

Այս պահանջներին հատկապես լավ են բավարարում թթվահիմնային համակարգերը: Պրոտոնը թթվից հիմքին է անցնում չափազանց արագ, իսկստ որոշակի ստեխիոմետրիկ հարաբերությամբ, ռեակցիաների հավասարակշռության հաստատունները ունեն բարձր արժեքներ, պրոցեսը վերարտադրելի է և գոյություն ունեն բազմաթիվ թթվահիմնային ինդիկատորներ, որոնք թH -ի տարբեր արժեքների դեպքում ցայտուն փոխում են իրենց գույնը և կարող են կիրառվել համարժեք կետի ծցզրիտ որոշման համար:


#### 8.4. Թթվահիմնային ինդիկատորներ

Թթվահիմնային ինդիկատորները օրգանական թույլ թթուներ կամ հիմքեր են, որոնց մոլեկուլների գույնը տարբերվում է դիսուցման ժամանակ առաջացած իոնների գույնից: Լուսույթում նրանք դիսուցվում են.



HInd- ինդիկատորի թթվային ձևն է, Ind<sup>-</sup> - ինդիկատորի գուգորդված հիմնային ձևն է:

Եթե HInd -ի և Ind<sup>-</sup> -ի գույնները տարբեր են, ինդիկատորը կոչվում է երկգույն (մեթիլօրանժ՝ HInd - կարմիր, Ind<sup>-</sup> - դեղին): Եթեկու ձևերից մեկն անգույն լինելու դեպքում, ինդիկատորը կոչվում է միագույն (ֆենոլֆթալին՝ HInd -անգույն, Ind<sup>-</sup> -վարդագույն): Վերը բերված հավասարակշռությունից հետևում է, որ կախված միջավայրի թH -ից, ինդիկատորի դիսուցման հավասարակշռությունը կարող է տեղաշարժվել աջ կամ ձախ: Զրածնի իոնների (ավելի ճիշտ՝ H<sub>3</sub>O<sup>+</sup>) կոնցենտրացիայի մեծացումը (կամ թH -ի փոքրացումը) հավասարակշռությունը կտեղաշարժի դեպի ձախ՝ ինդիկատորի մոլեկուլային ձևի կողմը: Պարզության համար՝



$$K_a = \frac{[\text{Ind}^-][\text{H}^+]}{[\text{HInd}]} \quad (8.1.)$$

$$[\text{H}^+] = K_a \frac{[\text{HInd}]}{[\text{Ind}^-]} \quad (8.2.)$$

Գույնի փոփոխություն կատարվում է թH-ի որոշակի մարգում:

(8.2.) -ից հետևում է, որ կախված ջրածնի իոնների կոնցենտրացիայից փոխվում է ինդիկատորի թթվային և հիմնային ձևերի հարաբերությունը: Գույնի փոփոխությունը աչքի համար նկատելի է, եթե ինդիկատորի երկու ձևերից մեկը գերակշռում է մյուսին առնվազն 10 անգամ: Ելնելով սրանից, կարելի է հաշվել թH -ի արժեքների այն միջակայքը, որում նկատվում է ինդիկատորի գույնի փոփոխություն:

$$\text{Եթե} \quad \frac{[\text{HInd}]}{[\text{Ind}^-]} = 10; \quad [\text{H}^+] = K_a \cdot 10;$$

$$pH = pK_a - 1 \quad (\text{գույնի փոփոխության մարզի սկիզբը}) \quad (8.3.)$$

Ինդիկատորի գույնի փոփոխության մարզի  $pH$  -ի վերջին արժեքը հաշվում են վերը նշվածին հանանման.

$$\text{Եթե} \quad \frac{[HInd]}{[Ind^-]} = \frac{1}{10}; \quad [H^+] = K_a \cdot \frac{1}{10};$$

$$pH = pK_a + 1 \quad (\text{գույնի փոփոխության մարզի վերջը}) \quad (8.4.)$$

Ինդիկատորի գույնի փոփոխությանը համապատասխանող  $pH$ -ի մարզը հավասար կլինի.

$$\begin{aligned} pH &= pK_a \pm 1; \quad \text{այն կազմում է 2 միավոր} \\ (pK_a + 1) - (pK_a - 1) &= 2 \end{aligned} \quad (8.5.)$$

Օրինակ, եթե թթվահիմնային ինդիկատորի դիսոցման հաստատունը հավասար է  $1 \cdot 10^{-8}$  ( $pK_a=8$ ), գույնի փոփոխության մարզը՝  $pH=7-9$ :

**Ինդիկատորի ընտրությունը** կատարվում է ըստ հետևյալ սկզբունքների՝

1. Կառուցում են հետազոտվող լուծույթի որոշակի ծավալին տիտրանտի աստիճանական ավելացման ընթացքում լուծույթի  $pH$ -ի փոփոխության կորը: Յաճարժեք կետին մոտ տիրույթում կորը պետք է ունենա  $pH$  -ի թրչքային (կտրուկ) փոփոխություն,

2. Ինդիկատորի գույնի փոփոխության մարզը պետք է լինի տիտրման  $pH$ -ի թրչքի սահմաններում:

**Օրինակ 2.** Մերիլ կարմիր թթվահիմնային ինդիկատորի չոփոցված ձևը՝  $HInd$  կարմիր է, իսկ դիսոցվածը՝  $Ind^-$  դեղին: Նշել  $pH$  -ի այն տիրույթը, որում աչքը կնկատի միայն կարմիր գույնը կամ միայն դեղին գույնը: Ի՞նչ գույն կունենա լուծույթը, եթե դիսոցված և չոփոցված ձևերի կոնցենտրացիաներն իրար հավասար են.

$$K_a = 7.9 \cdot 10^{-6}:$$

**Լուծում.**  $HInd \rightleftharpoons Ind^- + H^+$

Կարմիր դեղին

Յայտնի է, որ թթվահիմնային ինդիկատորի գույնի փոփոխության մարզը որոշվում է  $pH = pK \pm 1$  բանաձևով:

$$pK = -\lg 7.9 + 6 \approx -0.9 + 6 = 5.1; \quad pH = 5.1 \pm 1$$

Ուժեղ թթվային միջավայրում ( $pH<4.1$ ) ինդիկատորը կունենա կարմիր գույն: Աչքը կնկատի դեղին գույնի երևան գալը  $pH=4.1$  արժեքի դեպքում:  $pH=5.1$  արժեքում լուծույթը կլինի նարնջագույն (50 % կարմիր, 50 % դեղին), իսկ  $pH > 6.1$ -ի դեպքում աչքն այլևս կարմիր գույնը չի տեսնի և լուծույթը կունենա դեղին գույն՝  $pH > 6.1$  ամբողջ տիրույթում:

## 8.5 Տիտրման կորեր

Թթվահիմնային ռեակցիայի համար տիտրման կորը ավելացված տիտրանտի ծավալից թH -ի կախվածության գրաֆիկական պատկերն է: Տիտրման կորերի կառուցումը օգնում է ընտրել հարմար ինդիկատոր՝ տիտրման վերջին կետի որոշման համար:

Տիտրման ընթացքին կարելի է հետևել չափելով թH -ը տիտրման տարրեր պահերին: Թթվահիմնային տիտրման ընթացքում թH-ի փոփոխությունը տիտրանտի ավելացմանը զուգընթաց սահուն է մինչև համարժեք կետի մոտակայքը, որում տեղի է ունենում թH-ի կտրուկ, թթվային փոփոխություն: Դանարժեք կետում թH -ի փոփոխության արագությունը (1 մլ տիտրանտին ընկնող ՃթH) ամենամեծն է:

### 8.5.1. Ուժեղ թթվի տիտրումն ուժեղ հիմքով: Տիտրման կորը

Դիտարկենք 0.1Ն HCl-ի լուծույթի տիտրումը 0.1Ն NaOH-ի լուծույթով:

Անտեսելով ջրի ինքնադիտուցումը (ավտոպրոտոլիզ)



և հաշվի առնելով, որ HCl -ը ուժեղ թթու է  $\text{HCl} + \text{H}_2\text{O} = \text{H}_3\text{O}^+ + \text{Cl}^-$ , կարելի է ընդունել, որ  $[\text{H}_3\text{O}^+] = \text{C}_{\text{HCl}}$ ;  $\text{pH} = -\lg \text{C}_{\text{HCl}}$

ա) Մինչև տիտրումը ունենք 1 լ 0.1Ն HCl,  $\text{pH} = -\lg 10^{-1} = 1$ :

բ) Ենթադրենք NaOH -ի 0.1 Մ լուծույթով տիտրվել է 90% HCl և չտիտրված է մնացել թթվի 10%, այսինքն մնացել է HCl-ի սկզբնական քանակի 1/10 մասը: Անտեսելով տիտրման ընթացքում ծավալի փոփոխությունը, կստանանք.

$$\text{C}_{\text{HCl}} = \frac{0.1 \cdot 1}{10} = 0.01 \text{ мոլ/լ} = 10^{-2} \text{ мոլ/լ}; \quad \text{pH} = 2$$

գ) Եթե չեղորանում է 99% HCl, լուծույթում մնում է 1% թթու, այսինքն սկզբնական քանակի 1/100 մասը:

$$\text{C}_{\text{HCl}} = \frac{0.1 \cdot 1}{100} = 0.001 \text{ мոլ/լ} = 10^{-3} \text{ мոլ/լ}; \quad \text{pH} = 3$$

դ) 99.9% HCl-ի չեղորանալու դեպքում լուծույթում կմնա սկզբնական քանակի 1/1000 մասը և  $\text{pH} = 4$ :

ե) Եթե չեղորացված է ամրող թթուն, այսինքն ավելացված է 100% NaOH և լուծույթում կամ միայն NaCl, միջավայրի  $\text{pH} = 7$ :

զ) Չեղորացումից հետո ալկալու ավելցուկի դեպքում միջավայրի ռեակցիան կդառնա հիմնային: Քանի որ NaOH-ը ուժեղ էլեկտրոլիտ է և դիտուցում է ամբողջությամբ, ապա՝  $\text{pOH} = -\lg [\text{OH}^-] = -\lg \text{C}_{\text{NaOH}}$ :

NaOH-ի 0.1% ավելցուկի դեպքում՝


$$\text{pOH} = -\lg \frac{0.1 \cdot 0.1}{100} = 4; \quad \text{pH} = 14 - 4 = 10$$

է) NaOH-ի 10% ավելցուկի դեպքում՝

$$pH = 14 - pOH = 14 + \lg [OH^-] = 14 + \lg \frac{0.1 \cdot 10}{100} = 12$$

ը) NaOH-ի 100% ավելցուկի դեպքում՝  $pOH = 1$ ,  $pH = 13$ :

Ստացված տվյալների հիման վրա կառուցենք կորը:



նկ. 8.1. Ուժեղ թթվի լուծույթի ուժեղ հիմքով տիտրման կորը:

### Տիտրման կորի քննարկումը:

1. Ուժեղ թթուն ուժեղ հիմքով տիտրման կորը ցույց է տալիս, որ այս դեպքում չեղոքացման և համարժեք կետերը համընկնում են ( $pH=7$ ):

2. Տիտրման վերջում տեղի է ունենում  $pH$ -ի կտրուկ թրիչք: Այսպես, եթե ամբողջ տիտրման ընթացքում, ընդհուած մինչև  $HCl$ -ի 99.9%-ի չեղոքացումը,  $pH$ -ը փոփոխվում է միայն 3 միավորով (1-4), ապա 0.1% թթվի ավելցուկից 0.1% ալկալու ավելցուկին անցումը բերում է  $pH$ -ի փոփոխությանը 6 միավորով (4-10): Այսպիսով, տիտրման վերջում ալկալու 1-2 կարիլի ավելացումը  $H^+$  իոնների կոնցենտրացիան լուծույթում փոքրացնում է միջին անգամ՝  $10^{-4}$ -ից մինչև  $10^{-10}$ :


3. Տիտրման կորից երևում է, որ նորացումը կրերի  $pH$ -ի թրիչքի փոքրացման և դա կսահմանափակի ինդիկատորի ընտրությունը:

4. Ուժեղ թթուն ուժեղ հիմքով տիտրելիս կարելի է օգտվել ցանկացած ինդիկատորից, որի գույնի փոփոխության մարզը գտնվում է  $pH$ -ի թրիչքի սահմաններում (4-10), օրինակ՝ մերիլ կարմիր (գույնի փոփոխության մարզը  $pH = 4.2 - 6.3$ ), կամ ֆենոլֆտալեին (8.3-10.0):

### 8.5.2. Թույլ թթվի տիտրումն ուժեղ հիմքով

Թույլ թթուն ուժեղ հիմքով տիտրելիս, համարժեք կետը (ի տարերություն ուժեղ թթուն ուժեղ հիմքով տիտրման) գտնվում է  $pH$ -ի հիմնային տիրույթում և չի համընկնում չեղոքացման կետի հետ:


Օրինակ՝  $NaOH$ -ով քացախաթթվի ( $K_a = 1.86 \cdot 10^{-5}$  կամ  $pK_a = 4.76$ ) տիտրման ժամանակ պետք է նկատի ունենալ, որ  $NaOH$ -ի առաջին կարիլների ավելացման հետ, լուծույթում քացախաթթվի հետ միասին հայտնվում է նաև նատրիումի ացետատ, առաջանում է քացախաթթունատրիումի ացետատ գույգը՝



Այսպիսով մինչև տիտրման ավարտը լուծույթը ներկայացնում է ացետատային բուֆեր:

Կառուցենք 0.1 Ն  $\text{CH}_3\text{COOH}$ -ի լուծույթը 0.1 Ն  $\text{NaOH}$  -ի լուծույթով տիտրման կորը:

1.Մինչև տիտրման սկիզբը լուծույթի  $\text{pH}$ -ը հաշվում են ըստ քացախաթթվի ոիսոցման՝



հայտնի բանաձևով.

$$pH = \frac{1}{2} (pK_a - \lg C)$$

ա) Լուծույթի  $\text{pH}$ -ը՝

$$pH = \frac{1}{2} (4.76 + 1) = 2.88$$

Տիտրման ընթացքում  $\text{pH}$ -ը հաշվում են Հենդերսոն-Շասելբախի հավասարումով՝

$$pH = pK_a + \lg \frac{N_{\text{աղ}} \cdot V_{\text{աղ}}}{N_{\text{բրոլ}} \cdot V_{\text{բրոլ}}}$$

բ) Տիտրված է թթվի 10% -ը, լուծույթում ունենք 10%  $\text{CH}_3\text{COONa}$  և 90%  $\text{CH}_3\text{COOH}$ :

$$pH = 4.76 + \lg \frac{10}{90} \approx 3.81$$

գ) Տիտրված է թթվի 50% -ը, լուծույթում ունենք 50%  $\text{CH}_3\text{COONa}$  և 50%  $\text{CH}_3\text{COOH}$ ՝

$$pH = 4.76 + \lg \frac{50}{50} = 4.76$$

դ) Տիտրված է թթվի 90% -ը, այսինքն, լուծույթում ունենք 90%  $\text{CH}_3\text{COONa}$  և 10% թթու՝

$$pH = 4.76 + \lg \frac{90}{10} \approx 5.76$$

Ե) Տիտրված է թթվի 99%, այսինքն առաջացել է 99% աղ և մնացել է 1% թթու՝

$$pH = 4.76 + \lg \frac{99}{1} = 6.76$$

զ) Տիտրված է թթվի 99.9%-ը, մնացել է չտիտրված 0.1% թթու և առաջացել 99.9% աղ՝

$$pH = 4.76 + \lg \frac{99.9}{0.1} = 7.76$$


է) Տիտրման վերջում՝ հաճարժեք կետում աճբողջ թթուն վերածվել է աղի ( $\text{CH}_3\text{COONa}$ ), որը հիդրոլիզի հետևանքով միջավայրին հաղորդում է հիմնային ռեակցիա: Լուծույթի  $\text{pH}$ -ը հաշվում են (8.6.) հավասարումով՝

$$pH = 1/2 (pK_w + pK_a + \lg C_{\text{աղ}}) \quad (8.6.)$$

$$pH = 1/2 (14 + 4.76 + \lg 10^{-1}) = 8.88$$

Ո) 0.1% NaOH -ի ավելցուկի դեպքում աղի հիդրոլիզը ճնշվում է և pH -ը որոշվում է ըստ NaOH -ի:

$$pH = -\lg [OH^-] = -\lg C_{NaOH} = -\frac{0.1 \cdot 0.1}{0.1} = 4; \quad pH = 10;$$



**Նկ. 8.2.** Թույլ թթվի ուժեղ հիմքով (ա) և ուժեղ թթվի թույլ հիմքով (բ) տիտրման կորերը:

Թույլ թթուն ուժեղ հիմքով տիտրման կորը համեմատելով նախորդ կորի հետ նկատում ենք՝

1. Յամարժեք կետը չի համընկնում չեզոքացման կետին, այն ընկած է հիմնային մարգում ( $pH = 8.88$ ):

2. pH -ի թրիչքը տիտրման կորի վրա ավելի փոքր է (7.76-10): Այս դեպքում կարելի է օգտվել միայն այն ինդիկատորներից, որոնց գույնի փոփոխության մարզ գտնվում է pH-ի հիմնային միջակայքում (օրինակ, ֆենոլֆտալեին):

3. Թույլ թթուն ուժեղ հիմքով տիտրելիս pH-ի թրիչքը կախված է տիտրվող թթվի դիսոցման հաստատումից և կոնցենտրացիայից: Տարբեր ուժ ունեցող թթուների տիտրման կորերի համեմատությունը ցույց է տալիս, որ  $pK_a$  -ի մեծացման հետ pH-ի թրիչքը փոքրանում է: Առավել ճիշտ են տիտրվում այն թթուները, որոնց  $pK_a$ -ն մեծ չէ 6 -ից:

## 8.6. Ծավալային անալիզի հաշվարկները

Ծավալային անալիզի հաշվարկների հիմնական հավասարումն է.

$$V_1 V_1 = V_2 V_2$$

որտեղ՝  $V_1$  և  $V_2$  ստանդարտ և հետազոտվող լուծույթների նորմալություններն են, իսկ  $V_1$  և  $V_2$  - նրանց ծավալները:

**Օրինակ 3.** 25 մլ աղաթթվի տիտրման համար ծախսվել է 32,2 մլ 0,085


Ն նատրիումի հիդրօքսիդի ստանդարտ լուծույթ: Որքա՞ն է աղաթթվի լուծույթի նորմալությունը:

$$\text{Լուծում. } \quad \text{Ն}_1\text{V}_1 = \text{Ն}_2\text{V}_2, \quad \text{Ն}_2 = \frac{\text{N}_1\text{V}_1}{\text{V}_2} = \frac{32,2 \cdot 0,085}{25} = 0,109$$

**Օրինակ 4.** 40մլ ծծմբական թթվի լուծույթի չեզոքացման համար ծախսվել է 24 մլ 0,2 Ն ալկալու լուծույթ: Քաշվել  $\text{H}_2\text{SO}_4$ -ի նորմալությունը և զանգվածը (գրամներով) լուծույթի վերցված ծավալում:

$$\text{Լուծում. } \quad \text{Ն}_{\text{H}_2\text{SO}_4} = \frac{0,2 \cdot 24}{40} = 0,12 \text{ հմոլ/L}, \quad m_{\text{H}_2\text{SO}_4} = 0,12 \cdot 0,04 \cdot 49 = 0,235 \text{ գ}$$

**Օրինակ 5.** 150 մգ մաքուր նատրիումի կարբոնատի նմուշի տիտրման համար ծախսվել է 30 մլ աղաթքու: Որոշել աղաթքվի լուծույթի նորմալությունը:



$$M\left(\frac{1}{Z}\text{Na}_2\text{CO}_3\right) = \frac{M_{\text{Na}_2\text{CO}_3}}{2} = 53 \text{ գ/մոլ},$$

$$n\left(\frac{1}{Z}\text{Na}_2\text{CO}_3\right) = n\left(\frac{1}{Z}\text{HCl}\right) = \frac{0,15}{53}$$

$$\text{Ն}_{\text{HCl}} = \frac{n\left(\frac{1}{Z}\text{HCl}\right)}{V} = \frac{0,15}{53 \cdot 0,03} = 0,094 \text{ հմոլ/L}$$

Լուծույթի տիտրը (T) լուծված նյութի գրամների թիվն է 1 մլ լուծույթում:

Քանի որ ստանդարտ լուծույթի տիտրը հայտնի է, այն սովորաբար անվանում են տիտրանտ: Լուծույթի նորմալության և տիտրի միջև գոյություն ունի հետևյալ կապը՝

$$T = \frac{M\left(\frac{1}{Z}x\right) \cdot \text{Ն}}{1000} \quad \text{կամ} \quad \text{Ն} = \frac{T}{M\left(\frac{1}{Z}x\right)} \cdot 1000$$

**Օրինակ 6.** Որոշել 0,15 Ն  $\text{H}_2\text{SO}_4$  ( $M\left(\frac{1}{Z}\text{H}_2\text{SO}_4\right) = 49 \text{ գ/մոլ}$ ) ուժույթի տիտրը:

$$\text{Լուծում. } \quad T = \frac{49 \cdot 0,15}{1000} = 0,00735 \text{ գ/մL}$$

**Օրինակ 7.**  $\text{NaOH}$  -ի լուծույթի տիտրը հավասար է 0,0048 գ/մլ: Որոշել լուծույթի նորմալությունը:  $M\left(\frac{1}{Z}\text{NaOH}\right) = 40 \text{ գ/մոլ}$

$$\text{Լուծում. } \quad \text{Ն} = \frac{0,0048 \cdot 1000}{40} = 0,12 \text{ հմոլ/L}$$

## 8.7. Լաբորատոր աշխատանք

Չեզոքացման եղանակ (ացիդիմետրիա, ալկալիմետրիա)

**Փորձ 1.** Ալկալիու լուծույթի կոնցենտրացիայի որոշումը: Բյուրեսի մեջ լցնել 0,1 Ն HCl -ի ստանդարտ լուծույթ: Էռլենմեյերի կոլրի մեջ լցնել 10մլ NaOH-ի հետազոտվող լուծույթ, ավելացնել 2-3 կաթիլ մեթիլօրանժ և տիտրել մինչև չանհետացող կարմրանարնագույնի առաջացումը: Ծախսված HCl-ի ծավալով հաշվել NaOH -ի կոնցենտրացիան:

**Փորձ 2.** Թթվուների որոշումը ստամոքսահյութում: Կլինիկական կարևոր ախտորոշիչ նշանակություն ունի ստամոքսահյութի թթվայնության որոշումը: Ստամոքսահյութի թթվայնությունը որոշվում է 0,1Ն ալկալիու ստանդարտ լուծույթի մլ-երի քանակով, որն անհրաժեշտ է 100 մլ ֆիլտրված ստամոքսահյութը չեզոքացնելու համար: Ստամոքսահյութի ընդհանուր թթվայնությունը ներկայացնում է նրանում թթվային ռեակցիա ունեցող բոլոր նյութերը, իսկ ազատ աղաթթվային՝ ազատ հանքային թթուները: Ազատ աղաթթվի քանակը երեսն արտահայտում են տոկոսներով: Օրինակ, եթե 100 մլ ստամոքսահյութում պարունակվող աղաթթուն չեզոքացնելու համար ծախսվել է 40 մլ 0,1 Ն ալկալի, ապա թթվի պարունակությունը կլինի՝  $0.00365 \cdot 40 = 0.146\%:$  Ընդհանուր թթվայնության և ազատ աղաթթվի որոշումը կարող է կատարվել ստամոքսահյութի միևնույն նմուշում:

**Փորձի ընթացքը.** Կոնածն կոլրի մեջ լցնել 10 մլ ֆիլտրված ստամոքսահյութ, ավելացնել 1-2 կաթիլ ինդիկատոր (պարադիմեթիլամինագորենզոլ): Ազատ աղաթթվի ներկայությամբ հեղուկը ներկվում է վար կարմիր գույնով:

Կոլրի պարունակությունը տիտրել NaOH -ի 0,1 Ն լուծույթով մինչև դեյին գույնի հայտնվելը: Նշել ծախսված տիտրանտի ծավալը (1 կետ): Յետո նույն կոլրի մեջ լցնել 1-2 կաթիլ ֆենոլ-ֆթալեին և շարունակել տիտրել մինչև կայուն վարդագույնի հայտնվելը: Նշել երկու տիտրումների համար ծախսված NaOH -ի ծավալը (2 կետ):

Առաջին կետին համապատասխան ծախսված տիտրանտի ծավալը 10-ով բազմապատկելիս ստացվում է ազատ աղաթթվի քանակը: Տիտրանտի ամբողջ ծախսված ծավալը բազմապատկելով 10-ով ստացվում է ստամոքսահյութի ընդհանուր թթվայնության արժեքը:

**Փորձ 3.** Զրի ժամանակավոր կոշտության որոշումը: Զրի կոշտությունը պայմանավորված է նրանում կալցիումի և մագնեզիումի լուծելի աղերի ներկայությամբ: *Տարրերում են կարրոնատային (ժամանակավոր) և մնայուն կոշտություն:*

Կարբոնատային կոշտությունը պայմանավորված է ջրում կալցիումի և մագնեզիումի հիդրօկարբոնատների՝  $\text{Ca}(\text{HCO}_3)_2$  և

$Mg(HCO_3)_2$  ներկայությամբ: Զուրը եռացնելիս, հիդրոկարբոնատները քայլավում են, առաջացնելով նաև պածաժներ և կոշտությունը վերանում է.



Այս պատճառով կարբոնատային կոշտությունը անվանում են ժամանակավոր:

Մնայուն կոշտությունը պայմանավորված է ջրում կալցիումի և մագնեզիումի ուրիշ աղերի ներկայությամբ (հիմնականում քլորիդների և սուլֆատների): Ի տարրերություն ժամանակավոր կոշտության, մնայուն կոշտությունը ջրուր եռացնելիս չի վերանում: Մնայուն և ժամանակավոր կոշտությունների գումարը կոչվում է ընդհանուր կոշտություն, որը որոշում են կոմպլեքսոնոմետրիկ եղանակով: Ձրի կոշտությունը արտահայտում են 1L ջրում կալցիումի և մագնեզիումի աղերի համարժեքների մասունքի գումարային թվով՝ կամ աստիճաններով:  $1^\circ$  կոշտությունը համապատասխանում է 1L ջրում 10 մգ  $CaO$ -ի պարունակությունը: Այստեղից հետևում է, որ 1 հմնոլ կոշտությունը համարժեք է  $2,8^\circ$  կոշտության: 1 հմնոլ  $CaO$  հավասար է  $\frac{56}{2} = 28$  մգ, հետևաբար 1 լիտրում 28 մգ  $CaO$

պարունակող ջրի կոշտությունը՝  $\frac{28}{10} = 2,8^\circ$  է:

**Փորձի ընթացքը.** Կոնած կոլթի մեջ լցնել 10 մլ հետազոտվող ջրուր, ավելացնել 1-2 կաթիլ ինդիկատոր (մեթիլօրանժ) և տիտրել 0,1 Ն  $HCl$ -ի լուծույթով:

**Օրինակ 8.** Ենթադրենք 10 մլ հետազոտվող ջրուր տիտրելու համար, ծախսվել է 0,7 մլ 0,1 Ն  $HCl$  լուծույթ:

$$\text{Լուծում. } N_{\text{ջր}} = \frac{N_{HCl} V_{HCl}}{V_{H_2O}} \cdot 1000 = \frac{0,1 \cdot 0,7}{10} \cdot 1000 = 7 \text{ հմնոլ/L}$$

Կոշտության աստիճանը =  $7 \cdot 2,8 = 19,6$  :

## 8.9. Օքսիդավերականգնիչ տիտրում

Օքսիդավերականգնիչ տիտրումը ծավալային անալիզի այն տեսակն է, երբ տիտրման հիմքում ընկած է որևէ օքսիդավերականգնման ռեակցիա:

### 8.9.1. Օքսիդավերականգնման (ՕՎ – Ox) ռեակցիաներ

Օքսիդավերականգնման են կոչվում այն ռեակցիաները, որոնք ընթանում են տարրերի ատոմների օքսիդացման աստիճանների

**Վիպիոխությամբ:** Այդպիսի ռեակցիաներում տեղի է ունենում օքսիդացման և վերականգնման պրոցես:

**Օքսիդացում (oxidation)** է կոչվում էլեկտրոն տալու պրոցեսը, օքսիդացման են վերականգնիչները՝



Օքսիդացումը ուղեկցվում է ատոմի օքսիդացման աստիճանի բարձրացումով:


**Վերականգնում (reduction)** է կոչվում էլեկտրոն ընդունելու պրոցեսը, վերականգնվում են օքսիդիչները՝



Վերականգնումը ուղեկցվում է ատոմի օքսիդացման աստիճանի իջեցումով:




Ընդհանուր ձևով օքսիդավերականգնման ռեակցիան կարելի է ներկայացնել՝




Տիպական օքսիդիչներ են՝ 1. բարձր էլեկտրաքացասականությամբ ատոմներ պարունակող պարզ նյութերը ( $\text{F}_2$ ,  $\text{O}_2$ ,  $\text{Cl}_2$  և այլն), 2. բարձրագույն կամ բարձր օքսիդացման աստիճանով կատիոնները ( $\text{Fe}^{3+}$ ,  $\text{Pb}^{4+}$ ,  $\text{Ag}^+$  և այլն), 3. բարձր օքսիդացման աստիճանով ատոմ պարունակող անիոնները ( $\text{CrO}_4^{2-}$ ,  $\text{Cr}_2\text{O}_7^{2-}$ ,  $\text{NO}_3^-$ ,  $\text{MnO}_4^-$ ,  $\text{ClO}^-$ ,  $\text{ClO}_4^-$  և այլն), 4. ջրածնի և մետաղների պերօքսիդները ( $\text{H}_2\text{O}_2$ ,  $\text{Na}_2\text{O}_2$ ), 5. օրգանական և կենսաբանական օքսիդիչները (ուրիխինոն, սԱԴ, սԱԴֆ, ֆԱԴ, օքսիդացված գլյուտարին, ցիտոքրոմներ և այլն):

Տիպական վերականգնիչներ են՝ 1. ցածր էլեկտրաքացասականությամբ ատոմներ պարունակող նյութերը (մետաղներ և որոշ ոչ մետաղներ), 2. պարզ անիոնները ( $\text{Cl}^-$ ,  $\text{S}^{2-}$ ,  $\text{H}^-$  և այլն), այն բարդ անիոնները, որոնցում ատոմն ունի միշտն օքսիդացման աստիճան ( $\text{SO}_3^{2-}$ ,  $\text{NO}_2^-$ , և այլն), 3. այն կատիոնները, որոնց օքսիդացման աստիճանը կարող է մեծանալ ( $\text{Mn}^{2+}$ ,  $\text{Fe}^{2+}$ ,  $\text{Ti}^{3+}$  և այլն), 4. բարձր ջերմաստիճանում որոշ նյութեր (CO,  $\text{H}_2$  և այլն), 4. օրգանական և կենսաբանական վերականգնիչներ, (հիդրոխինոն, ալիտիդներ, սԱԴՀ $+\text{H}^+$ , ֆԱԴՀ $_2$ , վերականգնված գլյուտարին և այլն):

Red-Ox ռեակցիաների օրինակներ են՝



Ox      Red





Ox      Red

## 8.9.2 O4 (Red-Ox) ռեակցիաների հավասարումների կազմումը:


Գոյություն ունի վերօքս ռեակցիաների հավասարումները կազմելու երկու եղանակ.

1. Էլեկտրոնային հաշվեկշռի եղանակ, որը նախընտրելի է գազային և պինդ ֆազերում ընթացող ռեակցիաների համար:


Ելանյութերի և վերջնանյութերի մոլեկուլներում համեմատելով ատոմների օրսիդացման աստիճանները կազմում են էլեկտրոնային հաշվեկշռի սխեման՝



Հավասարման աջ և ձախ մասերում հավասարեցնելով մյուս ատոմների թիվը կատացվի՝



Ստացված հավասարումը կարելի է ներկայացնել կրճատ իոնական տեսքով՝






թույլ էլեկտրոլիտ

2. Էլեկտրոնա-իոնական կամ կիսառեակցիաների եղանակ, որը կիրառվում է լուծույթներում ընթացող ռեակցիաների հավասարումները կազմելիս: Այս դեպքում իոնները դիտարկվում են այն վիճակում, ինչ վիճակում դրանք ռեալ գոյություն ունեն լուծույթում և օքսիդացման աստիճանները չեն հաշվում:

Կազմում ենք օքսիդացման և վերականգնման պրոցեսների իոնային հավասարումները (կիսառեակցիաներ)՝ պահպանելով իոնական հավասարումները գրելու կանոնները, այն է՝ ուժեղ էլեկտրոլիտները գրփում են իոնների, իսկ թույլերը մոլեկուլների ձևով:


ա. Թթվային միջավայրում ընթացող ռեակցիաների դեպքում գործակիցներն ընտրում ենք  $\text{H}^+$  իոնների և  $\text{H}_2\text{O}$  մոլեկուլների օգնությամբ:  $\text{H}^+$  իոնները գրփում են հավասարման այն մասում, որտեղ կա թթվածնի ավելցուկ, որը կապվում է  $\text{H}^+$  իոնների հետ, առաջացնելով ջուր, այդ պատճառով յուրաքանչյուր ավելցուկ թթվածնի ատոմին վերցվում է կրկնակի  $\text{H}^+$  իոն: Առաջացած ջուրը գրփում է հավասարման հակառակ կողմում: Այս մեթոդում թթվածնի ատոմները չեն հաշվում, այլ պահպանում են ատոմների թվերի և լիցքերի գումարների հավասարությունը հավասարման աջ և ձախ կողմներում:



Հավասարեցնում ենք օքսիդիչի ընդունած և վերականգնիչի տված էլեկտրոնների թիվը և կիսառեակցիաները գրում.






Կրճատելուց հետո՝



Կազմում ենք մոլեկուլային հավասարումը.







բ. Յիմնային միջավայրում տեղի ունեցող ռեակցիաների դեպքում գործակիցները ընտրում ենք  $\text{OH}^-$  իոնների և  $\text{H}_2\text{O}$  մոլեկուլների օգնությամբ:  $\text{OH}^-$  իոնները գրվում են հավասարման այն մասում, որտեղ կա թթվածնի պակաս, որը լրացվում է  $\text{OH}^-$ -ի հաշվին՝ առաջացնելով ջուր: Այդ պատճառով յուրաքանչյուր պակասող թթվածնի ատոմին վերցվում է կրկնակի  $\text{OH}^-$  իոն: Առաջացած  $\text{H}_2\text{O}$  -ը գրվում է հավասարման հակառակ կողմում:





գ. Չեզոք միջավայրում ընթացող ռեակցիաների դեպքում գործակիցները ընտրում ենք միայն  $\text{H}_2\text{O}$  մոլեկուլների օգնությամբ: Զուրը միշտ գրվում է կիսառեակցիաների հավասարումների ձախ կողմում: Օքսիդիչ իոնը իր թթվածնի պակասությամբ կապում է ջրի  $\text{H}^+$  իոնների հաշվին, առաջացնելով  $\text{OH}^-$  իոններ, այդ պատճառով յուրաքանչյուր ավելցուկ թթվածնի ատոմին վերցվում է մեկական  $\text{H}_2\text{O}$  մոլեկուլ: Վերականգնման կիսառեակցիայում առաջացած  $\text{OH}^-$  իոնները միշտ գրվում են հավասարման աջ մասում:

Վերականգնիչ իոնը իր թթվածնի պակասը լրացնում է ջրի թթվածնի հաշվին, առաջացնելով  $\text{H}^+$  իոններ, այդ պատճառով յուրաքանչյուր պակասող թթվածնի ատոմին վերցվում է մեկական  $\text{H}_2\text{O}$  մոլեկուլ: Օքսիդացնան կիսառեակցիայում առաջացած  $\text{H}^+$  իոնները միշտ գրվում են հավասարման աջ մասում: Միջավայրի ռեակցիան կախված է երկու կիսառեակցիաների ժամանակ առաջացած  $\text{H}^+$  և  $\text{OH}^-$  իոնների քանակական հարաբերությունից:







Կրժատելուց հետո՝




### 8.9.3. ՕՎ (Red-Ox) ռեակցիաների տեսակները

ա. միջնորեկուլային - օքսիդիչ և վերականգնիչ են հանդիսանում տարբեր մոլեկուլների ատոմները:




Այս տեսակին են պատկանում նաև վերևում բերված բոլոր օրինակները:

բ. Եթերմորեկուլային - փոխվում են նույն մոլեկուլի տարբեր ատոմների օքսիդացման աստիճանները.







գ. ղիսպրոպրոցիայի (ինքնաօքսիդացման-ինքնավերականգնման) - միաժամանակ և՛ փոքրանում, և՛ մեծանում է նույն տարբեր ատոմների օքսիդացման աստիճանը. այդպիսի ռեակցիաներ տալիս են այն ատոմները, որոնք մոլեկուլում ունեն միջանկյալ օքսիդացման աստիճան՝



### 8.9.4. Միջավայրի ազդեցությունը ՕՎ (Red-Ox) ռեակցիայի ընթացքի վրա

Միջավայրից կախված, միևնույն նյութերի միջև ընթացող Red-Ox պրոցեսների բնույթը կարող է լինել տարրեր: Դայտնի է, որ  $\text{KMnO}_4$  ուժեղ օքսիդիչ է, սակայն ամենաբարձր օքսիդիչ ակտիվություն  $\text{MnO}_4^-$  ինները ցուցաբերում են ծծմբաթթվական միջավայրում վերականգնվելով մինչև  $\text{Mn}^{2+}$ : Չեզոք միջավայրում  $\text{MnO}_4^-$  օքսիդիչ հատկությունը ավելի թույլ է՝ վերականգնվում է մինչև  $\text{MnO}_2$ , իսկ հիմնային միջավայրում ամենաթույլն է՝ վերականգնվում է մինչև  $\text{MnO}_4^{2-}$ : Դա բացատրվում է նրանով, որ  $\text{H}^+$  ինները թուլացնում են  $\text{Mn}-\text{O}$  կապը և հեշտացնում վերականգնիչի ազդեցությունը: Չեզոք միջավայրում  $\text{MnO}_4^-$  անիոնների դեֆորմացիան զգալիորեն քիչ է, քանի որ  $\text{H}_2\text{O}$  մոլեկուլների բևեռացնող հատկությունը անհամեմատ թույլ է, քան  $\text{H}^+$  իններինը:  $\text{OH}^-$  ինները ընդհակառակը, որոշ չափով անրացնում են  $\text{Mn}-\text{O}$  կապը:



Թթվային միջավայրում թթվածնի ատոմները միանում են  $\text{H}^+$  իններին առաջացնելով ջուր, իսկ չեզոք միջավայրում ջրի մոլեկուլների հետ առաջանում են  $\text{OH}^-$  իններ: Սովորաբար թթվային միջավայր ստեղծում են ծծմբական թթվով, քանի որ ազոտական թթուն ցուցաբերում է օքսիդիչ, աղաքթուն՝ վերականգնիչ հատկություն, իսկ հիմնային միջավայր՝  $\text{KOH}$  կամ  $\text{NaOH}$  լուծույթով:



red                    ox


Պրոցեսի ընթացքի վրա կարող է ազդեցություն ունենալ ոչ միայն միջավայրը, այլև թթվի կամ հիմքի կոնցենտրացիան և ջերմաստիճանը:

Օրինակ, հիմնային միջավայրում քլորի դիսպրոպրոցիայի ռեակցիան ընթանում է տարրեր ձևով՝




Որոշ դեպքերում փոխելով միջավայրը, կարելի է նույնիսկ փոխել պրոցեսի ուղղությունը:

Օրինակ, ուժեղ թթվային միջավայրում  $\text{H}_2\text{O}_2$ -ը օքսիդացնում է յոդը՝



Իսկ թույլ թթվային միջավայրում  $\text{H}_2\text{O}_2$ -ը վերականգնում է յոդական թրուն՝



### 8.9.5. OX (Red-Ox) ռեակցիաների ուղղությունը

Օքսիդա-վերականգնիչ համակարգը կազմված է Red-Ox երկու գույգից՝

$\text{A}_{\text{red}} + \text{B}_{\text{ox}} \rightleftharpoons \text{A}_{\text{ox}} + \text{B}_{\text{red}}$ : Եթե մինյանց հետ փոխազդում են ուժեղ օքսիդիչը և ուժեղ վերականգնիչը, ապա ռեակցիան գործնականորեն ընթանում է մինչև վերջ: Եթե օքսիդիչը և վերականգնիչը ակտիվությամբ քիչ են տարրերվում, ապա ռեակցիայի ուղղությունը որոշվում է ըստ Գիբսի էներգիայի ( $\Delta G$ ) արժեքի:

Red-Ox ռեակցիան ինքնաբերաբար ընթանում է այն ուղղությամբ, որի դեպքում էլեկտրոդային ավելի բարձր պոտենցիալով գույգի օքսիդացված ձևը կատարում է օքսիդիչի դեր, իսկ ավելի ցածր պոտենցիալով գույգի վերականգված ձևը կատարում է վերականգնիչի դեր:

Օրինակ 9. Օգտվելով հետևյալ տվյալներից՝

$$E_{\text{Fe}^{3+}/\text{Fe}^{2+}}^0 = +0,77 \text{ V} ; E_{\text{Cl}_2/2\text{Cl}^-}^0 = +1,36 \text{ V} ; E_{\text{I}_2/2\text{I}^-}^0 = +0,54 \text{ V}$$

որոշել, ի՞նչ ռեակցիաներ տեղի կունենան երկարի միացությունների և նշված հալոգենների միջև:

Լուծում.  $E_{\text{Cl}_2/2\text{Cl}^-}^0 - \text{պոտենցիալը մեծ է}, E_{\text{Fe}^{3+}/\text{Fe}^{2+}}^0 \text{ պոտենցիալից},$

նշանակում է  $\text{Cl}_2$  -ը կիանդիսանա օքսիդիչ, իսկ  $\text{Fe}^{2+}$  վերականգնիչ՝






$E_{\text{I}_2/2\text{I}^-}^0 - \text{պոտենցիալը փոքր է} E_{\text{Fe}^{3+}/\text{Fe}^{2+}}^0 \text{ պոտենցիալից},$  որի


պատճառով I- կիանդիսանա վերականգնիչ, իսկ  $\text{Fe}^{3+}$  օքսիդիչ՝



Օրինակ 10. Կարելի է արդյո՞ք օքսիդացնել  $\text{KBr}$  -ը պերմանգանատի լուծությունով կամ  $\text{PbO}_2$  -ով (թթվային միջավայրում):



Լուծում. Երկուսն էլ կարող են օքսիդացնել  $\text{KBr}$ , քանի որ ունեն ավելի բարձր պոտենցիալ՝



Նշված սկզբունքը ճիշտ է այն դեպքերի համար, երբ ստանդարտ էլեկտրոդային պոտենցիալները զգալիորեն տարրերվում են, իսկ այն դեպքերում երբ նրանց արժեքները մոտ են, ռեակցիայի ուղղությունը կարող է փոխվել կախված ռեակցող նյութերի կոնցենտրացիայից, այսինքն  $\frac{0,059}{n} \lg \frac{[\text{Ox}]}{[\text{Red}]}$  արժեքից: Ընդ որում, ռեակցիայի ընթացքում

ելանույթերի կոնցենտրացիան փոքրանում է, իսկ վերջնայութերինը՝ մեծանում: Դա բերում է էլեկտրոդային պոտենցիալների արժեքի փոփոխության՝ օքսիդիչի էլեկտրոդային պոտենցիալը փոքրանում է, իսկ վերականգնիչի էլեկտրոդային պոտենցիալը մեծանում: Երբ երկու պոտենցիալների արժեքները հավասարվում են ռեակցիան ավարտվում է՝ հաստատվում է դինամիկ հավասարակշռություն:

**Օքսիդիչի և վերականգնիչի համարժեքը հաշվում են ելեկտրոնների այն քվից, որն ընդունում է օքսիդիչի մեկ մոլեկուլը կամ կորցնում վերականգնիչի մեկ մոլեկուլը՝**

$$\zeta = \frac{U}{n}$$

որտեղ՝  $\zeta$  - նյութի համարժեքը,  $U$  - օքսիդիչի կամ վերականգնիչի մոլային զանգվածը,  $n$  - մեկ մոլեկուլի կողմից ընդունած կամ կորցրած էլեկտրոնների թիվը:

Բանաձևից հետևում է, որ  $\zeta$ -ն հաստատուն թիվ չէ և կախված է ռեակցիայի բնույթից:

$$\text{MnO}_4^- + 5e + 8\text{H}^+ = \text{Mn}^{2+} + 4\text{H}_2\text{O}; \quad \zeta_{\text{KMnO}_4} = \frac{U}{5} = \frac{158}{5} = 31,8$$

$$2\text{S}_2\text{O}_3^{2-} \rightarrow \text{S}_4\text{O}_6^{2-} + 2e; \quad \zeta_{\text{Na}_2\text{S}_2\text{O}_3} = \frac{158}{1} = 158$$

$$\text{H}_2\text{S} + 4\text{H}_2\text{O} \rightarrow \text{SO}_4^{2-} + 10\text{H}^+ + 8e; \quad \zeta_{\text{H}_2\text{S}} = \frac{34}{8} = 4,25$$

$$\text{Cr}_2\text{O}_7^{2-} + 14\text{H}^+ + 6e \rightarrow 2\text{Cr}^{3+} + 7\text{H}_2\text{O}; \quad \zeta_{\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7} = \frac{294}{6} = 49$$

$$\text{C}_2\text{O}_4^{2-} \rightarrow 2\text{CO}_2 + 2e; \quad \zeta_{\text{H}_2\text{C}_2\text{O}_4 \cdot 2\text{H}_2\text{O}} = \frac{126}{2} = 63$$


$$\text{MnO}_4^- + 3e + 2\text{H}_2\text{O} = \text{MnO}_2 + 4\text{OH}^-; \quad \zeta_{\text{KMnO}_4} = \frac{158}{3} = 52,7$$

$$\text{MnO}_4^- + e = \text{MnO}_4^{2-}; \quad \zeta_{\text{KMnO}_4} = \frac{U}{1} = 158$$


### 8.9.6. ՕՎ պրոցեսների կենսաբանական դերը

Օրգանական նյութերի (ածխաջրեր, ճարպեր, ամինաթթուներ) ֆերմենտացին օքսիդացման ռեակցիաները կենդանի օրգանիզմում կատարվող կարևորագույն ռեակցիաներից են: Այդ ռեակցիաների արդյունքում օրգանիզմը ստանում է մեծ քանակությամբ էներգիա: Դասուն օրգանիզմին անհրաժեշտ էներգիայի մոտ 90%-ը ապահովվում է հյուսվածքներում ածխաջրերի և ճարպերի օքսիդացումից անջատված էներգիայի հաշվին: Մնացած 10%-ը ստացվում է ամինաթթուների օքսիդացումից:

Կենսաբանական օքսիդացումը ընթանում է բարդ մեխանիզմներով, բազմաթիվ ֆերմենտների մասնակցությամբ: Օքսիդացումը կատարվում է միտոքրոնդրիաներում: Օրգանական սուբստրատներից ինտերմեդիատներից էլեկտրոններն անցնում են թթվածին, վերականգնելով վերջինիս մինչև ջուր.



Էլեկտրոնների փոխանցումը կատարվում է մի շարք հաջորդական փուլերով: Աստիճանաբար՝ մի ինտերմեդիատից մյուսին փոխանցվելիս, էլեկտրոնները կորցնում են ազատ էներգիան: Շնչառական շղթայում թթվածին փոխանցված յուրաքանչյուր զույգ էլեկտրոնի հաշվին սինթեզվում է երեք մոլեկուլ ԱԵՖ: Մինչև թթվածին երկու էլեկտրոնի տեղափոխման ժամանակ անջատված ազատ էներգիան կազմում է 220 կՋ/մոլ: Դայտնի է, որ մեկ մոլեկուլ ԱԵՖ սինթեզի համար ստանդարտ պայմաններում ծախսվում է 30,5 կՋ: Այստեղից, պարզ է դառնում, որ էլեկտրոնների մեկ զույգի տեղափոխման ժամանակ անջատված էներգիայի մեծ մասը կուտակվում է ԱԵՖ –ում: Դասկանալի է դառնում նաև, վերականգնիչից մինչև թթվածին էլեկտրոնների բազմափուլ տեղափոխման անհրաժեշտությունը: Էլեկտրոնների զույգի տեղափոխման ժամանակ անջատված մեծաքանակ ջերմությունը (220 կՋ) տրոհվում է բաժինների, դրանից մեծանում է էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը: Գյուլկոզի օքսիդացման էներգետիկական բալանսը այսպիսին է. յուրաքանչյուր մոլեկուլ զյուկոզի օքսիդացումից շնչառական շղթա է փոխանցվում 12 զույգ էլեկտրոն, ընդհանուր առմանք անջատելով  $12 \cdot 220 = 2640$  կՋ էներգիա: Քանի որ գյուլկոզի այրման ռեակցիայի արդյունքում անջատվում է 2880 կՋ/մոլ էներգիա, նշանակում է գյուլկոզի օքսիդացման ազատ էներգիայի մեծ մասը ստացվում է շնչառական շղթայում ընթացող պրոցեսներից: Այս էներգիայի հաշվին սինթեզվում է 38 մոլ ԱԵՖ:




$$\text{ԱԿՖ} + \text{Ֆանօրգ} \rightarrow \text{ԱԵՖ}, \quad \Delta G^0 = 30,5 \text{ կՋ/մոլ} \quad (\Delta G^0' = 31,4 \text{ կՋ/մոլ})$$

Այս տվյալների հիման վրա կարելի է հաշվել գյուկոզի կենսաբանական օքսիդացման էֆեկտիվությունը (օ.գ.գ.-),

$$\eta = \frac{38 \cdot 31,4}{2880} \cdot 100 \% = 42 \%$$

### 8.9.7. Պերմանգանատոմետրիա


Պերմանգանատոմետրիայում ստանդարտ (հայտնի կոնցենտրացիայով) լուծույթ է հանդիսանում կալիումի պերմանգանատի  $\text{KMnO}_4$  լուծույթը: Ինչպես նշվեց, կալիումի պերմանգանատի վերականգնումն ընթանում է ըստ հետևյալ երեք կիսառեակցիաների՝






Թթվային միջավայրում  $\text{MnO}_4^-$ -ը վերականգնվում է մինչև  $\text{Mn}^{2+}$  և տիտրվող լուծույթը մնում է անգույն, քանի դեռ պարունակում է վերականգնիչ՝



Չանարժեք կետի հաստատումից հետո  $\text{KMnO}_4$  -ի առաջին ավելցուկ կաթիլը տիտրվող լուծույթին հաղորդում է վարդագույն երանգ (կալիումի պերմանգանատի լուծույթները ունեն այնպիսի ինտենսիվ գունավորում, որ 0,02 Ս լուծույթի մեկ կաթիլը կարող է նկատելի գունավորել 100 մլ լուծույթը): Այսպիսով, ուժեղ թթվային միջավայրում պերմանգանատոմետրիկ տիտրման ինդիկատոր է հանդիսանում ինքը՝ ստանդարտ լուծույթը: Տիտրման այսպիսի եղանակը կոչվում է «առանց ինդիկատորային» եղանակ: Թթվային միջավայրում պերմանգանատոմետրիկ տիտրումը կիրառում են երկարի հանքերում երկարի (II) աղերի, ջրածնի պերօքսիդի կոնցենտրացիայի և այլն որոշման համար:





Չիմնային միջավայրում պերմանգանատոմետրիկ տիտրումը կիրառում են օրգանական նյութերի՝ գլիցերինի, մրջնաթթվի, մեթիլ սախրտի և այլն որոշման համար.



**Կալիումի պերմանգանատի լուծույթի կայունությունն ու պատրաստումը:** Պերմանգանատումնետրիկ տիտրման համար օգտագործում են 0,02-0,05 Ն KMnO<sub>4</sub> -ի լուծույթ: KMnO<sub>4</sub> -ի կշռանքը լուծելով որոշակի կոնցենտրացիայի լուծույթ ստանալ հնարավոր չէ, որովհետև KMnO<sub>4</sub> -ի ռեակտիվը սովորաբար պարունակում է MnO<sub>2</sub>, որը կատալիզում է ջրի օքսիդացումը՝



Սա բերում է KMnO<sub>4</sub> -ի մի մասի ծախսի: Բացի դրանից բռած ջուրը կարող է պարունակել օրգանական նյութեր, որոնց օքսիդացման վրա ևս ծախսվում է KMnO<sub>4</sub>: Այս պատճառով հարմար է KMnO<sub>4</sub> -ի լուծույթը պատրաստել նախօրոք: Լուծույթը պատրաստելուց հետո այն անհրաժեշտ է տարացնել (քայլայնան ռեակցիան արագացնելու համար) և բողնել 8-10 օր, որպեսզի MnO<sub>2</sub>-ը նստի: MnO<sub>2</sub> -ի նստվածքը ֆիլտրելուց հետո ստացված լուծույթը պահում են նույն շնորհում, փոշուց և լույսից հեռու: Այս ձևով պատրաստված KMnO<sub>4</sub> -ի լուծույթի նորմալությունը որոշում են ըստ թրթնջկաթթվի՝ H<sub>2</sub>C<sub>2</sub>O<sub>4</sub>·2H<sub>2</sub>O կամ թրթնջկաթթվի նատրիումական աղի՝ Na<sub>2</sub>C<sub>2</sub>O<sub>4</sub>: Այս երկու նյութերն ել կայուն միացություններ են և հնարավոր է պատրաստել նրանց ճիշտ տիտրված լուծույթներ: Կալիումի պերմանգանատով նրանք օքսիդանում են քանակապես: KMnO<sub>4</sub> -ի և թրթնջկաթթվի միջև փոխազդեցությունն ընթանում է ըստ հավասարման՝



$$\zeta_{\text{H}_2\text{C}_2\text{O}_4 \cdot 2\text{H}_2\text{O}} = \frac{126}{2} = 63$$

Մեկ լիտր 0,02 Ն թրթնջկաթթվի լուծույթը պատրաստելու համար պահանջվում է  $63 \cdot 0,02 = 1,26$  գ H<sub>2</sub>C<sub>2</sub>O<sub>4</sub>·2H<sub>2</sub>O: Մեկ լիտր 0,02 Ն KMnO<sub>4</sub> լուծույթի համար՝  $31,6 \cdot 0,02 = 0,632$  գ KMnO<sub>4</sub>: Կալիումի պերմանգանատի լուծույթի նորմալությունը և տիտրը որոշելու համար թրթնջկաթթվի ճիշտ կշռանքը տեղափոխում են 200 մլ տարողությամբ կոլրի մեջ, ավելացնում 10-15 մլ նոսր (1:4) ծծմբական թթու, տաքացնում մինչև 70-80°C և դանդաղ խառնելով ավելացնում KMnO<sub>4</sub> -ի մոտավոր կոնցենտրացիայի լուծույթ մինչև բաց վարդագույն գունավորում, որը չպետք է անհետանա 1-2 րոպեի ընթացքում: Ըստ օքսիդացման համար ծախսված KMnO<sub>4</sub> -ի լուծույթի միլիլիտրերի որոշում են նրա ճիշտ կոնցենտրացիան:

**Օրինակ 11.** 0,252 գ թրթնջկաթթվի օքսիդացման համար ծախսվել է 20 մլ KMnO<sub>4</sub> լուծույթ: Որոշել KMnO<sub>4</sub> լուծույթի նորմալությունը և տիտրը:

Լուծում.      63 գ թրթնջկաթթու — 31,6 գ KMnO<sub>4</sub>



$$m_{\text{KMnO}_4} = \frac{m_{\text{H}_2\text{C}_2\text{O}_4 \cdot 2\text{H}_2\text{O}} \cdot \zeta_{\text{KMnO}_4}}{\zeta_{\text{H}_2\text{C}_2\text{O}_4 \cdot 2\text{H}_2\text{O}}} = \frac{0,252 \cdot 31,6}{63} = 0,1264 \text{ g}$$

$$T_{\text{KMnO}_4} = \frac{0,1264 \text{ g}}{20 \text{ mL}} = 0,00632 \text{ g/mL}$$

$$\gamma_{\text{KMnO}_4} = \frac{0,00632 \cdot 1000}{31,6} = 0,2 \text{ L}$$

### 8.9.8. Լաբորատոր աշխատանք

**Փորձ 1.** Ջրածնի պերօքսիդի ( $\text{H}_2\text{O}_2$ ,  $M = 34$ ) լուծույթի կոնցենտրացիայի որոշումը: Թթվային միջավայրում ռեակցիան ընթանում է ըստ հավասարման՝



Օքսիդացման կիսառեակցիայից հետևում է, որ

$$\beta_{\text{H}_2\text{O}_2} = \frac{34}{2} = 17:$$

Արտադրվող ջրածնի պերօքսիդի լուծույթը խիտ է, այդ պատճառվ տիտրումից առաջ այն նոսրացնում են ջրով: 1մլ արտադրական  $\text{H}_2\text{O}_2$  տեղափոխում են 100 մլ տարրողության չափից կոլբի մեջ, ավելացնում ջոլոր մինչև նիշը և թափահարում: Ապա ստացված լուծույթից վերցնում են 20 մլ, տեղափոխում կոլբի մեջ, ավելացնում մոտ 3 մլ նոսր (1:4) ծծմբական թթու և տիտրում  $\text{KMnO}_4$  ստանդարտ լուծույթով մինչև բաց վարդագույն:

**Օրինակ 12.** 1մլ արտադրական ջրածնի պերօքսիդի տեղափոխել են 100մլ չափից կոլբի մեջ և ջրով նոսրացրել մինչև նիշը: 20 մլ նոսրացված լուծույթի տիտրման համար ծախսվել է 16մլ 0,02Ն  $\text{KMnO}_4$  լուծույթ: Որոշել ջրածնի պերօքսիդի լուծույթի նորմալությունը.

$$\text{Լուծում.} \quad \text{Ն}_{\text{H}_2\text{O}_2} = \frac{0,02 \cdot 10}{20} = 0,016 \text{ N}$$

$$T = \frac{0,016 \cdot 17}{1000} = 0,000272 \text{ g/mL}$$

Նշանակում է 100մլ նոսրացված լուծույթը կամ 1մլ չնոսրացրած ջրածնի պերօքսիդը պարունակում է  $0,000272\text{գ}/\text{մլ} \cdot 100\text{մլ} = 0,0272\text{գ}$   $\text{H}_2\text{O}_2$ , 100 մլ արտադրական ջրածնի պերօքսիդը կպարունակի՝  $0,0272 \cdot 100 = 2,72 \text{ գ } \text{H}_2\text{O}_2$ :

**Փորձ 2. Երկարի (II) աղերի տիտրումը:** Երկարի (II) աղերը, օրինակ, երկարաջասապը  $\text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$ , օդի թթվածնով հեշտությամբ օքսիդանում են երկարի (III) աղերի: Չաճախ անհրաժեշտ է լինում որոշել մաքուր երկարի (II) սուլֆատի պարունակությունը արտադրական երկարաջասապում: Երկարի (II) աղերի որոշումը  $\text{KMnO}_4$ -ի լուծույթով հիմնված է  $\text{Fe}^{2+}$  մինչև  $\text{Fe}^{3+}$  օքսիդացման վրա: Թթվային միջավայրում օքսիդացումն ընթանում է շատ արագ: Ունակցիայի հավասարումը բերված է վերևում: Ըստ այդ հավասարման՝

$$\zeta_{\text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}} = \frac{278}{1} = 278$$

**Որոշման ընթացքը:** 0,4 գ արտադրական երկարաջասապը  $\text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$  տեղափոխում են 100 մլ չափիչ կոլթի մեջ, ավելացնում 40-50 մլ թորած ջուր, թափահարում մինչև երկարաջասապի լրիվ լուծվելը և ավելացնում 7-8 մլ նոսր (1:4) ծծմբական թթու: Դրանից հետո ավելացնում են ջուր մինչև նիշը: Լուծույթը զգուշորեն խառնում են, նրանից վերցնում 20 մլ, տեղափոխում կոլթի մեջ, ավելացնում 10 մլ նոսր ծծմբական թթու և տիտրում  $\text{KMnO}_4$ -ի ստանդարտ լուծույթով մինչև բաց վարդագույն:

**Օրինակ. 13.** 0,4 գ երկարաջասապը լուծել են 100 մլ ջրում: Երկարաջասապի 20 մլ լուծույթի տիտրման համար ծախսվել է 14,2 մլ 0,015 Ն  $\text{KMnO}_4$ -ի լուծույթ: Որոշել երկարաջասապի լուծույթի նորմալությունը:

$$\text{Նորմ.} \quad n_{\text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}} = \frac{14,2 \cdot 0,015}{20} = 0,01065 \text{ Ն}$$

Յետևաբար վերցրած 0,4 գ կշռանքում (կամ 100 մլ լուծույթում) պարունակվում է՝



$$\frac{278 \cdot 0,01065}{10} = 0,296 \text{ գ } \text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$$

որը տոկոսներով կազմում է՝

$$\frac{0,296 \cdot 100}{0,4} = 74 \%$$

### 8.9.9. Յողոմետրիա


Այս մեթոդի հիմքում ընկած են երկու ռեակցիա՝







Առաջին ռեակցիայում յոդը հանդիսանում է օքսիդիչ վերականգնվելով մինչև  $I^-$ , իսկ երկրորդում  $I^-$  ինները օքսիդիչի ազդեցությամբ վերածվում են  $I_2 - h$ : Այսպիսով, յոդոմետրիկ եղանակով կարելի է որոշել և՝ վերականգնիչները, և՝ օքսիդիչները:

**Փորձ 3. Վերականգնիչի քանակական որոշումը յոդի լուծույթով:**


**Ուղղակի տիտրում:** Բարձր մաքրության յոդը ստանում են թրումով և այդ ճանապարհով ստացված յոդը կարելի օգտագործել ստանդարտ լուծույթ պատրաստելու համար: Բյուրեղական յոդը ջրում գործնականորեն անլուծելի է, սակայն նրա լուծելիությունը եապես բարձրանում է կալիումի յոդիդի լուծույթում՝



Յոդը թույլ օքսիդիչ է, սակայն նի շարք միացությունների օքսիդացման համար կիրառելի՝





Բերված օրինակներում ինդիկատոր է ծառայում օսլայի սուսպենցիան: Տիտրման վերջնական կետը որոշում են ավելցուկ յոդի և օսլայի միջև կապույտ կոմպլեքսի առաջանալով: Յոդով ուղղակի տիտրումը սովորաբար կատարում են չեզոք կամ թթվային միջավայրում: Յիմնային միջավայրում՝  $pH > 11$  պայմաններում յոդը օքսիդանում է մինչև հիպոյոդիտ  $IO^-$ , որը անկայուն միացություն է և տրոհվում է յոդատ՝  $IO_3^-$  և յոդիդ՝  $I^-$  ինների՝






Այս միջանկյալ ռեակցիաների հետևանքով ճշտությունը նվազում է:

**Փորձ 4. Օքսիդիչի քանակական որոշումը յոդով:** Անուղղակի տիտրում:








Յոդով անուղղակի տիտրման եղանակը հազվադեպ է կիրառվում օքսիդիչները քանակապես որոշելու համար: Այդ եղանակի հիմնական սխեման է՝




Օքսիդիչի քանակական որոշման համար նրա թթվեցրած լուծույթին ավելացնում են կալիում յոդիդի ավելցուկ քանակով լուծույթը: Օքսիդիջ ԿԻ -ի լուծույթից դուրս է մղում համարժեք քանակով ազատ յոդ: Անջատված յոդը տիտրում են նատրիումի թիոսուլֆատի ստանդարտ լուծույթով:



Ինդիկատոր է ծառայում օսլայի լուծույթը: Համարժեք կետը որոշում են կապույտ գույնի անհետացումով: Օսլան պետք է ավելացնել տիտրման վերջում, երբ յոդի մեծ մասը տիտրվել է: Եթե օսլան ավելացնում են տիտրման սկզբում, ազատ յոդը ադսորբվում է օսլայի մակերեսին, դժվար է ռեակցում թիոսուլֆատի հետ, կապույտ գույնի անհետացումը լինում է դանդաղ և համարժեք կետի որոշումը հստակ չի լինում: Ստորև բերված են անուղղակի յոդոմետրիկ տիտրման օրինակներ:




Անուղղակի յոդոմետրիկ տիտրման մեթոդը հատկապես լայն կիրառվում է  $Cl_2$ ,  $Br_2$ ,  $Cu^{2+}$ -ի քանակական որոշման համար: Այս տիտրման ժամանակ հաճախ տեղի են ունենում սխալներ՝ թթու լուծույթներում օդի թթվածնով  $I^-$  -ի օքսիդացման հետևանքով՝



**Յոդոմետրիկ որոշման օրինակներ:**


**Փորձ 5. Մրջնալիերիդի  $CH_2O$  քանակական որոշումը կատարում են անուղղակի տիտրման եղանակով.**





Ուսակցիան ավարտվելուց հետո հիմքի ավելցուկը չեղքացնում են թթվով և մնացած (ավելցուկ) յոդը տիտրում նատրիումի

թիոսուլֆատով: Գիտենալով ավելացված յոդի քանակը և նրա մնացորդը ռեակցիայից հետո, տարբերությամբ կարելի է որոշել յոդի այն քանակը, որը ծախսվել է ֆորմալդեհիդի օքսիդացման համար:

**Փորձ 6. Ասկորբինաթթվի,  $C_6H_8O_6$ , քանակական որոշումը:** Ասկորբինաթթուն (Վիտամին C) պարունակվում է թարմ քանչարեղենում (կաղամբ, ճակնդեղ, կարտոֆիլ և այլն), մրգերում (կիտրոն, նարինջ և այլն), հատապտուղներում (մորի, սև հաղարջ), կաթում, հավկիթում: Ասկորբինաթթուն կարգավորում է օրգանիզմում օքսիդավերականգնման ռեակցիաները, բարձրացնում օրգանիզմի դիմադրողականությունը ինֆեկցիաների նկատմամբ: Ասկորբինաթթվի քանակական որոշումը հիմնված է յոդով նրա օքսիդացման ռեակցիայի վրա (առաջանում է դեհիդրված ձևը):



ասկորբինաթթու դեհիդրոասկորբինաթթու  
ռեակցիայի կիսահավասարումներն են՝



Ասկորբինաթթվի օքսիդացման կիսառեակցիաներից հետևում է, որ

$$\zeta_{C_6H_8O_6} = \frac{176}{2} = 88 \text{ գ/մոլ}$$

**Որոշման ընթացքը:** Կշռում են 1 գ ասկորբինաթթու: Կշռանքը քանակապես տեղափոխում են 100 մլ չափիչ կոլբի մեջ և լուծում թրած ջրում: Լուծույթի ծավալը հասցնում են մինչև նիշը և կոլբը շուրջ տալով մի քանի անգամ խառնում: Ստացված լուծույթից տիտրման համար պիպետով վերցնում են 10 մլ, այն լցնում են 50-100 մլ տարրողության կոլբի մեջ, ավելացնում են 2 կաթիլ օսլայի 1 % լուծույթ և տիտրում են 0,1 Ն յոդի լուծույթով մինչև կայուն բաց կապույտ գույնի առաջացումը:

**Օրինակ. 14.** 10 մլ ասկորբինաթթվի լուծույթի տիտրման համար ծախսվել է 11,4 մլ 0,015 Ն յոդի լուծույթ:

$$\gamma_{C_6H_8O_6} = \frac{11,4 \cdot 0,015}{10} = 0,0171 \text{ h.mol/L}; \quad \zeta_{C_6H_8O_6} = \frac{176}{2} = 88 \text{ q/mol}$$

Ասկորբինաթթվի օքսիդացման կիսառեակցիայից հետևում է, որ

$$T = \frac{0,0171 \cdot 88}{1000} = 0,0015 \text{ q/L}$$

10մլ լուծույթում կպարունակվի՝  $m=V \cdot T = 10\text{mL} \cdot 0,0015 \text{ q/L} = 0,015 \text{ q}$ :  
100մլ լուծույթում կպարունակվի 0,15q, հետևաբար լուծույթը  
0,15% է:

## 9. Էլեկտրոքիմիա

Էլեկտրաքիմիան ուսումնասիրում է նյութի և էլեկտրական դաշտի փոխազդեցությանը պայմանավորված քիմիական փոխարկումների օրինաչափությունները, և քիմիական (նաև կենսաբանական) ռեակցիաներին ուղեկցող էլեկտրական երևույթները:

Էլեկտրաքիմիական առաջին հետազոտությունները հյուսվածքների և օրգանների հետ կատարել է իտալացի Ֆիզիոլոգ Գալվանին (1780), հայտնաբերելով պոտենցիալի թիջք մետաղի և գորտի մկանի համան տեղում:


Կենդանի օրգանիզմում ընթացող օքսիդացնող փոխարկումներում մասնակցում են մի շարք նյութեր, որոնք ընդունակ են դարձելիորեն օքսիդանալ և վերականգնել, ընդ որում այդ նյութերը տարբեր օքսիդավերականգնման պոտենցիալ ունեցող վերօք զույգերի նման օժտված են օքսիդավերականգնման տարբեր ունակությամբ: Օրինակ՝ միտոքրոնդիրումներում գործող տերմինալ օքսիդացման շղթայի կոֆերմենտները և ցիտոքրոմները մասնակցում են պոտենցիալի և էլեկտրոնների տրամապորտին դեպի թթվածին, ապահովելով ջրի առաջացումը:

Արդյունքում քիմիական էներգիան փոխակերպվում է էլեկտրականի՝ միտոքրոնդիրալ թաղանթի վրա ծագած թաղանթային պոտենցիալի հաշվին սինթեզվում է ԱԵՖ:

Կենսաբանական համակարգերում ընթացող օքսիդավերականգնման պրոցեսների մեխանիզմները հասկանալու համար նպատակահարմար է քննարկել գալվանական էլեմենտի աշխատանքը, որում քիմիական էներգիան փոխարկվում է էլեկտրականի:

### 9.1. Էլեկտրոդային պոտենցիալ: Ներմնատի հավասարումը

Մետաղը ջրի մեջ ընկըմնելիս, ջրի թևեռացված մոլեկուլների ազդեցությամբ, մետաղի իոնները պոկվում են բյուրեղացանցից և անցնում հեղուկ ֆազ:



**Ակ.9.1.** Զրում մակերեսորեն տեղաբաշխված կատիոնների հիդրատացումը (մետաղի մակերեսային լուծելիությունը): Մո -հեղուկ և պինդ ֆազերի բաժանման մակերես:

Արդյունքում մետաղը ձեռք է բերում որոշ բացասական լիցք էլեկտրոնների ավելցուկի հաշվին, իսկ մետաղին հարակից ջրի շերտը


կատիոնների հաշվին լիցքավորվում է դրական (նկ.9.2): Այս պրոցեսը դարձելի է.

$$\text{Me}_{(\omega)}^{n+} \rightleftharpoons \text{Me}_{(h)}^{n+}$$

Ուղիղ պրոցեսը համարժեք է օքսիդացմանը, իսկ հակառակը վերականգնմանը: Յետևաբար՝ կարելի է գրել.

$$\text{Me} - ne \rightleftharpoons \text{Me}^+$$

Մետաղ-ջուր բաժանման սահմանին գոյանում է կրկնակի էլեկտրական շերտ և ծագում է պոտենցիալի թրիչք, որի արժեքը կախված է մետաղի բյուրեղացանցի էներգիայից և մետաղի կատիոնների հիդրատացվելու ունակությունից:



**Նկ.9.2.** Մետաղ-հեղուկ սահմանին կրկնակի էլեկտրական շերտի առաջացումը (դիֆուզիոն շերտ)

Մետաղը սեփական աղի լուծույթում ընկղնելիս, կատիոնների տեղափոխումը լուծույթ արգելակվում է, լուծույթում եղած իոնների անցումը մետաղի բյուրեղացանցի բաղադրության մեջ արագանում է կախված լուծույթի կոնցենտրացիայից:

Եթե համակարգում գերակշռում է իոնների դեպի լուծույթ տեղափոխման պրոցեսը, ապա մետաղը ծեռք է բերում բացասական լիցք: Եթե գերակշռում է կատիոնների մետաղի վրա նստելու պրոցեսը, մետաղը ծեռք է բերում դրական լիցք: Երկու դեպքում էլ մետաղ-հեղուկ բաժանման սահմանին ծագում է պոտենցիալների տարբերություն, որը կոչվում է էլեկտրոդային պոտենցիալ (լատ. potentia -հնարավորություն, հզորություն): Էլեկտրոդային պրոցեսը գրվում է այսպես.

$$\text{Me}^{n+} + ne \rightleftharpoons \text{Me}$$

Հայտնի է, որ լիցքի դարձելի տեղափոխման էլեկտրական աշխատանքը հավասար է.

$$A_{t\cdot} = nF\Phi_{\text{Me}^{n+}/\text{Me}}$$

որտեղ  $n$  - իոնի լիցքը,  $\Phi$  - էլեկտրոդի պոտենցիալը ( $V$ ),  $F$  - Ֆարադեյի թիվը: Թերմոդինամիկորեն դարձելի պայմաններում այն հավասար է  $\Delta G$ : Դարձելի պրոցեսի քիմիական աշխատանքը հավասար է.

$$-\Delta G = A_{\max}$$

Մետաղի իոնների տեղափոխման առավելագույն աշխատանքը հավասարակշռության պահին ( $P = \text{const}$ ) կլինի.

$$\Delta G = -nF\Phi_{\text{Me}^{n+}/\text{Me}} \quad (9.1.)$$

Ըստ քիմիական ռեակցիայի հզորերմի (Գիբսի էներգիայի) հավասարման.

$$\Delta G = -2,3 RT \lg K + 2,3 RT \lg \frac{a_{Me}}{a_{Me^{n+}}} \quad (9.2.)$$

որտեղ՝  $R$ -ումիվերսալ գազային հաստատուն,  $T$ - ջերմաստիճան,  
 $K$  - տրված ռեակցիայի հավասարակշռության հաստատունը,  
 $a_{Me}$  - մետաղի ակտիվությունը,

$a_{Me^{n+}}$  - մետաղի հոնների ակտիվությունը լուծույթում:

Տեղադրելով (9.2) հավասարման մեջ  $\Delta G$ -ի արժեքը 9.1-ից,

$$\text{կատացվ. } -\eta \varphi F = -2,3 RT \lg K + 2,3 RT \lg \frac{a_{Me}}{a_{Me^{n+}}}, \quad \text{որտեղից}$$

$$\varphi = \frac{2,3RT}{nF} \lg K - \frac{2,3RT}{nF} \lg \frac{a_{Me}}{a_{Me^{n+}}} \quad (9.3.)$$

Դաշտական հաստատունը՝  $K$ -ն, տվյալ պայմաններում հաստատուն մեծություն է, հետևաբար հաստատուն է նաև  $\frac{2,3RT}{nF} \lg K$  արտահայտությունը և հանդիսանում է էլեկտրոդի էլեկտրաքիմիական բնութագիրը: Այն նշանակելով  $\varphi^0$ , կստանանք հետևյալ արտահայտությունը.

$$\frac{2,3RT}{nF} \lg K = \varphi^0 \quad (9.4.)$$

Քանի որ մետաղի ակտիվությունն ընդունվում է հավասար միավորի ( $a_{Me} = 1$ ), ապա (9.3.) հավասարումը ընդունում է հետևյալ տեսքը.

$$\varphi = \varphi^0 + \frac{2,3RT}{nF} \lg a_{Me^{n+}} \quad (9.5.)$$

(9.5.) հավասարումը կոչվում է **Ներնստի հավասարում**:

(9.5.)-ից երևում է, որ էլեկտրոդային պոտենցիալի արժեքը կախված է ջերմաստիճանից, մետաղի բնույթից, լուծույթում մետաղի հոնների ակտիվությունից (կոնցենտրացիայից) և դրանց լիցքից:

298K-ում  $\frac{2,3RT}{F}$  արտահայտության արժեքը հավասար է 0,059 և

Ներնստի հավասարումը կլինի.

$$\varphi = \varphi^0 + \frac{0,059}{n} \lg a_{Me^{n+}} \quad (9.6.)$$

Այժմ պարզենք  $\varphi^0$ -ի ֆիզիկական իմաստը: Ներնստի հավասարումից հետևում է, որ  $a_{Me^{n+}}=1$  արժեքի դեպքում  $\frac{0,059}{n} \lg a_{Me^{n+}}$

արտահայտությունը հավասարվում է զրոյի, հետևաբար.

$$\varphi = \varphi^0 \quad (9.7.)$$

$\varphi^0$ -ն կոչվում է ստանդարտ (նորմալ) պոտենցիալ:

Էլեկտրոդային պոտենցիալի բացարձակ արժեքը չափել հնարավոր չէ: Դնարավոր է չափել միայն պոտենցիալների տարրերությունը: Այդ նպատակով հետազոտվող էլեկտրոդը շղաք է նոցվում համեմատիչ էլեկտրոդի հետ, որի պոտենցիալը հայտնի է և հաստատում և չափվում է շղաքի էլեկտրաշարժ ուժը, այսինքն էլեկտրոդի պոտենցիալի հարաբերական արժեքը: Ներճաշի առաջարկով որպես համեմատիչ էլեկտրոդ վերցվում է ստանդարտ ջրածնական էլեկտրոդը, որի ստանդարտ պոտենցիալը պայմանականորեն ընդունվում է հավասար գրոյի:


Դասավորելով մետաղները էլեկտրոդային պոտենցիալների աճման կարգով, ստանում ենք մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը (հավելված, այդուսակ 4):

## 9.2. Գալվանական էլեմենտ, էլեկտրաշարժ ուժ

Գալվանական էլեմենտ է կոչվում այնպիսի սարքը, որում քիմիական ռեակցիայի էներգիան անմիջականորեն փոխարկվում է էլեկտրական էներգիայի:

Գալվանական էլեմենտը կազմվում է երկու էլեկտրոդից, որոնք միացվում են արտաքին հաղորդիչով, իսկ էլեկտրոլիտների լուծույթները շփման մեջ են դրվում միմյանց հետ:

Որպես գալվանական էլեմենտի օրինակ, քննարկենք Դանիել-Յակոբիի էլեմենտը (նկ. 9.3.):





Նկ. 9.3. Դանիել-Յակոբիի էլեմենտը

Այն կազմված է ցինկի և պղնձի էլեկտրոդներից, որոնք ընկրմված են համապատասխանաբար  $ZnSO_4$  և  $CuSO_4$  –ի լուծույթների մեջ: Միամատիկորեն այդ էլեմենտը ցույց է տրվում հետևյալ կերպ:




Ցինկի էլեկտրոդը հաղորդաբարով պղնձի էլեկտրոդին միացնելիս, էլեկտրոնները ցինկի էլեկտրոդից հոսում են դեպի պղնձի էլեկտրոդ և արտաքին շղայում առաջացնում հոսանք, որը կարելի է չափել գալվանոմետրի օգնությամբ: Պղնձի վրա տեղափոխված էլեկտրոնները լիցքաբափում են լուծույթից պղնձի վրա նստած  $Cu^{2+}$  իոններին: Ցինկե էլեկտրոդը կատարում է անոդի դեր՝ նրա վրա գնում է օքսիդացում, իսկ պղնձի էլեկտրոդը՝ կատոդի դեր՝ նրա վրա գնում է վերականգնում:






Ցինկե էլեկտրոդի բաժնում ստեղծվում է  $\text{Zn}^{2+}$ -ի ավելցուկ, իսկ  $\text{Cu}^{2+}$ -ի բաժնում  $\text{Cu}^{2+}$ -ի պակաս: Ստեղծված էլեկտրական դաշտում դրական իոնները շարժվում են անոդային տարածքից կատոդային տարածք, իսկ բացասական իոնները հակառակ ուղղությամբ և ներքին շղթան փակվում են:

Գումարային ռեակցիայի հավասարումն է.



Գալվանական էլեմենտը կաշխատի այնքան ժամանակ, մինչև ցինկի էլեկտրոդը լրիվ լուծվի, այսինքն վերածվի  $\text{Zn}^{2+}$  իոնների:


Գալվանական էլեմենտը ըստ ուղղության դարձելի է, եթե դարձելի են անոդային և կատոդային պրոցեսները, և արտաքինից հակառակ ուղղությամբ էլշու կիրառելիս, որի արժեքը մեծ է էլեմենտի էլշուից, դրանց ուղղությունները փոխվում են հակառակի: Օրինակ, Դանիել-Յակոբիի էլեմենտը: Երբ էլեկտրոդային պրոցեսներից գոնե մեկն անդարձելի է ըստ ուղղության, էլեմենտը անդարձելի է: Օրինակ.



Էլեմենտի աշխատանքի ժամանակ.



Արտաքինից էլշու կիրառելիս.



Ըստ ուղղության դարձելի կամ անդարձելի գալվանական էլեմենտը կարող է աշխատել թերմոդինամիկորեն դարձելի կամ անդարձելի պայմաններում: Էլեկտրական հոսանք տվող գալվանական էլեմենտը թերմոդինամիկորեն անդարձելի է: Երբ այդ հոսանքը անշահելի փոքր է (անվերջ փոքր), էլեմենտը թերոդինամիկորեն դարձելի է: **Պոտենցիալ-ների առավելագույն տարրերությունը, որը ծագում է թերմոդինամիկորեն դարձելի գալվանական էլեմենտում, բոլոր ֆազերի բաժանման սահմաններում՝ կոչվում է էլշու:** Այն որոշվում է իբրև այդ պոտենցիալների հանրահաշվական գումարը.

$$E = \varphi_{\text{ox}} - \varphi_{\text{red}}$$

Ցանկացած գալվանական էլեմենտի էլշուն որոշվում է նաև էլեկտրոդային պոտենցիալների տարրերությամբ.

$$E = \varphi_{\text{red}_1} - \varphi_{\text{red}_2} \quad (\varphi_{\text{red}_1} > \varphi_{\text{red}_2}) \quad (9.8.)$$

Դանիել-Յակոբիի էլեմենտի էլշուն հավասար կլինի.

$$E = \varphi_{\text{Cu}^{2+}/\text{Cu}} - \varphi_{\text{Zn}^{2+}/\text{Zn}} \quad (9.9.)$$

Օգտվելով Ներնստի հավասարումից (9.6.) էլշուի հաշվարկը կարելի է ներկայացնել.

$$E_x = \varphi_{Cu^{2+}/Cu}^0 + \frac{0,059}{2} \lg a_{Cu^{2+}} - \left( \varphi_{Zn^{2+}/Zn}^0 + \frac{0,059}{2} \lg a_{Zn^{2+}} \right) = \\ = \varphi_{Cu}^0 - \varphi_{Zn}^0 + \frac{0,059}{2} \left( \lg a_{Cu^{2+}} - \lg a_{Zn^{2+}} \right)$$

Քանի որ  $E^0 = \varphi_{Cu^{2+}/Cu}^0 - \varphi_{Zn^{2+}/Zn}^0$ , ապա (9.10.) բանաձևը ներկայացվում է.

$$E_x = E^0 + \frac{0,059}{2} \lg \frac{a_{Cu^{2+}}}{a_{Zn^{2+}}} \quad (9.11.)$$

$$\text{կամ } E_x = E^0 - \frac{0,059}{2} \lg \frac{a_{Zn^{2+}}}{a_{Cu^{2+}}} \quad (9.12.)$$

Նույն լուծույթների դեպքում ակտիվությունները կարելի են փոխարինել կոնցենտրացիաներով.

$$E_x = E^0 - \frac{0,059}{2} \lg \frac{C_{Zn^{2+}}}{C_{Cu^{2+}}} \quad (9.13.)$$

Ներնստի հավասարումը ցանկացած գալվանական էլեմենտի համար.

$$E = E^0 - \frac{2,3RT}{nF} \lg \gamma \quad (9.14.)$$

Որտեղ,  $E^0 = \frac{2,3RT}{nF} \lg K$ ,  $\gamma$  - վերջնանյութերի և սկզբնանյութերի ակտիվությունների (կոնցենտրացիաների) հարաբերությունն է՝ համապատասխան ցուցիչներով:

**Օրինակ 1.** Որոշել Դանիել-Յակոբիի էլեմենտի էլշուն, որում  $Zn^{2+}$  և  $Cu^{2+}$  իոնների կոնցենտրացիաները համապատասխանաբար հավասար են  $0,1$  և  $0,2$  mol/L:  $\varphi_{Zn^{2+}/Zn}^0 = -0,76\text{V}$ ,  $\varphi_{Cu^{2+}/Cu}^0 = +0,34\text{V}$

**Լուծում.**

$$E_x = +0,34 - (-0,76) - \frac{0,059}{2} \lg \frac{0,1}{0,2} = 1,1 + \frac{0,059}{2} \cdot \lg 2 = 1,1 + \frac{0,059}{2} \cdot 0,3 = \\ = 1,1 + 0,00885 = 1,10885 \text{ V}$$

**Օրինակ 2.** Լակտատիդիդրօքսինազ ֆերմենտը կատալիզում է հետևյալ դարձելի ռեացիան՝

Պիրուտատ-իոն. + ՆԱԴԻ +  $H^+$   $\rightleftharpoons$  ՆԱԴԻ<sup>+</sup> + լակտատ-իոն  
Որոշել, քանի էլեկտրոն է տեղափոխվում վերականգնիչից օքսիդիչին: Յաշվել ռեակցիայի հավասարակշռության հաստատումը 298 K-ում:  $E^0 = 0,135$ :


**Լուծում.** ՆԱԴԻ +  $H^+$  -  $2e \rightarrow$  ՆԱԴԻ<sup>+</sup> +  $2H^+$ ,  $n = 2$ :

$$E^0 = \frac{2,3RT}{nF} \lg K = \frac{0,059}{2} \lg K$$

$$0,135 = \frac{0,059}{2} \lg K; \quad \lg K = 4,57; \quad K = 3,7 \cdot 10^4$$

### 9.3. Կոնցենտրացիոն շղթաներ

Դայտնի են գալվանական էլեմենտներ, որոնցում էլեկտրական էներգիան ստացվում է լուծույթների կոնցենտրացիաների տարրերության հաշվին, ընդ որում լուծույթների մեջ ընկղմվում են միևնույն մետաղի թիթեղներ: Այդպիսի գալվանական էլեմենտները կոչվում են **կոնցենտրացիոն**. Որպես օրինակ, քննարկենք  $ZnSO_4$ -ի տարրեր կոնցենտրացիայի լուծույթների մեջ ընկղմված երկու ցինկի էլեկտրոդներից կազմված գալվանական էլեմենտը.



$\varphi_1$                      $\varphi_2$

որտեղ,  $C_1$  և  $C_2$  -էլեկտրոլիտի կոնցենտրացիաներն են, ընդ որում  $C_1 > C_2$ : Քանի որ թիթեղները նույն մետաղից են պատրաստված, ապա նույնն են նաև  $E^0$  - երը ( $E^0_{Zn}$ ): Բարձր կոնցենտրացիայով ( $C_1$ ) լուծույթ ընկղմված էլեկտրոդը կլիցքավորվի դրական, իսկ փոքր կոնցենտրացիայով ( $C_2$ ) լուծույթում գտնվող էլեկտրոդը՝ բացասական:

Ըստ 9.5 և 9.8 բանաձևերի, էլեմենտի էլշուն կհավասարվի.

$$E_x = \varphi_{Zn}^0 + \frac{0,059}{2} \lg C_1 - \left( \varphi_{Zn}^0 + \frac{0,059}{2} \lg C_2 \right) = \frac{0,059}{2} \lg \frac{C_1}{C_2} \quad (9.15.)$$


**Օրինակ 3.** Դաշվել ցինկի կոնցենտրացիոն էլեմենտի էլշուն, եթե  
 $C_1 = 1\text{моль}/\text{լ}$  և  $C_2 = 0,01\text{моль}/\text{լ}$ :

$$\text{Լուծում. } E_x = \frac{0,059}{2} \lg \frac{1}{0,01} = \frac{0,059}{2} \lg 100 = \frac{0,059}{2} \cdot 2 = 0,059 \text{ в}$$

### 9.4. Դամենատիչ էլեկտրոդներ

Ինչպես արդեն նշվել է, տարրեր էլեկտրոդների պոտենցիալները որոշվում են ստանդարտ ջրածնային էլեկտրոդի նկատմամբ: Բացի ջրածնային էլեկտրոդից, էլեկտրաքիմիայում լայնորեն կիրառվում են նաև այլ համենատիչ էլեկտրոդներ, օրինակ՝ կալոմելային և արծարաքլորային էլեկտրոդներ, որոնք օժտված են հաստատուն և լավ վերարտադրելի պոտենցիալով:

**Ջրածնային էլեկտրոդ:** Ջրածնային էլեկտրոդը ներկայացնում է (նկ. 9.4) սպոնգանման պլատինով պատված պլատինե թիթեղ, որը հագեցված է գազային ջրածնով և ընկղմված է թթվի ջրային լուծույթի մեջ:



Նկ. 9.4. Զրածնային էլեկտրոդ

Պլատինում լուծված ջրածնում մասամբ տրոհվում է պրոտոնների և էլեկտրոնների.



Այս պրոցեսների հետևանքով պլատինի և լուծույթի բաժանման սահմանում առաջանում է կրկնակի էլեկտրական շերտ, որը պայմանավորում է պոտենցիալի թրիչը: Պոտենցիալի մեջությունը կախված է լուծույթում ջրածնի իոնների ակտիվությունից, ջրածնի ճնշումից և ջերմաստիճանից: Ըստ Ներնստի բանաձևի.

$$\varphi_{2H^+/H_2} = \varphi_{2H^+/H_2}^0 + \frac{RT}{F} \ln \frac{a_{H^+}}{P_{H_2}} \quad (9.16.)$$

որտեղ,  $a_{H^+}$  - ջրածնի իոնների ակտիվությունն է, մոլ/լ,

$P_{H_2}$  - գազային ջրածնի ճնշումը:

Զրածնային էլեկտրոդը կոչվում է ստանդարտ (նորմալ), եթե

$a_{H^+} = 1$  մոլ/լ,  $P_{H_2} = 101$  կՊա,  $T = 298K$ :

Ստանդարտ ջրածնային էլեկտրոդի ստանդարտ պոտենցիալը պայմանականորեն ընդունված է հավասար զրոյի ( $\varphi^0 = 0$ ): Քանի որ  $P_{H_2} = 1$  մթ,  $a_{H^+} = 1$  մոլ/լ, ստանում ենք.

$$\varphi_{2H^+/H_2} = 0 \quad (9.17.)$$

Զրածնի իոնների այլ ակտիվությունների դեպքում, եթե  $P = 1$  մթն.,  $T = 298K$ , Ներնստի բանաձևը ստանում է հետևյալ տեսքը.


$$\varphi_{2H^+/H_2} = \frac{2,3RT}{F} \lg a_{H^+} = 0,059 \lg a_{H^+} \quad (9.18.)$$

Յաշվի առնելով, որ  $-\lg a_{H^+} = pH$

$$\varphi_{2H^+/H_2} = -0,059 pH \quad (9.19.)$$

Էլեկտրոդային պոտենցիալները որոշելու համար կազմում են գալվանական էլեմենտ հետազոտվող և ստանդարտ ջրածնային էլեկտրոդ-

Աերից: Որպես օրինակ, քննարկենք ցինկ-ջրածնային գալվանական էլեմենտը.



$$a_{\text{Zn}^{2+}} = 1, \quad a_{\text{H}^+} = 1, \quad P_{\text{H}_2} = 101 \text{ kPa}$$

Էլեմենտի ստանդարտ էլշուն հավասար է.

$$E^0 = \varphi_{2\text{H}^+/\text{H}_2}^0 - \varphi_{\text{Zn}^{2+}/\text{Zn}}^0$$


Քանի որ  $\varphi_{2\text{H}^+/\text{H}_2}^0 = 0$ , ապա չափված էլշուն հավասար է ցինկի էլեկտրոդի պոտենցիալին.

$$\varphi_{\text{Zn}^{2+}/\text{Zn}}^0 = -E^0 = -0,76 \text{ V}$$

Նույն ձևով կարելի է չափել պղնձի էլեկտրոդի պոտենցիալը.


$$E^0 = \varphi_{\text{Cu}^{2+}/\text{Cu}}^0 - \varphi_{2\text{H}^+/\text{H}_2}^0 = \varphi_{\text{Cu}^{2+}/\text{Cu}}^0 = +0,34 \text{ V}$$

**Կալոմելային էլեկտրոդ:** Կալոմելային էլեկտրոդը ներկայացնում է անոք, որի հատակին լցված է լավ մաքրված սնդիկ: Վերջինս ծածկված է կալոմելի  $\text{Hg}_2\text{Cl}_2$  մածուկի շերտով (նկ. 9.5.): Մածուկի շերտի վրա լցված է կալիումի քլորիդի ( $\text{KCl}$ ) լուծույթ: Սնդիկը շփվում է ապակե խողովակում գտնվող պլատինե լարի հետ, որով էլեկտրոդը միացվում է ուրիշ էլեկտրոդի հետ: Կալոմելը աննշան լուծվելով ջրում, տրոհվում է առաջացնելով  $\text{Hg}_2^{2+}$  և  $\text{Cl}^-$  իոններ.



Նկ. 9.5. Կալոմելային էլեկտրոդ: 1-սնդիկ, 2- $\text{Hg}_2\text{Cl}_2$  մածուկի շերտ, 3-կալիումի քլորիդի լուծույթ, 4-պլատինե լար, 5-պղնձե հաղորդիչ, 6-ապակե խողովակ, 7-անոք

Մետաղ - լուծույթ բաժանման սահմանին տեղի է ունենում օքսիդավերականգնման ռեակցիա.



Ըստ Ներնստի բանաձևի կալոմելային էլեկտրոդի պոտենցիալը հավասար է.

$$\text{Փալոմել} = \varphi_{\text{Hg}_2^{2+}/\text{Hg}}^0 + \frac{0,059}{2} \lg [\text{Hg}_2^{2+}] \quad (9.22.)$$

Կալոմելը ջրում դժվար լուծելի է: 298 K-ում նրա լուծելիության արտադրյալը (ԼԱ) հավասար է.

$$\text{ԼԱ} = [\text{Hg}_2^{2+}] [\text{Cl}^-]^2 = \text{const} \quad (9.23.)$$

9.23. հավասարումից հետևում է.

$$[\text{Hg}_2^{2+}] = \frac{\text{LU}}{[\text{Cl}^-]^2} \quad (9.24.)$$

Այս արտահայտությունը տեղափոխելով 9.22. հավասարման մեջ, կստացվի.

$$\varphi_{\text{կալոմել}} = \varphi_{\text{Hg}_2^{2+}/\text{Hg}}^0 + \frac{0,059}{2} \lg \frac{\text{LU}}{[\text{Cl}^-]^2} \quad (9.25.)$$

$$\text{Կամ } \varphi_{\text{կալոմել}} = \varphi_{\text{Hg}_2^{2+}/\text{Hg}}^0 + \frac{0,059}{2} \lg \text{LU} - 0,059 \lg [\text{Cl}^-] \quad (9.26.)$$

Միացմելով, տվյալ ջերմաստիճանում, հաստատում մեծություն-ները՝  $\varphi_{\text{Hg}_2^{2+}/\text{Hg}}^0$  և  $0,059 \lg \text{LU}$  և նշանակելով այն  $\varphi_{\text{կալոմել}}$ , կստացվի

կալոմելային էլեկտրոդի պոտենցիալը

$$\varphi_{\text{կալոմել}} = \varphi_{\text{կալոմել}}^0 - 0,059 \lg [\text{Cl}^-] \quad (9.27.)$$

$$\text{Կամ } \varphi = \varphi_{\text{կալոմել}}^0 - 0,059 \lg a_{\text{Cl}^-} \quad (9.28.)$$

Այսպիսով, կալոմելային էլեկտրոդի պոտենցիալը կախված է քլորիդ հոնների կոնցենտրացիայից (ակտիվությունից):

KCl հագեցած լուծույթում  $\varphi_{\text{կալոմել}} = 0,25\text{Վ}$ , 1Մ լուծույթում՝  $0,286\text{Վ}$ , 0,1Մ լուծույթում՝  $0,338\text{Վ}$ :

**Օրինակ 4.** Գրել ցինկի և հագեցած կալոմելային էլեկտրոդներից կազմված գալվանական էլեմենտի սխեման և որոշել ցինկի ստանդարտ էլեկտրոդային պոտենցիալը, եթե էլեմենտի էլշուն հավասար է  $1,01\text{Վ}$ :  $\varphi_{\text{կալոմել}} = 0,25\text{Վ}$ :

**Լուծում.** (-) Zn | ZnSO<sub>4</sub> II KCl | KCl, Hg<sub>2</sub>Cl<sub>2</sub> | Hg, Pt (+)


$$(a_{\text{Zn}^{2+}} = 1) \quad E = \varphi_{\text{կալոմել}} - \varphi_{\text{Zn}^{2+}/\text{Zn}}$$

$$\text{Որտեղից } \varphi_{\text{Zn}^{2+}/\text{Zn}} = \varphi_{\text{կալոմել}} - E, \quad \varphi_{\text{Zn}^{2+}/\text{Zn}} = 0,25 - 1,01 = -0,76 \text{ Վ}$$

**Պատ.**  $-0,76 \text{ Վ}$ :


**Քլոր-արծաթային էլեկտրոդ:** Կենսաբանական հետազոտություններում մեծ նաև առաջնային է քլոր-արծաթային էլեկտրոդը (Ծկ. 9.6.):

Այս էլեկտրոդը իրենից ներկայացնում է արծաթի քլորիդով պատված արծաթի լար, որն ընկղնված է կալիումի քլորիդով լցված անոթի մեջ:



Ծկ. 9.6. արծաթ-արծաթքլորային էլեկտրոդ

Մետաղ - լուծույթ բաժանման սահմանին տեղի է ունենում օքսիդավերականգննան ռեակցիա.



Էլեկտրոդային պոտենցիալը կախված է քլորիդ իոնների կոնցենտրացիայից:

$$\varphi_{\text{AgCl}} = \varphi_{\text{AgCl}}^0 - \frac{2,3RT}{F} \lg a_{\text{Cl}^-} \quad (9.28.)$$

$$\text{կամ} \quad \varphi_{\text{AgCl}} = \varphi_{\text{AgCl}}^0 - 0,059 \lg a_{\text{Cl}^-}$$

KCl հագեցած լուծույթում  $\varphi_{\text{AgCl}} = 0,222\text{Վ}$ , 1Մ լուծույթում  $0,238\text{Վ}$ , 0,1Մ լուծույթում  $0,29\text{Վ}$ :

Օրինակ 5. Գալվանական էլեմենտը կազմված է հագեցած արծաթքլորային և ստամոքսահյութի մեջ ընկղմված ջրածնային էլեկտրոդից: Որոշել ստամոքսահյութի pH-ը, եթե էլեմենտի էլշուն հավասար է  $281\text{Վ}$ :

Լուծում. Pt, H<sub>2</sub> (p = 101կՊա) | H<sup>+</sup> (a<sub>H<sup>+</sup></sub> = 1) || KCl (հագեցած) AgCl | Ag

$$E_x = E_{\text{AgCl}} - E_{\text{H}_2}, \quad E_{\text{H}_2} = E_{\text{AgCl}} - E_x, \quad \varphi_{\text{AgCl}} = 0,222$$

$$\varphi_{\text{H}^+/\text{H}_2} = -0,059\text{pH}$$

$$E_x = \varphi_{\text{AgCl}} - \varphi_{\text{H}^+/\text{H}_2}$$

$$- 0,059\text{pH} = 0,222 - 0,281$$

$$\text{pH} = \frac{0,222 - 0,281}{-0,059} = 1$$

Պատ. ստամոքսահյութի pH-ը հավասար է 1-ի:

## 9.5. Որոշիչ էլեկտրոդներ

Տարբեր իոնների կոնցենտրացիան (ակտիվությունը) որոշելու համար գործնականում օգտագործում են գալվանական էլեմենտներ, կազմված երկու էլեկտրոդից՝ հայտնի պոտենցիալով համեմատիչ էլեկտրոդից և որոշիչ էլեկտրոդից, որի պոտենցիալը կախված է լուծույթում որոշվող իոնի կոնցենտրացիայից: Որոշիչ էլեկտրոդներին են պատկանում իոնսելեկտիվ և խիմիկորոնային էլեկտրոդները:


**Իոնսելեկտիվ էլեկտրոդները** ներկայացնում են էլեկտրաքիմիան համակարգեր, որոնք թաղանթի միջոցով բաժանված են երկու մասի: Թաղանթը ունի սելեկտիվ (ընտրողական) զգայնություն որոշակի տեսակի իոնների նկատմամբ: Արտաքին մասում գտնվում է հետազոտվող լուծույթը և արտաքին համեմատիչ էլեկտրոդը, ներքին մասում գտնվում է որոշվող իոնների հայտնի կոնցենտրացիայով լուծույթը և ներքին համեմատիչ էլեկտրոդը: Պոտենցիալի թույզը պայմանավորված է ոչ թե օքսիդավերականգննան ռեակցիայով, այլ թաղանթի և լուծույթի միջև իոնափոխանակությամբ: Թաղանթի նյութը ընտրվում է այնպես, որպեսզի այն փոխանակվի միայն լուծույթի

որոշակի տեսակի հինների հետ: Այդ դեպքում թաղանթ-լուծույթ բաժանման սահմանին ծագած պոտենցիալը կախված կլինի միայն այդ տեսակի հինների կոնցենտրացիայից:

Ինսելեկտիվ էլեկտրոդների միջոցով որոշում են տարբեր հինների ( $H^+$ ,  $Na^+$ ,  $K^+$ ,  $Ca^{2+}$ ,  $CN^-$ ,  $Cl^-$ ,  $NO_3^-$ ) կոնցենտրացիան կենսաբանական հեղուկներում և նույնիսկ անմիջականորեն բջջի ներսում:

Կլինիկական հետազոտություններում լայնորեն կիրառվում են ֆերմենտներ պարունակող ինսելեկտիվ էլեկտրոդներ: Յայտնի է, որ ֆերմենտներն ընտրողաբար կատալիզում են որոշակի սուրստրատի փոխարկումը: Գոյություն ունեն ֆերմենտային էլեկտրոդներ գյուկոզի, անտիբիոտիկների, հորմոնների, ամինաթթուների և այլ կենսաբանական ցյութերի որոշման համար:


Ինսելեկտիվ էլեկտրոդների տիպական օրինակ է ապակե էլեկտրոդը (նկ. 9.7.): Տարբերում են ջրածնական և մետաղական ֆունկցիայով ապակե էլեկտրոդներ, որոնք համապատասխանաբար կիրառվում են  $H^+$ -ի և որոշակի մետաղների կատիոնների կոնցենտրացիաների որոշման համար:



Նկ. 9.7. pH-մետր էլեկտրոդներ

**Ապակե էլեկտրոդ:** Ապակե էլեկտրոդը ներկայացնում է ապակե խողովակ, որն ավարտվում է շատ բարակ պատեր ունեցող ապակե գնդով (նկ. 9.8):

Ապակու բաղադրության մեջ մտնող սիլիկատների հիդրոլիզի հետեւանքով ապակու մակերեսին առաջանում է պոլիսիլիկաթթվի բարակ թաղանթ, որն անշան դիտողվում է.



$R-O-SiO_2^-$  անիոններն ապակու մակերեսին հաղորդում են բացասական լիցք, իսկ  $H^+$  իոնները դրական են լիցքավորում ապակուն կից լուծույթի շերտը: Գնդի ներսում գտնվում է  $H^+$  իոնների որոշակի կոնցենտրացիայով  $HCl$ -ի լուծույթ և ներքին համեմատիչ՝ թլորարձարային էլեկտրոդ: Գունդն ընկղողում են հետազոտվող լուծույթի մեջ

և կամրջակի միջոցով ապակե էլեկտրոդը միացնում արտաքին համեմատիչ էլեկտրոդին: Ստացված էլեկտրաքիմիական շղթան կարելի է գրանցել հետևյալ կերպ:


Ag, AgCl ներքին համեմ.	HCl (L-թ)	ապակի (L-թ)	հետազոտվ. (L-թ)	KCl (L-թ)	KCl (L-թ)	AgCl, Ag արտաքին համեմ.
էլեկտրոդ						

φ<sub>1</sub>      φ<sub>2</sub>      φ<sub>3</sub>      φ<sub>4</sub>

Այս շղթայի էլշուն որոշվում է  $\varphi_1 + \varphi_2 + \varphi_3 + \varphi_4$  գումարով:


Փ<sub>1</sub>, Փ<sub>2</sub>, Փ<sub>4</sub> պոտենցիալները հաստատուն են, հետևաբար, շղթայի էլշուն փոխվում է կախված Փ<sub>3</sub> պոտենցիալից, որն էլ կախված է հետազոտվող լուծույթի pH -ից:

**Խիճիդրոնային էլեկտրոդ:** Խիճիդրոնային էլեկտրոդը պատկանում է էլեկտրոդների այն տեսակին, որոնց պոտենցիալը կախված է լուծույթի pH-ից: Ջրածնային էլեկտրոդից այն տարբերվում է կառուցվածքի պարզությամբ և աշխատանքի հեշտությամբ: Խիճիդրոնային էլեկտրոդը ներկայացնում է հետազոտվող լուծույթի մեջ ընկղման պլատինի լար: Յետազոտվող լուծույթում նախօրոք լուծում են ավելցուկով խիճիդրոնի փոշի (Ակ. 9.8):




Ակ. 9.8. Խիճիդրոնային էլեկտրոդ

Խիճիդրոնը խիճոնի և հիդրօխիճոնի հավասարամոլային խառնուրդն է: Խիճիդրոնը ջրում լուծելիս արագ հաստատվում է հավասարակշռություն:



Օքսիդացված և վերականգնված ծևերի կոնցենտրացիաների հարաբերությունը, և հետևաբար, նաև պոտենցիալը, կախված է լուծույթի pH-ից: Ենթադրվում է, որ էլեկտրոդի մակերեսին տեղի ունեցող ռեակցիայի հետևանքով անջատվում է գազային ջրածին, որը հագեցնում է պլատինը.



Խիճիդրոնային էլեկտրոդի պոտենցիալը որոշվում է.

$$\varphi_{\text{fuh}} = \varphi^0 + \frac{0,059}{2} \lg \frac{[C_6H_4O_2][H^+]^2}{[C_6H_4(OH)_2]} . \quad (9.29.)$$

Քանի որ հագեցած լուծույթում  $\frac{[C_6H_4O_2]}{[C_6H_4(OH)_2]}$  հարաբերությունը հաս-  
տատուն է, ապա էլեկտրոնի պոտենցիալը կախված է միայն լուծույթի  
pH-hg.

$$\varphi_{\text{uh}} = \varphi^0_{\text{uh}} + 0,059 \lg [\text{H}+] = \varphi^0 - 0,059 \text{pH} \quad (9.30.)$$


$\varphi_{\text{uh}} = 0,7 - 0,059 \text{pH}$ , որտեղ  $0,7 - \text{ը } \varphi^0_{\text{uh}} - \text{ի արժեքը է}:$

Խիմիկիդրոնային էլեկտրոդն օգտագործվում է  $\text{pH} < 8$  լուծույթների դեպքում:  $\text{pH} > 8$  հիմնային միջավայրում հիդրօխինոնի դիսոցումն աճում է և  $\text{a}_{\text{OH}^-}$   $\neq \text{a}_{\text{HOH}}$ :


#### 9.6. Օքսիդավերականգնման (Red-Ox) էլեկտրոդներ

Ցանկացած մետաղական էլեկտրոն ռեդօքս համակարգ է, սակայն ռեդօքս կոչվում են այն էլեկտրոդները, որոնցում պոտենցիալ պայմանավորող ռեակցիան չի ուղեկցվում ֆազային անցումներով : Ըստ օրինակերպականցնման պրոցեսի մեխանիզմի, տարրերում են.

1. պարզ Red-Ox համակարգեր, որոնցում պրոցեսն ընթանում է միայն էլեկտրոնների փոխանցումը.



2. βωρη Red-Ox ήωδαλκαρράτερ, ηρηνγοιν αρηογεσηκήν μασαναλγοιν εν οξ μήμαγν էլεκτρονηνέτερ, αյլκ αյլ μασανήκανέτερ (αρηοτηνηνέτερ, OH- ήηνηνέτερ, H<sub>2</sub>O μηλεκουλατερ) : Ορημαλ.



Red-Ox էլեկտրոդը կազմված է ինչ-որ իներտ մետաղից, որն ընկածված է մինանույն նյութի օքսիդացված և վերականգնված ձևերը պարունակող յուծութիւններ:

Οριστεί στην ίδια ποσότητα την απόφαση για την επένδυση στην Ελλάδα, με την οποία θα δημιουργηθεί ένα νέο πρότυπο για την ανάπτυξη της χώρας.

Red-Ox պիտենցիալի մեծությունը կախված է օքսիդավերականգնման համակարգի բնույթից, թերնաստիճանից, օքսիդացված և վերականգնված ձևերի ակտիվություններից և որոշվում է Ներնստի հավասարումով: 9.31 և 9.32 համակարգերի համար Ներնստի հավասարումը համապատասխանաբար արտահայտվում է:

$$\varphi_{ox/red} = \varphi_{ox/red}^0 + \frac{RT}{nF} \ln \frac{a_{Ox}}{a_{Red}} \quad (9.33.)$$

$$\varphi_{\text{ox/red}} = \varphi_{\text{ox/red}}^0 + \frac{mRT}{nF} \ln \frac{a_{\text{Ox}} a_{\text{H}^+}}{a_{\text{Red}}} \quad (9.34.)$$

Հավասարումներից հետևում է՝ Red-Ox պոտենցիալը կախված է Red-Ox համակարգի բնույթից (այդ կախվածությունը պայմանավորված է  $\varphi^0$  մեծությամբ), օքսիդացված և վերականգնված ձևերի կոնցենտրացիաների հարաբերությունից և ջերմաստիճանից:


Տարբեր Red-Ox էլեկտրոդների ստանդարտ պոտենցիալները՝  $\varphi_{\text{ox/red}}^0$  տրված են հավելվածում (այսուսակ 5): Ըստ այդ արժեքների որոշում են քիմիական ռեակցիաների ուղղությունը: Red-Ox համակարգը, որի պոտենցիալը մեծ է, հանդիսանում է օքսիդիչ փոքր պոտենցիալով համակարգի նկատմամբ:

**Օրինակ 6.** Որոշել ռեակցիայի ուղղությունը հետևյալ Red-Ox համակարգերի միջև.

$$\text{Pt}, \text{H}_2\text{O}_2 + \text{H}_2\text{O}, \quad \varphi^0 = 1,77 \text{ V}$$

$$\text{Pt}, \text{I}_2 + 2\text{I}^- , \quad \varphi^0 = 0,53 \text{ V}$$

**Լուծում.** Առաջին համակարգի ստանդարտ պոտենցիալն ավելի մեծ է, նշանակում է  $\text{H}_2\text{O}_2/\text{H}_2\text{O}$  համակարգը օքսիդիչ է, իսկ  $\text{I}_2/2\text{I}^-$  համակարգը՝ վերականգնիչ:



Երկու Red-Ox էլեկտրոդներից կազմված շղթան կոչվում է Red-Ox շղթա, իսկ շղթայի էլեկտրաշարժ ուժը որոշվում է էլեկտրոդային պոտենցիալների տարբերությամբ՝  $E = \varphi_1 - \varphi_2$ .

$$\varphi = \varphi_1^0 + \frac{0,059}{n} \lg \frac{a_{1\text{ox}}}{a_{1\text{red}}} - \left( \varphi_2^0 + \frac{0,059}{n} \lg \frac{a_{2\text{ox}}}{a_{2\text{red}}} \right) \quad (9.35.)$$

Կենսաբանական օքսիդավերականգնման պրոցեսներն ունեն շատ բարդ մեխանիզմ և ընթանում են բազմաթիվ ֆերմենտների մասնակցությամբ:

## 9.7. Թաղանթային պոտենցիալներ

Էլեկտրական պոտենցիալներ ծագում են տարբեր տեսակի կենսաբանական վրա: Նյարդային և մկանային բջիջները կոչվում են գրգռվող, քանի որ նրանք կարող են էլեկտրական ինպուլսը հաղորդել իրենց թաղանթների միջով:

Քննարկենք թաղանթային պոտենցիալի ծագումը նյարդային բջիջ օրինակով: Նյարդային բջիջը կազմված է բջիջի մարմնից և  $10^{-5} - 10^{-3}$  սմ տրամագծով ելուստից՝ աքսոնից: Բջիջը և աքսոնը շրջապատված են թաղանթով: Բջիջի և աքսոնի պարունակության բաղադրությունը նույնն է.

Իրմաներ	Կոնցենտրացիաներ	
	Բջիջի մերսում, մՄ	Բջիջի դուրս, մՄ
$\text{K}^+$	400	20
$\text{Na}^+$	50	440

Իոնների կոնցենտրացիաներն արտահայտվում են մՄ-ով:


Թաղանթի երկու կողմերում իոնների կոնցենտրացիաների տարբերության հետևանքով հաստատվում է թաղանթային պոտենցիալ: Թաղանթի վրա պոտենցիալների տարբերությունը մեկ իոնի տեղափոխման դեպքում որոշվում է Ներնստի հավասարումով.

$$\varphi_x = \frac{RT}{nF} \ln \frac{[x]_{\text{արտաքին}}}{[x]_{\text{ներքին}}} \quad (9.36.)$$

Եթե թափանցում են երկու իոն՝  $\text{Na}^+$  և  $\text{K}^+$ , ապա թաղանթային պոտենցիալը որոշվում է գոլողմանի հավասարումով.

$$\begin{aligned} \varphi_{\text{թաղանթ.}} &= \frac{RT}{nF} \ln \frac{\left[\text{K}^+\right]_{\text{արտաքին}} \cdot P_{\text{K}^+} + \left[\text{Na}^+\right]_{\text{արտաքին}} \cdot P_{\text{Na}^+}}{\left[\text{K}^+\right]_{\text{ներքին}} \cdot P_{\text{K}^+} + \left[\text{Na}^+\right]_{\text{ներքին}} \cdot P_{\text{Na}^+}} = \\ &= \frac{RT}{nF} \ln \frac{\left[\text{K}^+\right]_{\text{արտաքին}} \cdot \frac{P_{\text{K}^+}}{P_{\text{Na}^+}} + \left[\text{Na}^+\right]_{\text{արտաքին}} \cdot \frac{P_{\text{Na}^+}}{P_{\text{K}^+}}}{\left[\text{K}^+\right]_{\text{ներքին}} \cdot \frac{P_{\text{K}^+}}{P_{\text{Na}^+}} + \left[\text{Na}^+\right]_{\text{ներքին}} \cdot \frac{P_{\text{Na}^+}}{P_{\text{K}^+}}} \end{aligned}$$

Որտեղ,  $n = 1$ ,  $P$  - թաղանթի միջով իոնի թափանցելիությունն է:



**Նկ. 9.9.** Տրանս-մեմբրանային պոտենցիալի ձևավորման սխեման: Ուղիղ սլաքներով ցույց է տրված իոնների ակտիվ տեղափոխումը, իսկ կող սլաքներով՝ սովորական դիֆուզիան:

Նյարդային բջիջների թաղանթները հանգիստ (չգրգռված) վիճակում մոտ 100 անգամ ավելի թափանցելի են  $\text{K}^+$  իոնների համար՝  $\text{Na}^+$  իոնների համեմատությամբ: Ելնելով իոնների կոնցենտրացիաներից 310K (37°C), կստացվի.

$$\varphi_{\text{թաղանթ.}} = \frac{8,31 \Omega \text{mL/K} \cdot 310 \text{K}}{96500 \text{ kJ/mol}} \ln \frac{20 \cdot 100 + 440}{400 \cdot 100 + 50} \approx -0,075 \text{ V}$$

Հաշվարկներից հետևում է, որ բջջաթաղանթների ներքին և արտաքին մակերեսների պոտենցիալների տարբերությունը հավասար է -75մ.Վ:

Հանգստի վիճակում բջջաթաղանթները երկու անգան ավելի քա-  
փանցելի են  $\text{Cl}^-$  իոնների համար՝  $\text{K}^+$  իոնների համեմատությամբ:  
Սակայն  $\text{Cl}^-$  իոնները թաղանթային պոտենցիալի առաջացման համար  
ունեն երկորոշական դեր: Ի տարրերություն  $\text{Na}^+$  և  $\text{K}^+$  իոնների,  $\text{Cl}^-$   
իոնները թաղանթի միջով չեն թափանցում կոնցենտրացիայի  
գրադիենտին հակառակ: Բացի դրանից, բջջաթաղանթների  
թացասական լիցքավորված ներքին մակերեսը վանում է անիոններին,  
ինչը բերում է  $\text{Cl}^-$  իոնների ցածր պարունակությանը բջջի ներսում:  
Այսպիսով, թաղանթային պոտենցիալը համարյա ամբողջությամբ  
որոշվում է  $\text{K}^+$  իոններով:

Նյարդային բժիջը գրգրելիս (էլեկտրականությամբ, քիմիական  
եղանակով կամ մեխանիկորեն), բջջաթաղանթը դառնում է ավելի  
թափանցելի  $\text{Na}^+$  իոնների համար՝  $\text{K}^+$  իոնների համեմատությամբ:

$$P_{\text{Na}^+}/P_{\text{K}^+} \approx 12$$

Գրգռման պոտենցիալը կլինի.

$$E_{\text{թաղանթ.}} = \frac{8,31 \text{æÙáÉ} \cdot 310 \text{K}}{96500 \text{ ÏÉ/ÙáÉ}} \ln \frac{\frac{20 \cdot \frac{1}{12} + 440}{400 \cdot \frac{1}{12} + 50}}{12} \approx 0,05 \text{ i} = 50 \text{ Ùì}$$

Այսպիսով, կարծ ժամանակի ընթացքում (մոտ  $10^{-4}$  վրկ)  
թաղանթային պոտենցիալը փոխվում է  $-75$  մինչև  $+50$ նվ: Այս  
փոփոխությունից անմիջապես հետո թաղանթը նորից դառնում է ավելի  
թափանցելի  $\text{K}^+$  իոնների համար: Հավասարակշռության վիճակում ( $\text{Na}^+$   
իոնների ավելցուկը բջջից հեռանալուց հետո) թաղանթային  
պոտենցիալը ստանում է իր սկզբնական արժեքը: Թաղանթային  
պոտենցիալի այս արագ փոփոխությունը կոչվում է **գործողության  
պոտենցիալ**: Գործողության պոտենցիալը արտնուվ տարածվում է  
30÷150 մ/վրկ արագությամբ: Բջջի գրգռված կետից գործողության  
պոտենցիալի հեռանալուց հետո, թաղանթը նույն կետում պատրաստ է  
լինում նոր գրգռման համար:

Գործողության պոտենցիալն արտնուվ փոխանցվում է մինչև  
**սինապտիկ հաճգույց**: Արդյունքում, սինապտիկ ծեղքում անջատվում է  
նեյրոտրանսմիտերը՝ ացետիլխոլինը: Ացետիլխոլինի մոլեկուլները  
տեղաշարժվում են դեպի հետսինապտիկ թաղանթ և առաջ են բերում  
իոնների թափանցելիության փոփոխություն: Թաղանթների թափան-  
ցելիությունը  $\text{K}^+$  և  $\text{Na}^+$  իոնների մկանամբ կտրուկ մեծանում է, որի  
հետևանքով  $\text{Na}^+$  իոնների հոսքը դեպի բջջի ներսը, իսկ  $\text{K}^+$  իոնների  
հոսքը հակառակ ուղղությամբ մեծանում է և գործողության  
պոտենցիալը ծագում է հարևան արտնում: Ի վերջո ացետիլխոլինը  
հիդրոլիզվում է ացետիլխոլինէսթերագ ֆերմենտով:

Նույն ձևով նյարդային բջիջներում ծագած գործողության պոտենցիալը կարող է փոխանցվել մկանային բջջին: Անհրաժեշտ է նշել, որ սրտի յուրաքանչյուր զարկին նախորդում է մեծ գործողության պոտենցիալի ծագում: Այդ գործողության պոտենցիալը ստեղծում է հոսանք, որը կարելի է գրանցել կրծքավանդակին տեղադրված էլեկտրոդների միջոցով: Ստացված գրանցումը կոչվում է էլեկտրակարդիոգրամ (ԷԿԳ) և մեծ նշանակություն ունի սրտի հիվանդությունների ախտորոշման համար:

### 9.8. Լաբորատոր աշխատանք

#### Փորձ 1. pH-ի չափումը պոտենցիոմետրիկ եղանակով

Աշխատանքի նպատակը. Պոտենցիոմետրիկ եղանակով որոշել տարբեր նյութերի ջրային լուծույթների pH - ը ապակյա էլեկտրոդով:

Սարքեր և անհրաժեշտ նյութեր. իոնոմեր, ապակյա և արծաթ-քլորային էլեկտրոդներ, քիմիական բաժակ 50սմ<sup>3</sup> տարրողությամբ, pH-ի հայտնի արժեքով բուժերային լուծույթ, հետազոտվող լուծույթ:

Աշխատանքի եռթյունը. pH-ի որոշման համար կազմել գալվանական շղթա ապակյա և արծաթ-քլորային էլեկտրոդից: Գործիքի սանդղակը կալիբրում են հայտնի pH ունեցող բուժերային լուծույթներով և կառուցում  $\varphi = f(pH)$  գրաֆիկը, որի օգնությամբ որոշվում է հետազոտվող լուծույթի pH-ը: Երբ իոնոմերի սանդղակը աստիճանավորված է ըստ pH-ի արժեքների, գրաֆիկը չի կառուցվում: Աշխատանքից առաջ գործիքը ստուգում են՝ օգտագործելով հայտվնի pH-ով բուժերային լուծույթներ:

## 10. Կոռորդինացիոն միացությունների քիմիա

### 10.1. Կոռորդինացիոն (կոմպլեքս) միացություններ

Կոմպլեքս միացությունների կառուցվածքի և հատկությունների բազմազանությունը, ինչպես նաև հասարակ և կոմպլեքս միացությունների միջև ցայտուն սահմանի բացակայությունը դժվարացնում է միանշանակ սահմանել «կոմպլեքս միացություն» հասկացությունը: Ավելի գործնական է այն սահմանումը, որը կարևորում է կոմպլեքսների հատկությունները լուծույթում և դրանցում կենտրոնական ատոմի կամ իոնի առկայությունը (M կամ M<sup>n+</sup>): Այն շրջապատված է նրա հետ ոչ իոնօգեն կապերով կապված ատոմներով, ատոմնական խճերով կամ մոլեկուլներով: Վերջիններս կոչվում են լիգանդներ: Լիգանդներն ունեն երկրաչափական կանոնավոր տարածական դասավորություն կենտրոնական ատոմի (կոմպլեքսագոյացնողի) շուրջը, այսինքն կոորդինացված են նրա կողմից: Այդ պատճառով, կոմպլեքս միացությունները հաճախ անվանում են կոռորդինացիոն միացություններ, իսկ լիգանդների հետ կոմպլեքսագոյացնողի առաջացործ կապերի թիվը՝ կոռորդինացիոն թիվ:

Կոմպլեքս միացությունների կառուցվածքը բացահայտել է շվեյցարացի գիտնական Ա. Վերները (1893թ.), որի տեսության հիմնադրությունը ընկած են կոմպլեքսների կառուցվածքի մասին ժամանակակից պատկերացումների հիմքում: Ըստ Վերների տեսության.

1. բոլոր քիմիական միացությունները բաժանվում են երկու մեծ դասի՝ կարգի և բարձրակարգ միացություններ:


1 կարգի միացությունների դասին են պատկանում պարզագույն, առաջին հերթին բինար (2 տարրերից բաղկացած) միացությունները, օրինակ՝ օքսիդները, հալիդները, ջրածնական միացությունները և այլն (CoCl<sub>3</sub>, NH<sub>3</sub>, H<sub>2</sub>O, CoCl<sub>2</sub>, PtCl<sub>2</sub>), երեք տարրերից բաղկացած միացությունները, որոնք սակայն կառուցված են նույն սկզբունքով, ինչ-որ բինար միացությունները, օրինակ՝ CSO, CCl<sub>2</sub>Br<sub>2</sub>, MoO<sub>2</sub>F<sub>2</sub> և այլն:

Բարձրակարգ միացությունները առաջանում են մի քանի 1 կարգի միացությունների զուգակցնան արդյունքում: Այս դեպքում առաջանում են դոնոր-ակցենտոր բնույթի լրացուցիչ քիմիական կապեր: Այդ միացությունների մեջ Վերներն առանձնացրեց կոմպլեքս միացությունները, որոնց հիմնական հատկությունը կայունությունն է ջրային լուծություն: Օրինակ. CoCl<sub>3</sub>·6NH<sub>3</sub>, CoCl<sub>3</sub>·6H<sub>2</sub>O, 2KCl·PtCl<sub>2</sub> և այլն:

2. Կոմպլեքս միացությունների առաջացման բուն փաստը բացատրելու համար Վերները նշորեց հասկացություն հիմնական (գլխավոր) և հավելյալ (մնացորդային) վալենտականությունների մասին: Նիմնական վալենտականությունը համապատասխանում է տարրի սովորական վալենտականությանը, որի արտահայտման օրինաչափություններն արտացոլվում են պարբերական համակարգում: Դրանց հագեցման արդյունքում առաջանում են 1 կարգի

միացություններ, որոնց բաղադրությունն ու կառուցվածքը չեն հակասում վալենտականության միասնական տեսությանը: Դիմնական վալենտականությունը հագեցնելուց հետո, ատոմները կարող են ցուցաբերել հավելյալ վալենտականություն, որի հագեցման արդյունքում առաջանում են բարձրակարգ միացություններ: Դիմնական և հավելյալ վալենտականությունների միջև չկա սկզբունքային տարրերություն, երկուսն էլ արտահայտում են ատոմի քիմիական խնամակցությունը:

3. Վերների տեսության մեջ կենտրոնական տեղ է գրավում «կոռորդի նացում» հասկացությունը: Գլխավոր և հավելյալ վալենտային ուժերը գործում են տարածական բոլոր ուղղություններով, որի արդյունքում յուրաքանչյուր ասուն ձգտում է իրեն հավասարաչափ շրջապատել այլ ասուններով կամ ատոնական խմբերով: Այս երևոյթը Վերներն անվանեց կոռորդինացում, որից բխում է կոմպլեքս միացության «կենտրոնամետ» կառուցվածքը: Կոմպլեքսագոյացնող ասունը (ինը) կոմպլեքս միացության մոլեկուլում գրավում է կենտրոնական դիրք (կենտրոնական ասուն): Վերներն առաջարկեց կոմպլեքս միացությունում տարբերել երկու ոլորտ՝ ներքին և արտաքին (նկ.1): Ներքին կամ կորորդինացիոն ոլորտը կազմված է կենտրոնական ասունից և նրա շուրջը կոռորդինացված լիգանդներից: Այն օժտված է որոշակի կայունությամբ լուծույթում և հաճախ ունի լիցք, որը հավասար է կենտրոնական ասունի և լիգանդների լիցքերի հաճրահաշվական գումարին: Եթե այդ գումարը հավասար չէ զրոյի, առաջանում է ինն, որն իննոգեն կապերով կապված է արտաքին ոլորտը կազմող ինների հետ: Սրանք չեղորագնում են ներքին ոլորտի լիցքը:



### Ակտ 10.1.

Ներքին և արտաքին ոլորտների սահմանները ցույց են տրվում քառակուսի փակագծերով: Օրինակ՝  $[Cu(NH_3)_4]Cl_2$ ,  $K_4[Fe(CN)_6]$ :

Յայսնի են նաև կոմպլեքս միացություններ, որոնք արտաքին կոռորդինացիոն ոլորտ չունեն, օրինակ  $[Ni(CO)_4]$ ,  $[Pt(NH_3)_2Cl_2]$  և այլն:

Ըստ արտաքին ոլորտի ինների որոշում են կոմպլեքս իննի լիցքը, ըստ կոմպլեքս իննի լիցքի՝ կենտրոնական ատոմի օքսիդացման աստիճանու:

**Օրինակ 1.**  $[Pt(NH_3)_4Cl_2]^+$  կոմպլեքս հինում կոմպլեքսագոյացնողի՝ (Pt) ի հար 4+ է: Որոշեն կոմպլեքս հինի ի հար:

LITERATUR.

$$x = +4 + 0 \cdot 4 + 2(-1) = 2 +$$

Հետևաբար՝ կոմպլեքս իոնը կատիոն է և լիցքը հավասար է  $2+, [Pt(NH_3)_4Cl_2]^{2+}$

**Օրինակ 2.**  $Pd^{2+}$  -ը և  $Br^-$  լիգանդները առաջացրել են կոմպլեքս իոն  $[Pd(Br)]^{2-}$ : Որոշել պայմանիումի կոորդինացիոն թիվը:

**Լուծում.** Կենտրոնական ատոմի լիցքի և լիգանդների լիցքերի համրահաշվական գումարը հավասար է կոմպլեքս իոնի լիցքին.

$$+2 + x \cdot (-1) = 2; \quad x = 4$$

Հետևաբար կոմպլեքս իոնի բանաձևն է.  $[PdBr_4]^{2-}$ :

**Օրինակ 3.** Որոշել կոմպլեքսագոյացնողի օքսիդացման աստիճանը  $Na_4[Fe(CN)_6]$  միացությունում:

**Լուծում.** Քանի որ արտաքին ոլորտում գտնվում են չորս  $Na^+$  իոններ, ապա կոմպլեքս իոնի լիցքը 4- է, հետևաբար՝

$$x + (-1) \cdot 6 = 4; \quad x = 2+$$

**Օրինակ 4.** Գրել կոմպլեքս միացության կոորդինացիոն բանաձևը, եթե այն կազմված է  $[Co(NH_3)_6]^{3+}$  կոմպլեքս իոնից, իսկ արտաքին ոլորտի իոններն են  $SO_4^{2-}$ :

**Լուծում.** Քանի որ մոլեկուլը պետք է լինի էլեկտրաչեղոք, բանաձևն է  $[Co(NH_3)_6]_2(SO_4)_3$ :

4. Տեսության մեջ կարևոր տեղ է հատկացված 4-6 կոորդինացիոն թվով կոմպլեքսների տարածական (ստերեոքիմիական) կառուցվածքին, ներառյալ օպտիկականը:

Վերների տեսությունը չիր բացատրում կոմպլեքսների առաջացման մեխանիզմը, կապի բնույթը, նրանց բնորոշ գույնը, մագնիսական հատկությունները:

Կոմպլեքս միացությունների քիմիան հետագա զարգացում գտավ Զ.Ա. Չուգակի, Ա. Ա. Գրինբերգի և այլոց աշխատանքներում:

Չուգակը ցույց տվեց, որ ցիկլերի առկայությունը կոմպլեքս միացությունների ներքին ոլորտում մեծացնում է նրանց կայունությունը: Ցիկլեր առաջանում են, երբ լիգանդը (մոլեկուլ կամ իոն) կենտրոնական ատոմին միանում է երկու և ավելի կապերով: Չամածայն Չուգակի ցիկլերի կանոնի, հինգ և վեց անդամանի ցիկլեր պարունակող կոմպլեքս միացություններն ամենակայունն են: Այսպիսով, ընտրելով համապատասխան լիգանդներ, կարելի է ստանալ կայուն կոմպլեքսներ, որոնք անհրաժեշտ են մետաղների անալիտիկ որոշման համար և թշկության մեջ:

## 10.2. Կոմպլեքսների տարածական կառուցվածքը՝ կախված կոորդինացիոն թվից

Կոորդինացիոն թիվը կախված է կենտրոնական ատոմի և լիգանդների քիմիական բնույթից և չափսերից: Յայտնի են 2-ից մինչև 9 կոորդինացիոն թիվ, սակայն ավելի հաճախ հանդիպում են 2,4 և 6:


**Կոորդինացիոն թիվ երկու:** Յանդիպում է հիմնականում միալիցը իոնների  $Cu$ ,  $Ag$  և  $Au$ , ինչպես նաև միալիցը  $Hg^{2+}$  իոնի մոտ: Այդպիսի

Կոմպլեքսներն ունեն գծային կառուցվածք.  $[H_3N\text{-Ag}\text{-NH}_3]^+$ ,  $[NC\text{-Ag}\text{-CN}]^-$ ,  $[Cl\text{-Au}\text{-Cl}]^-$ :

**Կոորդինացիոն թիվ չորս:** Այս կոորդինացիոն թվով կոմպլեքսներին հատուկ է երկու երկրաչափական կառուցվածք՝ քառանիստ և քառակուսի: Քառանիստ (տետրաէդր) կոմպլեքսներ մեծ մասամբ առաջացնում են d-տարրերի կատիոնները: Հայտնի են քազմաթիվ օրինակներ.  $[Li(H_2O)_4]^+$ ,  $[BeF_4]^{2-}$ ,  $[AlCl_4]^-$ ,  $[FeCl_4]^-$ ,  $[CoBr_4]^{2-}$ ,  $[ReO_4]^-$  և այլն: Քառակուսի կոմպլեքսները, մասնավորապես հատուկ են  $Cu^{2+}$ ,  $Ni^{2+}$ ,  $Pd^{2+}$ ,  $Pt^{2+}$ ,  $Au^{3+}$ ,  $Rh^{+}$  և  $I^{2+}$ :



**Նկ. 10.2.** հարթ քառակուսու կոմֆիգուրացիա քառանիստի կոմֆիգուրացիա  
**Կոորդինացիոն թիվ վեց:** Կոորդինացիոն թվերից կարևորագույնն է: Գործնականորեն բոլոր այդպիսի կոմպլեքսներն առաջացնում են ութանիստ (օկտաէդր):



**Նկ. 10.3.** ութանիստի կոմֆիգուրացիա

Մնացած կոորդինացիոն թվերը 7,8,9, հանդիպում են որոշ մեծ կատիոնների մոտ: Սրանց կոմպլեքսներն ունեն մի քանի երկրաչափական կառուցվածք, որոնք, առանձնապես չեն տարբերվում իրենց կայունությամբ:

### 10.3. Լիգանդների տեսակները.



Լիգանդների մեծանասնությունը անիոններ կամ չեղոք մոլեկուլներ են, որոնք հանդիսանում են էլեկտրոնային զույգերի դրույթներ: Առավել հայտնի լիգանդներ են  $F^-$ ,  $Cl^-$ ,  $Br^-$ ,  $CN^-$ ,  $OH^-$ ,  $NH_3$ ,  $H_2O$ ,  $CH_3OH$  և այլ օրգանական լիգանդներ:

Թվարկված կամ սրանց նման լիգանդները, որոնք կոմպլեքսագոյացնողին տրամադրում են մեկ էլեկտրոնային զույգ, կոչվում են մոնոդենտանտային (միատամ): 10.1-ում ներկայացված  $Pt^{2+}$ -ի կոմպլեքսները պարունակում են միայն մոնոդենտանտային լիգանդներ՝  $Cl^-$  և  $NH_3$ :

**Բիդենտանտային**  
տրամադրում են երկու զույգ էլեկտրոն՝ էթիլենդիամին (en)  $\text{H}_2\ddot{\text{N}}\text{CH}_2\text{CH}_2\ddot{\text{N}}\text{H}_2$ , դիֆոս՝  $(\text{C}_6\text{H}_5)_2\overset{\cdot}{\text{P}}\text{CH}_2\text{CH}_2\overset{\cdot}{\text{P}}(\text{C}_6\text{H}_5)_2$ , զիլմ՝  $\text{CH}_3\ddot{\text{O}}\text{CH}_2\text{CH}_2\ddot{\text{O}}\text{CH}_3$ ,

ամինաթթու՝  $\text{H}_2\ddot{\text{N}}-\text{R}-\text{C}=\text{O}$  :

**լիգանդներ:** Կոմպլեքսագոյացնողին կամ ավելի թվով ատոմները կարող են դոնորակցեատորային կապեր առաջացնել միևնույն կոմպլեքսագոյացնողի հետ: Այդպիսին են տրի-, տետրա-, պենտա- և հեքսադենտանտային լիգանդները: Տրիդենտանտային լիգանդների օրինակներ են.




ոդիտիլենտրիամին

Պոլիդենտանտային լիգանդները կարող են առաջացնել մեծ կայունությամբ օժտված ցիկլեր պարունակող կոմպլեքսներ, որոնք կոչվում են **խելատներ**:

Այս խմբին են պատկանում նաև կոմպլեքսոնները (ԷԴԱ, S-F) և կենսակոնպլեքսոնները, որոնցում ազոտի ատոմին միացած են մի քանի ալկիլարօքսիլային խմբեր:


Խելատային լիգանդների առանձին դաս են կազմում մակրոցիկլիկ (լիգանդների դոնոր ատոմները ցիկլերի կազմում են, օրինակ՝ պորֆիրինները, կորինուլինները և այլն) և մակրոմոլեկուլային լիգանդները (պոլիմերային ճուղեկուլներ, օրինակ սպիտակուցներ, նուկլեինաթթուներ, որոնց մոտ դիտվում է պոլիկոնդենսացում): Սրանք առաջացնում են ավելի կայուն կոմպլեքսներ, քան նույն դոնոր ատոմներով բաց շղթայով լիգանդները: Այս էֆեկտը տարբեր է խելատային էֆեկտից և կոչվում է **մակրոցիկլիկ էֆեկտ**:

Բնության մեջ տարածված են տետրադենտանտային մակրոցիկլերը՝ պորֆիրինները:




պորֆիրին

Տետրադենտանտային մակրոցիկլը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել.



104


որտեղ աղեղները ազդուի ատոմները միացնող միատեսակ ածխաջրածնային շղթաներ են, իսկ R<sub>1</sub>, R<sub>2</sub>: R<sub>3</sub>, R<sub>4</sub>՝ տարբեր ածխաջրածնային ռադիկալներ: Ազդուի դոնոր ատոմները տեղավորված են քառակուսու անկյուններում: Պորֆիրինները և կորինտինները առաջացնում են ամուր կոմպլեքսներ տարբեր մետաղների կատիոնների հետ: Երբ կենտրոնական ատոմը Fe<sup>2+</sup>-ն է, գոյանում է հենող որինի ակտիվ կենտրոն:



#### ԱԿ. 10.5. Հեմոգլոբինի ակտիվ սենտրոն

Քլորոֆիլի, հենցիամինի մոլեկուլերուն հաճապատասխանաբար կոնյակ երսագույնունէ  $Mg^{2+}$ ,  $Cu^{2+}$ :







Եթեաստենտանտային լիգանդի օրինակ է էթիլենիլամինտետրաքացախըթուն (Հ<sub>4</sub>ԵՂԱ), որի անհոնային ձևերն են (Հ<sub>2</sub>ԵՂԱ)<sup>2-</sup>, (ՀԵՂԱ)<sup>3-</sup> կամ (ԵՂԱ)<sup>4-</sup>:



#### **10.4. Կոմպլեքս միացությունների անվանակարգը.**

Ըստ միջազգային անվանակարգի, կոմպլեքս միացությունների անվանումները կազմվում են հետևյալ կանոնների հիման վրա.

**Լիգանդերի անվանումը:** Անիոնային լիգանդերի անվանմանը պակասած է են "n" վերօնակողությունը.



Որոշ լիգանդներ ունեն հատուկ անվանումներ.

$\text{NH}_3$  - ամին               $\text{H}_2\text{O}$  - աքվա               $\text{CO}$  - կարբոնիլ

$\text{NO}$  - նիտրոզիլ               $\text{N}_2\text{H}_4$  - հիդրազին

Օրգանական լիգանդները և ռադիկալները պահպանում են իրենց անվանումնը.

$\text{CH}_3$ - նեթիլ               $\text{C}_6\text{H}_5$  - ֆենիլ               $\text{C}_6\text{H}_6$  - բենզոլ

Այլ լիգանդների մեջ մասը պահպանում են իրենց անվանումները.

$(\text{NH}_2)_2\text{CO}$  - միզանյութ

$\text{C}_5\text{H}_5\text{N}$  - այրիդին

$(\text{C}_6\text{H}_5)_3\text{P}$  - տրիֆենիլֆոսֆին

$\text{N}_2$  և  $\text{O}_2$  լիգանդները անվանում են ազոտ և թթվածին:

Անվանելիս՝ սկզբում թվարկում են լիգանդները և, ապա անվանում են կոմպլեքսագոյացնողը: Չեզոք և կատիոնային կոմպլեքսներում կենտրոնական ատոմը ունի իր սովորական անվանումը (մայրենի լեզվով), որից հետո փակագծերում հօռմեական թվերով ցույց է տրվում օքսիդացման աստիճանը: Անիոնային կոմպլեքսներում կենտրոնական ատոմի լատինական անվանմանը ավելացվում է "ատ" վերջավորությունը (օրինակ, ֆերատ, կուպրատ):

**Թվային նախածանցներ:** Երկու կամ ավելի թվով միատեսակ լիգանդների առկայությունը ցույց է տրվում թվային նախածանցներով.

2 - դի,              3 - տրի,              4 - տետրա,              5 - պենտա,

6- հեքսա,              7- հեպտա,              8 - օկտա,              9 - նոնա և այլն:

Ստորև բերված են մի շարք կոմպլեքս միացությունների անվանումները՝

$[\text{Co}(\text{NH}_3)_3\text{Cl}_3]$

- տրիֆլորոտրիամին կոբալտ (III)

$[\text{Cu}(\text{NH}_3)_4]\text{SO}_4$

- տետրաամին պղնձի (II) սուլֆատ

$[\text{Al}(\text{H}_2\text{O})_6]\text{Cl}_3$

- հեքսաաքվաալումինի օլորիդ

$\text{H}[\text{AuCl}_4]$

- ջրածնի տետրաօլորոաուրատ (III)

$\text{Na}_3[\text{Al}(\text{H}_2\text{O})_2(\text{OH})_4]$

- նատրիումի տետրահիդրօքսոդիաքվաալումինատ

$\text{K}_4[\text{Fe}(\text{CN})_6]$

- կալիումի հեքսացիանոֆերատ (II)

$\text{K}_3[\text{Fe}(\text{CN})_6]$

- կալիումի հեքսացիանոֆերատ (III)

$\text{H}_3\text{O}^+$

- հիդրօքսոնիում

$\text{NH}_4^+$

- ամոնիում

$\text{PH}_4^+$

- ֆոսֆոնիում

$\text{H}_3\text{S}^+$





- սուլֆոնիում

**Օրինակ 5.** Գրել նատրիումի դիմիտրոդիսուլֆիտոդիամինկոբալտատ (III) –ի բանաձև՝  $\text{Na}_3[\text{Co}(\text{NH}_3)_2(\text{NO}_2)_2(\text{SO}_3)_2]$ :


## 10.5. Կոմպլեքս միացությունների առաջացումը

Կոմպլեքս միացությունները կարող են առաջանալ.


1. պարզ նյութերի փոխագործոցությունից, հատկապես մեծ նշանակություն ունեն կոմպլեքս միացությունների առաջացման ռեակցիաները ջրային լուծույթներում:



2. Կոմպլեքս միացություններից՝ լիգանդափոխանակային ռեակցիաներում.



3. Վերօքս ռեակցիաներով, որոնք բնորոշ են փոփոխական օքսիդացման աստիճանով կենտրոնական ատոմ ունեցող կոմպլեքսներին.




Խառը (տարբեր լիգանդներով) կոմպլեքս միացությունների սինթեզը քննարկենք պլատինի կոմպլեքսների օրինակով:

$\text{K}_2[\text{PtCl}_4]$  -ի կարմիր գույնի լուծույթը առանց տաքացման, անհրաժեշտ քանակով ամոնիակի հետ փոխագործելիս աստիճանաբար անջատվում են ցիսդիքլորոդիամին պլատին (II) կոմպլեքսի վառ դեղին գույնի դժվարալուծ բյուրեղները.



Նույն բաղադրության բաց դեղին գույնի տրամաս-հզորները ստացվում է  $[\text{Pt}(\text{NH}_3)_4]\text{Cl}_2$  -ի լուծույթը երկար ժամանակ աղաքրպի ավելցուկի հետ տաքացնելիս.




## 10.6. Կոմպլեքսների կայունությունը.

Կոմպլեքսների կայունությունը կախված է կենտրոնական ատոմի տարբեր խնամակցությունից լիգանդի նկատմամբ, նրա և լիգանդի լիցքի և շառավիղի մեծությունից, լիգանդի հիմնայնությունից (լիգանդներն, իբրև էլեկտրոնային գույքի դրույթներ, Լյուիսի հիմքեր են), կոմպլեքսագոյացնողի հետ ցիկլեր առաջացնելու ընդունակությունից և այլն:


Կոմպլեքս իոնները ջրային լուծույթում բնութագրվում են տարբեր կայունությամբ: Կոմպլեքս իոնի դիսոցումը պետք է տարբերել կոմպլեքս միացության դիսոցումից: Կոմպլեքս միացությունը դիսոցվում է լրիվ և անդարձելի:



Ներկայացված կոմպլեքս միացության լուծույթը տալիս է  $\text{Cl}^-$  իոնի ռուկական ռեակցիան, բայց չի տալիս  $\text{Ag}^+$  իոնի և  $\text{NH}_3$  ռեակցիաները: Կոմպլեքս իոնները դիսոգվում են շատ քիչ: Դիսոգումը քանակապես բնութագրվում է հավասարակշռության հաստատումով.




Դիսոգման հաստատումի մեջությունը բնութագրում է կոմպլեքս իոնի կայունությունը լուծույթում: Այն հաճախ անվանում են անկայունության հաստատում: Որքան մեծ է  $K_{\text{անկ.}}$ , այնքան փոքր է կոմպլեքսի կայունությունը.




**Օրինակ 6.**  $\text{CrCl}_3 \cdot 6\text{NH}_3$  աղի լուծույթի վրա արձարի նիտրատի լուծույթ ավելացնելիս նստում է ամբողջ քլոր, իսկ  $\text{CrCl}_3 \cdot 5\text{NH}_3$  աղի լուծույթից նստում է ընդհանուր քլորի  $2/3$  մասը: Գրել այդ աղերի կորոդինացիոն բանաձևերը և տրված աղերի դիսոգման հավասարումը:

**Լուծում:** Քանի որ առաջին աղից  $\text{Cl}^-$  իոնները լրիվ են նստում, նշանակում է բոլոր իոնները գտնվում են արտաքին ոլորտում: Այդ աղի բանաձևն է՝  $[\text{Cr}(\text{NH}_3)_6]\text{Cl}_3$ : Երկրորդ աղից նստում են  $\text{Cl}^-$  իոնների միայն  $2/3$  –ը, նշանակում է նրանցից  $1/3$  –ը գտնվում է կոմպլեքս միացության ներքին ոլորտում, իսկ մնացածը՝ արտաքին ոլորտում: Աղի բանաձևն է՝  $[\text{Cr}(\text{NH}_3)_5\text{Cl}]\text{Cl}_2$ : Այս աղերի դիսոգման հավասարումներն են.



**Օրինակ 7.** Հաշվել ցինկի իոնի կոնցենտրացիան նատրիումի տետրացիանոցինկատի 0,3 մոլ/ $\text{l}$  լուծույթում, եթե լուծույթում ցիանիդ իոնների ավելցուկը հավասար է 0,01 մոլ/ $\text{l}$ :  $K_{\text{անկ.}} = 2,4 \cdot 10^{-20}$ :

**Լուծում:**  $\text{Na}_2[\text{Zn}(\text{CN})_4] \rightarrow 2\text{Na}^+ + [\text{Zn}(\text{CN})_4]^{2-}$



$$K_{\text{անկ.}} = \frac{[\text{Zn}^{2+}][\text{CN}^-]^4}{[[\text{Zn}(\text{CN})_4]^{2-}]}$$

$$2,4 \cdot 10^{-20} = \frac{[\text{Zn}^{2+}] \cdot 0.01^4}{0.3}$$

$$[\text{Zn}^{2+}] = 7,2 \cdot 10^{-13} \text{ мол/л}$$

Յայտնի է, որ Hg, Pb, Cd, Cr, Ni մետաղների միացությունները օրգանիզմի համար թունավոր (տոքսիկ) նյութեր են: Դա բացատրվում է նրանով, որ ծանր մետաղները (M<sub>ու</sub>), փոխազդրում են կենսաօրգանական կոմպլեքսների հետ: Այդպիսի փոխազդեցությունը կարելի է ներկայացնել հավասարումով.





որտեղ M<sub>կL</sub> - կենսագեն մետաղի (Fe, Zn, Cu, Co) կոմպլեքսն է կենսաօրգանական լիգանդի՝ L հետ (օրինակ պորֆիրին), M<sub>ու</sub>- ծանր մետաղի իոնը:

Եթե M<sub>ուL</sub> կոմպլեքսն ավելի կայուն է, քան M<sub>կL</sub> կոմպլեքսը, հավասարակշռությունը տեղաշարժվում է դեպի աջ և օրգանիզմում կուտակվում են M<sub>ուL</sub> միացությունները: Արդյունքում նորմալ կենսագործներությունը խախտվում է և սկսվում է տոքսիկոպ:

Եթիլենդիամինի (en) կոմպլեքսներից ամենակայունները Cu<sup>2+</sup> և Ni<sup>2+</sup> կատիոնների հետ առաջացած կոմպլեքսներն են (օրինակ,

$\text{K}_{\text{ամկ}}[\text{Cu(en)}_2]^{2+} = 5 \cdot 10^{-19}$ ): Յետևաբար, Cu<sup>2+</sup> և Ni<sup>2+</sup> իոնները կարող են դուրս մղել Mn<sup>2+</sup>, Fe<sup>2+</sup>, Co<sup>2+</sup>, Zn<sup>2+</sup> իոններին վերջիններիս կոմպլեքսներից:



որտեղ, M<sub>կ</sub> = Mn, Fe, Co, Zn:



Ծանր մետաղներով թունավորումները բուժում են անտիդոտների միջոցով: Այդպես են կոչվում այն դեղամիջոցները, որոնց բաղադրության մեջ կա ծծումբ պարունակող լիգանդներ: Ծանր մետաղները ծծումբի հետ առաջացնում են բարձր կայունության կոմպլեքսներ:

Zn, Cd, Hg առաջացած թունավորումների ժամանակ, որպես անտիդոտ կիրավում են նաև կոմպլեքսները՝ ԷԴՏԱ և նրա դիմատրիումական աղը Na<sub>2</sub>EDTA (Տրիլոն-Բ), (10.10.):

## 10.7. Կոմպլեքս միացությունների իզոմերիան


Կոորդինացիոն միացությունների բազմազանության պատճառներից մեկն իզոմերների գոյությունն է: Տարբերում են իզոմերիայի մի շարք տեսակներ:

**Իոնական իզոմերիա:** Այդպիսի իզոմերները տարբերվում են իոնների տարբեր բաշխումով ներքին և արտաքին ոլորտների միջև: Այլ խոսքով, լիգանդները և արտաքին ոլորտի իոնները փոխանակվում են, և դիսուլֆան ժամանակ առաջանում են տարբեր իոններ.



Իոնական իզոմերիայով է բացատրվում  $\text{CrCl}_3 \cdot 6\text{H}_2\text{O}$  բաղադրություն ունեցող երեք տարրեր միացությունների գոյությունը: Նրանցից մեկը՝  $[\text{Cr}(\text{H}_2\text{O})_6]\text{Cl}_3$  մանուշակագույն է և պահելիս ջուր չի կորցնում, և բոլոր  $\text{Cl}^-$  իոնները նստում են արձաքի իոնների ազդեցությանը:  $[\text{Cr}(\text{H}_2\text{O})_5\text{Cl}]\text{Cl}_2 \cdot \text{H}_2\text{O}$  կանաչ կոմպլեքսը պահելից կորցնում է մեկ մոլեկուլ ջուր, իսկ արձաքի իոններով նստում է  $\text{Cl}^-$  իոնների միայն 2/3 մասը:  $[\text{Cr}(\text{H}_2\text{O})_4\text{Cl}_2]\text{Cl} \cdot 2\text{H}_2\text{O}$  կանաչ կոմպլեքսը նույնական կորցնում է երկու մոլեկուլ ջուր և նստում է  $\text{Cl}^-$  իոնների միայն 1/3 մասը:

**Կապային իզոմերիա, պայմանավորված կապման տեսակով:** Որոշ լիգանդներ կոմպլեքսագոյացնողի հետ կարող են կապվել տարրեր ատոմների միջոցով: Օրինակ՝  $\text{NO}_2^-$  լիգանդը կոմպլեքս ատոմի հետ կարող է կապվել կամ  $\text{N}-\text{ի}$  կամ  $\text{O}-\text{ի}$  միջոցով.






### Եխտրո

### Եխտրիտոն


Այդպիսի իզոմերիա կարող է առաջացնել նաև  $\text{SCN}^-$  իոնը, որը մետաղի հետ կարող է միանալ ծծմբի կամ ազոտի ատոմի միջոցով:


**Կոորդինացման իզոմերիա:** Դիտվում է այն միացություններում, որոնցում և՝ կատիոնը, և անիոնը կոմպլեքս են, լիգանդների բաշխումը իոնների միջև կարող է փոխվել.



**Սոլեկուլային իզոմերիա:** Տարբերվում են ներքին և արտաքին ոլորտներում մոլեկուլների բաշխումով, որի արդյունքում փոխվում է լուծիչի մոլեկուլների կապի բնույթը, նրանց ֆունկցիան: Օրինակ՝  $[\text{Cr}(\text{H}_2\text{O})_6]\text{Cl}_3$  և  $[\text{Cr}(\text{H}_2\text{O})_5\text{Cl}]\text{Cl}_2\text{H}_2\text{O}$ -ը հիդրատային (սոլվատային) իզոմերներ են:


**Երկրաչափական իզոմերիա:** Դիտվում է չորս կոորդինացիոն թվով հարթ քառակուսու կոնֆիգուրացիայով կոմպլեքսների մոտ, որոնք պարունակում են երկուսից ոչ պակաս միատեսակ լիգանդներ ( $\text{MA}_2\text{B}_2$ ): Ցիս-տրանս իզոմերների բացակայությունը  $\text{MeA}_2\text{B}_2$  տիպի կոմպլեքսների մոտ վկայում է դրանց քառանիստային (տետրաեդր) կոնֆիգուրացիայի մասին: Ցիս-տրանս իզոմերիա դիտվում է նաև վեց կոորդինացիոն թվով օկտաեդրի կոնֆիգուրացիայով կոմպլեքսների մոտ, որոնք նույնական ունեն երկուսից ոչ պակաս միատեսակ լիգանդներ ( $\text{MeA}_2\text{B}_2$  և  $\text{MeA}_2\text{B}_4$  տիպի կոմպլեքսներ)





**Օպտիկական իզոմերիա:** Օպտիկական իզոմերներ են կոչվում այն մոլեկուլները, որոնք իրար նկատմամբ հայելային պատկերներ են և տարածության մեջ չեն կարող համադրվել: Օպտիկական իզոմերների ամենակարևոր տարրերությունը՝ լույսի բևեռացման հարթությունը հակադիր ուղղություններով պտտելու ունակությունն է: Հայելային պատկերներ հանդիսացող օպտիկական իզոմերները կոչվում են էնանտիոմերներ:

Այս ութանիստ կոճպլեքսները կարող են առաջացնել էնանտիո-մերներ, որոնք պարունակում են երկու կամ երեք բիդենտանտային լիգաններ:



#### **10.8. Քիմիական կապի բնույթը կոմպլեքս միացություններում**

Կոնպլեքս միացություններում կողորդինացիոն կապի մասին պատկերացումները անցել են զարգացման չորս փուլ։ Այն սկսվել է պարզագույն էլեկտրաստատիկ տեսությունից, որին փոխարինել է վալենտային կապերի տեսությունը, հետագայում առաջացել է բյուրեղական դաշտի տեսությունը և ապա լիգանդների դաշտի կամ մոլեկուլային օրբիտալների տեսությունը։ Այս տեսություններից յուրաքանչյուրը հանդիսացել է նախորդի զարգացումը։

**ԵԼԵԿՏՐԱՍՏԱՏԻԿ ՄԵՏՈՒՐՅՈՒՆԾ** առաջարկվել է Կոսելի և Մագնուսի կողմից: Այս տեսությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ իրանային կամ քենոացված լիգանդները կոմպլեքսագոյացնողի շուրջը կորորդինացվում են ելեկտրաստատիկ ձգողական ուժերով: Լիգանդների միջև առաջանում են վանողական ուժեր, որոնց որբան շատ է

լիգանդների թիվը, այնքան մեծ են վանողական ուժերը: Կայուն կոմպլեքս ստացվում է այն դեպքում, եթե օգողական ուժերը հավասարակշռված են լիգանդների միջև վանողական ուժերով: Ըստ այս մոդելի հնարավոր եղավ գնահատել կոմպլեքսների կայունությունը, կախված կոռոդինացիոն թվից և լիգանդների տարածական դասավորությունը: Օրինակ, միալիցք իոնները կայուն կոմպլեքս են առաջացնում 2, 3 կոռոդինացիոն թվով, երկիցք իոնները՝ 4, եռլիցք իոնները՝ 4, 6: Ելնելով նվազագույն ենթօֆիայի սկզբունքից, կարելի է ենթադրել, որ 2 կոռոդինացիոն թվով կոմպլեքսները պետք է ունենան գծային, 3 կոռոդինացիոն թվով՝ հավասարակողմ եռանկյան, 4 կոռոդինացիոն թվով՝ քառանիստի, 6 կոռոդինացիոն թվով՝ ութանիստի կառուցվածք: Ըստ Կուլոնի օրենքի իոնական լիգանդներով կոմպլեքսներում կոռոդինացիոն թիվը կլինի ավելի փոքր, քան չեզոք լիգանդներով կոմպլեքսներում (իոնների միջև վանողական ուժերը ավելի մեծ են), օրինակ՝  $[Co(CNS)_4]^{2-}$ ,  $[Co(NH_3)_6]^{2+}$ :

Ըստ էլեկտրաստատիկ մոդելի կոմպլեքսագոյացնողը և լիգանդները դիտվում են որպես չփեխորմացված լիցքավորված գնդեր (այսինքն կոմպլեքսագոյացնողի և լիգանդների փոխադարձ ազդեցությունը անտեսվում է): Այսպիսի մոդելը խիստ մոտավոր է և ի վիճակի չբացատրել մի շաբթ փաստեր.

1. հարթ քառակուսի կոմպլեքսների գոյությունը ( $[Pt(NH_3)_2Cl_2]$ ), չնայած 4 լիգանդների քառանիստային դասավորությունը էներգետիկորեն ավելի շահավետ է:


2. Կոմպլեքս միացությունների մագնիսական և օպտիկական հատկությունները: Այն միացությունները, որոնցում կան չզույգված էլեկտրոններ պարանագնիսական են, իսկ եթե բոլոր էլեկտրոնները զույգված են՝ դիամագնիսական են: Քանի որ ըստ էլեկտրաստատիկ մոդելի կոմպլեքսագոյացնողի և լիգանդների փոխազդեցությունից դրանց էլեկտրոնային կառուցվածքը չի փոխվում, ապա պետք էր սպասել, որ կոմպլեքսում կլինի այնքան չզույգված էլեկտրոն, որքան ունի ազատ իոնը: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ կոմպլեքսում չզույգված էլեկտրոնների թիվը կախված է լիգանդի բնույթից, օրինակ՝  $Fe^{2+}$  իոնը ունի վեց էլեկտրոն, որոնցից չորսը զույգված չեն, նույնքան չզույգված էլեկտրոն կա  $[FeF_6]^{4-}$  իոնում, այնինչ  $[Fe(CN)_6]^{4-}$  իոնում բոլոր հինգ ձօրիքտալերը ունեն միանույն էներգիան:

**Բյուրեղական դաշտի տեսությունը** հանդիսանում է էլեկտրաստատիկ մոդելի հետագա զարգացումը, քանի որ հաշվի է առնում լիգանդների առաջացրած էլեկտրական դաշտի ազդեցությունը կոմպլեքսագոյացնողի վալենտային էլեկտրոնների վրա: Կոռոդինացիոն կապի առաջացմանը մասնակցում են կոմպլեքսագոյացնողի ձօրիքտալերի էլեկտրոնները: Ազատ իոնում բոլոր հինգ ձօրիքտալերը ունեն միանույն էներգիան:

Դիմաց d-օրիքտալերից երեքը՝  $d_{xy}$ ,  $d_{xz}$ ,  $d_{yz}$  ուղղված են համապատասխան կոռոդինատների առանցքների կիսորդներով, իսկ երկուսը՝

$d_{z^2}$  և  $d_{x^2-y^2}$  ուղղված են կոորդինատների առանցքների ուղղությամբ և ավելի մոտ են լիգանդներին: Բացասական լիգքավորված լիգանդները շրջապատելով կոլալեքսագոյացնողին, վաճում են մետաղի d-օրբիտալների էլեկտրոններին: Վաճողական ուժերի հետևանքով d-օրբիտալների էներգիան բարձրանում է: Եթե լիգանդները առաջացնում են հավասարաչափ գնդային էլեկտրաստատիկ դաշտ (կոնվեքսագոյացնողից գտնվում են միևնույն հեռավորության վրա), ապա d-օրբիտալների էներգիան վաճանան պատճառով բարձրանում է նույն չափով, և բոլոր օրբիտալները էներգետիկորեն մնում են համարժեք:

Սա տեղի է ունենում օրինակ, եթե կոմպլեքսը ունի հարթ բառակուսու կառուցվածք (4 կոորդինացիոն թվի դեպքում): Ութանիստ կոմպլեքսի դեպքում (կոորդինացիոն թիվը հավասար է 6) լիգանդների փոխազդեցությունը d-օրբիտալների հետ լինում է տարրեր:  $d_{z^2}$  և  $d_{x^2-y^2}$  օրբիտալների էլեկտրոնները ավելի մոտ լինելով լիգանդներին մեծ վաճանան են ենթարկվում և ձեռք են բերում ավելի մեծ էներգիա գրավում են էներգետիկորեն ավելի բարձր մակարդակ ( $d_g$ ), իսկ  $d_{xy}$ ,  $d_{xz}$ ,  $d_{yz}$  օրբիտալները, որոնք ուղղված են լիգանդների միջև, համեմատաբար փոքր վաճանան են ենթարկվում (քանի որ ավելի հեռու են լիգանդից) և գրավում են ավելի ցածր էներգետիկ մակարդակ ( $d_e$ ):




Նկ. 10.6.

Այսպիսով d-ենթամակարդակը ճեղքվում է առաջացնելով նոր՝ էներգիայով ավելի բարձր  $d_g$  ( $d_{z^2}$ ,  $d_{x^2-y^2}$ ) և ցածր  $d_e$  ( $d_{xy}$ ,  $d_{xz}$ ,  $d_{yz}$ ) ենթամակարդակներ:  $d_g$  և  $d_e$  էներգիաների տարրերությունը կոչվում է բյուրեղադաշտով ճեղքման էներգիա և նշանակվում է  $\Delta$ :  $\Delta$ -ն կախված է կոմլալեքսագոյացնողի բնույթից, կոորդինացիոն թվից, լիգանդի բնույթից: Նրա մեծությունը շատ կարևոր է կոմպլեքսների մագնիսական հատկությունները բացատրելու համար:

Քառանիստ կոմպլեքսի դեպքում տեղի է ունենում հակառակ փոխազդեցությունը: Ուժեղ վաճանան են ենթարկվում առանցքների կիսորդներով ուղղված օրբիտալները նրանց եներգիան բարձրանում է, իսկ  $d_x^2$  և  $d_z^2$  - օրբիտալները ենթարկվում են ավելի թույլ վաճանան նրանց եներգիան իջնում է:

Որքան ուժեղ է լիգանդների էլեկտրաստատիկ դաշտը, այնքան մեծ է ճեղքումը: Ըստ ճեղքան ուժի նվազման լիգանդները կազմում են հետևյալ շարքը (այսպես կոչված սպեկտրաքիմիական շարք):




Եթե կոմպլեքսագոյացնողի գործառնությունը կազմում է լիգանդների թիվը 4-ից 7 է, ապա ց և դ տարրերի կույզը բաշխվելիս էլեկտրոնները պետք է հաղթահարեն երկու տեսակի եներգիա:

1. միջէլեկտրոնային վաճանան եներգիան  $E$ ,

2.  $\Delta$  ճեղքան եներգիան:


Եթե  $\Delta$ -ն փոքր է մեկ օրբիտալի վրա էլեկտրոնների գույգման եներգիայից (լիգանդի թույլ դաշտ, օրինակ՝  $\text{CoF}_6^{3-}$ ),  $\text{Co}^{3+}$  -ի վեց գործառնությունը բաշխվում են բոլոր հինգ գործառների վրա՝ ըստ Յունդի կանոնի: Յակառակը, եթե  $\Delta$ -ն մեծ է՝ էլեկտրոնները գույգվելով դասավորվում են ստորին դեպքությունում օրբիտալների վրա՝ Յունդի կանոնին հակառակ, իսկ ց հերկու օրբիտալները մնում են դատարկ, քանի որ էլեկտրոնների գույգումը եներգետիկորեն ավելի շահավետ է (լիգանդի ուժեղ դաշտ, օրինակ՝  $\text{Co}(\text{NH}_3)_6^{3+}$ ): Զգույգված էլեկտրոնների թվերի տարրերության պատճառով  $\text{Co}(\text{NH}_3)_6^{3+}$ -ը կոչվում է ցածրասպինային, իսկ  $\text{CoF}_6^{3-}$ -ը՝ բարձրասպինային կոմպլեքս:



Նկ. 10.7.

Բյուրեղական դաշտի տեսությամբ հիճարավոր եղավ բացատրել նաև կոմպլեքսների գույնը: Անցումային մետաղների  $d$ -տարրերի կոմպլեքս միացությունները հիմնականում գունավոր են, իսկ պսկղուներու գաղի էլեկտրոնային կառուցվածքը ունեցող իննների կոմպլեքսները անգույն են: Օրինակ՝  $\text{Cu}^+$ ,  $\text{Ag}^+$ ,  $\text{Zn}^{2+}$ ,  $\text{Cd}^{2+}$ ,  $\text{Hg}^{2+}$ , որոնք ունեն  $(n-1)d^{10}$  էլեկտրոնային կառուցվածք՝ անգույն են, իսկ  $\text{Cu}^{2+}$ , որն ունի  $d^9$  էլեկտրոնային կառուցվածքը գունավոր են: Գույնը առաջանում է այն դեպքում, եթե էլեկտրոնը թռչում է մի ենթամակարդակից մյուսը (եթե ատոմում կան զգույգված էլեկտրոններ և թերի լրացված կամ դատարկ դ


օրբիտալներ): Տեղի է ունենում լույսի սպեկտրի որոշակի մարզի ճառագայթների կլանում: Չկլանված մարզով պայմանավորված է կոմպլեքսի գույնը: Գույնը կախված է ճեղքման էներգիայից: Եթե  $\Delta_{\text{e}}$  փոքր է, կլանվի լույսի սպեկտրի երկար-ալիք մարզը, որի էներգիան փոքր է, եթե  $\Delta$  մեծ է, ապա՝ կարճ-ալիք մարզը, որի էներգիան մեծ է:



**Կալենտական կապերի տեսություն (ՎԿՏ):** Բյուրեղական դաշտի տեսությունը բացառում է լիգանդի էլեկտրոնների մասնակցությունը կոորդինացիոն կապի ստեղծմանը: Ըստ ՎԿՏ-ի, որը նշակել է Պոլինգը, կոմպլեքս միացություններում կապերն առաջանում են հիբրիդացված և տարածության մեջ ուղղորդված ատոմական օրբիտալներով (ուղղորդված վալենտականությունների տեսություն): Կենտրոնական ատոմի հիբրիդացված ազատ օրբիտալները փոխժածկվում են լիգանդների չքաշչված էլեկտրոնային զույգերով լրացված օրբիտալներով, այսինքն կոորդինացիոն կապն ունի կովալենտ դրույտակցեպտորային բնույթ: Լիգանդը հանդիսանում է դոնոր, իսկ կոմպլեքսագոյացնողը՝ ակցեպտոր: Կոորդինացիոն թիվը որոշվում է կապի առաջացմանը մասնակցող հիբրիդային օրբիտալների թվով: Կոմպլեքսի երկրաչափական կառուցվածքը որոշվում է հիբրիդացման տեսակով, որն իր հերթին որոշվում է լիգանդների էլեկտրոնային կառուցվածքով և նրանց թվով: Այսպես, որ հիբրիդացմանը համապատասխանում է գծային կառուցվածք՝  $[\text{Ag}(\text{NH}_3)]^+$ ,  $\text{sp}^2$  – ին՝ հարթ հավասարակողմ եռանկյան՝  $[\text{HgI}_3]$ ,  $d\text{sp}^2$  – ին՝ հարթ քառակուսու կառուցվածք՝  $[\text{Ni}(\text{CN})_4]^{2-}$ ,  $\text{sp}^3$  – ին՝ հարթ քառանիստ բուրգի կառուցվածք՝  $[\text{Zn}(\text{NH}_3)_4]^{2+}$ ,  $d^2\text{sp}^3$  – ին՝ օկտաէդրի կառուցվածք՝  $[\text{Co}(\text{NH}_3)]^{3+}$ : Վերջիններս հանդիպում են ամենահաճախը: Նման կոմպլեքսներ առաջացնում են  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Sr}^{2+}$ ,  $\text{Ba}^{2+}$ ,  $\text{Mn}^{2+}$ ,  $\text{Fe}^{2+}$ ,  $\text{Co}^{2+}$ ,  $\text{Cr}^{3+}$ ,  $\text{Al}^{3+}$ ,  $\text{Sn}^{4+}$ ,  $\text{Pt}^{4+}$  և այլ իոնները: Օկտաէդրիկ կոմպլեքսների կայունությունը և մագնիսական հատկությունները կախված են այն բանից, թե հիբրիդացմանը  $n$ ՝  $d$  օրբիտալներն են մասնակցում վերջին ( $\text{sp}^3\text{d}^2$ ) թե նախավերջին ( $d^2\text{sp}^3$ ) շերտի:

Դիտարկենք  $[\text{Co}(\text{NH}_3)_6]^{3+}$  և  $[\text{CoF}_6]^{3-}$  օկտաէդրիկ կոմպլեքսների առաջացումը:

Հատողի վալենտային շերտի էլեկտրոնային բանաձևն է  $3\text{d}^7\text{4s}^2$ , իսկ  $\text{Co}^{3+}$  -ինը՝  $3\text{d}^6$ :




Անդրքին օրբիտալային կոմպլեքս

Նկ. 10.9. Co ատոմի,  $\text{Co}^{3+}$  իոնի,  $[\text{Co}(\text{NH}_3)_6]^{3+}$  էլեկտրոնային թաղանթների սխեման:

Եթե լիգանդը ամոնիակն է, կենտրոնական ատոմում փոխվում է էլեկտրոնների բաշխումը 3d օրբիտալների վրա: Կենտրոնների զույգման արդյունքում են երկու դատարկ 3d օրբիտալ ( $d_{x^2-y^2}$  և  $d_{z^2}$ ), որոնք x, y, z առանքներով հիբրիդանում են դեպի օկտաէդրի գագաթները: Յիբրիդացմանը մասնակցում են 3d4s4p օրբիտալները, այսինքն տեղի է ունենում ներքին օրբիտալային հիբրիդացում՝  $d^2sp^3$ : Այս 6 օրբիտալները փոխածակվում են լիգանդների էլեկտրոնային զույգերով լրացված 6 օրբիտալների հետ: Առաջացած կոմպլեքսում 3d օրբիտալների վրա չկան կենտրոններ և այն դիամագնիսական է:

$[\text{CoF}_6]^{3-}$  -ի առաջացման ժամանակ հիբրիդացումը գնում է ի հաշիվ 4s4p և 4d ազատ օրբիտալների, այսինքն տեղի է ունենում արտաքին օրբիտալային հիբրիդացում՝  $sp^3d^2$ :  $\text{Co}^{3+}$  -ի էլեկտրոնների բաշխումը մնում է անփոփոխ: Քանի որ այս դեպքում 3d օրբիտալների վրա կան կենտրոններ, կոմպլեքսը պարագանիսական է:




արտաքին օրբիտալային կոմպլեքս

Նկ. 10.10.  $[\text{CoF}_6]^{3-}$  -ի էլեկտրոնային թաղանթների սխեման:

Տեսությունը բացատրում է նաև կոմպլեքսների կայունությունը: Քանի որ  $[\text{CoF}_6]^{3-}$  -ի առաջացման ժամանակ հիբրիդացմանը մասնակցում են արտաքին և փոքր էլեկտրոնային խտություն ունեցող 4d օրբիտալները, ապա առաջացած կապերն ավելի թույլ են և կոմպլեքսն ավելի ռեակցիոնունակ է (անկայուն է), լիգանդների տեղակալումն ավելի հեշտ է գնում  $[\text{Co}(\text{NH}_3)_6]^{3+}$  -ի համեմատ: Որոշ լիգանդներ ( $\text{CN}^-$ ,  $\text{CO}$ ) առաջանում են ներքին, որոշ լիգանդներ ( $\text{F}^-$ ,  $\text{Cl}^-$ ,  $\text{Br}^-$ ,  $\text{I}^-$ ) արտաքին օրբիտալային հիբրիդացում:

**Լիգանդների դաշտի կամ ապատեղայնացված մոլեկուլային օրբիտալների տեսություն** (ԼԴՏ կամ UOS): Ըստ այս տեսության լիգանդները դիտվում են ոչ թե որպես լիգրավորված գնդեր, այլ

մասնիկներ, որոնք ունեն իրենց սեփական օրբիտալները: Ութանիստ կոմպլեքսում լիգանդների վեց ատոմական օրբիտալները կոմպլեքսագոյացնողի 9 օրբիտալներից վեցի հետ՝  $d_{x^2-y^2}$ ,  $d_{z^2}$ , S,  $P_x$ ,  $P_y$ ,  $P_z$  գծային կոմբինացնան արդյունքում առաջացնում են մոլեկուլային օրբիտալներ:  $d_{xy}$ ,  $d_{yz}$ ,  $d_{zx}$  - օրբիտալները, որոնք ուղղված են կոորդինատների առանցքների կիսորդներով, լիգանդների օրբիտալների հետ գծային կոմբինացնան մեջ չեն մտնում, էներգետիկ փոփոխության չեն ենթարկվում և առաջացնում են չկապող օրբիտալներ: Այսպիսով լիգանդների վեց օրբիտալները փոխազդում են կոմպլեքսագոյացնողի վեց օրբիտալների հետ, որի արդյունքում առաջանում են վեց կապող ՄՕ (մեկ  $s_s$ , երեք  $s_p$  և երկու  $s_d$ ) և վեց քանդող ՄՕ (մեկ  $s_s^*$ , երեք  $s_p^*$  և երկու  $s_d^*$ ): Քննարկենք բարձր և ցածր սպինային կոմպլեքսների առաջացումը  $[CoF_6]^{3-}$  և  $[Co(NH_3)_6]^{3+}$  վրա:  $Co^{3+}$  d-ենթամակարդակի վրա ունի վեց էլեկտրոն, իսկ s և p - օրբիտալները դատարկ են: Կոորդինացիոն կապին մասնակցում են նաև վեց լիգանդ իրենց էլեկտրոնային զույգերով, այսպիսով ընդամենը 18 էլեկտրոն, որոնցից կապող ՄՕ-ների վրա լրացվում են 12 էլեկտրոն:




Նկ. 10.11.  $[CoF_6]^{3-}$ -ի էլեկտրոնային կառուցվածքը ըստ ապատեղայնացված  $MOS$ -ի

Δօ կոչվում է ճեղքնան էներգիա: Եթե  $\Delta_0$  փոքր է, ապա այն հաղթահարելու համար քիչ էներգիա է անհրաժեշտ և ըստ Հունդի կանոնի կոմպլեքսագոյացնողի էլեկտրոնները դասավորվում են ոչ միայն չկապող ՄՕ, այլ նաև  $s_d^*$  ՄՕ վրա: Ստացվում է բարձր սպինային կոմպլեքս՝  $[CoF_6]^{3-}$ :  $[Co(NH_3)]^{3+}$  դեպքում  $\Delta_0$  ճեղքումը մեծ է և կոմպլեքսագոյացնողի 6 էլեկտրոնները բաշխվում են չկապող ՄՕ վրա: Ստացվում է ցածր սպինային կոմպլեքս:

## 10.9. Կոռորդինացիոն միացությունների կենսաբանական դերը

Կյանքի համար անհրաժեշտ (կենսածին) d-տարրեր են Zn, Cu, Fe, Mn, Co, Mo մետաղները, որոնք առաջացնում են կենսաանօրգանական կոմպլեքսներ: Այդ կոմպլեքսներում լիգանդ են հանդիսանում ամինաթթուների մնացողները, պեպտիդները, հորմոնները, նուկլեինաթթուները և որոշ կենսաբանական ակտիվ նյութեր: Կենսաանօրգանական կոմպլեքսների և սպիտակուցային մոլեկուլների միասնությունը կոչվում է կենսակլաստեր (cluster-խումբ, պարս, ողկույզ): Կենսակլաստերի ներսում կա խոռոչ: Տեղավորվելով խոռոչի ներսում մետաղի իոնը փոխազդում է կապող խմբերի ( $\text{OH}$ ,  $\text{SH}$ ,  $\text{COO}^-$ ,  $\text{H}_2\text{N}$ ) դոնորային ատոմների հետ:




**Նկ. 10.12.**  $R_1, R_3, R_4$  – սպիտակուցի մոլեկուլներ են (մակրոցիկլիկ լիգանդներ)

Այս ձևով են առաջանում մետաղֆերմենտները: Առավել հայտնի մետաղֆերմենտներից են կարբոանիդիրազը, քսանտինօքսիդազը, ցիտոքրոմները, որոնց խոռոչները հանապատճանաբար պարունակելով ցինկ, մոլիբդեն և երկար գոյացնում են ֆերմենտների կենտրոնները:


Քննարկենք կենսածին մետաղների կենսաբանական դերը:

**Մոլիբդեն (Mo):** Մոլիբդեն պարունակող ֆերմենտները կատալիզում են բուսական և կենդանական օրգանիզմներում ընթացող օքսիդավերականգնման ռեակցիաները: Դրանց թվին են պատկանում քսանտինօքսիդազը, ալդեհիդօքսիդազը և այլն: Քսանտինօքսիդազը (ՔՕՔՍ) կատալիզում է քսանտինի օքսիդացումը թթվածնով մինչև միզաթթու:



**Մանգան (Mn):** Մանգան պարունակող ֆերմենտներից հայտնի են արգինազը, ֆուֆոգլուկոնուտազը, խոլինէսթերազը և այլն:

Արգինազը (ԱՐԳ) մասնակցում է միզանյութի առաջացման ցիկլին.




Ֆուֆողյուկոնուտազը (ՖԳՄ) մասնակցում է գլուկոզ-1-ֆուսֆատի փոխարկմանը զյուկոզ-6-ֆուսֆատի.-

S9U

Գյուլկող-1-ֆոսֆատ  $\xrightarrow{\text{Պ. Խ.}}$  գյուլկող-6-ֆոսֆատ


**Երկաք (Fe):** Սարդու օրգանիզմում պարունակվում է 5 գ երկաք: Նրա հիմնական մասը (70%) գտնվում է արյան հեմոգլոբինում: Երկաքը մտնում է նաև ֆերմենտների բաղադրության մեջ՝ ցիտոքրոմներ, կատալազ, պերօքսիդազ և այլն:

Հենողորինը բարդ սպիտակուց է, պարունակում է ոչ սպիտակուցային խումբ՝ հենք: Հենը երկարի (II) կոմպլեքս է, որի լիգանդը մակրոցիկլիկ միացություն՝ պորֆիրին է (10.4.): Հենում երկարի ատոմը գոյացնում է չորս կապ պորֆիրինային օլակի չորս դոնորային ազուտների հետ, ինչնգերորդ կապով երկարը միանում է գլոբինի ամինաթթվային մնացորդին, վեցերորդ կոռորդինացին կապը հենողորինում օգտագործվում է թթվածին միացնելու համար: Հենողորինը թթվածինը բռերից տեղափոխում է հյուսվածքներին.




ԴԵԳՈՐԾԱՀԵՄՆՈԳԼՈՐԻՆ ՕՐՍԻՀԵՄՆՈԳԼՈՐԻՆ

Հեմոգլոբինը փոխազդում է նաև ածխածնի (II) օքսիդի հետ, առաջնելով կարբոնի հեմօգլուբին.




Այս կոնվերսի կայունության հաստատումը նույ 200 անգամ մեծ է, քան թթվածնի հետ առաջացրած կոնվերսինը: Դա է պատճառը, որ կարբոնիլիենօղլորին առաջանալիս խախտվում է հյուսվածքային շնչառությունը:


Ցիտոռոնները օքսիդավերականգնման շղթայում մասնակցում են էլեկտրոնների տեղափոխմանը, ըստ որում երկարի օքսիդացման աստիճանը փոխվում է.



Կատալազ և պերօքսիդազ ֆերմենտները կատալիզում են հետևյալ ռեակցիաները.




**Կորպալու (Co):** Օրգանիզմում հանդես է գալիս վիտամին  $B_{12}$  ձևով: Դա պորֆիրինային շարքի կենսաօրգանական կոմպլեքս է, որում կոմպլեքսագոյացնող  $Co^{3+}$  է: Վիտամին  $B_{12}$  մասնակցում է մեթիլ ( $CH_3-$ ) խմբերի և ջուրածնի հիմքի տեղափոխման ռեակցիաներին.



որտեղ, HR - պոտոնազված սուբստրատ:

**Պղինձ (Cu):** Մտնում է օքսիդազ ֆերմենտների բաղադրության մեջ: Օքսիդազները կատալիզում են էլեկտրոնի կամ պրոտոնի տեղափոխումը սուրստրատից թթվածին:




**Ցիկլ (Zn):** Առավել ուսումնասիրված ցիկլ պարունակող ֆերմենտը կարբոնհիդրազն է: Այն կատալիզում է  $\text{CO}_2$ -ի հիդրատացման ռեակցիան:



#### **10.10. Կոմայլեքսոնոմետրիա**

Կոմպլեքսոնմետրիայի եղանակն օգտագործում են կենսաբանական հեղուկներում կալցիումի, մագնեզիումի և միկրոտարրերի որոշման համար: Կոմպլեքսոնմետրիան կիրառվում է նաև ջրի և դեղանյութերի անալիզում: Կոմպլեքսոնմետրը կիրառվում են որպես կայունացուցիչներ արյունը պահելիս, քանի որ նրանք կապում են օքսիդացման ռեակցիան կատալիզող մետաղների հինները: Կոմպլեքսոնմետրը նպաստում են օրգանիզմից բունավոր մետաղների հինների, ռադիոակտիվ իզոտոպների և դրանց քայլայնան արդյունքների հեռացմանը: Որոշ պոլիեն-տանտային լիգանդներ տարրեր մետաղների հինների հետ առաջացնում են կայուն կոմպլեքսներ: Նրանք կարող են տարրեր ջրային լուծույթներից քանակակես կապել մետաղի հինների կոմպլեքսի ձևով: Դրա վրա է հիմնված մետաղների հինների քանակական որոշումը:

Կոնվերսանտներին մետաղի հինգերի կոնցենտրացիայի ծավալային որոշման եղանակ է, երբ որպես ստանդարտ լուծույթ օգտագործվում են պոլիէթենիտանտային լիգանդներ-կոնվերսներ: Մետաղի հինգերի տիտրման ժամանակ պոլիէթենիտանտային լիգանդներ են ծառայում ԵԴՏԱ (եթիլենողիամինետետրաքացախաթրու) և նրա անալոգները, ինչպես նաև պոլիամինները (օրինակ՝ տրիէթիլենտետրամին կամ տրիէն):




ԵՇԱ (H<sub>4</sub>Y, ոստեն Y թթվալին մնացողուն է)




unhbtG

ԷԴՏԱ-Ն կոմպլեքսնոմետրիկ էղանակի կարևորագույն տիտրանուն է: Այն բազմաթիվ մետաղների հինների հետ առաջացնում է կայուն կոմպլեքսներ 1:1 հարաբերությամբ: Այդ բոլոր կոմպլեքսները ջրում լուծելի են, մեծ մասը անգույն են կամ թույլ գունավորված: ԷԴՏԱ-ի վրա նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս տեղի է ունենում կարօքսիլ խմբերի ջրածինների աստիճանական տեղակալում նատրիումի հիններով: ԷԴՏԱ-ն և նրա մոնոնատրիումական աղը ( $\text{NaH}_3\text{Y}$ ) ջրում վատ են

Լուծվում, այդ պատճառով տիտրման համար վերցնում են դինատրիտ-մական աղը՝  $\text{Na}_2\text{H}_2\text{Y}$  (Տրիլոն-Բ): Եթևս-ի դինատրիտմական աղով մետաղների հինների տիտրման ժամանակ տեղի է ունենում կարբօքսիլ խմբերի երկու ջրածինների, անհրաժեշտության դեպքում, նաև նատրիումի երկու հինների աստիճանական տեղակալում: 1:1 ստեխիոմետրիկ հարաբերությունը պայմանավորված է նրանով, որ  $\text{Y}^{3+}$ -ինը օժտված է վեց էլեկտրադոնոր խմբերով (չորս կարբօքսիլ և երկու ամին), որոնք կարող են զբաղեցնել կենտրոնական ատոմի չորս, հինգ կամ վեց կոորդինացիոն տեղեր: Օրինակ՝  $\text{Co}^{3+}$  ինը կարող է առաջացնել  $[\text{CoY}]$  կոմպլեքս հին:



Մետաղ - ԷՌՏԱ կոմպլեքսները ձեռք են բերում մեծ կայունություն հինգանդամանի խելատային օղակների առաջացման հետևանքով: Ըստ ԷՌՏԱ կոմպլեքսում գոյություն ունեն հինգ այդպիսի հինգանդամանի օղակներ: Ուրիշ դեպքերում  $Y^4+$  անիոնի վեց էլեկտրադրոնոր խմբերից միայն չորսն են կապվում մետաղի իոնի հետ, իսկ մետաղի չուրզը մնացած տեղերը գրադեցվում են այնպիսի լիգանդներով, ինչպիսիք են ջուրը, ամոնիակը, հիդրօքսիտ խումբը: ԷՌՏԱ դինատրիումական աղի ( $\text{Na}_2\text{H}_2\text{Y}$ ) մետաղի իոնների հետ փոխազդեցության ժամանակ առաջնում է կայուն կոմպլեքս և անգայուն են ջրածին իոններ: Օրինակ,



Քանակական անալիզում առավել կարևոր է մետաղ- ԷՇԱՆ կոմպլեքսի կայունությունը, որպեսզի տիտրման ժամանակ այն չքայրավի:

Առաջացած կոմպլեքսների կայունությունը տարրեր է և կախված է ինչպես մետաղի բնույթից, այնպես էլ միջավայրի pH-ից:

**ա. Կախվածությունը մետաղի բնույթից:** Կոմպլեքս նիհացությունների կայունությունը բնութագրվում է կայունության հաստատունով կամ կոմպլեքսի առաջացնան հաստատունով։ ԵԴՍԱ-ի հետ մետաղի կոմպլեքսի առաջացնան ռեակցիայի հավասարումը հետևյան է։




կամ առանց լիցերի.  $\text{Me} + \text{Y} \rightleftharpoons \text{MeY}$

Կայունության հաստատունը.

$$K_{MeY} = \frac{[MeY]}{[Me][Y]}$$


Որքան մեծ է կայունության հաստատունը, այնքան հավասարակշռությունը տեղաշարժված է աջ, և այնքան կայուն է կոնյլեքս միացությունը: Ընդ որում կատիոնի լիցքի մեծացման հետ կայունության հաստատունն աճում է:

**բ. Կայունության կախումը թH-ից:** Միջավայրի թթվայնության մեծացման հետ կոնյլեքսի կայունությունը փոքրանում է: Օրինակ. ԵԴԱ հետ նիկելի առաջացրած կոնյլեքս պարունակող լուծույթին թթու ավելացնելիս կոնյլեքսի դիսոցումը կտեղաշարժվի դեպի աջ, քանի որ պրոտոնը կմիանա  $Y^{4-}$  անիոնին, գոյացնելով  $HY^{3-}$ ,  $H_2Y^{2-}$  և այլն :




Ինչպես վերը նշվեց, մետաղների հետ կոնյլեքսագոյացման ժամանակ անջատվում են ԵԴԱ-ի սեփական պրոտոնները, որոնք փոքրացնում են միջավայրի թH-ը և խանգարում տիտրմանը: Մյուս կողմից, եթե տիտրումը տանենք ուժեղ հիմնային միջավայրում, նույնպես կստանանք ոչ ճիշտ տվյալներ: Այդ պայմաններում կգոյանան մետաղների հիդրօքսիդներ և կոնյլեքսագոյացումը կլինի ոչ լրիվ: Այդ պատճառով ԵԴԱ-ի տիտրումը կատարվում է չեզոք կամ թույլ հիմնային միջավայրում: Սովորաբար ջրածին հինները կապելու համար տիտրվող լուծույթին ավելացվում է ամոնիակային բուֆեր ( $NH_4OH/NH_4Cl$ , pH=9-10) և ապա տիտրվում ԵԴԱ-ի ստանդարտ լուծույթով:

**Ինդիկատորներ:** Կոնյլեքսունոնմետրիկ տիտրման ժամանակ համարժեք կետը որոշում են ինդիկատորների օգնությամբ, որոնք շատ մետաղների կատիոնների հետ առաջացնում են գունավոր կոնյլեքսներ: Կոնյլեքսունոնմետրիկ տիտրման համար առաջարկված բազմաթիվ ինդիկատորներից ավելի հաճախ օգտագործվում է էրիոքրոմ սևը (էրիո-T) կամ կալմագիտը: Էրիոքրոմը հանդիսանում է եռհիմն թթու (կարծ գրվում է  $H_3Ind$ ), որի թթվահիմնային հավասարակշռությունը ջրային լուծույթում այսպիսին է.




կարմիր կապույտ նարնջագույն

Քանի որ կոնյլեքսունոնմետրիկ տիտրումը էրիոքրոմ սևի օգնությամբ տարվում է ամոնիակային բուֆերի ներկայությամբ (pH = 9-10), ինդիկատորի գերակշռելի ձևը վառ կապույտ գույնի  $Hind^{2-}$ -ն է: Այդ պայմաններում ինդիկատորը բազմաթիվ մետաղների կատիոնների հետ առաջացնում է գինու կարմիր գույնի կայուն կոնյլեքսներ 1:1 հարաբերությանը:



Տիտրման ընթացքում գինու կարմիր գույնը պահպանվում է մինչև համարժեք կետ, որից հետո ԵԴԱ-ի փոքր ավելցուկը կապվում է ինդի-

կատորի հետ միացած  $Zn^{2+}$  իոններին՝ առաջացնելով ավելի կայուն կոմպլեքս:  $HInd^{2-}$  ազատվում է, լուծույթը ներկելով կապույտ գույնով.



կետում գինու կապույտ  
կարմիր

Այսպիսով, հետազոտվող իոնի և ինդիկատորի առաջացրած կոմպլեքսի կայունությունը պետք է փոքր լինի այդ մետաղների և ԵԴՏԱ առաջացրած կոմպլեքսի կայունությունից:

### 10.11. Լաբորատոր աշխատանք:

#### Փորձ 1. Կոմպլեքս միացությունների առաջացում:

ա) Երկարի (III) քլորիդի 1-2 մլ նոսր և թթվեցրած լուծույթին ավելացնել դեղին արյան աղի 0,01 և լուծույթ: Ստացվում է բեղլինյան լազուրի նստվածք: Նշել նստվածքի գույնը և գրել ռեակցիայի հավասարումը մոլեկուլային և իոնական տեսքով:

բ) Երկարի (III) քլորիդի 1-2 մլ լուծույթին ավելացնել 2 մլ նատրիումի ֆոտորիդի լուծույթ: Սկզբուն առաջանում է  $FeF_3$ -ի նստվածք, որը հետո լուծվում է, իսկ լուծույթը դեղինից դառնում է անգույն նատրիումի հեքսաֆոտորիտ (III) կոմպլեքս միացության առաջացման հետևանքով: Գրել ռեակցիաների հավասարումները մոլեկուլային և իոնական տեսքով:

#### Փորձ 2. Կոմպլեքս միացությունների դիսոցումը:

ա) Փորձանոթներից մեկի մեջ լցնել 1-2 մլ  $FeF_3$ -ի լուծույթ, մյուսի մեջ՝ 2 մլ 0,01 և  $K_3[Fe(CN)_6]$  լուծույթ: Երկու փորձանոթների մեջ էլ ավելացնել մեկական մլ 0,01 և կալիումի ռողանիությունը լուծույթը: Արդյո՞ք երկու դեպքում էլ գունավորվում է լուծույթը: Բացատրել պատճառը: Գրել  $FeF_3$  և  $K_3[Fe(CN)_6]$  աղերի դիսոցնան և ընթացող ռեակցիաների հավասարումները:

բ) Փորձանոթի մեջ լցնել 1 մլ  $FeF_3$ -ի լուծույթ և նրան ավելացնել  $NaOH$ -ի լուծույթ: Նույնը կատարել  $K_3[Fe(CN)_6]$  լուծույթի հետ: Արդյո՞ք երկու դեպքում էլ առաջանում է նստվածք: Գրել ռեակցիաների հավասարումները:

#### Փորձ 3. Լուծույթի կոնցենտրացիայի ազդեցությունը կոմպլեքս իոնի կայունության վրա :

Փորձանոթի մեջ վերցնել 1 մլ  $CoCl_2$ -ի հագեցած լուծույթ և ավելացնել 3 մլ  $KCNS$ -ի հագեցած լուծույթ: Լուծույթը ներկվում է մանուշակագույն, շնորհիվ կալիումի տետրաթիոցիանատուկորալտատի (II) առաջացման: Գրել ռեակցիայի հավասարումը մոլեկուլային և իոնական տեսքով: Ստացված լուծույթը բաժանել երկու մասի, մի մասը թողնել համեմատության համար, մյուսին ավելացնել թորած ջուր մինչև վարդագույն երանգի հայտնվելը, որը հատուկ է հիդրատացված  $Co^{2+}$  իոնին: Գրել կոմպլեքս իոնի դիսոցնան ռեակցիայի հավասարումը և անկայունության հաստատումը:

#### Փորձ 4. Զրի ընդհանուր կոշտության որոշումը:

Զրի կոշտությունը պայմանավորված է կալցիումի և մագնեզիումի լուծված աղերի պարունակությամբ: Քանակապես կոշտությունն արտահայտվում է մեկ լիտր ջուրում գտնվող կալցիումի և մագնեզիումի մգի: -ի գումարային քանակությամբ կամ աստիճաններով ( $1^{\circ} = 10 \text{ մգ CaO} - \text{ի } 1 \text{ L ջրում}$  ( $1 \text{ h.մմոլ} = 2,8^{\circ}$  կոշտություն)):

**Տրիլոն-Բ-ի նորմալության որոշումը:** 250-300 մլ տարրողությամբ կոնած կոլբայի մեջ վերցնել 25 մլ 0,1 Ն  $\text{MgCl}_2$ -ի լուծույթ, ավելացնել 10 մլ ամոնիակային բուժեր, 0,2 – 0,3 գ ինդիկատոր՝ էրիօքրոն սև և նուրացնել մինչև 100 մլ ծավալը: Ստացվում է կարմրամանուշակագույն լուծույթ մագնեզիումի և ինդիկատորի առաջացրած խելատային կոնյլերսի գոյացման հետևանքով: Լուծույթը տաքացնել մինչև  $60\text{--}70^{\circ}\text{C}$  և տիտրել տրիլոն-Բ-ի աշխատանքային լուծույթով մինչև կապույտ գույնի անցումը կապտականաչափումի: Տիտրումը կրկնել 2-3 անգամ և վերցնել միջին արժեքը:

**Օրինակ:** 25 մլ 0,1 Ն  $\text{MgCl}_2$ -ի տիտրման վրա միջին հաշվով ծախսվել է  $24,9$  մլ տրիլոն-Բ-ի աշխատանքային լուծույթ: Տրիլոն-Բ-ի նորմալությունը և տիտրը համապատասխանաբար կլինեն.

$$N = \frac{25 \cdot 0,1}{24,9} = 0,1004 \text{ h mmol/L}$$

$$T = \frac{336 \cdot 0,1004}{1000} = 0,0337 \text{ g/ml}$$

**Որոշման ընթացքը:** 10 մլ ծորակի ջրին ավելացնել 2 մլ բուժերային խառնուրդ, 3-4 կարիլ ինդիկատոր (կամ 20-30 մգ չոր ինդիկատոր) և տիտրել տրիլոն-Բ լուծույթով մինչև կարմիր գույնի անցումը կապույտի: Տիտրման վերջում կոնյլերսունի լուծույթը ավելացնել դանդաղ, որպեսզի կարմիր գույնը լրիվ անհետանա: Տիտրման ընթացքում ծախսված տրիլոն-Բ-ի քանակը համարժեք է կալցիումի և մագնեզիումի իոնների գումարային քանակին:

$$X = \frac{V_{\text{ար}} \cdot N_{\text{ար}}}{V_{\text{ջուր}}} \cdot 1000 \text{ (h.մմոլ/L)}$$

## 11. Կոլոիդ դիսպերս համակարգեր

Կոլոիդ համակարգերը լայնորեն տարածված են բնության մեջ և վիրխարի դեր ունեն մարդու կյանքում:

Մեծ է կոլոիդ համակարգերի նշանակությունը կենսաբանության մեջ: Մկանային և նյարդային բջիջները, մկանաթելերը, գեները, վիրուսները, պրոտոպլազման կոլոիդ գոյացություններ են: Ներկայումս բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում բջիջների, կենսաբաղանքների, նյարդաթելերի մոդելների նշակումը, որոնք գործում են կոլոիդ համակարգերի օրենքներով:

### 11.1. Դիսպերս համակարգեր, դասակարգումը

Համակարգը կոչվում է **դիսպերս**, եթե նյութերից մեկը մանրեցված (դիսպերսված) վիճակում հավասարաչափ բաշխված է մյուս նյութի ծավալում: Մանրեցված նյութը կոչվում է **դիսպերս ֆազ**, իսկ միջավայրը, որում այն բախչված է կոչվում է **դիսպերս միջավայր**:

Դիսպերս համակարգերի դասակարգման համար օգտվում են **դիսպերսման աստիճան՝ D** հասկացողությունից, որը դիսպերս մասնիկի տրամագիծ (d) հակադարձ մեծությունն է

$$D = 1/d \text{ (մ}^{-1}\text{)}$$

Ըստ դիսպերսման աստիճանի տարրերում են երեք տեսակի համակարգեր.

	Համակարգի տեսակը	մասնիկի չափսերը, մ	դիսպերսման աստիճանը, D
1.	Կոպիտ դիսպերս համակարգեր	$>10^{-7}$ ( $>100\text{nm}$ )	$<10^7$
2.	Կոլոիդ-դիսպերս համակարգեր	$10^{-7} - 10^{-9}$ ( $100 - 1\text{nm}$ )	$10^7 - 10^9$
3.	Մոլեկուլային, իոնական դիսպերս համակարգեր	$<10^{-9}$ ( $<1\text{nm}$ )	$>10^9$

Կոպիտ դիսպերս համակարգերը, օրինակ, կախույթները՝ սուսպենզիաները, ենուկիաները բարձրադիսպերս, համակարգերից գործնականորեն տարրերվում են նրանով, որ դիսպերս ֆազի մասնիկները գրավիտացիոն դաշտում նստում են, չեն անցնում թղթե ֆիլտրերով և երևում են սովորական մանրադիսպերս համակարգերի մասնիկներն անցնում են սովորական ֆիլտրերով և չեն երևում օպտիկական մանրադիտակով:

Դիսպերս համակարգերի երկրորդ խումբը ստացել է կոլոիդ (հուն. kolla - սոսինձ) համակարգեր անվանումը: Կոլոիդ համակարգերում կառուցվածքային և կիմետիկական միավոր է ոչ թե առանձին իոնը կամ մոլեկուլը, այլ մոլեկուլներից, աստոմներից կամ իոններից կազմված կոմպլեքսը (ագրեգատը) կամ որևէ մակրոմոլեկուլ (առլիմերի մակրոմոլեկուլ), որն օժտված է տասնյակ և հարյուր հազարների հասնող մոլեկուլային զանգվածով:

Կոլոիդ համակարգերը թերմոդինամիկորեն անկայուն են, օժտված են մեծ ադսորբցիոն ունակությամբ և ինքնարերաբար բաժանվում են երկու ֆազի՝ մասնիկների խոշորացման հետևանքով։ Արդյունքում փոքրանում է միջֆազային մակերեսը, ինչպես նաև Գիրսի մակերևույթային ազատ էներգիան։

Ընդհանուր առնամբ կոլոիդ դիսպերս համակարգերը անվանում են զոլեր (լատիներեն *solutio* բարից)։

Կախված դիսպերս միջավայրի բնույթից, տարրերում են հիդրոգոլեր, օրգանոգոլեր (օրինակ՝ ալկոօլ, բենզոզոլ), աերոգոլեր։ Պինդ-հեղուկ կոպիտ դիսպերս համակարգերը կոչվում են սուսպենզիաներ, հեղուկ-հեղուկ համակարգերը՝ էմուլսիաներ։ Պինդ-գազ տեսակին պատկանում են տարրեր ծագում ունեցող փոշիները։

Դիսպերս համակարգերը դասակարգվում են նաև ըստ միջֆազային փոխազդեցության (Ֆրենդիլիս)։ Դիսպերս ֆազի և դիսպերս միջավայրի միջև ուժեղ փոխազդեցության դեպքում համակարգերը՝ լիոֆիլ են (լիո-հեղուկ, ֆիլո-սիրել), իսկ թույլի դեպքում լիոֆր։

**Դիսպերս համակարգերի դասակարգումը ըստ ֆազերի ագրեգատային վիճակի (Օստվալդ)**

	միջա-վայրը	ֆազը	նշանակումը	համակարգի տեսակը	համակարգերի օրինակներ
1.	հեղուկ	պինդ	պ-ի	զոլեր	կախույթներ բնական ջրերում, մետաղների զոլեր ջրում, սառը կար
2.	հեղուկ	հեղուկ	ի-ի	էմուլսիաներ	տաք կաթ, կրեմներ, մարգարին, կարագ, յուղը ջրում, ջուրը նավթում, քսուկներ
3.	հեղուկ	գազ	գ-ի	գազային էմուլսիաներ	փրփուրներ՝ օճառի, գարեջրի, հակարողեային փրփուրներ
4.	պինդ	պինդ	պ-պ	պինդ կոլոիդ լուծույթներ	միներալներ, համածուլվածքներ (բնագեր քարեր, պղոպատ, սիրալներ), գունավոր ապակիներ
5.	պինդ	հեղուկ	ի-պ	ծակոտկեն նյութեր, գելեր, կապիլյարային համակարգեր	ադսորբեններ, բնահողեր, որոշ միներալներ (օպալ, մարգարիտներ)
6.	պինդ	գազ	գ-պ	ծակոտկեն և մազանոթային համակարգեր, քերոգելեր	պենզա, սիլիկագել, ակտիվացված ածուխներ, փոքրապաստներ, որոշ հոնափոխանային խեժեր
7.	գազ	պինդ	պ-գ	աերոզոլեր (փոշիներ, ծխեր)	ծխախոտի ծուխ, շաքարային, ալրային, ածխային, տիեզերական փոշիներ
8.	գազ	հեղուկ	ի-գ	աերոզոլեր (մառախոտ ներ)	մառախոտ, թուսայ ամպեր, փոշիացված օրգանական նյութեր

Եթե դիսպերս միջավայրը ջուրն է, ապա համակարգերը, համապատասխանաբար, կոչվում են **հիդրոֆոր** և **հիդրոֆիլ**:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև փոխազդեցությունը դիսպերս ֆազի մասնիկների միջև: Եթե դիսպերս ֆազի մասնիկները շարժուն են) համակարգը կոչվում է **ազատ դիսպերսային** (զոլերը, սուսպենզիաները, էմոլվսիաները): Դիսպերս ֆազի մասնիկների միջև կայուն կապերի առկայության նեպքում համակարգը կոչվում է **կապված դիսպերսային** (գելեր, պինդ լուծույթներ, ծակոտլեն մարմիններ, փրփուրներ):

## 11.2. Կոլոիդ դիսպերս համակարգերի ստացումը

Կոլոիդ լուծույթները միջին տեղ են գրավում կոպիտ դիսպերս և մոլեկուլային համակարգերի միջև: Այդ պատճառով նրանց ստացման համար կա երկու ճանապարհ: Եյութի խոշոր կտորների մանրացումը (դիսպերսումը) մինչև պահանջվող դիսպերսան աստիճան կամ մոլեկուլների, ինների միավորումը՝ մինչև կոլոիդ չափերի ագրեգատների առաջացում: Համապատասխանաբար, տարբերում են գոլերի ստացման **դիսպերսման** և **կոնդենսացման** եղանակներ:

**Կոնդենսացման եղանակներ.**



1. **Լուծիչի փոխարինման եղանակը** կայանում է նրանում, որ նյութի իսկական լուծույթը ցնդելի լուծիչում ավելացվում է այնպիսի հեղուկի, որը խառնվում է լուծիչի հետ, բայց որում լուծված նյութը քիչ է լուծվում և խտանում է մինչև կոլոիդ դիսպերսան աստիճան: Օրինակ, ծծմբի, ֆոսֆորի, բնական խեժերի սպիրտային լուծույթները ջրի մեջ լցնելով:

2. **Գոլորշիների կոնդենսացման եղանակի** եռթյունն այն է, որ դիսպերսվող նյութի և լուծիչի գոլորշիները միաժամանակ խտացնում են սառը մակերեւվույթի վրա:


3. **Կոնդենսացման քիմիական եղանակների** հիմքում ընկած են քիմիական ռեակցիաներ (վերականգնում, հիդրոլիզ, փոխանակում և այլն), որոնց արդյունքում ստացվում են նժվար լուծվող նյութեր.



Յիդրոլիզի եղանակից օգտվում են տարբեր մետաղների աղերից, այդ մետաղների հիդրօքսիդների զոլերը ստանալու համար: Օրինակ, երկարի (III) քլորիդի հիդրոլիզի արդյունքում.



առաջանում է  $\text{FeOCl}$ , որը դիսպերս է.



Առաջացած  $\text{FeO}^+$  ինները  $\text{Fe(OH)}_3$  մասնիկի շուրջը առաջանում են ինոնդեն շերտ, որի շնորհիվ մասնիկներն անցնում են կախված վիճակի:

**Դիսպերսման եղանակներ:** Անհրաժեշտ դիսպերսման աստիճանի հասցնելու համար կիրառում են մեխանիկական մանրացում, ուլտրաձայնային, էլեկտրական և քիմիական դիսպերսում:

**Մեխանիկական մանրացումը** իրականացնում են գնդիկավոր աղացներում, հեղուկ դիսպերս միջավայրի և կայունացուցիչի ներկայությամբ (ցեմենտ, կակաո, մածուկներ և այլն):

**Ուլտրաձայնի միջոցով մանրացումը** կատարվում է ուլտրաձայնային տատանումների հաշվին (համածուլվածքների, օրգանոզոլերի, ծծմբի, գիպսի, գրաֆիտի, տարբեր պոլիմերների հիդրոգոլեր և այլն):

**Էլեկտրական դիսպերսումը** կիրառվում է մետաղների զոլեր ստանալու համար: Դիսպերսվող մետաղից պատրաստված և ջրի մեջ ընկումված էլեկտրոդների միջև առաջացնում են էլեկտրական արել: Էլեկտրոդների մետաղները գոլորշիանում են և հեղուկ միջավայրում վերածվում զոլի:

**Քիմիական դիսպերսման (պեպտիզացման)** ժամանակ զոլ ստանում են նստվածքի վրա քիմիական նյութերի ազդեցությամբ (11.2):

### 11.3. Կրկնակի էլեկտրական շերտի ծագումը և կառուցվածքը

Կոլիխ մասնիկների մակերեսի մոտ, պինդ-հեղուկ բաժանման սահմանին, գոյանում է կրկնակի էլեկտրական շերտ և առաջանում է պոտենցիալների թրիք: Սյդափիս շերտի առաջացումը հնարավոր է երկու ճանապարհով: Առաջին դեպքում պինդ ֆազի վրա ընտրողաբար ադսորբվում են լուծույթում առկա այն իոնները, որոնք իզոմորֆ են պինդ ֆազին կամ մտնում են նրա բաղադրության մեջ: Մյուս դեպքում, կրկնակի էլեկտրական շերտն առաջանում է պինդ ֆազի մակերեսային մոլեկուլների դիսպերսումից: Պինդ ֆազին լիցք հաղորդող և նրա հետ ադսորբցիոն ուժերով ամուր կապված իոնները կոչվում են **պոտենցիալ որոշող իոններ**:


Դակառակ նշանով իոններն (հակահոններ) անցնում են հարակից լուծույթ և ստեղծվում է կրկնակի էլեկտրական շերտ:

Կրկնակի էլեկտրական շերտի մասին պատկերացումները առաջրկել են Յելմիուցի կողմից (1879): Ըստ այդ պատկերացումների կրկնակի շերտը նման է հարթ կոնդենսատորի, որի մի շրջադիրը գտնվում է պինդ ֆազի վրա, իսկ մյուսը՝ լուծույթում:

Կոնդենսատորի հաստությունը (d) համեմատելի է մոլեկուլային շառավիղի չափերին: Ըստ Յելմիուցի, հակահոնները էլեկտրաստատիկ ձգողության հաշվին ձգուում են հնարավորին չափ մոտ դասավորվել կոլորի մասմիկների մակերեսին ադսորբված իոններին:

Ըստ Գուիի տեսության (1910) կրկնակի էլեկտրական շերտն ունի դիֆուզ կառուցվածք, ըստ որում պինդ ֆազի մակերեսի մոտ հակահոների կոնցենտրացիան ամենամեծն է և աստիճանաբար նվազում է դեպի լուծույթի խորքը:

Դետագայում կրկնակի էլեկտրական շերտի տեսությունը զարգացում ստացավ Շտերնի աշխատություններում (1924):



Նկ. 11.1. ըստ Շելմիոլցի


ըստ Գուիի

ըստ Շտերնի

Ըստ Շտերնի, իոնների մի մասը կարող է գտնվել պինդ մակերևույթից մոլեկուլային հեռավորության վրա, առաջացնելով Շելմիոլցի հարթ կոնցենսատոր, իսկ մյուս մասն առաջացնում է դիֆուզ շերտ: Նոսր լուծույթներում կրկնակի էլեկտրական շերտի կառուցվածքը մոտենում է Գուիի տված կառուցվածքին, իսկ կոնցենտրացիան մեծացնելիս Շելմիոլցի շերտին:

Դամաձայն ժամանակակից տեսության, կոլոիդ մասնիկի մակերեսին անմիջականորեն մոտ գոյանում է ադսորբցիոն շերտ, որը ներառում է ոչ միայն պոտենցիալորոշող իոնները, այլև հակահոների մի մասը, որոնք սովորական պայմաններում անշարժ են, իսկ պինդ ֆազի շարժման ժամանակ տեղաշարժվում են նրա հետ միասին: Հակահոների մյուս մասը կազմում են դիֆուզ շերտը, որում իոնների կոնցենտրացիան պինդ ֆազից հեռանալիս աստիճանաբար նվազում է: Ադսորբցիոն անշարժ շերտում, դրական և բացասական լիցքերի փոխազդեցության արդյունքում, պինդ ֆազի ընդհանուր լիցքի մի մասն է չեղոքանում: Կրկնակի էլեկտրական շերտի անշարժ (ադսորբցիոն) և շարժում (դիֆուզ) մասերի միջև պոտենցիալների տարբերությունը կոչվում է էլեկտրակինետիկական պոտենցիալ:

Այդ պոտենցիալը սովորաբար անվանում են չ-պոտենցիալ (հունական ձետա):



**Նկ. 11.2.** Կրկնակի էլեկտրական շերտի սխեման  
ա. Լիցքերի դասավորվածությունը, բ. պոտենցիալի անկման կորը

ու մակերեսի վրա պոտենցիալի լոիվ անկումը կոչվում է թերմոդինամիկական պոտենցիալ և նշանակում են ε (էպսիլոն) տառով:

Ինչպես երևում է Ակ. 11.2. էլեկտրակինետիկական չ-պոտենցիալը կազմում է թերմոդինամիկական չ-պոտենցիալի մի մասը:

Էլեկտրակինետիկական պոտենցիալի արժեքը և նշանը որոշում են ըստ էլեկտրաֆորեզի և էլեկտրաօսմոսի տվյալների (11.6). չ-պոտենցիալը հանդիսանում է կոլորիտ նաևնիկների կայունության կարևոր գործոններից մեկը: Որքան մեծ է չ-պոտենցիալը, այնքան կոլորիտ հաճակարգը կայուն է:

#### 11.4. Կոլորիտ մասնիկի կառուցվածքի միցելային տեսությունը

Կրկնակի էլեկտրական շերտի տեսության հիման վրա ստեղծվել է կոլորիտ մասնիկի կառուցվածքի միցելային տեսությունը (Ֆայանս, Կոռյուտ): Ներկայում այս տեսությունը իր նշանակությունը պահպանել է լիոֆոր (հիդրոֆոր) գոլերի համար:

Ցանկացած լիոֆոր (հիդրոֆոր) կոլորիտ լուծույթ կազմված է երկու մասից՝ միցելներից և միջմիցելային հեղուկից:

Միցելները առանձին կոլորիտ մասնիկներ են, որոնք միասին կազմում են զոլի դիսպերս ֆազը: Միջմիցելային հեղուկը՝ նույն զոլի դիսպերս միջավայրն է, որը բացի լուծիչից, պարունակում է միցելի մեջ չնմտնող բուլոր մնացած լուծված նյութերը (էլեկտրոլիտներ և ոչ էլեկտրոլիտներ):

Միցելի կառուցվածքում տարբերում են երկու հիմնական մաս, ներքին՝ չեղող մասը, որը կոչվում է միջուկ և արտաքին՝ ինոգեն մասը, որն իր հերթին կազմված է երկու շերտից՝ աղոտրքիոն և դիֆուզ:


Միջուկը կազմում է միցելի հիմնական զանգվածը և իրենից ներկայացնում է ատոմներից (մետաղների հիդրոգոլերի դեպքում) կամ չեղող մոլեկուլներից կամ պակասող կուլներից (արծաթի յոդիդի կամ երկարի

(III) հիդրօքսիդի դեպքում) կազմված կոնյալեքս: Միջուկի կազմի մեջ մտնող ատոմների կամ մոլեկուլների ընդհանուր թիվը կարող է լինել շատ մեծ ու կախված է զոլի դիսպերսման աստիճանից և ատոմների կամ մոլեկուլների սեփական չափսերից:


Միջուկի շուրջը իոնային մթնոլորտը կազմված է երկու շերտից՝ ադսորբցիոն և դիֆուզ: Ադսորբցիոն շերտը ստեղծվում է պոտենցիալ որոշող իոնների (որոնք ադսորբցվում են միջուկի մակերեսին և հաղորդում ենան իրենց լիցքը) և հակահոնների մի մասի (որոնք կապված են էլեկտրաստատիկ ձգողության ուժերով) միջոցով: Միջուկի հետ միասին այս իոնային մթնոլորտը կազմում է հսկայական չափսերի հասնող բազմալիցք իոն՝ կատիոն կամ անիոն, որը կոչվում է գրանուլ:

Դիֆուզ շերտի հսկահոնների հետ միասին, գրանուլը կազմում է կոլոիդ մասնիկը՝ միցելը: Միցելը միշտ էլեկտրաչեղոք է:

Քննարկենք արձարի յոդիդի հիդրոգոլի առաջացման օրինակը: Դրա հիմքում ընկած է հետևյալ քիմիական ռեակցիան:



Միջուկն այս դեպքում կազմված է  $\text{AgI}$  չեղոք պսկոմոլեկուլներից (իոնական բյուրեղացանց): Միցելի կառուցվածքը կախված կլինի ռեակցող նյութերի կոնցենտրացիաների հարաբերությունից: Քննարկենք այն դեպքը, եթե  $C_{\text{AgNO}_3} > C_{\text{KI}}$ : Այս դեպքում համակարգում, բացի  $\text{AgI}$  կլինեն  $\text{Ag}^+$ ,  $\text{K}^+$ ,  $\text{NO}_3^-$  իոններ:  $\text{AgI}$  բյուրեղացանցի կառուցվածքը շարունակվում է  $\text{Ag}^+$  իոնների միջոցով:  $\text{Ag}^+$  իոնները միջուկին հաղորդում են իրենց լիցքը և կոչվում են պոտենցիալ որոշող իոններ: Դրական լիցքավորված միջուկը ձգուում է  $\text{NO}_3^-$  հակահոններին: Դակահոնների մի մասը մտնում է ադսորբցիոն շերտի բաղադրության մեջ, իսկ մյուս մասը՝ դիֆուզ շերտի առաջարկության մեջ:



**Նկ. 11.3.**  $\text{AgI}$  հիդրոգոլի միցելի աստիճանական գոյացման սխեման:

ա-  $\text{AgI}$ -ի ուլտրամիկրոյութեղ, բ- միջուկի միկրոյութեղի կառուցման ավարտը լուծույթի  $\text{Ag}^+$  իոնների ընտրողական ադսորբցիայի հաշվին (ադսորբցիոն շերտի առաջացման փուլը), գ- գրանուլի գոյացումը (ադսորբցիոն շերտի գոյացման ավարտը), դ- Միցելի գոյացումը:

Միցելների կառուցվածքը ընդունված է արտահայտել հատուկ բանաձևերով: Այդ բանաձևերում քառակուսի փակագծերում ցույց է տրվում միջուկը, իսկ ձևավոր փակագծերում գրանուլը:

$$\{m[\text{AgI}] \cdot n\text{Ag}^+ \cdot (n-x)\text{NO}_3^-\}^{x+} \cdot x\text{NO}_3^-$$


միջուկ աղսորբցիոն շերտ դիֆուզ շերտ  
Այն դեպքում, եթե  $C_{AgNO_3} < C_K$ , միցելի բանաձևն է.

$$\{m[AgI] \cdot nI^- \cdot (n-x)K^+\}^{x-} \cdot xK^+$$

Քննարկենք ևս մեկ օրինակ՝ երկարի (III) հիդրօքսիդի միցելի կառուցվածքը: 11.2-ում արդեն տրված են համապատասխան ռեակցիաների հավասարումները: Ելենով դրամից, միցելի բանաձևն արտահայտվում է.

$$\{m[Fe(OH)_3] \cdot nFeO^{+} \cdot (n-x)Cl\}^{x+} \cdot xCl^-$$


Սիլիկաթթվի գոլը պատկանում է բացասական լիցքավորված գոլերի խմբին: Միջուկը կազմված է  $H_2SiO_3$  մոլեկուլներից, որոնց միջուկի մակերեսին գտնվող մասը դիմուգվում է իոնների:



$SiO_3^{2-}$  իոնները ամուր կապված են միջուկին և հանդիսանում են պոտենցիալ որոշող իոններ: Յակարունների դերը կատարում են ջրածնի իոնները, որոնք բաշխվում են ինչպես արտորքցիոն, այնպես էլ դիֆուզ շերտերում: Բանաձևն է.


$$\{m[H_2SiO_3] \cdot nSiO_3^{2-} \cdot 2(n-x)H^+\}^{2x-} \cdot 2xH^+$$

Օրինակ 1. Գրել արսենի սուլֆիդի միցելի կառուցվածքը, եթե  $H_2S$  վերցված է ավելցուկով:



$$\{m[As_2S_3] \cdot nHS^- \cdot (n-x)H^+\}^{x-} \cdot xH^+$$

Օրինակ 2. Գրել բարիումի սուլֆատի միցելի կառուցվածքը, եթե բարիումի քլորիդը վերցված է ավելցուկով:



$$\{m[BaSO_4] \cdot Ba^{2+} \cdot 2(n-x)Cl^- \}^{2x+} \cdot 2xCl^-$$

Քննարկված օրինակներից երևում է, որ կոլորիդ մասնիկների լիցքը կախված է կոլորիդ լուծույթների ստացման պայմաններից:

### 11.5. Կոլորիդ համակարգերի օպտիկական հատկությունները

Կոլորիդ լուծույթներին բնորոշ է լուսացրումը (դիֆրակցիայի հետևանքով): Դա պայմանավորված է կոլորիդ մասնիկների ուլտրամիկրոհետերոգեն կառուցվածքով, քանի որ կոլորիդ մասնիկների չափսերը և տեսանելի լույսի ալիքների երկարությունը համաչափելի են:

Իսկական լուծույթներում և նախուր հեղուկներում լուսացրումը թույլ է արտահայտված: Այս պատճառով, լուսացրման հետևանքով լուսավոր կոմի առաջացման (Ֆարաոնի-Տինորայի էֆեկտ) երևույթը հաճախ օգտագործում են զոլերը իսկական լուծույթներից տարբերելու համար:

Լուսացրման ինտենսիվությունը որոշվում է Ռելեյի բանաձևով.

$$I = I_0 K \frac{CV^2}{\square^4} = I_0 K \frac{Cr^6}{\square^4} \quad 11.2$$


որտեղ,  $I_0$ - ընկնող լույսի ինտենսիվությունը ( $\text{Վտ}/\text{մ}^2$ ) է,  $I$ - ցրված լույսի ինտենսիվությունը,  $C$ - զոլի մասնիկային կոնցենտրացիան ( $\text{մ}^{-3}$ ),  $K$  -

ՈԵԼԵՅԻ հաստատունը, V- մասնիկի ծավալը (մ<sup>3</sup>), r- մասնիկի շառավիղը (մ), λ- ընկնող լույսի ալիքի երկարությունը (մ):

ՈԵԼԵՅԻ բանաձևը կիրառելի է  $40 \cdot 10^{-8} - 50 \cdot 10^{-8}$  մ չափսեր ունեցող մասնիկների համար:

11.2. բանաձևից հետևում է, որքան փոքր է ընկնող լույսի ալիքի երկարությունը, այնքան մեծ է լուսացրման ինտենսիվությունը: Կոլորիդ լուծույթը խառը (սպիտակ) լույսով լուսավորելիս առավել ինտենսիվ կցըրվեն սպեկտրի նանուշակագույն և կապույտ մարզերի ճառագայթները:

Դիֆրակցիոն լուսացրման երևույթը ընկած է ուլտրամանրադիտակի աշխատանքի հիմքում (1903թ.): Ուլտրամանրադիտակը սովորական մանրադիտակից տարբերվում է նրանով, որ հետազոտվող լուծույթը դիտվում է ցրված լույսում:



**Նկ. 11.4.** ա. ընդհանուր սխեմա, բ. ուլտրամանրադիտակի սխեմա  
1-լույսի աղբյուր, 2-կոլորիդ լուծույթ, 3-հետազոտման ուղղություն

Լուծույթը կողքից լուսավորվելիս մոռթ դաշտում, աստղիկների նման երևում են լուսարձակող կետեր: Կոլորիդ մասնիկների չափսերը որոշում են V ծավալում լուսարձակող կետերի թվով (N): Մասնիկային կոնցենտրացիան հավասար է:

$$C = \frac{N}{V_{L-P}}$$

Դաշվի առնելով կոլորիդ լուծույթում նյութի զանգվածային բաժինը ( $\omega$ ), խտությունը ( $\rho$ ) և ընդունելով, որ կոլորիդ մասնիկը գնդաձև է, գտնում են մասնիկի շառավիղը.

$$r = \sqrt[3]{\frac{3 \square V_L - \rho}{4 \pi \rho C}} \quad 11.3$$

Ուլտրամանրադիտակի օգնությամբ կարելի է որոշել կոլորիդ մասնիկի ծելը: Եթե լուսացրման ինտենսիվությունը մնում է հաստատում, ապա մասնիկները գնդաձև են, եթե ոչ՝ ունեն թիթեղիկի, ծողիկի, էլիպսի ձև:

Կոլորիդ լուծույթների օպտիկական հատկությունները կիրառում են արյան ալազգնայի և շիճուկի, լիմֆայի, վակցինաների և անտիգենների հետազոտման համար, ինչպես նաև ջրի, ներարկվող հեղուկների, շրջակա միջավայրի մաքրությանը հետևելու համար:

## 11.6. Կոլոիդ համակարգերի էլեկտրական հատկությունները

Կոլոիդ լուծույթի վրա արտաքին էլեկտրական դաշտով ազդելիս դիտվում է զոլի պինդ ֆազի տեղաշարժ դիսպերս միջավայրի նկատմամաբ: Միցելի միջուկը ադսորբցիոն շերտի հետ միասին շարժվում է դեպի էլեկտրոդներից մեկը, իսկ դիֆուզ շերտի հակահոնները՝ դեպի մյուս էլեկտրոդը:

Արտաքին էլեկտրական դաշտի ազդեցությամբ դիսպերս ֆազի լիցքավորված մասնիկների տեղաշարժը դեպի հակառակ լիցքավորված էլեկտրոդը կոչվում է էլեկտրաֆորեզ: Մասնիկների շարժման արագությունը (էլեկտրաֆորեզի արագությունը) որոշվում է Շեմիոլց-Սմոլուխովսկու հավասարումով.

$$U_{\text{Փ}} = \frac{\square_0 \square \square \varphi \square}{k \square \square I} \quad 11.4$$

որտեղ,  $U_{\text{Փ}}$ - էլեկտրաֆորեզի արագությունը ( $\text{մ}/\text{վրկ}$ ),  $\varepsilon$  - միջավայրի հարաբերական դիէլեկտրոիկ թափանցելիությունը,  $\varepsilon$ - էլեկտրական հաստատուն, որը հավասար է  $8.9 \cdot 10^{-12} \text{ А.վրկ/Վ.մ}$ ,  $\Delta\varphi$ - արտաքին էլեկտրական հոսանքի պոտենցիալների տարրերությունը ( $\text{Վ}$ ),  $k$ - էլեկտրակինետիկական՝ ձետա պոտենցիալ ( $\text{Վ}$ ),  $k$ - հաստատուն, որի արժեքը կախված է կոլոիդ մասնիկի ձևից (գնդաձև մասնիկների համար  $k = 6$ , գլանաձև մասնիկների համար  $k=4$ ),  $I$  - դիսպերս միջավայրի մածուցիկությունը ( $\text{Ա.վրկ}/\text{մ}^2$ ),  $I$ -էլեկտրոդների միջև հեռավորությունը ( $\text{մ}$ ):

Որակապես էլեկտրաֆորեզը նման է էլեկտրոլիզին, օրինակ՝ դրական լիցքավորված գրանուլերը տեղաշարժվում են դեպի կատոդ, իսկ բացասական լիցքավորված դիֆուզ շերտը՝ դեպի անոդ: Դիսպերս միջավայրի տեղաշարժը էլեկտրական դաշտում կոչվում է էլեկտրաօսմոս: Զրային լուծույթներում տարրեր բնույթի մասնիկները (սուսպենզիաներ, էնուլսիաներ, նույնիսկ կենդանի բջիջներ) ունեն 2-4մկմ/վրկ էլեկտրաֆորեզի արագություն և պոտենցիալի 50-70մՎ -ին մոտ արժեքներ:

## 11.7. Կոլոիդ համակարգերի կայունությունը և կոագուլումը

Թերմոդինամիկորեն անկայուն կոլոիդ համակարգերում անընդհատ ընթանում են մասնիկների խոշորացման ինքնաբերաբար պրոցեսներ, ինչը բերում է համակարգի Գիբսի էներգիայի նվազմանը:

Դիսպերս համակարգերի կայունության տեսությունը (Պեսկով) դիտարկում է կայունության երկու տեսակ՝ կինետիկական և ագրեգատային: Կինետիկական կայունությունը բնութագրում է դիսպերս ֆազի կախված վիճակուն մնալու ընդունակությունը:

Կինետիկական կայունությունը խախտվելիս, դիսպերս ֆազը և միջավայրը անջատվում են միմյանցից: 1մկմ փոքր չափսերի

մասնիկներ պարունակող դիսպերս համակարգերը օժտված են կիմետիկական բարձր կայունությամբ:

**Ազրեգատային կայունությունը** բնութագրում է դիսպերս ֆազի մասնիկների միավորմանը, խոշորացմանը, դիսպերսման աստիճանի փոքրացմանը դիմադրելու ունակությունը:

Կայունության այս տեսակը խախտվելիս, դիսպերս ֆազի մասնիկները միանում են, առաջացնելով ազրեգատներ, ընդ որում դիսպերսման աստիճանը փոքրանում է (11.1):

**Կոագուլում:** Կոլիդ մասնիկների միավորման միջոցով ավելի խոշոր ազրեգատների առաջացման պյողեսը կոչվում է **կոագուլում:**

Կոլիդ մասնիկների կոագուլումը կարող է տեղի ունենալ տարբեր գործնների ազդեցությամբ (լուծույթի բափահարում, ջերմաստիճանի փոփոխություն, ճառագայթում, էլեկտրոլիտի ավելացում):

Տեսական և գործնական մեծ նշանակություն ունի զոլի քայլայումը էլեկտրոլիտ ավելացմելով: Տարբերում են կոագուլման երկու փուլ՝ թաքնված և բացահայտ: Թաքնված փուլում դիսպերսման աստիճանը փոքրանում է, սակայն արտաքինից զոլում փոփոխություն չի նկատվում: Բացահայտ փուլում նկատվում են արտաքին փոփոխություններ: Կոագուլման բացահայտ փուլը սկսվում է զոլում էլեկտրոլիտի մի որոշ նվազագույն կոնցենտրացիայի դեպքում: Այդ ժամանակ չ-պոտենցիալը ստվորաբար չի գերազանցում 30մՎ և կոչվում է **կրիտիկական չ-պոտենցիալ:** Էլեկտրոլիտի նվազագույն կոնցենտրացիան վերահաշված 1Լ զոլի համար, որի դեպքում սկսվում է բացահայտ կոագուլում, կոչվում է կոագուլման շեմք՝ (C):

Կոագուլման շեմքին հակադարձ մեծությունը կոչվում է կոագուլման ունակություն՝  $\rho$

$$\rho = \frac{1}{C} \quad 11.5$$

Զոլերի կոագուլումը էլեկտրոլիտներով ենթարկվում է Շուլցե-Շարդիի կանոնին. Էլեկտրոլիտի կոագուլող ունակությունը մեծանում է կոագուլող իոնի լիցքի մեծացման հետ, ընդ որում կոագուլող հատկություն ունի էլեկտրոլիտի այն իոնը, որի լիցքը հակառակ է գրանուլի լիցքին: Միա-, երկ- և եռլիցք իոնների կոագուլող ունակության հարաբերությունը կլինի.

1 : 70 : 550:

Ներկայումս ընդունված է կոագուլման ֆիզիկական տեսությունը՝ ԴՖՕ (Դերյագին, Լանդաու, Ֆերվեյ, Օվերբեկ): Համաձայն այս տեսության էլեկտրոլիտի ավելացումը բերում է դիֆուզ շերտի հաստության փոքրացման մինչև այնպիսի չափսերի, որոնց դեպքում միջնուելուային ճգողության ուժերը գերազանցում են վանողական էլեկտրաստատիկ ուժերին: Դրա հետևանքով կոլիդ մասնիկները կորցնում են ազրեգատային և ապա, նաև կինետիկական կայունությունը:

Պեպտիզացումը՝ կոագուլման հակառակ պրոցեսն է: Պեպտիզացում է կոչվում կոագուլման ժամանակ թարմ առաջացած նստվածքի փոխարկման պրոցեսը զոլի, հատուկ նյութերի՝ պեպտիզատորների ազդեցությամբ:

«Պեպտիզացում» տերմինը օգտագործվում է այս պրոցեսի և պեպսինի ազդեցությամբ սպիտակուցների լուծման պրոցեսի արտաքին նմանության պատճառով:

Պեպտիզատորների իոնները և մոլեկուլները ադսորբվելով նստվածքի մակերեսին, մասնիկների շուրջը ստեղծում են կրկնակի էլեկտրական շերտ, որից մասնիկների միջև մոլեկուլային ուժերը խզվում են: Առաջանում են վանողական ուժեր և ստացվում է զոլ:

Պեպտիզացման օրինակ է թարմ ստացված և լվացված  $\text{Fe(OH)}_3$  նստվածքի փոխարկումը զոլի քիչ քանակության  $\text{FeCl}_3$  ազդեցությամբ:  $\text{Fe(OH)}_3$  մասնիկները ընտրողաբար ադսորբում են  $\text{Fe}^{3+}$  իոնները, որոնք մասնիկներին հաղորդում են դրական լիցք: Սրա հետևանքով մասնիկների միջև առաջանում են էլեկտրաստատիկ վանողական ուժեր և նստվածքը վերածվում է զոլի (անմիջական պեպտիզացում):

$$\{\text{m}[\text{Fe(OH)}_3] \cdot \text{n}\text{Fe}^{3+} \cdot 3(\text{n-x})\text{Cl}^-\}^{3x+} \cdot 3x\text{Cl}^-$$

$\text{Fe(OH)}_3$  զոլ կարելի է ստանալ նաև նստվածքին քիչ քանակությամբ  $\text{HCl}$  ավելացնելիս: Ստացվող զոլի կառուցվածքը տրված է 11.2-ում (ոչ անմիջական պեպտիզացում):

## 11.8. Զոլերի մաքրումը


Կոլոիդ լուծույթները պարունակում են ցածրամոլեկուլային նյութերի և կոպիտիտիսաերս մասնիկների խառնուրդներ, որոնց ներկայությունը նվազեցնում է զոլերի կայունությունը:

Զոլերը խառնուրդներից մաքրում են ֆիլտրման, դիալիզի, էլեկտրադիալիզի, ուլտրաֆիլտրման եղանակներով:

**Ֆիլտրումը** (լատ. *filtrum-* թաղիք) հիմնված է կոլոիդ մասնիկների սովորական ֆիլտրերի անցքերով անցնելու հատկության վրա: Այս եղանակը կիրառվում է զոլերը կոպիտ դիսպերս մասնիկներից մաքրելու համար:

**Դիալիզը** (հուն. *dialisis-* բաժանում)՝ հատուկ (կիսաթափանց) թաղանթների միջոցով ցածրամոլեկուլային միացությունների հեռացումն է զոլերից: Օգտագործում են այնպիսի թաղանթներ, որոնք անց են կացնում փոքր մոլեկուլները և իոնները, իսկ կոլոիդ մասնիկները և մակրոմոլեկուլները չեն անցնում: Դիալիզի ենթակա զոլի լուծույթը և մաքրուր լուծիչը բաժանում են թաղանթով: Փոքր մոլեկուլները և իոնները անցնում են թաղանթով դեպի լուծիչ և լուծիչը հաճախ փոխելով հնարավոր է համարյա ամբողջությամբ խառնությունը հեռացնել լուծույթից: Օգտագործում են ինչպես բնական (խոզի միզապարկ, ձկների լողապարկ), այնպես էլ արհեստական

(Նիտրոբօջանյութ, ացետիլբօջանյութ, ցելոֆան, ժելատին և այլն) թաղանթներ:



Նկ. 11.5. ա. դիալիզատոր

1. դիալիզվող հեղուկ,
2. լուծիչ,
3. դիալիզի թաղանթ,
4. խառնիչ

բ. էլեկտրադիալիզատոր

1. լուծիչ, դիալիզվող հեղուկ,
2. դիալիզի թաղանթ,
3. դիալիզվող հեղուկ,
4. կատոդ,
5. խառնիչ,
- 6-անոդ

**Էլեկտրադիալիզը** օգտագուցում են էլեկտրոլիտներից կոլորիդի մաքրման արագությունը մեծացնելու համար: Այդ նպատակով դիալիզատորում ստեղծում են հաստատուն էլեկտրական դաշտ:

Դիալիզի սկզբունքի վրա է հիմնված արհեստական երիկամի աշխատանքը, որի միջոցով արյունը մաքրում են նյութափոխանակության վճասակար արգասիքներից: Արհեստական երիկամը ժամանակավորապես կատարում է հիվանդ երիկամի ֆունկցիան:

**Ուլտրաֆիլտրում** է կոչվում ճնշման տակ կատարվող ֆիլտրումը: Այն կիրառվում է ջրերի, սպիտակուցների, ֆերմենտների, վիտամինների մաքրման համար, իսկ միկրոկենսաբանության մեջ վիրուսների և բակտերիոֆագերի չափությունը որոշելու համար:

## 11.9. Բարձրամոլեկուլային միացությունների (ԲՍՍ) լուծույթներ

Բարձրամոլեկուլային միացություններին (ԲՍՍ) են պատկանում մի քանի հազարից մինչև մի քանի միլիոն մոլեկուլային զանգված ունեցող նյութեր: Այդ միացություններն անվանում են նաև պոլիմերներ: Կենսապոլիմերները՝ բնական միացություններ են, որոնք կազմում են բոլոր կենդանի օրգանիզմների կառուցվածքային հիմքը: Դրանք սպիտակուցներն են, նուկլեինաթթունները և պոլիսախարիդները: Դայտնի են նաև խառը կենսապոլիմերներ՝ լիպոպրոտեիններ, գլիկոպրոտեիններ, լիպոպոլիսախարիդներ:

Որոշ հատկանիշներով ԲՍՍ լուծույթները նման են գոլերին. մասնիկների չափսերը համապատասխանում են կոլիդ դիսպերսման աստիճանին, կոլոիդ մասնիկների նման դիալիզի ժամանակ չեն անցնում կիսաբահանց թաղանթների միջով, արտաքին գործոնների ազդեցությամբ ենթարկվում են կոագուլման: Սակայն, ԲՍՍ լուծույթները նաև տարբերվում են զոլերից: Դրանք թերմոդինամիկորեն կայուն են,

չեն տալիս ֆարաղեյ- Տինդալի էֆեկտը: ԲՍՍ լուծույթների տարբերիչ առանձնահատկությունը՝ մասնիկների փոխազդեցությունն է դիսպերս միջավայրի հետ (լիոֆիլությունը): Այսպիսով, ԲՍՍ լուծույթները միջանկյալ տեղ են գրադեցնում զոլերի և հակական լուծույթների միջև: ԲՍՍ-երի կարևոր հատկություններից են՝ ուռճացումը, լուծույթների բարձր մածուցիկությունը և հեշտությամբ ժելատինացվելու ունակությունը:

**ԲՍՍ-երի ուռճացումը և լուծումը:** Ուռճացում է կոչվում լուծիչի թափանցումը պոլիմերային նյութի մեջ, որն ուղեկցվում է նմուշի ծավալի և զանգվածի մեծացումով: Քանակորեն ուռճացումը բնութագրվում է ուռճացման աստիճանով.

$$\alpha = \frac{\frac{m - m_0}{m_0}}{m_0} \quad 11.6.$$

որտեղ,  $m$  - սկզբնական զանգվածը,  $m_0$  - ուռճացված նմուշի զանգվածը: Օրինակ, ժելատինի ջրում ուռճացման ժամանակ, ծավալը մեծանում է 14 անգամ:

Ուռճացման աստիճանը կախված է պոլիմերի և լուծիչի բնույթից: Բևեռային պոլիմերները հեշտությամբ են ենթարկվում ուռճացման քևեռային հեղուկներում (սպիտակուցը ջրում), ոչ բևեռայիններում՝ ոչ բևեռային հեղուկներում (կառուչուկը բենզոլում): Սահմանափակ ուռճացման դեպքում առաջանում են դոնդողներ: ԲՍՍ ուռճացման վրա ազդում են նաև էլեկտրոլիտների ներկայությունը, միջավայրի թՀ, ջերմաստիճանը:

Եթե բոլոր մակրոմոլեկուլները բաշխվում են լուծիչում, լուծման պրոցեսը ավարտվում է:

**ԲՍՍ լուծույթների մածուցիկությունը,** (η) : Մածուցիկությունը (ներքին շփում)՝ շարժման նկատմամբ միջավայրի դիմադրության չափն է: Տեսակարար մածուցիկության և պոլիմերի մոլեկուլային զանգվածի միջև առնչությունը արտահայտվում է Շտաուլինգերի ենափիրիկ հակասարումով:

$$\eta = \frac{\eta - \eta_0}{\eta_0} = \text{KMC} \quad 11.7.$$


որտեղ,  $\eta$  - մաքուր լուծիչի մածուցիկությունն է,  $\eta_0$  - պոլիմերի լուծույթի մածուցիկությունը,  $K$ - հաստատուն, որը բնութագրում է ԲՍՍ,  $M$ - ԲՍՍ մոլեկուլային զանգվածը,  $c$ - նրա կոնցենտրացիան լուծույթում:

ԲՍՍ լուծույթների կայունությունը խախտվում է, եթե սահմանափակ ուռճացման կամ լուծիչի նաև ականակի գոլորշիացման հետևանքով, առաջանում են դոնդողներ: Այսպիսով, դոնդողը կարելի է դիտարկել որպես սահմանափակ ուռճացված պոլիմեր կամ պոլիմերի խիտ լուծույթ: Դոնդողները հոմոգեն համակարգեր են: Շերանալիս, դոնդողների հոմոգենությունը խախտվում է՝ հեղուկը պոլիմերից անջատվելու հետևանքով (սիներիզիս): Սիներիզիսի օրինակ է շիճուկի անջատումը արյան մակարդան ժամանակ: Այս պրոցեսն անդարձելի է դոնդողից ԲՍՍ լուծույթ ստանալ հնարավոր չել:


## 11.10. Լաբորատոր աշխատանք

**Փորձ 1.** Ծծմբի հիդրոգոլի ստացումը լուծիչի կազմը փոխելու եղանակով: Չոր փորձանոթում պատրաստել ծծմբի հագեցած սալիրտային լուծույթ, ֆիլտրել (չլուծված ծծմբից ազատվելու նպատակով), վերցնել 2մլ այդ լուծույթից և կաթիլերով ավելացնել 10մլ թորած ջրին: Զրում չլուծվելու պատճառով ծծմբի մոլեկուլները կոնդենսանում են և կայունանում կոլիդի դիսթերուման աստիճանում: Միցելի թաղադրությունը և կառուցվածքը հայտնի չեն: Գրանուլները լիցքավորված են բացասական:


**Փորձ 2.** Արծաթի հիդրոգոլի ստացում՝ տանինով վերականգնման եղանակով: 2մլ 0,005Ն արծաթի նիտրատի լուծույթին ավելացնել սոդայի ( $\text{Na}_2\text{CO}_3$ ) 1%-ոց լուծույթի մի քանի կաթիլ և տաքացնել, մինչև եռալը: Տաք լուծույթին կաթիլերով ավելացնել 0,1% տանինի թարմ պատրաստած լուծույթ: Կարծ ժամանակում առաջանում է կարմրաշագանակագույն գույ:



**Փորձ 3.** Երկաթի (III) հիդրօքսիդի հիդրոգոլի ստացում՝ հիդրոլիզի ռեակցիայի միջոցով: Փորձանոթի մեջ լցնել 10մլ թորած ջրու, տաքացնել մինչև եռալը և աստիճանաբար ավելացնել 2%  $\text{FeCl}_3$ -ի լուծույթ մինչև կարմրաշագանակագույն գույի ստացումը:




Կայունացուցիչն է երկաթի օքսիդորիդը  $\text{FeOCl}$ , որն առաջանում է միջավայրում ըստ հետևյալ ռեակցիայի



Միցելի մոտավոր կազմը կլինի.



**Փորձ 4.** Արծաթի քլորիդի հիդրոգոլի ստացումը: Փորձանոթի մեջ լցնել 2մլ 0,001Ն  $\text{NaCl}$  լուծույթ և ավելացնել 2 կաթիլ  $\text{AgNO}_3$  լուծույթ: Միցելի կազմը հետևյալն է.



**Փորձ 5.** Կոբալտի (II) հեքսացիանոֆերատ (II) գույի ստացումը: 1մլ 20%  $\text{K}_4[\text{Fe}(\text{CN})_6]$  լուծույթը ջրով նոսրացնել մինչև 50մլ: Դանդաղ խառնելով ավելացնել 3-4 մլ 0,1%  $\text{CoSO}_4$ : Ստացվում է կանաչ գույնի գույ:

**Փորձ 6.** Երկաթի հիդրօքսիդի հիդրոգոլի մաքրումը դիալիզով: Կոլողիումից պատրաստել պարկ, նրա մեջ լցնել երկաթի հիդրօքսիդի հիդրոգոլը և տեղափոխել թորած ջրում: Որոշ ժամանակ հետո ջրից վերցնել նմուշ և  $\text{Ag}^+$  իոնով համոզվել  $\text{Cl}^-$  իոնների, իսկ ինդիկատորով՝  $\text{H}^+$  իոնների առկայության մեջ:

**Փորձ 7.** Երկարի հիդրօքսիդի հիդրոգոլի ստացումը պեպտիզացումով:  
Փորձանոթի մեջ լցնել 5մլ 0,5Ն  $\text{FeCl}_3$  լուծույթ, ավելացնել  
 $\text{NH}_4\text{OH}$  մինչև  $\text{Fe}(\text{OH})_3$  լրիվ նստեցումը: Նստվածքը լվանալ ջրով  
և բաժանել 2 մասի: Մի մասի վրա ավելացնել թորած ջուր, մյուսի  
վրա՝  $\text{FeCl}_3$  լուծույթ և թափահարել: Ստացված լուծույթները  
համեմատել իրար հետ:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

### Այլուսակ 1

Որոշ էլեկտրոլիտների կրիոսկոպիկ և էքուլոսկոպիկ հաստատումներ

Լուծիչ	K·աստ·կգ/մոլ	E·աստ·կգ/մոլ
Ջուր	1.86	0.52
Բենզոլ	5.12	2.57
Նիտրոբենզոլ	6.9	5.27
Քացախաթռու	3.9	3.1

### Այլուսակ 2

Որոշ տարածված ինդիկատորների հատկությունները

Ինդիկատոր	Գույնի փոփոխմա ն միջակայք	Ինդիկատոր ի pH	Ինդիկատորի գույնը	
			թթվային	հիմնային
Թիմոլ կապույտ	1.2÷2.8	1.7	կարմիր	դեղին
Մեթիլ օրանժ	3.1÷4.4	4.0	կարմիր	դեղին
Մեթիլ կարմիր	4.2÷6.2	5.5	կարմիր	դեղին
Լակմուս	5.0÷8.0	7.0	կարմիր	կապույտ
n-Նիտրոֆենոլ	5.6÷7.4	6.5	անգույն	դեղին
Ֆենոլֆտալեին	8.2÷9.8	9.0	անգույն	մորու գույն
Ալիզարին դեղին	10÷12	11.0	դեղին	նարնջագույն

### Աղյուսակ 3

#### Թթուների դիսոցման հաստատումները և աստիճանը

Թթու	pK <sub>a</sub>	K <sub>a</sub>	α(C=0.1 մոլ/լ), %
HClO <sub>4</sub>	-10	1.0·10 <sup>10</sup>	100
HCl	-7	1.0·10 <sup>7</sup>	100
H <sub>2</sub> SO <sub>4</sub>	-3	1.0·10 <sup>3</sup>	100
H <sub>3</sub> O <sup>+</sup>	-1.74	55	100
HNO <sub>3</sub>	-1.32	21	99.5
H <sub>2</sub> C <sub>2</sub> O <sub>4</sub>	1.23	0.059	77
H <sub>2</sub> SO <sub>3</sub>	1.92	0.012	29.2
HSO <sub>4</sub> <sup>-</sup>	1.92	0.012	29.2*
H <sub>3</sub> PO <sub>4</sub>	1.96	0.011	28.1
HF	3.13	7.2·10 <sup>-4</sup>	8.1
HNO <sub>2</sub>	3.15	7.1·10 <sup>-4</sup>	8.0
HCOOH	3.70	2.2·10 <sup>-4</sup>	4.6
HC <sub>2</sub> O <sub>4</sub> <sup>-</sup>	4.19	6.4·10 <sup>-5</sup>	2.5
CH <sub>3</sub> COOH	4.75	1.8·10 <sup>-5</sup>	1.3
H <sub>2</sub> CO <sub>3</sub>	6.52	3.0·10 <sup>-7</sup>	0.17
H <sub>2</sub> S	6.92	1.2·10 <sup>-7</sup>	0.11
H <sub>2</sub> PO <sub>4</sub> <sup>-</sup>	7.12	7.6·10 <sup>-8</sup>	0.09*
HClO	7.25	5.6·10 <sup>-8</sup>	0.08
HCN	9.00	1.0·10 <sup>-9</sup>	0.01
NH <sub>4</sub> <sup>+</sup>	9.25	5.6·10 <sup>-10</sup>	7.6·10 <sup>-3</sup>
HCO <sub>3</sub> <sup>-</sup>	10.4	4.0·10 <sup>-11</sup>	1.1*
HPO <sub>4</sub> <sup>2-</sup>	12.3	4.8·10 <sup>-13</sup>	0.25*
HS <sup>-</sup>	13	1.0·10 <sup>-13</sup>	0.09*

\* թթու աղերի լուծույթների համար

## Այուսակ 4

Կատիոն/մետաղ գույզի ստանդարտ էլեկտրոդային պոտենցիալները  
ջրային լուծույթում ( $25^{\circ}\text{C}$ )

Էլեկտրոդային ռեակցիա	$E^{\circ}, \text{В}$	Էլեկտրոդային ռեակցիա	$E^{\circ}, \text{В}$
$\text{Li}^+ + \text{e} \rightarrow \text{Li}$	-3.045	$\text{Ni}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Ni}$	-0.250
$\text{K}^+ + \text{e} \rightarrow \text{K}$	-2.925	$\text{Mo}^{3+} + 3\text{e} \rightarrow \text{Mo}$	-0.200
$\text{Ba}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Ba}$	-2.900	$\text{Sn}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Sn}$	-0.136
$\text{Ca}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Ca}$	-2.870	$\text{Pb}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Pb}$	-0.126
$\text{Na}^+ + \text{e} \rightarrow \text{Na}$	-2.714	$2\text{H}^+ + 2\text{e} \rightarrow \text{H}_2$	0.000
$\text{Mg}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Mg}$	-2.370	$\text{Bi}^{3+} + 3\text{e} \rightarrow \text{Bi}$	+0.215
$\text{Al}^{3+} + 3\text{e} \rightarrow \text{Al}$	-1.660	$\text{Cu}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Cu}$	+0.337
$\text{Mn}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Mn}$	-1.180	$\text{Ag}^+ + \text{e} \rightarrow \text{Ag}$	+0.799
$\text{Zn}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Zn}$	-0.762	$\text{Hg}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Hg}$	+0.854
$\text{Cr}^{3+} + 3\text{e} \rightarrow \text{Cr}$	-0.740	$\text{Pd}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Pd}$	+0.987
$\text{Fe}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Fe}$	-0.440	$\text{Pt}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Pt}$	+1.190
$\text{Co}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Co}$	-0.280	$\text{Au}^{3+} + 3\text{e} \rightarrow \text{Au}$	+1.500

## Այուսակ 5

Օքսիդա-վերականգնիչ ստանդարտ պոտենցիալները (25°C)

Էլեկտրոդային ռեակցիա	E°, В	Էլեկտրոդային ռեակցիա	E°, В
[Ag(NH <sub>3</sub> ) <sub>2</sub> ] <sup>+</sup> + ē → Ag + 2NH <sub>3</sub>	+0,373	Fe <sup>3+</sup> + ē → Fe <sup>2+</sup>	+0,77
AlO <sub>2</sub> <sup>-</sup> + 2H <sub>2</sub> O + 3ē → Al + 4OH <sup>-</sup>	-2,35	[Fe(CN) <sub>6</sub> ] <sup>3-</sup> + ē → [Fe(CN) <sub>6</sub> ] <sup>4-</sup>	+0,356
H <sub>3</sub> AsO <sub>4</sub> + 2H <sup>+</sup> + 2ē → HAsO <sub>2</sub> + 2H <sub>2</sub> O	+0,56	Fe(OH) <sub>3</sub> <sup>+</sup> + ē → Fe(OH) <sub>2</sub> + OH <sup>-</sup>	-0,56
[Au(CN) <sub>2</sub> ] <sup>-</sup> + ē → Au + 2CN <sup>-</sup>	-0,61	Fe(OH) <sub>2</sub> + 2ē → Fe + 2OH <sup>-</sup>	-0,877
BiO <sub>3</sub> <sup>-</sup> + 6H <sup>+</sup> + 2ē → Bi <sup>3+</sup> + 3H <sub>2</sub> O	+1,80	H <sub>2</sub> O <sub>2</sub> + 2H <sup>+</sup> + 2ē → 2H <sub>2</sub> O	+1,77
Br <sub>2</sub> + 2ē → 2Br <sup>-</sup>	+1,065	H <sub>2</sub> O <sub>2</sub> + 2ē → 2OH <sup>-</sup>	+0,88
BrO <sup>-</sup> + H <sub>2</sub> O + 2ē → Br <sup>-</sup> + 2OH <sup>-</sup>	+0,76	O <sub>2</sub> + 2H <sup>+</sup> + 2ē → H <sub>2</sub> O <sub>2</sub>	+0,68
2BrO <sub>3</sub> <sup>-</sup> + 6H <sub>2</sub> O + 10ē → Br <sub>2</sub> + 12OH <sup>-</sup>	+0,50	O <sub>2</sub> + 4H <sup>+</sup> + 4ē → 2H <sub>2</sub> O	+1,23
BrO <sub>3</sub> <sup>-</sup> + 3H <sub>2</sub> O + 6ē → Br <sup>-</sup> + 6OH <sup>-</sup>	+0,61	O <sub>3</sub> + 2H <sup>+</sup> + 2ē → O <sub>2</sub> + H <sub>2</sub> O	+2,07
BrO <sub>3</sub> <sup>-</sup> + 6H <sup>+</sup> + 6ē → Br <sup>-</sup> + 3H <sub>2</sub> O	+1,45	2Hg <sup>2+</sup> + 2ē → Hg <sub>2</sub> <sup>2+</sup>	+0,92
Cl <sub>2</sub> + 2ē → 2Cl <sup>-</sup>	+1,359	2HgCl <sub>2</sub> + 2ē → Hg <sub>2</sub> Cl <sub>2</sub> <sup>+</sup> + 2Cl <sup>-</sup>	+0,62
ClO <sup>-</sup> + H <sub>2</sub> O + 2ē → Cl <sup>-</sup> + 2OH <sup>-</sup>	+0,88	I <sub>2</sub> + 2ē → 2I <sup>-</sup>	+0,54
ClO <sub>3</sub> <sup>-</sup> + 3H <sub>2</sub> O + 6ē → Cl <sup>-</sup> + 6OH <sup>-</sup>	+0,63	IO <sub>3</sub> <sup>-</sup> + 3H <sub>2</sub> O + 6ē → I <sup>-</sup> + 6OH <sup>-</sup>	+0,26
ClO <sub>3</sub> <sup>-</sup> + 6H <sup>+</sup> + 6ē → Cl <sup>-</sup> + 3H <sub>2</sub> O	+1,45	IO <sub>3</sub> <sup>-</sup> + 6H <sup>+</sup> + 6ē → I <sup>-</sup> + 3H <sub>2</sub> O	+1,08
Co <sup>3+</sup> + ē → Co <sup>2+</sup>	+1,84	2IO <sub>3</sub> <sup>-</sup> + 6H <sub>2</sub> O + 10ē → I <sub>2</sub> + 12OH <sup>-</sup>	+0,21
[Co(NH <sub>3</sub> ) <sub>6</sub> ] <sup>3+</sup> + ē → [Co(NH <sub>3</sub> ) <sub>6</sub> ] <sup>2+</sup>	-0,43	MnO <sub>4</sub> <sup>-</sup> + ē → MnO <sub>4</sub> <sup>2-</sup>	+0,56
CrO <sub>2</sub> <sup>-</sup> + 2H <sub>2</sub> O + 3ē → Cr <sup>+</sup> + 4OH <sup>-</sup>	-1,2	MnO <sub>4</sub> <sup>-</sup> + 2H <sub>2</sub> O + 3ē → MnO <sub>2</sub> + 4OH <sup>-</sup>	+0,60
CrO <sub>4</sub> <sup>2-</sup> + 4H <sub>2</sub> O + 3ē → Cr(OH) <sub>3</sub> + 5OH <sup>-</sup>	-0,13	MnO <sub>4</sub> <sup>-</sup> + 8H <sup>+</sup> + 5ē → Mn <sup>2+</sup> + 4H <sub>2</sub> O	+1,51
Cr <sub>2</sub> O <sub>7</sub> <sup>2-</sup> + 14H <sup>+</sup> + 6ē → 2Cr <sup>3+</sup> + 7H <sub>2</sub> O	+1,33	MnO <sub>2</sub> + 4H <sup>+</sup> + 2ē → Mn <sup>2+</sup> + 2H <sub>2</sub> O	+1,23
Cu <sup>2+</sup> + ē → Cu <sup>+</sup>	+0,153	NO <sub>3</sub> <sup>-</sup> + 4H <sup>+</sup> + 3ē → NO + 2H <sub>2</sub> O	+0,96
PbO <sub>2</sub> + 4H <sup>+</sup> + 2ē → Pb <sup>2+</sup> + 2H <sub>2</sub> O	+1,455	NO <sub>3</sub> <sup>-</sup> + 3H <sup>+</sup> + 2ē → HNO <sub>2</sub> + H <sub>2</sub> O	+0,94
PbO <sub>2</sub> + SO <sub>4</sub> <sup>2-</sup> + 4H <sup>+</sup> + 2ē → PbSO <sub>4</sub> + 2H <sub>2</sub> O	+1,68	HNO <sub>2</sub> + H <sup>+</sup> + ē → NO + H <sub>2</sub> O	+0,99
S + 2ē → S <sup>2-</sup>	-0,48	SO <sub>4</sub> <sup>2-</sup> + H <sub>2</sub> O <sup>+</sup> + 2ē → SO <sub>3</sub> <sup>2-</sup> + 2OH <sup>-</sup>	-0,93
SO <sub>4</sub> <sup>2-</sup> + 4H <sup>+</sup> + 2ē → SO <sub>2</sub> + 2H <sub>2</sub> O	+0,17	S <sub>2</sub> O <sub>8</sub> <sup>2-</sup> + 4ē → 2SO <sub>4</sub> <sup>2-</sup>	+2,01
SO <sub>4</sub> <sup>2-</sup> + 10H <sup>+</sup> + 8ē → H <sub>2</sub> S + 4H <sub>2</sub> O	+0,313	SeO <sub>6</sub> <sup>2-</sup> + 4H <sup>+</sup> + 2ē → SeO <sub>4</sub> <sup>2-</sup> + 2H <sub>2</sub> O	+1,15
Cu <sup>2+</sup> + Cl <sup>-</sup> + ē → CuCl	+0,54	Sn <sup>4+</sup> + 2ē → Sn <sup>2+</sup>	+0,15
Cu <sup>2+</sup> + I <sup>-</sup> + ē → CuI	+0,86	C <sub>6</sub> H <sub>4</sub> O <sub>2</sub> + 2H <sup>+</sup> + 2ē → C <sub>6</sub> H <sub>4</sub> (OH) <sub>2</sub>	+0,7

**Բժշկության մեջ կիրառվող որոշ միացությունների թերմոդինամիկ հատկությունները.**

$\Delta H^{\circ}_{298}$  – նյութի առաջացման ստանդարտ ջերմություն, կՋ/մոլ:

$\Delta G^{\circ}_{298}$  – պարզ նյութերից բարդ նյութի առաջացման Գիբսի ստանդարտ էներգիայի փոփոխությունը, կՋ/մոլ:

$S^{\circ}_{298}$  – նյութի ստանդարտ էնտրոպիան, Ջ/մոլ K:

Այսուսակում նշված հապավումները՝ բ-բյուրեղային վիճակ, հ-հեղուկ վիճակ, ազ – նյութը (իոնը) ջրային լուծույթում:

Նյութի կամ իոն	Վիճակը	$\Delta H^{\circ}_{298}$	$\Delta G^{\circ}_{298}$	$S^{\circ}_{298}$
$Br_2$	h	0	0	152
$Br_2$	q	30.7	3.1	246
C	գրաֆիտ	0	0	5.7
C	ալմաստ	1.9	2.0	2.4
CO	q	-111	-137	198
$CO_2$	q	-394	-394	214
$H_2CO_3$	aq	-700	-623	187
$HCO_3^-$	aq	-691	-587	95
$CO_3^{2-}$	aq	-676	-528	-53
$Ca^{2+}$	aq	-543	-553	-55
$CaSO_4$	p	-1430	-1320	107
$CaSO_4 \cdot 2H_2O$	p	-2020	-1790	194
$CaCl_2$	p	-795	-750	114
$Fe^{2+}$	aq	-88	-85	-113
$Fe^{3+}$	aq	-48	-11	-293
$FeCl_3$	aq	-405		
$FeCl_3 \cdot 6H_2O$	p	-2220		
$FeSO_4$	p	-923	-820	108
$FeSO_4 \cdot 7H_2O$	p	-3000		
$H_2$	q	0	0	131
$H^+$	aq	0	0	0
$HO^-$	aq	-230	-157	-10.5
$H_2O$	h	-286	-238	70
$H_2O$	q	-242	-229	189
$H_2O_2$	h	-188	-118	
$H_2O_2$	aq	-191		
KI	p	-328	-322	104
KI	aq	-307	-334	212

KMnO <sub>4</sub>	p	-814	-714	172
MgSO <sub>4</sub>	p	-1280	-1170	92
MgSO <sub>4</sub> ·7H <sub>2</sub> O	p	-3380		
Na	p	0	0	51
Na <sup>+</sup>	aq	-240	-262	60
Na <sub>2</sub> CO <sub>3</sub>	p	-1130	-1060	136
Na <sub>2</sub> CO <sub>3</sub> ·10H <sub>2</sub> O	p	-4080	-3906	
NaHCO <sub>3</sub>	p	-948	-852	102
NaF	p	-569	-541	58
NaCl	p	-411	-384	50
NaNO <sub>2</sub>	p	-360		
NaNO <sub>3</sub>	p	-425	-366	116
NaOH	p	-425	-380	60
Na <sub>2</sub> SO <sub>3</sub>	p	-1110	-1000	146
Na <sub>2</sub> SO <sub>4</sub>	p	-1380	-1270	149
Na <sub>2</sub> SO <sub>4</sub> ·10H <sub>2</sub> O	p	-4320	-3640	592
Na <sub>2</sub> S <sub>2</sub> O <sub>3</sub> ·5H <sub>2</sub> O	p	-2600		
O <sub>2</sub>	q	0	0	205
O <sub>3</sub>	q	142	163	238
P <sub>4</sub> (սպիտակ)	p	0	0	44.4
P(կարմիր)	p	-18.4		
PCl <sub>3</sub>	q	-306	-289	312
PCl <sub>5</sub>	q	-398	-324	352
HPO <sub>4</sub> <sup>2-</sup>	aq	-1299	-1094	-36
PO <sub>4</sub> <sup>3-</sup>	aq	-1284	-1025	-218
P <sub>2</sub> O <sub>7</sub> <sup>4-</sup>	aq	-2276		
Pb <sup>2+</sup>	aq	1.6	24.3	21.3
PbO	p	-218	-188	69
PbO <sub>2</sub>	p	-277	-219	77
Pb(CH <sub>3</sub> COO) <sub>2</sub>	p	-965		
Pb(CH <sub>3</sub> COO) <sub>2</sub> ·3H <sub>2</sub> O	p	-1870		
S(բոնբ.)	p	0	0	32
S(մոնոկլ.)	p	0.3	0.1	32.6
SO <sub>2</sub>	q	-296	-300	249
SO <sub>3</sub>	q	-395	-370	256
H <sub>2</sub> S	q	-20	-33	206
H <sub>2</sub> SO <sub>4</sub>	aq	-907	-742	17
HSO <sub>4</sub> <sup>-</sup>	aq	-886	-753	127
SO <sub>4</sub> <sup>2-</sup>	aq	-907	-742	17.2
SiO <sub>2</sub> (կվարդ.)	p	-859	-805	42

Zn <sup>2+</sup>	aq	-152	-147	106
ZnO	ρ	-348	-318	44
ZnCl <sub>2</sub>	ρ	-416	-369	108
ZnSO <sub>4</sub>	ρ	-979	-872	125
ZnSO <sub>4</sub> ·7H <sub>2</sub> O	ρ	-3080	-2560	386
Օրգանական նյութեր				
CH <sub>3</sub> COOH	h	-484	-389	160
CH <sub>3</sub> COO <sup>-</sup>	aq	-485	-404	205
C <sub>15</sub> H <sub>32</sub> COOH	ρ	-891	-315	455
C <sub>15</sub> H <sub>32</sub> COO <sup>-</sup>	aq		-259	
գլուկոզ	ρ	-1274	-911	212
	aq	-1263	-915	264
C <sub>15</sub> H <sub>32</sub> COO <sup>-</sup>	aq		-259	
գլուկոզ	ρ	-1274	-911	212
	aq	-1263	-915	264
գլուկոզ-1-ֆոսֆորական թթու	aq		-1790	
գլիցին	ρ	-537	-378	104
	aq	-523	-380	159
ցիստեհին	ρ	-533	-343	170

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ершов Ю.А., Попков В.А., Берлянд А.С., Книжник А.З.,  
Михайличенко Н.И. Общая Химия, Биофизическая  
Химия, Химия Биогенных Элементов. М.: Высшая  
школа, 1993. 560 с.
2. Дикерсон Р., Грей Г., Хейт Дж. Основные законы  
Химии. Том 2. М.: Мир, 1982. 620 с.
3. Чанг Р. Физическая Химия с приложениями к  
биологическим системам. М.: Мир, 1980. 662 с,
4. Пузаков С.А. Химия. М.: Медицина, 1995. 624 с.
5. Гликина Ф.Б. Химия комплексных соединений. М.:  
Просвещение, 1982. 160 с.
6. Болдырев А.И. Физическая и коллоидная Химия. М.:  
Высшая Школа, 1983. 408 с.
7. Добычин Д.П., Каданер Л.И., Серпинский В.В. и др. М.:  
Просвещение, 1986. 463 с.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն.....	3
<b>Աշխատանքի ընդիանուր կանոնները</b>	
քիմիական լաբորատորիայում.....	4
Անվտանգության տեխնիկայի կանոնները	
քիմիական լաբորատորիայում.....	5
<b>1. Քիմիական թերմոդինամիկա .....</b>	6
1.1. Թերմոդինամիկայի հիմնական հասկացություններ .....	6
1.2. Թերմոդինամիկայի առաջին օրենքը .....	8
1.3. Դասակարգի կատարած աշխատանքը իզոխոր, իզոթերմ, իզոբար պրոցեսներում .....	9
1.4. Քիմիական պրոցեսների ջերմային էֆեկտներ .....	10
1.4.1. Լաբորատոր աշխատանք .....	16
1.5. Թերմոդինամիկայի երկրորդ օրենքը: Էնտրոպիա.....	18
1.6. Էնտրոպիայի կախվածությունը տարբեր գործոններից .....	23
1.7. Պրոցեսի էնթալպիական և էնտրոպիական գործոնները .....	24
<b>2. Բիոքիմիական ռեակցիաների կինետիկայի ֆիզիմիական հիմունքները .....</b>	28
2.1. Դիմնական հասկացություններ .....	28
2.2. Ռեակցիայի արագության վրա ազդող գործոնները: Ռեակցիայի մոլեկուլարությունը և կարգը .....	30
2.3. Ռեակցիաների կինետիկական հավասարումները .....	33
2.4. Ռեակցիայի արագության կախումը ջերմաստիճանից .....	36
2.5. Քիմիական ռեակցիաների մեխանիզմը .....	37
2.6. Բարդ ռեակցիաների կինետիկան .....	39
2.7. Կատալիզ .....	42
2.8. Ֆերմենտային կատալիզ .....	44
2.9 Լաբորատոր աշխատանք .....	47
<b>3. Քիմիական հավասարակշռություն .....</b>	50
3.1. Դարձելի և ոչ դարձելի պրոցեսներ .....	50
3.2. Դավասարակշռության հաստատումի կապը Գիրսի էներգիայի հետ .....	51
3.3. Քիմիական հավասարակշռության հաստատումի կախվածությունը ջերմաստիճանից .....	56

3.4. Տարբեր գործոնների ազդեցությունը հավասարակշռության վիճակի վրա:	57
Լե-Շատելի սկզբունքը .....	57
3.5. Լաբորատոր աշխատանք .....	59
<b>4. Ուսմունք լուծույթների մասին .....</b>	<b>61</b>
4.1. Լուծույթների բժշկակենսաբանական դերը: Հիմնական հասկացություններ .....	61
4.2. Լուծման պրոցեսի թերմոդինամիկան.....	62
4.3. Գագերի լուծելիությունը հեղուկներում, Յենրիի և Սեչենովի օրենքները .....	63
4.4. Լուծույթի բաղադրության արտահայտման եղանակները .....	65
4.6. Լաբորատոր աշխատանք .....	68
4.7. Նոսր լուծույթների կոլիգատիվ հատկությունները .....	68
4.7.1. Ռաուլի օրենքը .....	69
4.7.2. Եռման և պնդեցման ջերմաստիճան .....	70
4.7.3. Օսմոս, օսմոտիկ ճնշում .....	73
4.7.4. Օսմոսի դերը կենդանական և բուսական կենսահամակարգերում .....	75
4.7.5. Դոնանի հավասարակշռություն: Սպիտակուցների դերը իոնների Վերաբաշխման պրոցեսում .....	75
4.7.6. Լաբորատոր աշխատանք .....	77
<b>5. Հավասարակշռությունը էլեկտրոլիտների ջրային լուծույթներում .....</b>	<b>79</b>
5.1. Էլեկտրոլիտների նոսր լուծույթների հատկությունների շեղումը Ռաուլի և Վանթ-Ռոֆի օրենքներից: Իզոտոնիկ գործակից, դիսցման աստիճան .....	79
5.1.1. Լաբորատոր աշխատանք .....	81
5.2. Ուժեղ էլեկտրոլիտներ, իոնական ուժ, ակտիվության գործակից .....	81
5.3. Զանգվածների ներգործման օրենքի կիրառումը թույլ էլեկտրոլիտների նկատմամբ, Օստվալդի նոսրացման օրենքը .....	85
5.4 Էլեկտրոլիտների դերը օրգանիզմների կենսագործունեությունում .....	87
5.4.1. Բջջաբաղանքների կառուցվածքը, իոնների տրանսպորտը .....	89

<b>6. Թթուների և հիմքերի տեսությունը.....</b>	<b>92</b>
6.1. Զուրը որպես թույլ էլեկտրոլիտ, ջրի իոնական արտադրյալ, ջրի ավտոպրոտոլիզի հաստատում, ջրածնական ցուցիչ.....	97
6.1.1. Թթուների և հիմքերի լուծույթների pH-ի հաշվարկը.....	99
6.1.2. Օրինակներ.....	101
6.1.3. Լաբորատոր աշխատանք .....	102
6.2. Աղերի հիդրոլիզ .....	102
6.2.1. Կենսաօրգանական միացությունների հիդրոլիզի դերը կենսագործունեության պրոցեսներում.....	107
6.2.2. Լաբորատոր աշխատանք .....	108
<b>7. Պրոտոլիտիկ կամ թթվահիմնային բուֆերային համակարգեր.....</b>	<b>110</b>
7.1. Թթվահիմնային բուֆերային համակարգերի դասակարգումը .....	110
7.2. Բուֆերների ազդեցության մեխանիզմը .....	111
7.3. Բուֆերային համակարգերի pH –ը .....	112
7.4. Բուֆերային տարրություն.....	114
7.5. Արյան բուֆերային համակարգեր .....	115
7.6. Լաբորատոր աշխատանք .....	118
<b>8. Քանակական անալիզի հիմունքներ .....</b>	<b>120</b>
8.1. Քիմիական անալիզի թժկակենսաբանական նշանակությունը .....	120
8.2. Քիմիական անալիզի եղանակները: Քանակական և որակական անալիզ .....	120
8.2.1. Քանակական անալիզի եղանակների դասակարգումը .....	120
8.3. Թթվահիմնային տիտրում (չեզոքացման մեթոդ) .....	122
8.4. Թթվահիմնային ինդիկատորներ .....	123
8.5 Տիտրման կորեք .....	125
8.5.1. Ուժեղ թթվի տիտրումն ուժեղ հիմքով: Տիտրման կորը .....	125
8.5.2. Թույլ թթվի տիտրումն ուժեղ հիմքով .....	126
8.6. Ծավալային անալիզի հաշվարկները.....	128
8.7. Լաբորատոր աշխատանք .....	130
8.9. Օքսիդավերականգնիչ տիտրում .....	131
8.9.1. Օքսիդավերականգնան (Օք (Red – Ox) ռեակցիաներ.....	131
8.9.2 Օք (Red-Ox) ռեակցիաների հավասարումների կազմումը .....	133
8.9.3 Օք (Red-Ox) ռեակցիաների տեսակները .....	135

8.9.4. Միջավայրի ազդեցությունը ՕՎ (Red-Ox)	
ռեակցիայի ընթացքի վրա.....	136
8.9.5. ՕՎ (Red-Ox) ռեակցիաների ուղղությունը .....	137
8.9.6. ՕՎ պրոցեսների կենսաբանական դերը.....	139
8.9.7. Պերմանգանատունետրիա .....	140
8.9.8. Լաբորատոր աշխատանք .....	142
8.9.9. Յոդունետրիա .....	144
<b>9. Էլեկտրոքիմիա .....</b>	<b>148</b>
9.1. Էլեկտրոդային պոտենցիալ:	
Ներմաստի հավասարումը .....	148
9.2. Գալվանական էլեմենտ, էլեկտրաշարժ ուժ .....	151
9.3. Կոնցենտրացիոն շղթաներ .....	154
9.4. Դամենատիչ էլեկտրոդներ .....	154
9.5. Որոշիչ էլեկտրոդներ .....	158
9.6. Օքիդիակերականգննան (Red-Ox) էլեկտրոդներ .....	161
9.7. Թաղանթային պոտենցիալներ .....	162
9.8. Լաբորատոր աշխատանք .....	165
<b>10. Կոռոդինացիոն միացությունների քիմիա .....</b>	<b>166</b>
10.1. Կոռոդինացիոն (կոմպլեքս) միացություններ .....	166
10.2. Կոմպլեքսների տարածական կառուցվածքը`	
կախված կոռոդինացիոն թվից .....	168
10.3. Լիգանդների տեսակները .....	169
10.4. Կոմպլեքս միացությունների անվանակարգը .....	171
10.5. Կոմպլեքս միացությունների առաջացումը .....	173
10.6. Կոմպլեքսների կայունությունը .....	173
10.7. Կոմպլեքս միացությունների հզոններիան .....	175
10.8. Քիմիական կապի բնույթը կոմպլեքս	
միացություններում .....	177
10.9. Կոռոդինացիոն միացությունների	
կենսաբանական դերը .....	184
10.10. Կոմպլեքսնունունետրիա .....	186
10.11. Լաբորատոր աշխատանք .....	189
<b>11. Կոլորիդ դիսպերս համակարգեր .....</b>	<b>191</b>
11.1. Դիսպերս համակարգեր, դասակարգումը .....	191
11.2. Կոլորիդ դիսպերս համակարգերի ստացումը .....	193
11.3. Կրկնակի էլեկտրական շերտի	
ծագումը և կառուցվածքը .....	194
11.4. Կոլորիդ մասնիկի կառուցվածքի	
միցելային տեսությունը .....	196
11.5. Կոլորիդ համակարգերի օպտիկական	

հատկությունները .....	198
11.6. Կոլոիդ համակարգերի էլեկտրական հատկությունները .....	200
11.7. Կոլոիդ համակարգերի կայունությունը և կոագուլումը.....	200
11.8. Չոլերի մաքրումը .....	202
11.9. Բարձրամոլեկուլային միացությունների (ԲՄՄ) լուծույթներ.....	203
11.10. Լաբորատոր աշխատանք Հավելված .....	205
Գրականություն .....	207